Աղյուսակ 3.10.1-ը ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվել որոշումներ կայացնելու հարցում կանանց մասնակցությունն ըստ հիմնական բնութագրիչների: Տնային տնտեսություններում հիմնականում կանայք են ընդունել որոշումների մեծ մասը կամ մասնակցել այլ անձի հետ համատեղ որոշումների ընդունմանը: Ընդհանուր առմամբ, կանանց երկու երրորդը մասնակցել է իրենց առողջության մասին հոգալու վերաբերյալ վերջնական որոշումների ընդունմանը, մինչդեռ տնային տնտեսության ամենօրյա և մեծ գնումներ կատարելու վերաբերյալ որոշումների ընդունմանը մասնակցել է կանանց կեսից փոքր-ինչ ավելին: 10 կանանցից յոթը հայտնել են, որ նրանք մասնակցում են բարեկամներին կամ ընկերներին այցելությունների և ամենօրյա կերակուր պատրաստելու հարցերին վերաբերվող որոշումների ընդունմանը: Կանանց 40 տոկոսը մասնակցել է տնային տնտեսությունների վերոնշյալ բոլոր որոշումների կայացմանը, մինչդեռ 13 տոկոսը զեկուցել է, որ ձայն չունի տնային տնտեսության ցանկացած որոշում կայացնելու ժամանակ (Գծապատկեր 3.4):

Տնային տնտեսությունում որոշումներ կայացնելիս կնոջ զբաղվածության կարգավիճակն այդ գործընթացին՝ նրա մասնակցության կարևոր բնութագրիչն է: Կանանց կեսը, ով աշխատել և վաստակել է կանխիկ դրամ, հայտնել է, որ ինքն է կայացնում տնային տնտեսության բոլոր որոշումները, մինչդեռ միայն երեք տոկոսն է պատասխանել, որ տնային տնտեսության ոչ մի որոշում չի կայացնում: Սա համեմատելի է կանանց մեկ երրորդի հետ, որո կայացրել է տնային տնտեսության բոլոր որոշումները, և 17 տոկոսի հետ, ով չի կայացրել տնային տնտեսության և ոչ մի որոշում: Երիտասարդ և չամուսնացած կանայք ավելի շատ են պատասխանել, որ չեն կայացնում տնային տնտեսության և ոչ մի որոշում: Ամենաքիչը տնային տնտեսության բոլոր որոշումները կայացնում են Գեղարքունիքի կանայք (18 տոկոս), մինչդեռ Լոռվա, Շիրակի և Սյունիքի կանանց 50 տոկոսից ավելին նշել է, որ կայացնում է տնային տնտեսության բոլոր որոշումները:

Գոյություն ունի ուժեղ կորելացիոն կապ տարիքի և որոշումների ընդունման միջև: Բոլոր որոշումներն ընդունող կանանց տոկոսն աճում է 15-19 տարեկան կանանց մոտ 11 տոկոսից մինչև 45-49 տարեկանների մոտ՝ 63 տոկոս: Դեռ ավելին, գոյություն ունի էական տարբերություն ըստ կենդանի երեխաների թվաքանակի: Այսպես, մեկ կամ ավելի կենդանի երեխաներ ունեցող կանանց մոտավորապես կեսի համեմատությամբ՝ երեխա չունեցող կանանց միայն մեկ հինգերորդն է կայացրել բոլոր որոշումները:


Աղյուսակ 3.10.1 Տնային տնտեսությունում վերջնական որոշում կայացնելը

Կանանց տոկոսային բաշխումը, ովքեր նշում են, որ միայնակ կամ միասին են վերջնական որոշում կայացնում տնային տնտեսության առանձնահատուկ հարցերի վերաբերյալ ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Վերջնական որոշումը կայացնում են ինքնուրույն կամ միասին

Հիմնական բնութագրիչներ	Սեփական առողջության մասին հոգալը	Մեծ գնումներ կատարելը	Ամենօրյա գնումներ կատարելը	Ընտանիքի անդամներին, բարեկամներին կամ ընկերներին այցելելը	Ամենօրյա կերակուրի պատրաստումը	Բոլոր նշված որոշումները	Նշված որոշումներից ոչ մեկը	Կանանց թվաքանակը (մարդ)
Տարիքը								
15-19	31.2	18.2	19.5	39.2	23.8	10.8	46.4	1160
20-24	54.3	35.0	34.2	60.9	50.0	19.7	19.7	1007
25-29	68.6	44.9	51.1	71.5	72.3	31.9	6.9	769
30-34	78.1	61.8	71.5	75.9	86.4	44.7	3.8	763
35-39	80.7	69.4	79.0	84.2	90.6	54.6	1.8	962
40-44	81.7	72.8	80.7	85.0	93.4	58.9	2.0	947
45-49	83.5	79.0	83.6	88.8	93.7	63.3	1.3	822
Ամուսնական կարգավիճակը								
Երբևէ չամուսնացած	41.2	25.0	26.1	50.0	28.7	16.2	37.2	1851
Հարցման պահին ամուսնացած	75.2	62.2	69.9	77.9	87.6	45.9	3.9	4125
Նախկինում ամուսնացած	88.7	79.2	78.2	88.1	82.9	70.0	4.0	455
Կենդանի երեխաների թվաքանակը								
0	44.4	28.4	28.9	52.7	33.5	18.4	34.0	2121
1-2	77.1	63.6	69.1	78.9	85.4	48.0	4.0	2590
3-4	77.7	66.3	76.9	80.1	93.0	51.2	2.3	1630
5+	70.4	65.8	73.0	79.7	94.8	50.7	0.7	89
Բնակավայրը								
Քաղաքային	69.3	55.7	59.3	75.0	70.1	41.9	11.8	3942
Գյուղական	61.7	47.8	55.6	63.6	70.7	34.7	16.1	2488
Մարզը								
Երևան	70.4	56.7	58.2	77.9	68.3	40.4	9.7	2206
Արագածոտն	66.3	51.9	55.6	64.7	74.2	38.4	12.4	279
Արարատ	76.6	49.8	58.0	75.2	78.0	40.1	9.4	642
Արմավիր	66.9	51.5	53.7	63.0	67.9	34.9	13.7	553
Գեղարքունիք	40.7	31.5	43.8	40.7	58.1	17.8	28.4	484
Լոռի	72.6	65.5	68.9	74.3	78.5	51.8	9.0	489
Կոտայք	53.9	42.5	55.3	66.3	69.2	30.6	18.2	505
Շիրակ	73.4	55.5	64.0	73.4	69.7	50.8	20.5	611
Սյունիք	72.7	61.5	64.6	80.2	75.3	53.0	10.3	271
Վայոց ձոր	45.6	47.8	50.0	53.9	76.9	35.4	17.5	113
Տավուշ	52.6	50.6	58.5	67.7	72.4	27.8	11.7	278
Կրթությունը								
Տարրական/միջին	48.2	40.2	44.3	52.0	52.8	27.9	29.6	593
Միջնակարգ	61.6	49.2	54.7	64.7	69.8	37.0	16.7	2341
Միջնակարգ-մասնագիտական	71.9	56.6	63.6	77.2	76.7	42.3	8.4	2295
Բարձրագույն	73.9	58.0	59.7	78.7	67.7	42.5	8.7	1201
Հարցման պահին զբաղվածությունը								
Չի աշխատում	61.6	47.0	52.2	65.9	66.3	34.9	17.3	4374
Աշխատում է կանխիկ վաստակով	81.9	67.8	71.4	86.0	77.5	50.4	3.4	1374
Աշխատում է անկանխիկ վաստակով	65.6	58.4	66.8	69.6	81.8	43.0	9.2	682
Ընդամենը	66.4	52.7	57.9	70.6	70.3	39.1	13.4	6430

Պճապատկեր 3.4 Կանանց տեսակարար կշիռն ըստ վերջնական որոշումների կայացման քանակի



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Աղյուսակ 3.10.2-ի տվյալները ներկայացնում են տղամարդու վերաբերմունքը կնոջ դերի հանդեպ տնային տնտեսությունում որոշումներ կայացնելիս: Տղամարդկանց մոտավորապես չորս հինգերորդը կարծում է, որ կինը պետք է գոնե հավասար իրավունքներ ունենա տնային տնտեսությունում այնպիսի հարցերի շուրջ որոշումներ ընդունելիս, ինչպիսիք են՝ երեխաներ ունենալու ժամանակը և թվաքանակը, ամենօրյա գնումները, վաստակի օգտագործումը: Ավելի քիչ թվով տղամարդիկ՝ 10-ից մոտավորապես 6-ը, վստահ են, որ կինը պետք է գոնե հավասար իրավունքներ ունենա խոշոր գնումներ կատարելու և բարեկամներից ու ընկերներից այցելելու հարցում:

Այնուամենայնիվ, տղամարդկանց մոտ մեկ երրորդը վստահ է, որ կանայք պետք է գոնե հավասար իրավունքներ ունենան վերոնշյալ բոլոր հինգ որոշումները կայացնելիս: Հարցման պահին ամուսնացած կամ նախկինում ամուսնացած տղամարդիկ, երբեք չամուսնացած տղամարդկանց համեմատությամբ ավելի քիչ են հակված այն մտքին, որ կինը չպետք է որոշումներ կայացնի: Ավելի տարիքով և ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող տղամարդիկ ավելի հակված են նշել, որ կինը պետք է ունենա գոնե հավասար ծայնի իրավունք տնային տնտեսությունում բոլոր որոշումներն ընդունելիս: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ համեմատաբար բարձր կրթությամբ տղամարդկանց միայն մեկ երրորդն է (34 տոկոս) վստահ, որ կինը պետք է գոնե հավասար իրավունքներ ունենա բոլոր հինգ որոշումները կայացնելիս: Ի համեմատություն Արարատում տղամարդկանց 22 տոկոսի՝ Կոտայքում տղամարդկանց երեք չորրորդը (73 տոկոս) պատասխանել է, որ կինը պետք է հավասար իրավունքներ ունենա տնային տնտեսության բոլոր որոշումները կայացնելիս:

Աղյուսակ 3.10.2 Տղամարդկանց վերաբերմունքը կնոջ դեմին՝ տնային տնտեսությունում որոշում կայացնելիս

Տղամարդկանց տոկոսը, ովքեր նշում են, որ տնային տնտեսությունում առանձնահատուկ որոշումներ կայացնելիս կինը պետք է ունենա զոնե հավասար ձայնի իրավունք, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Կինը պետք է ունենա զոնե հավասար ձայնի իրավունք.

Հիմնական բնութագրիչներ	Մեծ գնումներ կատարելիս	Ամենօրյա գնումներ կատարելիս	Ընտանիքի անդամներին, բարեկամներին և ընկերներին այցելելիս	Ինչպես վաստակած գումարների հետ	Քանի երեխա և երբ ունենալ	Բոլոր նշված որոշումները	Նշված որոշումներից ոչ մեկը	Տղամարդկանց թվաքանակը (մարդ)
Տարիքը								
15-19	52.3	73.9	49.5	69.5	67.2	23.4	11.8	263
20-24	56.0	82.3	54.1	77.9	78.9	23.8	3.8	215
25-29	53.8	79.5	57.3	77.7	82.2	25.5	5.7	194
30-34	58.9	78.0	59.9	74.5	83.8	30.8	4.1	205
35-39	54.2	82.3	62.0	77.7	80.4	30.7	3.1	237
40-44	69.8	84.0	67.3	84.4	86.3	38.1	1.8	275
45-49	69.5	87.5	73.3	82.5	89.2	45.1	1.1	203
50-54	66.8	88.5	68.0	84.8	83.0	43.4	3.5	126
Ամուսնական կարգավիճակը								
Երբևէ չամուսնացած	52.2	76.2	51.3	74.9	72.3	23.0	9.3	530
Հարցման պահին ամուսնացած	63.8	83.7	65.3	79.9	84.9	36.3	2.4	1161
Նախկինում ամուսնացած	(41.7)	(93.3)	(62.5)	(72.9)	(80.1)	(20.1)	(0.0)	28
Բնակավայրը								
Քաղաքային	58.6	81.9	65.6	81.3	82.9	32.2	2.7	1024
Գյուղական	61.7	80.9	54.1	73.7	78.1	31.6	7.2	695
Սարգը								
Երևան	50.0	78.8	63.4	78.6	81.7	24.8	1.8	582
Արագածոտն	50.4	89.2	66.2	77.0	77.7	30.2	2.9	78
Արարատ	69.8	79.9	41.0	67.6	77.0	21.6	2.2	177
Արմավիր	62.8	73.8	39.3	76.6	68.3	23.4	15.2	172
Գեղարքունիք	32.5	74.4	64.1	70.9	74.4	27.4	17.1	124
Լոռի	71.3	82.8	63.2	71.3	85.1	36.8	1.1	119
Կոտայք	94.5	96.1	82.7	97.6	99.2	73.2	0.0	137
Շիրակ	54.0	81.3	64.7	69.8	72.7	27.3	7.2	161
Սյունիք	78.2	90.8	76.5	91.6	89.1	49.6	0.0	65
Վայոց ձոր	63.4	84.2	67.3	87.1	78.2	40.6	3.0	25
Տավուշ	75.3	91.1	60.8	96.2	98.7	48.7	0.0	79
Կրթությունը								
Տարրական/միջին	52.3	77.5	46.1	66.5	71.6	24.6	11.1	245
Միջնակարգ	58.5	80.1	56.8	79.0	77.7	29.6	5.5	510
Միջնակարգ-մասնագիտական	62.6	82.7	64.8	80.3	84.2	35.4	2.2	588
Բարձրագույն	62.5	84.3	70.1	81.7	86.4	34.4	2.4	376
Ընդամենը	59.9	81.5	60.9	78.2	80.9	31.9	4.5	1719

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

3.9 Վերաբերմունքը կնոջ ծեծի նկատմամբ

Ընդհանուր առմամբ, կնոջ ծեծն “արդարացնելու” վերաբերմունքը հատկանշում է կնոջ ցածր կարգավիճակն ինչպես հասարակության մեջ, այնպես էլ տղամարդու նկատմամբ: ՀԺԱՀ-ն տեղեկատվություն է հավաքագրել կնոջ ծեծին կանանց վերաբերմունքի մասին՝ հասկանալու համար կնոջ տեսակետը իր կարգավիճակի վերաբերյալ: Մի շարք դեպքերի համար կանայք հարցվել են, թե արդյո՞ք ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացված է: Կնոջ ծեծն արդարացնող հնարավոր պատճառները ներառել են հետևյալ դեպքերը. երբ կինն այրում է կերակուրը, վիճում է ամուսնու հետ, տնից դուրս է գալիս առանց զգուշացնելու, անտեսում է երեխաներին և մերժում է սեռական հարաբերությունները: Հարցման արդյունքները ամփոփված են աղյուսակ 3.11.1-ում:

Աղյուսակ 3.11.1 Կանանց վերաբերմունքը կնոջ ծեծին

Կանանց տոկոսը, ովքեր համաձայն են, որ ամուսինն արդարացի է, երբ ծեծում է կնոջը որոշակի պատճառներով, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Կնոջը ծեծող ամուսինն արդարացի է, եթե կինը.						Կանանց թվաքանակը (մարդ)
	Այրում է կերակուրը	Վիճում է նրա հետ	Տնից դուրս է գալիս առանց զգուշացնելու նրան	Անուշադրության է մատնում երեխա	Հրաժարվում է սեռական հարաբերություններից	Համաձայն է նշված պատճառներից գոնե մեկի դեպքում	
Տարիքը							
15-19	5.8	14.5	20.2	27.2	5.2	33.5	1160
20-24	4.9	14.6	20.6	27.2	5.8	32.6	1007
25-29	3.7	13.3	17.2	25.2	5.2	29.9	769
30-34	5.3	17.0	20.8	27.7	7.4	34.9	763
35-39	5.4	13.6	21.3	28.7	6.5	34.1	962
40-44	5.5	14.5	21.0	28.4	7.9	32.2	947
45-49	3.3	12.4	17.4	24.7	8.3	28.4	822
Ամուսնական կարգավիճակը							
Երբևէ չամուսնացած	4.8	11.6	16.1	22.9	4.1	27.7	1851
Հարցման պահին ամուսնացած	5.0	15.8	22.1	29.5	7.6	35.0	4125
Նախկինում ամուսնացած	4.9	11.4	15.7	22.6	6.9	26.8	455
Կենդանի երեխաների թվաքանակը							
0	4.8	12.0	16.2	22.4	4.3	27.7	2121
1-2	3.9	12.8	17.6	24.7	6.5	29.5	2590
3-4	6.6	18.8	27.2	36.1	9.1	41.6	1630
5+	8.1	26.4	40.9	45.3	15.8	55.4	89
Բնակավայրը							
Քաղաքային	2.4	9.1	11.7	17.9	4.1	22.0	3942
Գյուղական	8.9	22.4	32.9	41.8	10.4	48.8	2488
Մարզը							
Երևան	1.4	6.1	7.2	10.5	2.7	13.3	2206
Արագածոտն	10.3	25.0	38.4	49.8	14.0	56.2	279
Արարատ	2.5	12.1	18.8	26.2	3.5	33.0	642
Արմավիր	6.1	20.4	30.5	45.7	7.9	49.7	553
Գեղարքունիք	18.0	31.3	44.8	57.7	16.8	64.2	484
Լոռի	4.6	17.1	20.8	25.9	8.3	35.0	489
Կոտայք	7.6	20.0	30.3	43.4	9.2	48.8	505
Շիրակ	2.6	14.8	20.1	22.8	8.1	30.1	611
Սյունիք	3.6	10.9	16.4	22.3	4.0	24.7	271
Վայոց ձոր	7.9	13.1	20.1	27.7	6.8	34.5	113
Տավուշ	8.5	18.3	22.4	34.9	6.9	44.4	278
Կրթությունը							
Տարրական/միջին	12.4	26.9	36.0	41.9	13.5	49.3	593
Միջնակարգ	6.4	18.3	27.5	34.9	8.4	41.3	2341
Միջնակարգ-մասնագիտական	3.4	12.3	15.8	24.7	5.1	29.8	2295
Բարձրագույն	1.3	4.0	5.0	9.3	2.2	11.3	1201
Հարցման պահին զբաղվածության կարգավիճակը							
Չի աշխատում	4.5	14.3	19.7	26.3	6.4	32.3	4374
Աշխատում է կանխիկ վաստակով	2.9	8.2	10.9	17.4	4.1	19.5	1374
Աշխատում է անկանխիկ վաստակով	11.4	26.1	39.6	52.2	12.6	58.3	682
Կնոջ կողմից կայացրած վերջնական որոշումների քանակը							
0	8.1	17.5	22.4	27.9	7.0	34.5	865
1-2	5.7	16.2	22.3	30.4	7.0	36.3	1437
3-4	4.7	14.0	22.0	31.1	6.4	36.4	1614
5	3.5	12.2	16.3	22.4	6.2	26.6	2514
Ընդամենը	4.9	14.3	19.9	27.1	6.5	32.3	6430

† Կա'մ ինքնուրույն, կա'մ որևէ մեկի հետ համատեղ:

Կանանց 32 տոկոսը համաձայն է տղամարդու կողմից կնոջ ծեծն արդարացնող առնվազն

մեկ պատճառի հետ: 27 տոկոսը գտնում է, որ ամուսինը կարող է ծեծել կնոջը, եթե նա անտեսում է երեխաներին, 20 տոկոսը՝ եթե կինը դուրս է գալիս տնից առանց ամուսնուն զգուշացնելու, **14 տոկոսը՝ երբ կինը վիճում է ամուսնու հետ**, 7 տոկոսը՝ երբ կինը մերժում է ամուսնու հետ ունենալ սեռական հարաբերություններ, և 5 տոկոսը՝ երբ կինն այրում է կերակուրը:

Հարցման պահին ամուսնացած կանանց 35 տոկոսը համաձայն է եղել կնոջ ծեծն արդարացնող առնվազն մեկ պատճառի հետ այս տոկոսն ավելի բարձր է, քան երբևէ չամուսնացած կամ նախկինում ամուսնացած եղած կանանց տոկոսի հետ (համապատասխանաբար՝ 28 և 27 տոկոս): Գյուղաբնակ կանանց մոտավորապես կեսը (49 տոկոս) համաձայն է եղել կնոջ ծեծն արդարացնող առնվազն մեկ պատճառի հետ՝ ի տարբերություն քաղաքաբնակ կանանց 22 տոկոսի: Համեմատաբար բարձր կրթությամբ, ինչպես նաև կանխիկ դրամ վաստակող կանայք ավելի քիչ են հակված եղել համաձայնվելու որևէ պատճառի հետ:

Տղամարդկանց նույնպես հարցեր են տրվել որոշակի դեպքերում կնոջ ծեծն արդարացնելու վերաբերյալ նրանց կարծիքը ճշտելու նպատակով: Ինչպես երևում է աղյուսակ 3.11.2-ից, տղամարդիկ ավելի են հակված համաձայնվել կնոջ ծեծն արդարացող պատճառներից առնվազն մեկի հետ (42 տոկոս՝ ի տարբերություն կանանց 32 տոկոսի): Տղամարդկանց մոտավորապես մեկ չորրորդը համաձայն է եղել, որ ամուսինն իրավունք ունի ծեծել կնոջը, եթե նա անտեսում է երեխաներին, վիճում է իր հետ կամ դուրս է գալիս առանց զգուշացնելու: Տղամարդկանց 9 տոկոսի կարծիքով ամուսինն իրավունք ունի ծեծել կնոջը, եթե նա հրաժարվում է սեռական հարաբերություններից, իսկ 6 տոկոսը կարծում է, որ ամուսինը կարող է ծեծել կնոջը, եթե նա այրում է կերակուրը:

Գյուղաբնակ տղամարդիկ ավելի շատ են հակված եղել համաձայնվել կնոջ ծեծն արդարացնող առնվազն մեկ պատճառի հետ, քան քաղաքաբնակ տղամարդիկ (52 տոկոս՝ 35 տոկոսի դիմաց): Կանխիկ դրամ վաստակող կամ համեմատաբար բարձր կրթություն ունեցող տղամարդիկ ավելի քիչ են հակված եղել համաձայնվել վերոնշյալ պատճառներից որևէ մեկի հետ: Գոնե մեկ պատճառի հետ համաձայն տղամարդկանց տոկոսը փոփոխվում է ըստ մարզերի՝ 68 տոկոսից (Գեղարքունիքում) մինչև 9 տոկոս (Կոտայքում):

Աղյուսակ 3.11.2 Տղամարդկանց վերաբերմունքը կնոջ ծեծին

Տղամարդկանց տոկոսը, ովքեր համաձայն են, որ ամուսինն արդարացի է, երբ ծեծում է կնոջն առանձնահատուկ պատճառներով ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Կնոջը ծեծող ամուսինն արդարացի է, եթե կինը.						Տոկոսը Տղամարդկանց թվաքանակը (մարդ)
	Այրում է կերա կուրը	Վիճում է նրա հետ	դուրս է գալիս առանց զգուշաց նելու	Անուշաղ րության է մատնում երեխաներին	Համաձայն է Հրաժար վում է սեռ. հարա բերությ ունենալից	նշված որևէ պատճառի դեպքում	
Տարիքը							
15-19	7.3	30.0	23.1	30.6	12.0	44.6	263
20-24	5.9	29.9	21.9	25.7	9.7	43.1	215
25-29	8.1	29.8	33.2	29.0	9.0	45.4	194
30-34	5.9	31.1	22.3	27.8	7.9	43.5	205
35-39	5.1	29.8	34.4	33.5	10.7	48.2	237
40-44	4.4	24.2	20.6	26.7	8.4	37.5	275
45-49	5.0	17.3	17.9	21.6	3.1	34.1	203
50-54	4.7	26.3	17.8	19.9	11.0	36.7	126
Ամուսնական կարգավիճակը							
Երբևէ չամուսնացած	6.8	30.3	23.2	28.5	11.2	44.4	530
Հարցման պահին ամուսնացած	5.2	26.0	24.4	27.1	8.1	40.6	1161
Նախկինում ամուսնացած	(13.5)	(28.2)	(31.2)	(17.1)	(4.6)	(50.6)	28
Կենդանի երեխաների թվաքանակը							
0	6.3	29.1	23.3	27.3	10.7	43.3	615
1-2	5.6	24.5	23.9	25.1	5.8	38.8	626
3-4	5.4	28.3	24.7	29.5	10.7	43.2	455
5+	(4.7)	(39.2)	(41.9)	(50.1)	(15.3)	(62.7)	23
Բնակավայրը							
Քաղաքային	3.5	23.4	17.1	20.0	6.1	34.9	1024
Գյուղական	9.2	33.2	34.5	38.4	13.2	52.2	695
Մարզը							
Երևան	2.0	21.0	13.4	14.5	6.0	29.0	582
Արագածոտն	4.3	27.3	26.6	56.8	3.6	65.5	78
Արարատ	12.2	31.7	46.0	40.3	14.4	54.7	177
Արմավիր	9.0	45.5	33.8	36.6	11.0	49.0	172
Գեղարքունիք	24.8	53.8	52.1	55.6	26.5	68.4	124
Լոռի	3.4	26.4	28.7	37.9	12.6	57.5	119
Կոտայք	0.0	2.4	7.1	8.7	0.0	9.4	137
Շիրակ	5.0	28.1	20.1	23.7	7.9	49.6	161
Սյունիք	4.2	32.8	26.9	42.0	11.8	53.8	65
Վայոց ձոր	0.0	31.7	24.8	32.7	9.9	43.6	25
Տավուշ	2.5	20.9	15.2	10.8	1.9	34.8	79
Կրթություն							
Տարրական/միջին	10.6	33.3	30.1	33.2	15.3	47.3	245
Միջնակարգ	7.8	29.5	26.1	32.9	10.0	45.5	510
Միջնակարգ-մասնագիտական	3.8	26.6	25.0	26.2	6.5	42.2	588
Բարձրագույն	3.1	21.7	16.2	18.2	7.3	33.0	376
Հարցման պահին զբաղվածության կարգավիճակը							
Չի աշխատում	4.5	27.0	22.6	26.4	9.0	41.3	917
Աշխատում է կանխիկ վաստակով	4.3	22.9	18.1	21.1	6.3	34.4	555
Աշխատում է անկանխիկ վաստակով	14.2	38.9	43.5	45.3	15.1	61.2	247
Կնոջ կողմից կայացվող վերջնական որոշումների քանակը [†]							
0	19.1	44.1	39.8	41.8	26.1	55.9	77
1-2	11.0	41.5	37.1	45.6	17.3	60.9	258
3-4	4.9	29.3	25.6	28.9	8.0	45.7	834
5	2.9	15.4	13.6	14.6	4.2	25.2	549
Ընդամենը	5.8	27.4	24.1	27.4	9.0	41.9	1719

[†] Կամ ինքնուրույն, կամ որևէ մեկի հետ միասին:
Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

3.10 Սեռական հարաբերությունները մերժելու նկատմամբ վերաբերմունքը

Ում հետ և երբ սեռական հարաբերություններ ունենալու որոշման վերահսկումը կնոջ կողմից ժողովրդագրական և առողջության հարցերի կտրվածքով կարևոր կիրառական բնույթ ունի: ՀԺԱՀ-ը ներառում է հետևյալ հարցը, թե կարծում է արդյոք հարցվողը, որ արդարացված է ամուսնու հետ ունենալ սեռական հարաբերություններ ունենալու կնոջ մերժումը՝ հետևյալ չորս հանգամանքներում. եթե կինը հոգնած է կամ վատ տրամադրություն ունի, եթե նա վերջերս է ծննդաբերել, եթե նա գիտի, որ ամուսինն ունի սեռական հարաբերություններ այլ կանանց հետ, կամ, եթե նա գիտի, որ իր ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություն: Այս չորս հանգամանքներն են, քանի որ դրանք արդյունավետ են կնոջ իրավունքների և կնոջ առողջության հարցերը համադրելիս:

Աղյուսակ 3.12.1-ը ցույց է տալիս այն կանանց տոկոսը, ովքեր նշել են, որ կինն արդարացի է մերժում իր ամուսնու հետ սեռական հարաբերություններն՝ ըստ հիմնական բնութագրիչների: Աղյուսակը նույնպես ցույց է տալիս, թե ինչպես է փոփոխվում կնոջ կարծիքը սեռական հարաբերությունները մերժելու հարցում՝ ըստ նրա որոշումներ կայացնելու անկախության և կնոջ ծեծին նրա վերաբերմունքի, որոնք հանդիսանում են կնոջ իրավասության կարևոր ասպեկտները:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի կանանց 58 տոկոսը համաձայն է եղել, որ կինն արդարացի է հրաժարվում իր ամուսնու հետ սեռական հարաբերություններից՝ ըստ բոլոր չորս ընտրված պատճառների: Հատկապես կանանց 66 տոկոսը նշել է, որ կինը կարող է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություններ, եթե նա ունի վատ տրամադրություն կամ հոգնած է, 79 տոկոսը նշել է, որ կարող է մերժել, եթե կինը վերջերս է ծննդաբերել, 81 տոկոսը՝ եթե կինը գիտի, որ ամուսինն ունի սեռական հարաբերություններ այլ կնոջ հետ, և 89 տոկոսը պատասխանել է, որ կինը կարող է մերժել, եթե նա գիտի, որ ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություն (ՍՃՓՀ):

Ընդհանուր առմամբ, կանանց միայն 9 տոկոսը համաձայն չի եղել բերված պատճառներից և ոչ մեկի հետ, ըստ որոնց կինը մերժում է ամուսնուն ունենալ սեռական հարաբերություններ: Համեմատաբար երիտասարդ կանայք ավելի հաճախ չեն համաձայնվում բերված պատճառներից և ոչ մեկի հետ. 15-19 տարեկան կանանց մեկ չորրորդը **չի կարծում, որ կինն իրավասու է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություններ բերված որևէ հանգամանքում**: Այն կանայք, ովքեր երբեք ամուսնացած չեն եղել կամ երեխաներ չեն ունեցել նույնպես համաձայն չեն եղել նշված պատճառներից և ոչ մեկի հետ: Տարրական/միջին կրթություն ունեցող կանանց մեկ չորրորդը և միջնակարգ կրթություն ունեցող կանանց 11 տոկոսը համաձայն չեն եղել ամուսնուն մերժելու բերված բոլոր պատճառների հետ՝ համեմատած միջնակարգ-մասնագիտական կրթություն ունեցող կանանց 6 տոկոսի և բարձրագույն կրթություն ունեցող կանանց 3 տոկոսի հետ: Գործազուրկ կանանց 11 տոկոսը նույնպես համաձայն չեն եղել բերված պատճառներից և ոչ մեկի հետ, համեմատած աշխատող կանանց 4 տոկոսի հետ:

Կնոջ կարգավիճակի և ամուսնու հետ սեռական հարաբերություններից հրաժարվելու նկատմամբ նրա վերաբերմունքի միջև գոյություն ունի փոխկապակցվածություն: Օրինակ, տնային տնտեսությունում որոշում չկայացնող կանանց մեկ չորրորդը համաձայն չեն եղել ամուսնու հետ սեռական հարաբերություններից հրաժարվելու որևէ պատճառի հետ: Սա համեմատելի է կանանց 6 տոկոսի հետ, ովքեր տնային տնտեսությունում որոշումներ ընդունելու հարցում առավել ակտիվ մասնակցություն են ունեցել: Ավելին, կնոջ ծեծն ամուսնու կողմից արդարացնող հինգ կամ ավելի պատճառների հետ համաձայնված կանանց 19 տոկոսը համաձայն չի եղել սեռական հարաբերություններում ամուսնուն մերժելու և ոչ մի պատճառի հետ:

Աղյուսակ 3.12.2-ը ցույց է տալիս տղամարդկանց այն տոկոսը, ովքեր պատասխանել են, որ կինն արդարացի է մերժում ամուսնու հետ սեռական հարաբերություններ ունենալը՝ ըստ հիմնական բնութագրիչների: Ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ համաձայն են եղել բոլոր չորս ընտրված պատճառների հետ, որոնց դեպքում կինն արդարացի է մերժում ամուսնուն (59 տոկոս):

Աղյուսակ 3.12.1 Կանանց վերաբերմունքը սեռական հարաբերություններից հրաժարվելու պատճառներին

Կանանց տոկոսը, ովքեր կարծում են, որ կինն արդարացի է մերժում ամուսնու հետ սեռական հարաբերությունները որոշակի պատճառներով, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Կինն արդարացվում է ամուսնու հետ սեռական հարաբերություններից հրաժարվելու հարցում, եթե նա.						Կանանց թվա քանակը (մարդ)
	Հոգնած է, տրամա դրված չէ	Վերջերս է ծննդա բերել	Գիտի,որ ամուսինը սեռ.հարաբ. ունի մեկ այլ կնոջ հետ	Գիտի,որ ամուսինն ունի ՍՃՓՅ ¹	Համաձայն է բոլոր նշված պատճառների հետ	Համա ձայն չէ ոչ մի պատճ. հետ	
Տարիքը							
15-19	48.7	52.3	67.6	71.8	41.1	24.5	1160
20-24	63.8	82.1	82.5	90.1	56.4	7.2	1007
25-29	68.3	86.0	86.7	93.1	60.0	4.0	769
30-34	71.2	86.3	86.2	93.8	62.7	3.7	763
35-39	69.5	84.2	84.0	92.0	60.8	5.1	962
40-44	71.3	84.5	82.5	91.1	62.8	6.6	947
45-49	72.5	88.1	85.0	94.1	66.2	4.8	822
Ամուսնական կարգավիճակը							
Երբևէ չամուսնացած	52.2	60.7	71.2	78.0	44.4	19.0	1851
Հարցման պահին ամուսնացած	71.2	86.7	85.8	92.8	63.0	4.4	4125
Նախկինում ամուսնացած	69.2	85.0	82.0	92.7	63.3	7.0	455
Կենդանի երեխաների թվաքանակը							
0	53.5	63.0	72.1	79.3	45.6	17.5	2121
1-2	71.0	87.8	87.1	93.8	64.4	4.1	2590
3-4	72.2	86.1	84.1	92.2	63.0	5.0	1630
5+	70.6	81.6	79.1	88.2	52.7	4.7	89
Բնակավայրը							
Քաղաքային	65.4	80.1	83.1	91.1	58.6	7.2	3942
Գյուղական	65.9	77.6	78.4	84.6	56.2	11.2	2488
Մարզը							
Երևան	66.3	81.2	85.0	92.1	60.5	6.0	2206
Արագածոտն	78.3	82.9	89.7	96.7	67.6	2.9	279
Արարատ	70.6	79.6	71.6	84.2	53.7	10.3	642
Արմավիր	60.4	81.4	83.2	92.9	53.1	4.6	553
Գեղարքունիք	66.9	72.2	73.4	79.1	57.3	15.5	484
Լոռի	65.5	77.8	79.5	84.8	55.5	12.5	489
Կոտայք	73.0	84.3	89.0	93.3	65.6	4.5	505
Շիրակ	52.6	73.8	80.9	87.6	49.8	11.0	611
Սյունիք	58.5	65.8	62.6	70.4	51.6	28.7	271
Վայոց ձոր	69.9	77.1	85.2	86.7	62.4	8.7	113
Տավուշ	63.7	83.7	82.1	88.1	54.8	7.1	278
Կրթությունը							
Տարրական/միջին	52.1	60.6	65.6	71.9	43.7	23.4	593
Միջնակարգ	63.0	74.6	79.6	85.0	54.3	11.3	2341
Միջնակարգ-մասնագիտական	68.8	83.9	83.5	92.6	60.9	5.6	2295
Բարձրագույն	71.2	87.9	88.2	96.0	65.0	2.8	1201
Զբաղվածությունը հարցման պահին							
Չի աշխատում	63.2	76.4	80.0	86.3	55.9	10.9	4374
Աշխատում է կանխիկ վաստակով	70.3	86.5	85.1	94.8	63.8	4.3	1374
Աշխատում է անկանխիկ վաստակով	71.0	81.8	82.0	90.7	56.9	4.3	682
Կնոջ կողմից կայացրած վերջնական որոշումների քանակը²							
0	51.6	57.8	67.5	70.7	45.6	25.2	865
1-2	62.3	75.5	81.7	88.9	52.9	8.3	1437
3-4	65.9	85.7	85.3	92.8	57.6	4.5	1614
5	72.0	84.3	83.2	91.8	64.6	6.1	2514
Կնոջ ծեծն արդարացնող պատճառներ							
0	66.7	80.6	82.1	89.6	60.6	8.7	4352
1-2	62.5	76.8	80.7	89.1	50.4	6.9	1309
3-4	63.6	74.3	78.7	82.6	51.5	11.0	636
5	68.9	74.3	71.9	77.9	62.7	18.7	134
Ընդամենը	65.6	79.1	81.3	88.6	57.7	8.8	6430

¹ Սեռական ճանապարհով փոխանցվող վարակ:

² Կա՛մ ինքնուրույն, կա՛մ որևէ մեկի հետ համատեղ:

Աղյուսակ 3.12.2 Տղամարդկանց վերաբերմունքը սեռական հարաբերություններից հրաժարվելու պատճառներին

Տղամարդկանց տոկոսը, ովքեր կարծում են, որ կինն արդարացի է մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություններ որոշակի պատճառներով, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Կինն արդարացվում է ամուսնու հետ սեռական հարաբերություններից հրաժարվելու հարցում, եթե նա.

Հիմնական բնութագրիչներ	Հոգնած է, տրամադրված չէ	Վերջերս է ծննդաբերել	Գիտի, որ ամուսինը սեռ. հարաբ. ունի մեկ այլ կնոջ հետ	Գիտի, որ ամուսինը ունի ՍՃՓՉ ¹	Համաձայն է մշակված բոլոր պատճառների դեպքում	Համաձայն է ոչ մի դեպքում	Տղամարդկանց թվաքանակը (մարդ)
Տարիքը							
15-19	57.9	69.5	58.1	67.7	47.6	26.8	263
20-24	79.6	84.6	62.7	81.4	55.9	8.7	215
25-29	75.2	86.2	64.1	86.3	56.5	8.8	194
30-34	81.9	89.5	68.4	84.8	59.3	8.0	205
35-39	81.5	92.7	70.9	90.8	62.4	5.4	237
40-44	77.3	89.7	74.8	89.6	63.6	7.5	275
45-49	77.8	85.7	71.3	82.2	65.5	13.7	203
50-54	82.2	93.5	76.2	90.7	69.4	6.5	126
Ամուսնական կարգավիճակը							
Երբևէ չամուսնացած	66.3	76.2	59.7	73.6	50.9	19.2	530
Հարցման պահին ամուսնացած	80.2	90.0	71.5	88.2	63.0	7.7	1161
Նախկինում ամուսնացած	(82.1)	(91.1)	(74.3)	(87.2)	(69.7)	(4.3)	28
Կենդանի երեխաների թվաքանակը							
0	67.5	77.8	61.4	76.1	51.8	17.1	615
1-2	82.0	91.2	73.0	88.9	66.3	6.9	626
3-4	78.4	88.8	70.8	86.4	60.8	9.6	455
5+	(86.4)	(89.7)	(46.5)	(89.7)	(43.2)	(0.0)	23
Բնակավայրը							
Քաղաքային	77.8	91.9	73.9	90.2	64.2	6.8	1024
Գյուղական	73.1	76.7	59.1	74.0	52.2	17.7	695
Մարզը							
Երևան	86.4	98.2	83.9	96.7	76.3	1.6	582
Արագածոտն	97.8	97.8	77.7	98.6	74.8	0.0	78
Արարատ	88.5	85.6	72.7	89.2	63.3	3.6	177
Արմավիր	37.9	37.2	26.9	26.2	24.8	60.7	172
Գեղարքունիք	74.4	76.1	27.4	65.0	27.4	20.5	124
Լոռի	71.3	80.5	58.6	81.6	47.1	11.5	119
Կոտայք	89.0	96.9	96.9	100.0	88.2	0.0	137
Շիրակ	40.3	82.7	38.8	74.8	16.5	16.5	161
Սյունիք	94.1	98.3	87.4	100.0	80.7	0.0	65
Վայոց ձոր	66.3	76.2	75.2	87.1	55.4	9.9	25
Տավուշ	79.7	91.1	87.3	93.7	75.3	5.1	79
Կրթությունը							
Տարրական/միջին	63.1	73.9	59.1	68.6	49.2	23.5	245
Միջնակարգ	71.8	80.6	63.9	80.9	55.3	14.3	510
Միջնակարգ-մասնագիտական	81.4	90.3	72.4	86.6	62.8	7.1	588
Բարձրագույն	81.2	93.3	72.0	92.6	66.0	5.4	376
Հարցման պահին զբաղվածությունը							
Չի աշխատում	69.3	82.0	66.8	79.1	56.3	15.4	917
Աշխատում է կանխիկ վաստակով	83.3	93.8	75.7	92.4	68.3	4.7	555
Աշխատում է անկանխիկ վաստակով	83.8	81.5	54.3	80.8	50.5	10.3	247
Որոշումների քանակը, որտեղ կինն ունի հավասար իրավունք 2							
0	33.6	66.9	14.7	27.9	13.0	61.8	77
1-2	70.5	81.4	61.0	78.5	50.8	14.2	258
3-4	77.9	89.1	68.2	86.2	59.3	8.5	834
5	81.5	90.0	78.3	90.1	70.1	6.7	549
Կնոջ ծեծն արդարացնող պատճառներ							
0	77.5	86.5	74.8	86.8	67.3	11.3	999
1-2	75.0	87.6	61.0	84.5	52.0	9.3	449
3-4	72.5	81.0	51.9	71.1	39.6	12.9	222
5	68.4	75.2	62.8	69.4	55.1	19.2	50
Ընդամենը	75.9	85.8	67.9	83.6	59.4	11.2	1719

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

¹ Սեռական ճանապարհով փոխանցվող վարակ:

² Կա՛մ ինքնուրույն, կա՛մ որևէ մեկի հետ համատեղ:

Հատկապես, տղամարդկանց 76 տոկոսը համաձայն է եղել, որ կինը կարող է մերժել իր ամուսնուն հետ սեռական հարաբերությունները, եթե նա ունի վատ տրամադրություն կամ հոգնած է, 86 տոկոսը նշել է, որ կինը կարող է մերժել, եթե նա վերջերս է ծննդաբերել, և միայն 68 տոկոսն է պատասխանել, որ կինը կարող է մերժել, եթե նա գիտի, որ ամուսինն ունի սեռական հարաբերություններ այլ կնոջ հետ, իսկ 84 տոկոսը, եթե նա գիտի, որ ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություն (ՍՃՓՀ):

Ընդհանուր առմամբ, տղամարդկանց 11 տոկոսը համաձայն չի եղել նշված չորս պատճառներից և ոչ մեկի հետ, ըստ որոնց կինը կարող է մերժել ամուսնուն սեռական հարաբերություններ ունենալը: Ե՛վ կանանց, և՛ տղամարդկանց մոտ նկատվել է համանման իրավիճակ, ըստ որի երևում է, թե խմբերից որոնք հակված չեն եղել համաձայնվել վերոնշյալ պատճառներից և ոչ մեկի հետ: 15-19 տարեկան երիտասարդ տղամարդիկ (27 տոկոս), երբեք չամուսնացած (19 տոկոս), երեխա չունեցող (17 տոկոս), գյուղաբնակ (18 տոկոս), միայն տարրական/միջին կրթություն ունեցող (24 տոկոս) և գործազուրկ տղամարդիկ (15 տոկոս) միջինից ավելի շատ են հակված եղել չհամաձայնվելու ամուսնու հետ սեռական հարաբերություն ունենալու կնոջ մերժման որևէ պատճառի հետ:

Տղամարդիկ հարցվել են, թե ամուսնու որ գործողություններ են արդարացի, եթե նրա կինը մերժում է ունենալ սեռական հարաբերություններ: Հատկապես տղամարդիկ հարցվել են, թե եթե կինը մերժում է ամուսնուն սեռական հարաբերություններ ունենալ, արդյոք ամուսինն իրավունք ունի զայրանալ և դիտողություններ անել, հրաժարվել կնոջը դրամական միջոցներ տրամադրել, սեռական հարաբերություններ ունենալ մեկ այլ կնոջ հետ, կամ, այնուամենայնիվ, ուժ գործադրելով՝ նրա հետ ունենալ սեռական հարաբերություններ: Աղյուսակ 3.13-ը ցույց է տալիս այն տղամարդկանց տոկոսը, ովքեր պատասխանել են, որ ամուսինն իրավունք ունի ձեռնարկել որոշակի գործողություններ, եթե կինը մերժում է սեռական հարաբերություններ ունենալ իր հետ, երբ նա ցանկանում է:

Ընդհանուր առմամբ, տղամարդկանց 40 տոկոսը համաձայն է եղել բերված միջոցներից առնվազն մեկի հետ, ըստ որոնց տղամարդը պետք է որոշակի գործողություններ նախաձեռնի, եթե նրա կինը մերժում է ունենալ սեռական հարաբերություններ, երբ նա ցանկանում է: Հատկապես, տղամարդկանց մեկ երրորդը վստահ է, որ ամուսինն իրավունք ունի զայրանալ կամ դիտողություն անել կնոջը, 20 տոկոսը նշում է, որ նա իրավունք ունի ունենալ սեռական հարաբերություններ մեկ այլ կնոջ հետ, 6 տոկոսը կարծում է, որ նա իրավունք ունի զրկել կնոջը դրամից կամ այլ ֆինանսական օժանդակությունից, և 3 տոկոսի կարծիքով՝ տղամարդն իրավունք ունի ուժ գործադրել և սեռական հարաբերություն ունենալ՝ կնոջ կամքին հակառակ:

Ամուսնուն արդարացնող միջոցներից զոնե մեկի հետ համաձայն տղամարդկանց համամասնությունը փոքր-ինչ փոփոխվում է տարբեր տարիքի, ամուսնական կարգավիճակի, բնակավայրի և կրթական մակարդակի տղամարդկանց մոտ: Այնուամենայնիվ, էական տարբերություն գոյություն ունի տարբեր մարզերում բնակվող տղամարդկանց միջև: Ի համեմատություն Կոտայքի տղամարդկանց 5 տոկոսի և Տավուշի ու Արմավիրի տղամարդկանց 6 տոկոսի, Գեղարքունիքի տղամարդկանց 80 տոկոսը համաձայն է եղել բերված միջոցներից զոնե մեկի հետ: Տղամարդկանց 12 տոկոսը Գեղարքունիքում և 9 տոկոսը Լոռիում վստահ են, որ եթե կինը մերժում է, ապա ամուսինն իրավունք ունի ուժ գործադրելով սեռական հարաբերություններ ունենալ իր կնոջ հետ: Այս տվյալները համեմատելի են այլ մարզերում սույն դեպքի համար գրանցված մոտ 5 տոկոսի հետ:

Աղյուսակ 3.13 Տղամարդկանց համաձայնությունը որոշակի գործողություններին, որ ամուսիններն արդարացիորեն ձեռնարկում են, եթե կինը հրաժարվում է սեռական հարաբերություններից

Տղամարդկանց տոկոսը, ովքեր նշում են, որ ամուսինն իրավունք ունի որոշակի գործողություններ ձեռնարկել, եթե կինը հրաժարվում է սեռական հարաբերություններից, նրա ցանկության դեպքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Գործողություններ, որ ամուսինն իրավունք ունի ձեռնարկել, եթե կինը հրաժարվում է սեռական հարաբերություններից					
	Չայրա-նալ և հանդի-մանել նրան	Ձրկել ֆինանսա-կան աջակ-ցությունից	Ուժ գործա-այնուա մենայնիվ, սեռ. հարաբ.	Սեռ. հարաբ. ունենալ մեկ ուրիշի հետ	Համաձայն է գոնե մի դեպքում	Տղամարդ-կանց թվա քանակը (մարդ)
Տարիքը						
15-19	34.9	10.4	4.5	19.7	38.6	263
20-24	32.3	5.1	2.6	21.7	40.2	215
25-29	40.3	6.9	4.4	24.9	45.9	194
30-34	31.9	5.4	1.1	22.8	41.0	205
35-39	38.6	3.9	1.1	20.5	44.3	237
40-44	33.4	5.6	2.3	17.5	40.8	275
45-49	26.8	2.9	3.5	15.2	33.9	203
50-54	26.6	1.8	1.3	12.6	29.6	126
Ամուսնական կարգավիճակը						
Երբևէ չամուսնացած	34.4	8.1	3.8	22.8	41.1	530
Հարցման պահին ամուսնացած	33.0	4.5	2.2	18.1	39.2	1161
Նախկինում ամուսնացած	(38.4)	(0.0)	(0.0)	(21.7)	(40.3)	28
Բնակավայրը						
Քաղաքային	30.9	4.0	1.4	18.4	38.4	1024
Գյուղական	37.4	7.9	4.5	21.5	41.9	695
Մարզը						
Երևան	33.9	3.8	0.7	19.4	42.4	582
Արագածոտն	33.1	5.0	0.7	21.6	44.6	78
Արարատ	66.9	10.1	2.2	35.3	72.7	177
Արմավիր	4.1	2.1	2.1	3.4	6.2	172
Գեղարքունիք	73.5	16.2	12.0	56.4	80.3	124
Լոռի	46.0	11.5	9.2	20.7	52.9	119
Կոտայք	4.7	0.0	0.0	0.0	4.7	137
Շիրակ	19.4	4.3	2.9	5.8	23.0	161
Սյունիք	44.5	7.6	3.4	43.7	60.5	65
Վայոց ձոր	49.5	5.9	4.0	19.8	55.4	25
Տավուշ	3.2	1.3	0.6	2.5	5.7	79
Կրթությունը						
Տարրական/միջին	36.9	10.3	5.2	21.2	42.1	245
Միջնակարգ	35.1	6.0	3.1	19.9	38.8	510
Միջնակարգ-մասնագիտական	33.1	5.4	1.7	19.3	42.0	588
Բարձրագույն	29.8	2.2	1.9	18.7	36.3	376
Ընդամենը	33.5	5.6	2.7	19.6	39.8	1719

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Մ. Խաչիկյան, Ս. Ղարիբյան և Յ. Նյուրի

4.1. Ներածություն

Պտղաբերությունը պայմանավորող գործոնները կարելի է դասակարգել երկու հիմնական կատեգորիաների՝ կենսաբանական և սոցիալական: Վերարտադրելու ունակությունը, որը պայմանավորված է կենսաբանական գործոններով, սովորաբար կոչվում է «պտղավետություն»: Կնոջ պտղավետությունը տարիքի հետ կապված տարբեր է. այն սկսում է աճել առաջին դաշտանից հետո՝ հասնելով առավելագույն մակարդակի քսանականներին և ապա սկսում է նվազել՝ մոտենալով դաշտանադադարին (ժամանակ, երբ կինն այլևս ձվազատում չի ունենում ու դաշտան չի տեսնում):

Կենսաբանական բաղադրիչը, թեև անրաաժեշտ, սակայն ինքնին բավարար պայման չէ պտղաբերության համար: Մարդկանց սոցիալական միջավայրն է մեծապես որոշում, թե, վերարտադրելու ունակությամբ օժտված լինելով, զույգերն իրականում կունենա՞ն երեխաներ, թե՛ ոչ, և եթե այո, ապա քանի երեխա և ինչ ընդմիջումներով: Երբ խոսքը վերաբերում է կենդանի զավակ ունենալուն, այլ կերպ ասած կենդանի պտղով ծննդաբերություններին, ժողովրդագիրները սովորաբար օգտագործում են «պտղաբերություն» տերմինը:

Միացյալ ազգերի կազմակերպության սահմանմամբ (1999թ.) կենդանի պտղով ծննդաբերությունը՝ դա «սաղմնավորման արդյունքի ամբողջական արտազատումը կամ հեռացումն է մորից, երբ այդ անջատումից հետո, անկախ հղիության տևողությունից, այն շնչում է կամ կյանքի որևէ այլ նշույլ է ցուցաբերում ...»

Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերով հետազոտության արդյունքում ստացված տվյալների միջոցով հաշվարկվել են պտղաբերության մի շարք չափանիշներ: Տարիքին բնորոշ պտղաբերության գործակիցները (ՏՊԳ) արտացոլում են սահմանված տարիքային միջակայքի կանանց ծննդաբերությունների թվաքանակը՝ 1000 կնոջ հաշվով: Այս հետազոտության մեջ ՏՊԳ-ն ամեն մի որոշակի տարիքային միջակայքի համար հաշվարկվել է հետևյալ կարգով. հարցմանը նախորդող 1-36 ամիսների ընթացքում տվյալ տարիքային միջակայքի կանանց ծննդաբերությունների թվաքանակը բաժանվել է այդ նույն տարիքային միջակայքի կանանց, ըստ կյանքի ապրած տարիների, թվաքանակի վրա:

ՏՊԳ-ների վրա հիմնված պտղաբերության ամբողջական գործակիցը (ՊԱԳ) առավել հաճախ օգտագործվող պտղաբերության գումարային ցուցանիշներից մեկն է: ՊԱԳ-ի մեկնաբանությունը հետևյալն է. դա ծնված երեխաների այն ենթադրյալ միջին թվաքանակն է, որը կինը պետք է ունենար իր ողջ կյանքի ընթացքում, եթե վերարտադրողական տարիքում նա ապրած լիներ ներկայումս դիտարկվող պտղաբերության տարիքային գործակիցների պայմաններում: ՊԱԳ-ը հաշվարկելու համար գումարված են տարիքին բնորոշ ընթացիկ պտղաբերության գործակիցները, այդ գումարը բազմապատկված է 5-ով (եթե գործածվում են կանանց 5-ամյա տարիքային խմբերը), այնուհետև ստացված թիվը բաժանված է 1000-ի: Պտղաբերության ամբողջական գործակցի կարևոր հատկանիշներից է, որ դրա վրա չեն ազդում բնակչության տարիքային բաշխումները:

Հայաստանի ժողովրդագրական և առողջության հետազոտությանը (ՀԺԱՀ) մասնակցած բոլոր կանայք հարցման են ենթարկվել իրենց վերարտադրողական ողջ պատմության վերաբերյալ: Այդ

պատմությունները գրանցելիս յուրաքանչյուր կնոջ հարց է տրվել, թե նա ընդհանուր առմամբ քանի հղիություն է ունեցել, այդ թվում ավարտված կենդանի կամ մահացած պտղով ծննդաբերություններով, ինչպես նաև հարուցված կամ ինքնաբեր վիժումներով: Այս ընդհանրացված տվյալները ստանալուց հետո արձանագրվել են տվյալներ ամեն մի հղիության հետ կապված իրադարձությունների վերաբերյալ: Գրանցվել է յուրաքանչյուր հղիության տևողությունը, ավարտման ամիսն ու տարեթիվը և ելքը: Ամեն մի հղիության ելքը դասակարգվել է որպես կենդանի կամ մահացած պտղով ծննդաբերություն, ինքնաբեր կամ հարուցված վիժում, կամ էլ ինքնահարույց վիժում: Տեղեկատվություն է հավաքագրվել վերջին ավարտված հղիության մասին, որից հետո գրանցվել են նախավերջին հղիության տվյալները և այդպես շարունակ: Կենդանի պտղով յուրաքանչյուր ծննդաբերության համար տեղեկատվություն է գրանցվել երեխայի սեռի, նրա զոյատևման կարգավիճակի և տարիքի մասին՝ կենդանի մնացած երեխաների համար, կամ էլ տարիքը մահվան պահին, եթե երեխաները մահացել են:

Վերարտադրողական պատմություններից հավաքագրված տեղեկատվությունը հնարավորություն է ընձեռում մոտավոր ձևով գնահատել պտղաբերության ընթացիկ մակարդակներն ու միտումները, դրանց տարբերակումները, ինչպես նաև երբևէ ծնված և կենդանի երեխաների թվաքանակը, ծննդաբերությունների միջև ընկած ընդմիջումները, տարիքն առաջին ծննդաբերության պահին: Ուսումնասիրվել է նաև դեռահասության շրջանում հղիանալու և մայրանալու հաճախականությունը:

4.2. Պտղաբերության ընթացիկ մակարդակները

Աղյուսակ 4.1-ում և գծապատկեր 4.1-ում ներկայացված են հարցմանը նախորդող երեք տարիների համար տարիքին բնորոշ և ամբողջական պտղաբերության գործակիցները՝ 1997թ. նոյեմբերից մինչև 2000թ. նոյեմբեր ամիսների միջև ընկած ժամանակահատվածին համապատասխան: Այդ գործակիցների հաշվարկման համար ընտրվել է երեքամյա ժամանակահատված (ոչ ավելի երկար կամ կարճ), որպեսզի ապահովվի տեղեկատվության առավել թարմությունը, հնարավորին չափ նվազեցվի հարցվողների ընտրության սխալը և ծննդաբերությունների հերթականությունը շփոթելու հավանականությունը:

Հայկական այբ իրենց վերարտադրողական կյանքը սկսում են իրենց քսանական տարիներից: Իրականում, ծննդաբերությունները այդ տարիքում, ինչպես քաղաքաբնակների, այնպես էլ գյուղաբնակների շրջանում կազմում են պտղաբերության ամբողջական գործակիցների մոտ 70 տոկոսը: Տարիքին բնորոշ պտղաբերության ամբողջական գործակիցն ամենաբարձրն է 20-24 տարեկան կանանց շրջանում, անկախ նրանց բնակության վայրի: Մինչդեռ, այդ տարիքային խմբի քաղաքաբնակ կանանց պտղաբերության գործակիցը զգալիորեն ավելի ցածր է գյուղաբնակ կանանց համեմատ (116 ծնունդ՝ 206-ի դիմաց, 1000 կնոջ հաշվով):

Աղյուսակ 4.1 Ընթացիկ պտղաբերությունը

Պտղաբերության տարիքին բնորոշ և գումարային պտղաբերության գործակիցներն ու ծնելիության համախառը ցուցանիշը հարցմանը նախորդող երեք տարիների համար, ըստ քաղաքային/գյուղական բնակավայրերի, Հայաստան 2000թ. (%)


Տարիքային խումբը և ցուցանիշը	Բնակավայր		
	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
Տարիքը			
15-19	33	75	50
20-24	116	206	149
25-29	86	91	88
30-34	32	40	35
35-39	19	11	16
40-44	4	1	3
45-49	0	1	0
Ցուցանիշները/գործակիցները			
Պտղաբերության ամբողջական գործակից 15-49 ¹	1.5	2.1	1.7
Պտղաբերության ամբողջական գործակից 15-44 ¹	1.5	2.1	1.7
Պտղաբերության համընդհանուր ցուցանիշ ²	47	69	56
Ծնելիության համախառը ցուցանիշ ³	12.1	16.3	13.9

¹ Պտղաբերության ամբողջական գործակիցներն արտահայտված են մեկ կնոջ հաշվով
² Պտղաբերության համընդհանուր ցուցանիշն արտահայտված է 1000 կնոջ հաշվով (ծնունդների թիվը բաժանած է 15-44 տարեկան կանանց թվի վրա)
³ Ծնելիության համախառը ցուցանիշն արտահայտված է 1000 մարդու հաշվով

Մանկածնությունը 15-19 տարեկան կանանց շրջանում կազմում է ամբողջ պտղաբերության մոտ 15 տոկոսը: Գյուղաբնակ դեռահասների մոտ պտղաբերությունը ավելի քան երկու անգամ բարձր է քաղաքաբնակ դեռահասների համեմատությամբ (75 կենդանի պտղով ծննդաբերություններ՝ 33-ի դիմաց, 1000 կնոջ հաշվով): Մանկածնությունը 30 տարեկանից հետո կազմում է ամբողջ պտղաբերության միայն 16 տոկոսը, մինչդեռ 40 տարեկանից հետո այն կազմում է պտղաբերության գործակցի ընդամենը մեկ տոկոսը:

Պտղաբերության ամբողջական գործակիցը հարցմանը նախորդող վերջին երեք տարիների համար մեկ կնոջ հաշվով կազմում է 1.7 երեխա: Այս գործակիցը ցածր է բնակչության վերարտադրությունն ապահովող պտղաբերության մակարդակից (որը 2.0-ից փոքր ինչ բարձր է): Քանի որ գյուղաբնակ կանանց պտղաբերության մակարդակները նրանց վերարտադրողական ողջ կյանքի ընթացքում, ավելի բարձր են քաղաքաբնակների նկատմամբ, ապա նրանց պտղաբերության ամբողջական գործակիցը զգալիորեն ավելի բարձր մակարդակի է հասնում՝ քաղաքաբնակ կանանց համեմատ (2.1՝ 1.5-ի դիմաց):

Գծապատկեր 4.1 Պտղաբերության տարիքային գործակիցներն ըստ բնակավայրի



Հայաստանի ՀԱԲ 2000թ.

4.3. Պտղաբերության տարբերակումներն ըստ հիմնական բնութագրիչների

Աղյուսակ 4.2-ը ներկայացնում է պտղաբերության ամբողջական գործակիցն ըստ հիմնական բնութագրիչների, որն Երևան քաղաքի համար կազմում է 1.4: Հատկանշական է նարգերի միջև գոյություն ունեցող ընդգծված տարբերությունը, որն սկսած ամենացածրից՝ 1.3-ից Կոտայքում, փոփոխվում է մինչև 2.5՝ Գեղարքունիքում: Այս տարբերությունների պատճառ, որոշ չափով, կարող է հանդիսանալ մասնակիցների ընտրության հետ կապված հնարավոր փոփոխականությունը (տես հավելված Բ):

Ինչպես և ակնկալվում էր, կրթության և պտղաբերության միջև գոյություն ունի բացասական կապ. այն է՝ տարրական/միջին (2.2) և միջնակարգ կրթություն ունեցող կանայք (1.9) ավելի շատ երեխա ունեն, քան միջնակարգ-մասնագիտական (1.6) կամ բարձրագույն կրթություն ունեցողները (1.4):

Ինչպես արդեն նշվել է, գյուղաբնակ կանանց շրջանում ՊԱԳ-ը 40 տոկոսով բարձր է քաղաքաբնակների նկատմամբ: Հարցման պահին հղի կանանց քաղաք-գյուղ տոկոսային տարբերակումն ավելի ցայտուն է արտահայտված. ՊԱԳ-ը գյուղաբնակ հղի կանանց շրջանում ավելի քան երկու անգամ բարձր է քաղաքաբնակ հղիների համեմատությամբ (ավելի քան 4 տոկոս՝ 2 տոկոսի դիմաց):

4.4. Պտղաբերության միտումները

Հայաստանի համար ամենաարդիական և բարդ հիմնախնդիրներից մեկն է վերջին 10-ամյակի ընթացքում նկատվող պտղաբերության անկումը: Ըստ պաշտոնական գնահատականների, հարցման պահին պտղաբերության մակարդակն ավելի քան կիսով չափ նվազել է 1991թ.-ի՝ Հայաստանի անկախությանը նախորդող տարիների ցուցանիշների համեմատությամբ: ՀԺԱՀ-ն արդյունքները նույնպես արձանագրում են պտղաբերության մակարդակի նվազման միտումները:

Պտղաբերության միտումները հասկանալու մեթոդներից մեկը ՏՊԳ-ների

Աղյուսակ 4.2 Պտղաբերությունն ըստ հիմնական բնութագրիչների

Պտղաբերության ամբողջական գործակիցը հարցմանը նախորդող 3 տարվա համար, հարցման պահին հղիների տոկոսային բաշխումը և 40-49 տարեկան կանանց կողմից երբևէ ծննդաբերած երեխաների միջին թվաքանակն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Պտղաբեր. ամբողջական ցուցանիշ ¹	Հղիների տոկոսը հարցման պահին	40-49 կանանց երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակը
			(%,%)
Բնակավայրը			
Քաղաքային	1.5	1.9	2.4
Գյուղական	2.1	4.4	3.1
Սարգը			
Երևան	1.4	1.8	2.2
Արագածոտն	2.0	4.5	3.0
Արարատ	1.9	4.8	2.9
Արմավիր	1.7	4.2	2.8
Գեղարքունիք	2.5	3.7	3.5
Լոռի	2.1	1.7	2.6
Կոտայք	1.3	2.2	2.7
Շիրակ	1.4	2.8	2.5
Սյունիք	1.6	3.0	3.0
Վայոց ձոր	2.4	3.1	3.0
Տավուշ	2.2	4.4	2.7
Կրթություն			
Տարրական/միջին	2.2	2.5	3.0
Միջնակարգ	1.9	3.3	2.9
Միջնակարգ-մասնագիտական	1.6	2.8	2.6
Բարձրագույն	1.4	2.5	2.1
Ընդամենը	1.7	2.9	2.6

¹ Ցուցանիշը վերաբերվում է 15-49 տարեկան կանանց:

Աղյուսակ 4.3 Պտղաբերության տարիքային ցուցանիշներ

Տարիքին բնորոշ պտղաբերության գործակիցները հարցմանը նախորդող 5 տարիների համար, ըստ մոր տարիքի ծննդաբերելիս, Հայաստան 2000թ.

Մոր տարիքը ծննդաբերելիս	Հարցմանը նախորդող տարիների թիվը			
	0-4	5-9	10-14	15-19
15-19	57	88	74	64
20-24	169	234	255	249
25-29	97	113	143	148
30-34	39	51	69	[65]
35-39	15	23	[27]	
40-44	2	[6]		
45-49	[0]			

Նշում. Տարիքին բնորոշ պտղաբերության գործակիցները ներկայացված են 1000 կնոջ հաշվով: Փակագծերում բերված գնահատականները ներգրավված չեն:


ուսումնասիրությունն է ժամանակի կտրվածքով: Քանի որ 50 և ավելի բարձր տարիքի կանայք հետազոտության մեջ չեն ընդգրկվել, ապա նրանց գործակիցները պարզապես բացառվել են՝ հետազոտությանը նախորդող տարիների ավելանալու հետ (տես աղյուսակ 4.3): Տվյալները ցույց են տալիս պտղաբերության նվազում վերջին 20 տարիների ընթացքում: Այս նվազումը հարցմանը նախորդող 10 տարիների ընթացքում մասնավորապես ակնհայտ է 15-19 և 20-24 տարեկան կանանց շրջանում: Օրինակ, հարցմանը նախորդող 5-9 տարիների ընթացքում 20-24 տարեկան կանանց ՏՊԳ-ն կազմում էր 234 ծնունդ՝ ամեն 1000 կնոջ հաշվով, իսկ վերջին 0-4 տարիների ընթացքում այդ գործակիցը նվազել է մինչև 169 (28 տոկոսով):

4.5 Պտղաբերության վերաբերյալ Հայաստանի կառավարության և ՀԺԱՀ-ի ցուցանիշների համեմատությունը

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, հանրապետության մակարդակով, 1998-2000 օրացույցային տարիների համար պաշտոնական ՊԱԳ-ը կազմել է 1.2 երեխա մեկ կնոջ հաշվով: Սակայն ՀԺԱՀ-ն գործակիցը կազմել է 1.7, որն էապես ավելի բարձր է: ՀԺԱՀ-ն և ԱՎԾ-ն թվերի միջև եղած տարբերությունը ուսումնասիրելու համար, կարելի է համեմատել պտղաբերության միտումները: Գծապատկեր 4.2-ը ցույց է տալիս, որ 1989-1991թթ.-ի համար ՀԺԱՀ-ն և ԱՎԾ-ն ցուցանիշները գրեթե նույնն են (2.8 և 2.6՝ համապատասխանաբար): Սակայն 1992-1995թթ. ընթացքում ստացված տվյալների միջև զգալի տարբերություն է նկատվում: Այսպես, ՀԺԱՀ-ն տվյալները գրեթե չեն փոփոխվում, մինչդեռ ԱՎԾ-ն ցուցանիշները 23 տոկոսով նվազել են (2.6-ից՝ 2.0): Ավելի ուշ ժամանակաշրջանում և ՀԺԱՀ-ն և ԱՎԾ-ն գործակիցները կայուն կերպով նվազում են: Ընդհանուր առմամբ, հարցմանը նախորդող տասնամյակի ընթացքում և ՀԺԱՀ-ն և ԱՎԾ-ն պտղաբերության ամբողջական գործակիցները նվազել են մեկ կնոջ հաշվով ավելի քան 1 երեխայով: Այսպես ՀԺԱՀ-ն ցուցանիշները նվազել են 39 տոկոսով, մինչդեռ ԱՎԾ-ը ցուցանիշների նվազում է գրանցել ավելի քան կիսով չափ (54 տոկոս):

ՀԺԱՀ-ն և ԱՎԾ-ն ցուցանիշների միջև տարբերություններն ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել տվյալների աղբյուրների համեմատելիության հետ կապված մի քանի հարցեր: Առաջինն այն է, որ ցուցանիշները հիմնված են բնակչության տարբեր խմբերի վրա: ՀԺԱՀ-ն ցուցանիշները հիմնված են հարցման պահին Հայաստանում բնակվող կին-բնակչության թվաքանակի վրա: Մյուս կողմից, ԱՎԾ-ն գործակիցները հիմնված են նախկին մարդահամարների ից հաշվարկված տվյալների վրա և հաշվի չեն առնվել տեղի ունեցող միգրացիան: Մշտական և առկա բնակչության թվաքանակների միջև եղած տարբերությունը կարող է նշանակալի լինել: Չնայած այն հանգամանքին, որ առկա բնակչության չափի մասին տեղեկատվությունը սուղ է, 1992-2000թթ. համար գրանցվել է ավելի քան 600000 բնակչության կորուստ (ՀՀ ՎՊՌՎՆ 2000թ.): Պետք է շեշտել, որ այդ տվյալները չեն պարունակում պտղաբերության համեմատության ողջ ժամանակահատվածը: Ինչպես փաստացի կերպով (դե ֆակտո), այնպես էլ իրավապես (դե յուրե) բնակչության թվաքանակը հավանաբար ավելի քիչ է: Այնուամենայնիվ, օգտագործելով այս պահպանողական գնահատականը՝ հնարավոր է եզրակացնել, որ բնակչության պաշտոնական թվաքանակի կառավարության գնահատականն մոտ 20 տոկոսով ավելի է, քան մշտական բնակչության թվաքանակը:

Գծապատկեր 4.2 Պտղաբերության ամբողջական գործակիցների (ՊԱԳ) միտումներն ըստ ՀԺԱՀ-ն և ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության




Հայաստանի ՀԱՅ 2000թ.

Դրանով կարելի է բացատրել ցուցանիշների միջև եղած տարբերությունները, մասնավորապես, 1992-1994թթ. ժամանակահատվածում, երբ նկատվում էր պտղաբերության էական նվազում ըստ ՀՀ ԱՎԾ-ն տվյալների, սակայն ոչ ըստ ՀԺԱՀ-ն: Չնայած միգրացիայի վերաբերյալ տվյալների սակավությանը, հիմք կա հավաստիանալու, որ Հայաստանից արտագաղթի ամենաբարձր մակարդակները գրանցվել են այդ տարիներին (ՄՕՍՍՈԱ և ԵՎՐՈՍՏԱՏ, 1999թ.): Քանի որ արտագաղթը պաշտոնապես գրանցված չէր, վերարտադրողական տարիքի կանանց թվաքանակի գերազնահատումը կարող էր պատճառ հանդիսանալ ՀՀ ԱՎԾ-ն ՊԱԳ-ի էապես ցածր մակարդակի: Ցուցանիշների միջև եղած տարբերությունները կարելի է վերագրել և այլ գործոնների, այդ թվում ՀԺԱՀ-ն մասնակիցների ընտրության հետ կապված հնարավոր փոփոխականությունը և ծնունդների թերի զեկուցումը ծնողների կողմից պետական գրանցման համակարգին:

Գծապատկեր 4.3-ը ցույց է տալիս ՀԺԱՀ-ն և ԱՎԾ-ն պտղաբերության տարիքին բնորոշ գործակիցները 1989-1991 և 1998-2000թթ.-ի համար: Էական է, որ ՊՏԳ-ը 1989-1991թթ.-ի համար գրեթե նույնն են: ՀԺԱՀ-ն գործակիցը զգալիորեն բարձր է միայն 20-24 տարեկան կանանց համար: 1998-2000թթ. ժամանակաշրջանում ՀԺԱՀ-ն գործակիցներն ավելի բարձր են բոլոր տարիքային խմբերի մոտ; տարբերությունը մասնավորապես արտահայտված է 20-24 և 25-29 տարեկան կանանց միջև:

ՀԺԱՀ-ն և ՀՀ ԱՎԾ-ն գործակիցների համեմատության հիման վրա հնարավոր է կատարել երկու հիմնական եզրակացություն: Առաջինն այն է, որ ՀԺԱՀ-ն արդյունքները հաստատում են պտղաբերության անկումը՝ գրանցված ՀՀ ԱՎԾ-ն կողմից վերջին տասնամյակի համար: Երկրորդը՝ շատ հնարավոր է, որ պտղաբերության պաշտոնական գործակիցները (ԱՎԾ-ն կողմից) Հայաստանում գոյություն ունեցող պտղաբերության իրական մակարդակներին թերի գնահատական է տրվում՝ երկրում բնակվող վերարտադրողական տարիքի կանանց ոչ հավաստի թվաքանակի պատճառով:

Գծապատկեր 4.3 Պտղաբերության տարիքային գործակիցների (ՊՏԳ) միտումներն ըստ ՀԺԱՀ-ն և ՀՀ Ազգային վիճակագրության ծառայության



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

4.6 Երբևէ ծնված և կենդանի երեխաները

Աղյուսակ 4.4-ը ներկայացնում է բոլոր կանանց և հարցման պահին ամուսնացած կանանց բաշխումն ըստ երբևէ ծնված երեխաների թվաքանակի: Երբևէ ծնված երեխաների թվաքանակի վերաբերյալ տվյալներն արտահայտում են վերջին 30 տարիների ընթացքում ծնվածների կուտակումը և, այդ պատճառով, քիչ են արտացոլում հարցման պահին պտղաբերության մակարդակները՝ մասնավորապես, երբ երկրում տեղի է ունեցել պտղաբերության անկում:

Հայաստանի կանայք, միջին հաշվով, ծննդաբերել են 2-ից պակաս երեխա իրենց քսանակամների վերջում: Նույնիսկ ամենամեծ տարիքային խմբերում երբևէ ծնված երեխաների միջին թվաքանակը չի գերազանցում 3-ից: Ինչպես և ակնկալվում էր, հարցման պահին ամուսնացած կանայք ավելի շատ էին ծննդաբերել, քան թե բոլոր կանայք ողջ տարիքային խմբերում: Հարցման պահին ամուսնացած և ընդհանուր ընտրանքի կանանց միջև արձանագրված տվյալների ամենամեծ տարբերությունը նկատվել է երիտասարդ կանանց շրջանում: Այդ կարելի է բացատրել ընդհանուր ընտրանքում չամուսնացած երիտասարդ կանանց մեծ թվաքանակի առկայությամբ, որոնք չէին ենթարկվել հղիանալու վտանգին: Տարբերություններն ավելի մեծ տարիքային խմբերում արտահայտում են ընդհանուր պտղաբերության նվազեցումը՝ կապված ամուսնության կազմալուծման ազդեցության հետ (ամուսնալուծություն կամ այրիություն):

Հարցման պահին ամուսնացած կանանց 12 տոկոսն ուներ միայն մեկ կենդանածին երեխա, 39 տոկոսը՝ 2 երեխա և 29 տոկոսը՝ 3 երեխա (գծապատկեր 4.4): Չորս կամ ավելի երեխաներ ունեցող կանանց թվաքանակը կազմել է 15 տոկոս:


Ընդհանուր առմամբ, հարցման պահին ամուսնացած 45-49 տարեկան կանանց 3 տոկոսը երբեք չի ունեցել կենդանածին երեխա: Սա հանդիսանում է առաջնային չբերության անուղղակի ցուցիչ: Կամովի երեխա չունենալը Հայաստանում շատ հազվադեպ երևույթ է, և կանանց հիմնական մասը ցանկանում է ունենալ ամենաքիչը մեկ երեխա՝ ամուսնությանը հաջորդող կարճ ժամանակահատվածում:

Աղյուսակ 4.4 Երբևէ ծնված և կենդանի երեխաները

Բոլոր կանանց և հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ երբևէ ծնված երեխաների (ԵԾԵ) թվաքանակի, երբևէ ծնված երեխաների և կենդանի երեխաների միջին թվաքանակն ըստ տարիքային խմբերի, Հայաստան 2000թ. (%)

Տարիքային խումբ	Երբևէ ծնված երեխաների թվաքանակը								Կանանց Ընդամենը	ԵԾԵ թվաքանակը (մարդ)	Կենդանի երեխաների միջին թվաքանակը	Գների միջին թվաքանակը
	0	1	2	3	4	5	6	7+				
ԲՈԼՈՐ ԿԱՆԱՅՔ												
15-19	95.6	3.4	0.9	0.1	0.0	0.0	0.0	0.0	100.0	1160	0.06	0.05
20-24	55.7	21.1	19.1	3.6	0.4	0.1	0.0	0.0	100.0	1007	0.72	0.70
25-29	18.3	17.4	42.0	17.4	4.3	0.4	0.1	0.0	100.0	769	1.74	1.66
30-34	8.9	8.4	45.2	27.0	8.0	1.9	0.4	0.1	100.0	763	2.25	2.14
35-39	7.2	6.6	37.3	32.2	12.1	3.5	0.7	0.4	100.0	962	2.51	2.37
40-44	8.8	6.9	30.7	34.8	13.6	4.3	0.4	0.5	100.0	947	2.55	2.35
45-49	8.9	6.5	29.2	31.4	15.2	5.7	2.0	1.2	100.0	822	2.70	2.45
Ընդամենը	32.7	9.8	27.4	19.8	7.3	2.2	0.5	0.4	100.0	6430	1.69	1.59
ՀԱՐՑՄԱՆ ՊԱՐԻՆ ԱՄՈՒՍՆԱԳԱԾ ԿԱՆԱՅՔ												
15-19	48.2	40.2	10.0	1.6	0.0	0.0	0.0	0.0	100.0	99	0.65	0.64
20-24	15.0	40.1	37.0	6.9	0.8	0.2	0.0	0.0	100.0	511	1.39	1.34
25-29	4.8	17.9	50.2	21.3	5.3	0.4	0.2	0.0	100.0	625	2.06	1.97
30-34	3.1	6.3	49.0	29.8	8.9	2.2	0.5	0.1	100.0	660	2.44	2.33
35-39	1.0	4.7	38.8	36.6	13.7	4.0	0.8	0.4	100.0	816	2.75	2.60
40-44	1.8	3.8	32.9	39.6	15.7	5.1	0.5	0.6	100.0	773	2.84	2.62
45-49	3.0	4.1	31.3	34.1	17.1	6.4	2.5	1.4	100.0	640	2.96	2.69
Ընդամենը	5.2	11.9	39.0	28.8	10.6	3.2	0.8	0.4	100.0	4125	2.43	2.28

Չճապատկեր 4.4 Հարցման պահին ամուսնացած կանանց երբևէ ծնված երեխաների թվաքանակի



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

4.7 Ծնունդների միջև միջակայքերը

Մեթոդը, աղբյուրը և հիմնական բնութագրիչները	Տեղեկատվության տեսակը			
	Տեղեկացվել է որ ստերիլացումը մշտատև է ¹	Տեղեկացվել է կողմնակի հետևանքների մասին ²	Տեղեկացվել է ինչ անել կողմնակի հետևանքների դեպքում ²	Տեղեկ. է հակաբեղմնավորման այլ մեթոդների մասին ³
Մեթոդը				
Հաբեր	42	(44.5)	(41.2)	(49.6)
ՆԱՊ	42	34.1	31.8	21.2
Կնոջ ստերիլացում	94.0	37.0	29.7	11.5
Մեթոդի սկզբնական աղբյուրը				
Պետական հիվանդանոց	94.4	55.6	48.4	30.4
Պետական պոլիկլինիկա	*	(44.5)	(41.4)	(29.5)
Կանանց կոնսուլտացիա	*	66.9	61.4	61.3
Բնակավայրը				
Քաղաքային	92.5	37.0	33.9	27.0
Գյուղական	95.6	33.3	29.2	17.4
Կրթությունը				
Տարրական/միջին	75.8	(25.5)	(15.7)	(9.7)
Միջնակարգ	(96.1)	31.4	28.6	16.6
Միջնակարգ-մասնագիտական	100.0	35.4	30.8	24.5
Բարձրագույն	87.2	43.0	41.8	32.8
Ընդամենը	94.1	35.5	32.0	23.0
Կանանց թվաքանակը (մարդ)	117	558	558	644

Նշում. Ընդամենը ներառում է ժամանակակից մեթոդ օգտագործողներին, ուն տվյալները և ձեռքբերման աղբյուրները ցույց չեն տրված դեպքերի փոքր թվերի պատճառով: Բոլոր մեթոդները, բացի ստերիլացումից ընդունվել են հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում: Սկզբնական աղբյուրը հարցման պահին օգտագործվող մեթոդի սկզբնական աղբյուրն է: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ թջվը հիմնված է ավելի քիչ քան 25 չկշռված դեպքերի վրա և սղվել է:

¹ Ստերիլացված կանայք, ովքեր տեղեկացվել են, որ այլևս չեն կարող երեխա ունենալ:

² Կնոջ ստերիլացում, հաբեր, ՆԱՊ, ներարկումներ և ինյակնտներ օգտագործողներից

³ Կնոջ անլացում, հաբեր, ՆԱՊ, ներարկումներ, ինյակնտներ, վագինալ մեթոդներ և ԼԱՄ օգտագործողներից

5.12 Ընտանիքի պլանավորման միջոցների օգտագործման մտադրությունը չօգտագործողների մոտ

Հակաբեղմնավորիչների կարիքներն ու օգտագործումը կանանց մոտ փոփոխվում է ըստ նրանց վերարտադրողական տարիքի: Հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող ամուսնացած կանանց հարցվել է, թե արդյոք նրանք մտադիր են օգտագործել ընտանիքի պլանավորման մեթոդներ ապագայում: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 5.13-ում:

Աղյուսակ 5.13 Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը ապագայում

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդ, ըստ ապագայում օգտագործելու մտադրության և կենդանի երեխաների թվաքանակի, Հայաստան 2000թ.

(%,%)

Մտադրությունը	Կենդանի երեխաների թվաքանակը					Ընդամենը
	0	1	2	3	4+	
Օգտագործել ապագայում	38.2	53.6	35.5	28.6	25.9	35.5
Հանդգլած չէ	26.2	17.6	19.1	13.3	14.2	17.4
Մտադիր չէ օգտագործել ժատասխան չկա	35.6	28.3	45.3	58.1	59.9	47.1
	0.0	0.4	0.0	0.0	0.0	0.1
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակը (մարդ)	148	250	591	448	191	1629

¹ Ներառյալ հարցման պահին հղիությունը

Հարցման պահին ամուսնացած հակաբեղմնավորիչներ չօգտագործող կանանց մեկ երրորդը (36%) նշել է, որ մտադիր է օգտագործել հակաբեղմնավորման որևէ մեթոդ հետագայում: Մեկ կենդանի երեխա ունեցող կանանց մեծ մասը (54%) մտադիր է հետագայում օգտագործել հակաբեղմնավորման մեթոդներ: Այս կանայք ավելի հակված են հակաբեղմնավորիչներ օգտագործել ապագայում, քան այն կանայք, ովքեր չունեն երեխա կամ ունեն երկու և ավելի երեխաներ:

Ընտանիքի պլանավորման մեթոդների չօգտագործման պատճառների իմացությունը շատ կարևոր է ծառայությունների որակի բարելավմանն ուղղված ծրագրերի պլանավորման համար: Աղյուսակ 5.14-ը ներկայացնում է հարցման պահին ամուսնացած, բայց հակաբեղմնավորիչներ չօգտագործող կանանց կողմից նշված ապագայում ընտանիքի պլանավորման մեթոդների չօգտագործման հիմնական պատճառները: Հակաբեղմնավորման մեթոդների չօգտագործման պատճառները փոփոխվում են ըստ տարիքի: Երիտասարդ կանանց մոտ չօգտագործման հիմնական պատճառը ընտանիքի պլանավորման նկատմամբ ընդդիմությունն է: 15-29 տարիքային խմբի կանայք միանշանակորեն ավելի հակված են նշել այս պատճառը, քան 30-49 տարեկան կանայք (28%` 15%-ի դիմաց): Մյուս կողմից, մեծահասակ կանանց մեծամասնությունը նշում է պատճառներ, որոնք կապված են ապագայում հղիանալու ցածր ռիսկի հետ, այն է` դժվար հղիանալը (25%), մեղմպառուզան կամ հիստերեկտոմիան (14%) և ոչ հաճախ սեռական հարաբերությունները (11%): Ինչպես մեծահասակ, այնպես էլ երիտասարդ կանանց 11 տոկոսը, որպես ապագայում ընտանիքի պլանավորման մեթոդների չօգտագործման պատճառ, նշել է առողջական խնդիրները:

Ընտանիքի պլանավորման մեթոդների

Աղյուսակ 5.14 Հակաբեղմնավորիչների չօգտագործման պատճառները

Հարցման պահին ամուսնացած և հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող կանանց տոկոսային բաշխումը, ովքեր ապագայում ևս մտադիր չեն հակաբեղմնավորման մեթոդ օգտագործել ըստ հիմնական պատճառների և ըստ տարիքի, Հայաստան, 2000թ. (%,%)

Պատճառը	Տարիքը		Բոլոր տարիքային խմբերը
	15-29	30-49	
Ցանկանում է երեխա ունենալ	14.1	2.4	3.2
Կողմնակի հետևանքներ	3.7	0.6	0.8
Առողջական խնդիրներ	10.8	11.1	11.1
Մտչելիությունը	2.3	0.0	0.2
Արժեքը	0.0	0.7	0.7
Հարմար չէ	4.3	0.2	0.5
Կրոնը	2.6	0.7	0.9
Դեմ է ընտանիքի պլանավորմանը	28.1	15.0	15.9
Ձուլընկերը դեմ է Ուրիշները հավանություն չեն տալիս	0.0	1.6	15.9
	0.0	0.2	0.2
Հազվադեպ սեռական հարաբերություններ/չունի սեռ. հարաբերություններ	4.8	10.9	10.5
Դժվար է հղիանում	11.7	25.1	24.2
Մեղմպառուզա/հիստերեկտոմիա	0.0	14.2	13.2
Այլ պատճառ	0.9	1.7	1.7
Չգիտի/պատասխան չկա	16.7	15.5	15.6
Ընդամենը	100.0	100.0	100
Կանանց թվաքանակը (մարդ)	53	714	766

ապագա պահանջարկի վերաբերյալ տեղեկություններ կարելի է ստանալ՝ հարցնելով որևէ մեթոդ չօգտագործող կանանց (ովքեր մտադիր են օգտագործել այն ապագայում), թե նրանք ինչ մեթոդ են նախընտրում օգտագործել: Աղյուսակ 5.15-ը ցույց է տալիս, թե ինչ մեթոդ են նախընտրում հարցման պահին ամուսնացած, բայց հակաբեղմնավորիչ մեթոդ չօգտագործող կանայք, ովքեր նշել են, որ մտադիր են օգտագործել այն ապագայում: ՆԱՊ-ը և ընդհատված սեռական հարաբերություններն ամենատարածված մեթոդներն են, որոնց նախապատվություն են տալիս կանայք (համապատասխանաբար 28% և 24%): 30 և ավելի բարձր տարիքի կանայք ավելի հաճախ նշում են ընդհատված սեռական հարաբերությունները (37%), որին հետևում է ՆԱՊ-ը (21%) և պահպանակը (16%): Երիտասարդ կանայք ավելի շատ նախընտրում են ՆԱՊ-ը (33%), չնայած 30 տարեկանից ցածր տարիքային խմբում 10-ից մեկը նախընտրում է պահպանակի, հաբերի և ընդհատված սեռական հարաբերությունների օգտագործումը (համապատասխանաբար 16%, 13% և 14%):

Աղյուսակ 5.15 Ապագայում օգտագործման համար նախընտրելի հակաբեղմնավորման մեթոդ

Հարցման պահին ամուսնացած հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող կանանց տոկոսային բաշխումը, ովքեր մտադիր են օգտագործել ապագայում, ըստ նախնորած մեթոդի և ըստ տարիքի, Հայաստան 2000թ. (%)

Նախընտրելի մեթոդ	Տարիքը		Բոլոր կանայք
	15-29	30-49	
Հաբեր	12.7	8.7	10.9
ՆԱՊ	32.7	20.6	27.5
Ներարկում	0.0	0.2	0.1
Դիաֆրագմա/փրփուր/գել	0.4	0.0	0.2
Պահպանակ	15.8	16.2	16.0
Ժամանակավոր ինքնագսպում	4.8	7.3	5.9
Ընդհատված սեռ. հարաբերություն.	13.6	37.4	23.9
Լակտացիոն ամենորեա	0.3	0.0	0.2
Կանացի պահպանակ	0.2	0.2	0.2
Լվացում	0.3	0.8	0.6
Համոզված չէ	19.3	8.4	14.6
Ընդամենը	100.0	100.0	100
Կանանց թվաքանակը (մարդ)	328	251	578

5.13 Ձանգվածային լրատվությամբ ընտանիքի պլանավորման հաղորդագրությունների ազդեցությունը

Ձանգվածային լրատվամիջոցները հնարավորություն են ընձեռում ընտանիքի պլանավորման վերաբերյալ տեղեկատվություն հաղորդել բնակչության լայն զանգվածներին: Լրատվամիջոցների նման ազդեցության մակարդակի վերաբերյալ տեղեկատվությունը անհրաժեշտ է ծրագրավորողներին և պլանավորողներին առավել արդյունավետ բացահայտելու բնակչության ենթախմբերը՝ տեղեկատվական, կրթական ու հաղորդակցական աշխատանքներ իրականացնելու համար:

Աղյուսակ 5.16-ը ցույց է տալիս, որ 10 կանանցից գրեթե 9-ը հարցմանը նախորդող մի քանի ամիսների ընթացքում տեսել են ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրություններ զանգվածային լրատվամիջոցներով: Այսպիսի բարձր տեղեկացվածությունը, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ հետազոտությանը նախորդող 3 ամիսների ընթացքում ՋԼՄ-ով (ռադիո, հեռուստատեսություն) իրականացվում էր “Կանաչ ճանապարհի քարոզարշավ ուղղված ընտանիքի պլանավորման իրազեկության բարձրացմանը”:

Հեռուստատեսությունը ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրության ամենատարածված աղբյուրն է՝ հարցվող կանանց 87%-ը տեսել է ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրություն հեռուստատեսությամբ: Բացառությամբ Լոռու մարզում բնակվող և տարրական կրթություն ունեցող կանանց, 10 կանանցից ավելի քան 8-ը (անկախ տարիքից, բնակության վայրից և կրթական մակարդակից) տեսել են ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրություններ հեռուստատեսությամբ: Չորս կանանցից մոտավորապես մեկը լսել է ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրություններ ռադիոյով (42%) կամ կարդացել թերթերում (38%):

Աղյուսակ 5.16 Ընտանիքի պլանավորման հաղորդագրությունների ազդեցությունը


Կանանց տոկոսային բաշխումը, ովքեր լսել կամ տեսել են ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրություններ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ կարդացել են բերթերում/ամսագրերում հարցմանը նախորդող վերջին մի քանի ամիսների ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Ընտանիքի պլանավորման հաղորդագրությունների աղբյուրը			Այս երեք աղբյուրներից ոչ մեկը	Կանանց թվաքանակը (մարդ)
	Ռադիո	Հեռուստացույց	Թերթեր/ամսագրեր		
Տարիքը					
15-19	40.5	84.6	33.6	14.6	1160
20-24	45.7	90.2	41.6	8.2	1007
25-29	43.6	90.6	42.7	8.2	769
30-34	40.9	87.2	38.1	11.8	763
35-39	39.5	85.7	37.1	12.5	962
40-44	42.2	85.7	38.3	13.3	947
45-49	41.2	87.1	36.2	11.8	822
Բնակավայրը					
Քաղաքային	49.7	88.8	44.6	10.0	3942
Գյուղական	29.6	84.6	27.6	14.3	2488
Մարզը					
Երևան	57.2	89.7	48.1	9.1	2206
Արագածոտն	58.3	87.0	53.9	12.0	279
Արարատ	33.5	93.3	37.6	6.4	642
Արմավիր	17.8	89.3	13.3	10.5	553
Գեղարքունիք	29.9	80.0	28.2	18.2	484
Լոռի	24.2	75.1	21.8	22.0	489
Կոտայք	31.2	87.4	20.7	11.2	505
Շիրակ	34.6	85.4	44.7	13.8	611
Սյունիք	63.6	89.3	56.1	9.3	271
Վայոց ձոր	58.7	90.4	57.0	8.3	113
Տավուշ	31.5	82.5	29.4	15.9	278
Կրթությունը					
Տարրական/միջին	21.6	70.8	17.5	28.4	593
Միջնակարգ	35.7	85.9	30.7	12.9	2341
Միջնակարգ-մասնագ.	89.3	40.9	9.3	2295	
Բարձրագույն	56.8	93.1	56.9	5.3	1201
Ընդամենը	41.9	87.2	38.0	11.6	6430

Ձգալի կապ գոյություն ունի ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրություններին անտարբեր կանանց մեջ՝ ըստ բնակության վայրի ու կրթական մակարդակի: Գյուղական վայրերում բնակվող կանայք և ցածր կրթական մակարդակ ունեցող կանանց ավելի քիչ են հետաքրքրել ընտանիքի պլանավորման վերաբերյալ հաղորդագրությունները, քան քաղաքային բնակություն և բարձրագույն կրթություն ունեցող կանանց (Գծապատկեր 5.4):

Գծապատկեր 5.4 Վերաբերմունքը ՁԼՄ-ի կողմից ընտանիքի պլանավորմանը նվիրված հաղորդումներին ըստ բնակավայրի



Հայաստանի ԺԼՀ 2000թ.

5.14 Կապն ընտանիքի պլանավորման մեթոդներ չօգտագործողների և ընտանիքի պլանավորման մեթոդներ տրամադրողների միջև

Աղյուսակ 5.17-ը ցույց է տալիս հակաբեղմնավորիչներ չօգտագործող կանանց տոկոսն ըստ ընտանիքի պլանավորման մեթոդներ տրամադրողների նկատմամբ նրանց վերաբերմունքի: Հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող կանանցից շատ քչերն են քննարկել ընտանիքի պլանավորման մեթոդները բուժաշխատողի հետ (2%): Տարբերությունն ըստ հիմնական բնութագրիչների էական չէ, բացառությամբ Տավուշի մարզի, որտեղ կանանց 9%-ը քննարկել է ընտանիքի պլանավորման մեթոդները բուժաշխատողի հետ և 11%-ը՝ բուժհաստատությունում: Չօգտագործողների շուրջ մեկ հինգերորդն այցելել է բուժհիմնարկներ, բայց չի քննարկել ընտանիքի պլանավորման մեթոդները բուժաշխատողի հետ:

Աղյուսակ 5.17 Կապը չօգտագործողների և ընտանիքի պլանավորված մեթոդներ տրամադրողների միջև

Հակաբեղմնավորման մեթոդ չօգտագործող կանանց տոկոսային բաշխումը, ըստ նրա, թե արդյոք նրանց այցելել է ընտանիքի պլանավորման աշխատակից, կամ գրուցել են բուժաշխատողի հետ ընտանիքի պլանավորման մեթոդների մասին հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Բնութագրիչներ	Կանայք, ում այցելել է բուժ աշխատող, ովքեր քննարկել են ընտանիքի պլանավորումը	Կանայք, ովքեր այցելել են բուժ-հիմնարկ և քննարկել ընտանիքի պլանավորումը	Կանայք, ովքեր այցելել են բուժ-հիմնարկ, սակայն չեն քննարկել ընտանիքի պլանավորումը	Ոչ բուժ աշխատող է այցելել, ոչ էլ քննարկել են ընտանիքի պլանավորումը բուժ-հիմնարկում	Կանանց թվաքանակը (մարդ)
Տարիքը					
15-19	0.9	0.3	8.2	98.9	1135
20-24	2.0	3.5	18.9	95.2	723
25-29	3.3	5.2	32.0	93.4	332
30-34	2.8	4.3	31.0	94.0	291
35-39	2.9	2.5	22.7	95.0	383
40-44	1.2	1.3	19.4	97.7	489
45-49	1.8	1.1	20.1	97.4	568
Բնակավայրը					
Քաղաքային	1.3	1.8	18.8	97.2	2523
Գյուղական	2.8	2.5	17.6	95.7	1398
Մարզը					
Երևան	1.4	1.2	19.3	97.5	1466
Արագածոտն	2.2	2.2	21.2	96.3	158
Արարատ	2.3	1.3	13.6	96.3	342
Ահմադի	2.2	2.6	14.2	96.0	306
Գեղարքունիք	2.7	3.7	22.1	94.6	291
Լոռի	0.9	0.4	22.9	98.7	266
Կոտայք	0.0	1.3	18.7	98.7	339
Շիրակ	0.3	0.7	12.2	99.0	358
Սյունիք	1.5	4.5	22.0	95.0	185
Վայոց ձոր	8.5	4.9	12.1	91.1	61
Տավուշ	9.0	11.2	22.8	85.4	149
Կրթությունը					
Տարրական/միջին	0.9	0.6	17.1	98.8	455
Միջնակարգ	2.1	1.7	17.7	96.8	1430
Միջնակարգ-մասնագիտական	1.4	2.8	19.3	96.4	1293
Բարձրագույն	2.6	2.3	19.0	95.4	744
Ընդամենը	1.8	2.1	18.4	96.6	3922

5.15 Ձույգերի միջև հաղորդակցությունն ընտանիքի պլանավորման վերաբերյալ

Ձույգերի հաղորդակցությունը կարևոր միջանկյալ քայլ է դեպի հակաբեղմնավորման մեթոդների ընդունումն ու կիրառումը: Աղյուսակ 5.18-ը ցույց է տալիս, որ հարցման պահին ամուսնացած կանանց կեսից ավելին երբեք չեն քննարկել ընտանիքի պլանավորման մեթոդները իրենց ամուսինների հետ: 20-30 տարեկան կանայք ավելի հակված են քննարկել ընտանիքի պլանավորման մեթոդները, քան այլ տարիքային խմբերի կանայք: Ընդհանուր առմամբ, կանանց 32%-ը քննարկել է ընտանիքի պլանավորման մեթոդները իրենց ամուսինների հետ մեկ կամ երկու անգամ հարցմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, իսկ 12%-ը քննարկել է այդ հարցն ավելի հաճախ:

Աղյուսակ 5.18 Ընտանիքի պլանավորման քննարկումը ամուսնու հետ

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր գիտեն հակաբեղմնավորման մեթոդ, ըստ նախորդ տարում իրենց ամուսինների հետ ընտանիքի պլանավորման վերաբերյալ քննարկումների թվի և ըստ հարցման պահին նրանց տարիքի, Հայաստան 2000թ.

(%,%)

Տարիքը	Ամուսնու հետ ընտանիքի պլանավորման վերաբերյալ քննարկումների թիվը					Կանանց թվաքանակը (մարդ)
	Երբեք	Մեկ կամ Երկու անգամ	Ավելի հաճախ	Պատասխան չկա	Ընդամենը	
15-19	58.6	31.0	9.1	1.2	100.0	92
20-24	46.2	38.3	14.7	0.8	100.0	502
25-29	42.6	38.4	18.7	0.3	100.0	616
30-34	51.6	34.9	12.9	0.6	100.0	652
35-39	54.5	32.2	13.0	0.3	100.0	813
40-44	61.5	30.1	8.2	0.2	100.0	765
45-49	72.5	19.3	7.3	0.9	100.0	634
Ընդամենը	55.4	31.9	12.2	0.5	100.0	4074

5.16 Վերաբերմունքն ընտանիքի պլանավորմանը

Ձույգերի դրական վերաբերմունքը ընտանիքի պլանավորմանը նպաստավոր է հակաբեղմնավորման արդյունավետ մեթոդների օգտագործման համար: Վերաբերմունքի մասին տվյալները հավաքագրելիս կանանց տրվել է հարց, թե արդյոք նրանք հավանություն տալիս են ընտանիքի պլանավորման մեթոդներ օգտագործող զույգերին և, իրենց կարծիքով, ինչպիսի վերաբերմունք ունի իրենց ամուսինը ընտանիքի պլանավորմանը: Այս տեղեկատվությունը կարևոր է ընտանիքի պլանավորման համար անհրաժեշտ քաղաքականություն մշակելիս, քանի որ այն ցույց է տալիս հետագա կրթական և հանրային առողջապահական ծրագրերի անրաժեշտությունը, ինչն անհրաժեշտ է բարձրացնելու համար ընտանիքի պլանավորման ընդունելիության մակարդակը: Մյուս կողմից հակաբեղմնավորիչների նկատմամբ ընդդիմության լայն տարածումը կարող է խոչընդոտ հանդիսանալ մեթոդների ընդունման համար:

Աղյուսակ 5.19-ը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, հարցման պահին ամուսնացած կանանց 86%-ը նշել է, որ հավանություն է տալիս հակաբեղմնավորման մեթոդներին և 69%—ը նշել է, որ իրենց ամուսիններն են հավանություն տալիս: Ընդհանուր առմամբ, ամենաերիտասարդ և ամենամեծահասակ ամուսիններն ու կանայք ամենաքիչն են հակված հավանություն տալ հակաբեղմնավորման մեթոդներին: Հակաբեղմնավորիչների նկատմամբ վերաբերմունքը խիստ կախված է կրթական մակարդակից: Դրական վերաբերմունքը տատանվում է 73% -ից (տարրական/միջին կրթություն ունեցող կանայք) մինչև 90% (բարձրագույն կրթություն ունեցող կանայք) Համանման ձևով, ըստ կանանց ամուսնու վերաբերյալ տվյալների, տարրական կրթություն ունեցող տղամարդկանց միայն 54%-ն է հավանություն տալիս հակաբեղմնավորման մեթոդներին, ի տարբերություն բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց 77%-ի: Ընդհանուր առմամբ, հարցվողների երկու երրորդը պնդում են, որ թե" իրենք, և թե" իրենց ամուսինները հավանություն են տալիս հակաբեղմնավորման մեթոդներին: Հատկանշական է, որ կանանց 7 տոկոսը համոզված չէ հակաբեղմնավորման մեթոդների նկատմամբ իր սեփական վերաբերմունքի և 15 տոկոսը իր ամուսնու վերաբերմունքի հարցում:

Աղյուսակ 5.19 Զույգերի վերաբերմունքն ընտանիքի պլանավորմանը

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր գիտեն ընտանիքի պլանավորման (ԸՊ) մեթոդ, ըստ ընտանիքի պլանավորմանը իրենց, ինչպես նաև իրենց կարծիքով ամուսնու վերաբերմունքի, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Կինը հավանություն է տալիս ԸՊ			Կինը հավանություն չի տալիս ԸՊ			Երկուսն էլ հավանություն են տալիս				
	Երկուսն էլ հավան են տալիս	Ամուսինը հավան տալիս	Ամուսնու վերաբերմունքը չի հայտնի չէ	Ամուսինը հավան է տալիս	Երկուսն էլ հավան չեն տալիս	Ամուսնու վերաբերմունքը չի հայտնի չէ	Կինը համոզված չէ	Ընդամենը	Կինը հավան է տալիս	Ամուսինը հավան չի տալիս ¹	Կանանց թվաքանակը (մարդ)
Տարիքը											
15-19	48.8	4.5	22.5	2.8	4.0	2.9	14.5	100.0	75.8	52.9	92
20-24	68.1	4.9	14.8	0.9	3.4	0.3	7.7	100.0	87.7	70.2	502
25-29	74.2	5.9	8.8	1.2	3.5	1.9	4.5	100.0	88.9	76.4	616
30-34	70.1	6.9	10.9	1.7	5.3	1.2	3.8	100.0	87.9	72.3	652
35-39	67.0	6.7	11.8	2.2	3.7	1.9	6.6	100.0	85.5	70.3	813
40-44	66.0	5.1	14.0	1.1	6.3	2.1	5.4	100.0	85.0	68.0	765
45-49	56.7	4.7	18.7	1.6	5.7	2.5	10.1	100.0	80.2	58.9	634
Բնակավայրը											
Քաղաքային	68.7	6.1	11.4	1.3	4.8	1.7	6.1	100.0	86.1	70.7	2369
Գյուղական	63.5	5.2	15.9	1.9	4.6	1.8	7.0	100.0	84.7	66.5	1705
Մարզը											
Երևան	69.2	5.6	10.7	1.1	5.2	1.3	6.9	100.0	85.5	71.0	1271
Արագածոտն	72.9	6.4	7.0	2.1	7.3	1.8	2.4	100.0	86.3	75.1	190
Արարատ	64.5	4.3	21.6	1.5	1.8	1.5	4.8	100.0	90.4	66.2	448
Արմավիր	61.1	6.9	19.2	0.3	3.0	1.5	8.1	100.0	87.1	62.3	373
Գեղարքունիք	64.0	8.2	11.4	2.3	5.8	3.2	5.0	100.0	83.6	67.5	338
Լոռի	63.2	4.8	20.4	2.2	2.6	2.2	4.5	100.0	88.5	67.3	321
Կոտայք	68.2	6.9	10.5	2.2	3.6	1.1	7.6	100.0	85.6	71.5	314
Շիրակ	69.9	6.3	5.0	2.6	8.6	2.3	5.3	100.0	81.1	73.5	375
Սյունիք	50.3	3.2	17.4	0.6	7.7	3.2	17.4	100.0	71.0	51.9	170
Վայոց ձոր	67.3	4.5	12.6	1.0	4.5	1.0	9.1	100.0	84.5	71.2	76
Տավուշ	72.6	4.0	14.2	1.7	1.7	1.7	4.0	100.0	90.9	74.6	196
Կրթությունը											
Տարրական/միջին	51.9	4.3	17.0	0.6	9.2	2.1	14.9	100.0	73.2	53.8	266
Միջնակարգ	64.7	5.6	15.0	1.4	4.4	2.1	6.7	100.0	85.4	67.1	1508
Միջնակարգ-մասնագիտական	66.6	6.5	12.6	2.1	4.5	1.7	6.0	100.0	85.7	69.6	1592
Բարձրագույն	75.6	5.0	9.6	1.0	4.0	1.0	3.8	100.0	90.1	77.0	708
Ընդամենը	66.5	5.7	13.3	1.5	4.7	1.8	6.5	100.0	85.5	68.9	4074

¹ Ներառյալ կանայք, ովքեր համոզված չեն իրենց վերաբերմունքում, սակայն գիտեն ամուսնու վերաբերմունքը

Դ. Աբրահամյան և Գ. Ավագյան

Տարիներ շարունակ Հայաստանում, ինչպես նախկին Խորհրդային բոլոր երկրներում, արհեստական վիժումները հանդիսացել են պտղաբերության վերահսկման հիմնական միջոց: Արհեստական վիժումները Խորհրդային Միությունում առաջին անգամ օրինականացվել են 1920թ-ին, սակայն 1936թ-ին դրանք արգելվեցին՝ որպես բնակչության աճին ուղղված քաղաքականության մի մաս: 1955թ-ին ոչ բժշկական ցուցումներով կատարվող վիժումները Խորհրդային Միությունում նորից օրինականացվեցին:

Արհեստական վիժումները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ կնոջ առողջության վրա, նվազեցնել նրա՝ հետագայում երեխա ունենալու հավանականությունը և նպաստել մայրական և պերինատալ մահացության աճին: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ Հայաստանում արհեստական վիժումները պատճառ են հանդիսանում մայրական մահերի զգալի քանակի (10-20%): Արհեստական վիժումների քանակը կրճատելու համար ՀՀ առողջապահության նախարարությունը, UNFPA-ի աջակցությամբ, 1997թ-ից սկսեց իրականացնել «Ընտանիքի պլանավորման» ծրագիրը:

Արհեստական վիժումների վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն հավաքագրվել է կանանց՝ վերարտադրողական առողջությանը վերաբերող անհատական հարցաթերթիկի միջոցով: Տվյալ տեղեկատվությունը հավաքագրելիս յուրաքանչյուր կին նախ և առաջ հարցվել է իր կյանքում ունեցած հղիությունների մասին, որոնք ավարտվել են կենդանածնությամբ, արհեստական վիժումով, կնոջ կողմից հրահրված վիժումով, ինքնաբեր վիժումով և մեռելածնությամբ: Այս ամբողջական տվյալները ստանալուց հետո դեպք առ դեպք հավաքագրվել է հղիության պատմությունը: Յուրաքանչյուր հղիության համար գրանցվել է հղիության տևողությունը, ընդհատման ամիսն ու տարին և հղիության ելքը¹:

6.1 Հղիության ելքերը

Աղյուսակ 6.1-ում ներկայացված են հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում ավարտված հղիությունների ելքերի տոկոսային բաշխումը: Տվյալները ցույց են տալիս, որ կենդանածնությամբ ավարտվել են հղիությունների 1/3-ից քիչ ավելին (38%), մինչդեռ հղիությունների կեսից ավելին (55%) ավարտվել են արհեստական վիժումով²: Ինքնաբեր վիժումները և մեռելածնության դեպքերը կազմում են համապատասխանաբար 7% և 0,5%՝ բոլոր հղիությունների ելքերի հաշվով:

1 Հղիության պատմությունը կառուցված էր այնպես, որպեսզի ապահովվի վիժումների վերաբերյալ հնարավորինս ամբողջական տեղեկատվության հավաքագրումը (հատկապես հետազոտությանը անմիջապես նախորդող ժամանակահատվածի համար): Տվյալները հավաքագրվել են հակադարձ ժամանակագրությամբ, այսինքն՝ առաջինը հավաքագրվել են ամենավերջին հղիության վերաբերյալ տվյալները, այնուհետև դրանից առաջվանը և այդպես շարունակ: Սա նախատեսված էր նրա համար, որպեսզի հետազոտությանը անմիջապես նախորդող տարիներին տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ տվյալները հավաքագրվեն առավել ամբողջական, քան դա կարող էր արվել ժամանակագրական կարգով տեղեկատվությունը հավաքագրելու դեպքում: Հղիության պատմության վերջում, հարցումը անցկացնողից պահանջվում էր ստուգել համապատասխանությունը՝ վերարտադրողությանը վերաբերող բաժնի սկզբում հավաքագրված ամբողջական տեղեկատվության և հղիության պատմության մեջ նշված դեպքերի քանակի միջև:

2 Հետագա վերլուծությունը «արհեստական վիժումների» խմբի մեջ է ներառում «կնոջ կողմից հրահրված վիժումները»: Այն դեպքում, երբ այլ հետազոտություններ ցույց են տվել «կնոջ կողմից հրահրված վիժումների» նշանակալի համամասնություն (Խաչիկյան և այլ., 1998), ԺԱԱՀ-ի ընթացքում հարցված կանանցից ընդամենը 37 են նշել իրենց կողմից հրահրված վիժում (վիժում առանց բուժաշխատողի մասնակցության):

Աղյուսակ 6.1 Հղիության ելքերն ըստ հիմնական բնութագրիչների

Հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում ավարտված հղիությունների ելքերի տեսակարար կշիռը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000

Հիմնական բնութագրիչներ	Հղիության ելքը					Հղիությունների թվաքանակը
	Կենդանացին	Արհեստական վիժում	Ինքնաբեր վիժում	Մեռելացին	Ընդամենը	
Բնակավայրը						
Քաղաքային	38.3	53.9	7.2	0.6	100.0	1202
Գյուղական	36.9	56.1	6.6	0.4	100.0	1220
Մարզը						
Երևան	40.9	52.7	5.7	0.7	100.0	626
Արագածոտն	32.0	60.6	7.1	0.4	100.0	155
Արարատ	40.5	52.0	7.5	0.0	100.0	287
Արմավիր	28.1	64.0	7.9	0.0	100.0	299
Գեղարքունիք	38.0	55.7	5.6	0.7	100.0	284
Լոռի	51.7	41.3	7.0	0.0	100.0	171
Կոտայք	26.8	63.7	8.3	1.3	100.0	178
Շիրակ	33.1	58.1	8.8	0.0	100.0	184
Սյունիք	36.1	56.0	7.8	0.0	100.0	91
Վայոց ձոր	51.9	42.2	5.8	0.0	100.0	38
Տավուշ	43.9	48.0	6.1	2.0	100.0	111
Կրթությունը						
Տարրական/միջին	48.8	43.3	7.1	0.9	100.0	188
Միջնակարգ	35.6	57.4	6.4	0.6	100.0	994
Միջնակարգ-մասնագիտական	34.8	58.5	6.5	0.2	100.0	893
Բարձրագույն	44.7	45.8	8.9	0.6	100.0	347
Ընդամենը	37.6	55.0	6.9	0.5	100.0	2423

Քաղաքային և գյուղական բնակավայրերում հղիության ելքերի միջև չկա որևէ նշանակալի տարբերություն: Հետաքրքիր է նշել, որ կա կորագիծ հարաբերակցություն արհեստական վիժումների և կրթական մակարդակի միջև: Տարրական/միջին կրթությամբ կանայք ունեն արհեստական վիժումով ավարտված հղիությունների ամենացածր տեսակարար կշիռը (43%): Միջնակարգ կամ միջնակարգ-մասնագիտական կրթություն ունեցող կանանց մոտ արհեստական վիժումով ավարտված հղիությունները մոտավորապես 1/3-ով ավել են (համապատասխանաբար 57% և 59%): Բարձրագույն կրթությամբ կանանց մոտ վիժումով ավարտված հղիությունների տեսակարար կշիռը (46%), ըստ էության, նույնն է ինչ-որ տարրական/միջին կրթություն ունեցող կանանց մոտ:

Ըստ մարզերի՝ հղիության ելքերի միջև կա նշանակալի տարբերություն. արհեստական վիժումով ավարտված հղիությունների ամենացածր տեսակարար կշիռը նկատվում է Լոռիում (41%), իսկ ամենաբարձրը՝ Արմավիրում և Կոտայքում (64%):

6.2 Արհեստական վիժումների դեպքերը կյանքի ընթացքում

6.2 աղյուսակը ցույց է տալիս արհեստական վիժումների դեպքերը հարցվողների կյանքի ընթացքում: Հարկ է նշել, որ վիժում ունեցած կանանց համամասնության վիճակագրությունը հիմնված է 15-49 տարեկան բոլոր կանանց վրա՝ *անկախ հղիանալու ռիսկից անպաշտպան լինելուց*:

Ըստ հետազոտության արդյունքների՝ բոլոր հարցվողների մոտ կեսը ունեցել է արհեստական վիժում (47%): Մեկ կնոջ հաշվով արհեստական վիժումների թիվը 3-ից ավել է: Ինչպես ակնկալվում էր, արհեստական վիժումների հաճախականությունը տարիքին զուգահեռ մեծանում է. եթե 20-24 տարեկան կանանց 14%-ն է ունեցել արհեստական վիժում, ապա 25-34 տարեկան կանանց՝ 57%-ը, և 35-ից բարձր կանանց՝ 73%-ը: Կա նաև ուղիղ համեմատական կապ երբևէ ունեցած արհեստական վիժումների և կենդանի երեխաների քանակի միջև: Երեխա չունեցող կանանց 1%-ից քիչն է ունեցել արհեստական վիժում՝ մեկ երեխա ունեցող կանանց 25%-ի, 2-3 երեխա ունեցող կանանց 77%-ի և 4 կամ ավելի երեխա ունեցող կանանց 84%-ի համեմատ:

Աղյուսակ 6.2 Արհեստական վիժումների դեպքերը կյանքի ընթացքում

Կանանց տոկոսը, ովքեր ունեցել են առնվազն մեկ արհեստական վիժում (ԱՎ), և այդ կանանց տոկոսային բաշխումն ըստ արհեստական վիժումների քանակի և միջին թվի, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000

Հիմնական բնութագրիչներ	ԱՎ ունեցածների տոկոսը	Կանանց թվաքանակը (մարդ)	ԱՎ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ ԱՎ թվաքանակի				ԱՎ միջին թիվը	ԱՎ ունեցած կանանց թվաքանակը (մարդ)	
			1	2-3	4-5	6+			
Տարիքը հարցման պահին									
<20	0.6	1160	*	*	*	*	*	*	6
20-24	13.8	1007	60.2	33.1	6.3	0.4	100.0	1.7	139
25-34	56.5	1531	32.6	42.8	14.4	10.2	100.0	2.9	866
35+	73.1	2731	19.9	43.2	19.9	17.1	100.0	3.7	1997
Կենդանի երեխաների թվաքանակը									
0	0.5	2121	*	*	*	*	*	*	10
1	25.0	662	53.6	26.3	14.3	5.7	100.0	2.3	165
2-3	76.8	3237	25.2	44.2	16.9	13.6	100.0	3.3	2487
4+	84.3	410	13.1	38.6	24.8	23.5	100.0	4.4	346
Բնակավայրը									
Քաղաքային	45.0	3942	25.0	44.6	17.0	13.4	100.0	3.2	1776
Գյուղական	49.5	2488	26.3	39.6	18.6	15.5	100.0	3.5	1233
Մարզը									
Երևան	44.1	2206	25.3	44.6	16.7	13.4	100.0	3.2	972
Արագածոտն	51.4	279	25.3	46.6	12.4	15.7	100.0	3.4	144
Արարատ	50.0	642	27.3	45.7	19.1	7.8	100.0	3.0	321
Արմավիր	51.1	553	25.7	37.9	19.4	17.0	100.0	3.5	283
Գեղարքունիք	53.8	484	18.6	33.5	20.9	27.0	100.0	5.0	260
Լոռի	38.6	489	42.4	38.6	13.9	5.1	100.0	2.4	189
Կոտայք	49.4	505	16.4	38.2	21.4	24.1	100.0	4.1	250
Շիրակ	45.9	611	27.0	48.2	15.5	9.3	100.0	2.9	281
Սյունիք	46.2	271	26.8	46.5	18.0	8.8	100.0	2.8	125
Վայոց ձոր	41.9	113	25.0	51.6	16.7	6.8	100.0	2.8	47
Տավուշ	49.4	278	25.7	38.4	19.2	16.7	100.0	3.5	137
Կրթությունը									
Տարրական/միջին	30.4	593	22.4	37.1	20.6	19.9	100.0	3.9	180
Միջնակարգ	47.8	2341	26.3	40.5	17.5	15.8	100.0	3.5	1119
Միջնակարգ-մասնագիտական	54.1	2295	23.7	44.5	18.2	13.7	100.0	3.3	1241
Բարձրագույն	39.0	1201	30.0	44.4	15.5	10.1	100.0	3.0	468
Ամուսնական կարգավիճակը									
Երբևէ չամուսնացած	0.2	1851	*	*	*	*	*	*	4
Հարցման պահին ամուսնացած	66.7	4125	25.2	42.3	17.7	14.8	100.0	3.4	2752
Նախկինում ամուսնացած	55.6	455	28.2	45.8	16.9	9.1	100.0	3.0	253
Ընդամենը	46.8	6430	25.5	42.5	17.6	14.3	100.0	3.3	3008

Նշում. աստղանիշը ցույց է տալիս, որ թիվը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և, հետևաբար, սղվել է:

Ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի՝ արհեստական վիժումների վերաբերյալ հստակ տարբերակումներ չկան: Կրթական մակարդակի և արհեստական վիժումների միջև առկա է կորագիծ հարաբերակցություն. բարձրագույն և ցածր կրթական մակարդակ ունեցող կանայք ավելի քիչ են հակված դիմելու արհեստական վիժման, քան այլ կանայք: Հնարավոր է, որ ցածր կրթական մակարդակ ունեցող կանանց մոտ պտղաբերության բարձր մակարդակը պայմանավորված է արհեստական վիժումների նրանց ցածր դիմելիությամբ (այսինքն, երբ կինը հղիանում է, նա ավելի շատ է հակված երեխա ունենալու): Միևնույն ժամանակ հնարավոր է, որ բարձրագույն կրթությամբ կանայք, ովքեր օգտագործում են պտղաբերությունը կարգավորող ավելի փորձված և վստահելի մեթոդներ, ավելի քիչ են հակված ունենալու չնախատեսված հղիություն: Ըստ մարզերի՝ կա նշանակալի տարբերակում կյանքի ընթացքում ունեցած արհեստական վիժումների դեպքերի վերաբերյալ. Լոռիում և Վայոց ձորում տարածվածությունը

(համապատասխանաբար՝ 39% և 42%) զգալիորեն ցածր է, քան որոշ այլ մարզերում՝ Գեղարքունիք (54%), Արագածոտն և Արմավիր (51-ական %):

Երբևէ արհեստական վիժում ունեցած կանանց 3/4-ը ունեցել է 1-ից ավել արհեստական վիժում: Կանանց 43%-ը նշել է 2-3 արհեստական վիժում, և 18%-ը՝ 4-5: Կանանց 14%-ը ունեցել է 6 կամ ավելի արհեստական վիժում. այս կանանց համար արհեստական վիժումները հանդիսանում են պտղաբերության կարգավորման հիմնական մեթոդ: 6.2 աղյուսակը ցույց է տալիս, որ որոշ մարզերում նկատվում է կրկնվող արհեստական վիժումների բարձր տեսակարար կշիռ. օրինակ՝ Գեղարքունիքում և Կոտայքում երբևէ արհեստական վիժում ունեցած 10 կանանցից 8-ից ավելին ունեցել է կրկնվող վիժում:

Այս տվյալները հաստատում են 1997թ-ին անցկացված հետազոտության արդյունքները, որոնք ցույց էին տալիս, որ երբևէ ամուսնացած կանանց 65%-ը ունեցել է արհեստական վիժում: Երբևէ վիժում ունեցած կանանց 79%-ը ունեցել է 1-ից ավել արհեստական վիժումներ (NPRH և ԱՆ, 1998):

6.3 Արհեստական վիժումների ցուցանիշները

Այս բաժնում արհեստական վիժումների ցուցանիշները ներկայացված են ժԱԱՀ-ին նախորդող 3 տարիների համար (մոտավորապես 1997թ. նոյեմբերից մինչև 2000թ. նոյեմբեր): Ներկայացված են 3 տիպի ցուցանիշներ. արհեստական վիժումների տարիքային ցուցանիշներ (ԱՎՏՑ) - այն արտահայտված է 1000 կնոջ հաշվով և արտացոլում է տվյալ տարիքային խմբի կանանց արհեստական վիժումների քանակի հարաբերությունը նույն տարիքային խմբին պատկանող կանանց թվին, արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշ (ԱՎԸՑ) - այն արտահայտված է 1 կնոջ հաշվով և ներկայացնում է տարիքային ցուցանիշների գումարային չափանիշը, արհեստական վիժումների հիմնական ցուցանիշ (ԱՎՀՑ)-արհեստական վիժումների միջին քանակն է, որը կունենար կինը, եթե իր ամբողջ վերարտադրողական կյանքի ընթացքում ունենար հետազոտության արդյունքում ձևավորված արհեստական վիժումների տարիքային ցուցանիշը:

Ինչպես ցույց է տրված 6.3 աղյուսակում, ազգային մակարդակում արհեստական վիժումների տարիքային ցուցանիշները կանանց առաջին մի քանի տարիքային խմբերում աճել են՝ ամենաբարձրը արժեքը գրանցվել է 25-29 տարեկան կանանց մոտ (175՝ տվյալ տարիքի 1000 կնոջ հաշվով), և նվազել ավելի բարձր տարիքային խբերում:

Պատկերն այնպիսին է, որ ԱՎՏՑ-ը ավելի փոքր է, քան մինչև 25 տարեկան կանանց պտղաբերության ցուցանիշը, սակայն ավելի բարձր, քան տարիքով կանանց պտղաբերության ցուցանիշը (Գծապատկեր 6.1): Արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշը կազմում է 2,6: Գյուղական վայրերում այն ավելի քան 60%-ով բարձր է, քան քաղաքայինում (համապատասխանաբար 3,4 և 2,1): ԱՎՏՑ-ը քաղաքի բնակիչների համար ավելի բարձր է, քան գյուղի բնակիչների՝ բոլոր կանանց համար, սակայն ամենաբարձր և ամենացածր տարիքային խմբերին պատկանող:

6.4 աղյուսակը և 6.2 նկարը ցույց են տալիս արհեստական վիժումների ցուցանիշները՝ ըստ հիմնական բնութագրիչների (ըստ դրանց կան նշանակալի տարբերություններ): Արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշները փոփոխվում են ըստ բնակավայրի. ԱՎԸՑ-ը գյուղական վայրերում ապրող կանանց համար ավելի քան մեկ վիժումով ավել է, քան քաղաքում ապրողներինը (համապատասխանաբար 3,4 և 2,1):


Աղյուսակ 6.3 Արհեստական վիժումների ցուցանիշները

Արհեստական վիժումների տարիքային ցուցանիշները (1000 կնոջ հաշվով) և արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշը (ԱՎԸՑ) հետազոտությանը նախորդող 3 տարիների համար, Հայաստան 2000:

Տարիքը	Արհեստական վիժումների տարիքային ցուցանիշները (%.)		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
15-19	6	6	6
20-24	85	124	99
25-29	128	241	175
30-34	99	176	131
35-39	73	96	82
40-44	29	31	30
45-49	7	5	6
Ցուցանիշները			
ԱՎԸՑ 15-49	2.1	3.4	2.6
ԱՎԸՑ 15-44	2.1	3.4	2.6
ԱՎՀՑ	65	106	81

1 ԱՎԸՑ-ը արտահայտված է մեկ կնոջ հաշվով
 2 Արհեստական վիժումների հիմնական ցուցանիշը (վիժումների հարաբերությունը 15-44 տարեկան կանանց քանակին)

Գծապատկեր 6.1 Պտղաբերության (ՊՏԳ) և արհեստական վիժումների (ԱՎՏԳ) տարիքային գործակիցները



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Հարկ է նշել, որ ավելի շատ քաղաքում, քան գյուղում բնակվող կանայք են օգտագործում ընդհատված սեռական հարաբերությունները (համապատասխանաբար 40% և 26%), ինչը հայտնի է որպես հակաբեղմնավորման ամենասանհուսալի մեթոդ (նայել աղյուսակ 5.5): Այսպիսով, գյուղական վայրերում ԱՎՏԳ-ի ավելի բարձր լինելը կարող է պայմանավորված լինել նաև կանանց այն զգալի համամասնությամբ, ովքեր անհաջող կերպով փորձում են հսկել իրենց պտղաբերությունը ընդհատված սեռական հարաբերությունների միջոցով:

Արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշները նույապես տարբերվում են ըստ մարզերի. ամենացածր արժեքը գրանցվել է Լոռիում 1,8, իսկ ամենաբարձրը Գեղարքունիքում՝ 4,3: Երևանի համար ցուցանիշը կազմում է 1,9: ԱՎՏԳ-ը հակադարձ համեմատական է կրթական մակարդակին. օրինակ՝ տարրական/միջին դպրոցական կրթությամբ կանանց համար այն կազմում է 2,9, մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցող կանանց համար՝ 1,7:

Հայաստանում ԱՎՏԳ-ը զգալիորեն բարձր է, քան նախկին Խորհրդային Միության կենտրոնաասիական երկրներում, որտեղ այն տատանվում է Ուզբեկստանում 0,7-ից (IOG and MI, 1997) մինչև 1,6 Ղրղզստանում (RIOP and MI, 1997): Այնուամենայնիվ, Հայաստանի կովկասյան հարևան Վրաստանում ԱՎՏԳ-ը զգալիորեն ավելի բարձր է, քան Հայաստանում՝ համապատասխանաբար 3,7 և 2,6 (Serbanescu, 2000): Հարկ է նշել, որ պտղաբերության մակարդակը երկու երկրներում նույնն է՝ 1,7, սակայն հակաբեղմնավորիչների տարածվածությունը Վրաստանում զգալիորեն ավելի ցածր է (41%), քան Հայաստանում՝ 61%:


Աղյուսակ 6.4 Արհեստական վիժումների ցուցանիշները՝ ըստ հիմնական բնութագրիչների

Արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշները և 40-49 տարեկան կանանց արհեստական վիժումների միջին թիվը հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների
Հայաստան 2000:

Հիմնական բնութագրիչներ	(% ,%)	
	Արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշ 1	40-49 տարեկան կանանց արհեստական վիժումների միջին թիվը
Բնակավայրը		
Քաղաքային	2.1	2.7
Գյուղական	3.4	3.0
Մարզը		
Երևան	1.9	2.6
Արագածոտն	4.1	2.9
Արարատ	2.7	2.9
Արմավիր	4.1	2.8
Գեղարքունիք	4.3	5.4
Լոռի	1.8	1.6
Կոտայք	3.1	3.5
Շիրակ	2.4	1.9
Սյունիք	2.5	2.4
Վայոց ձոր	1.9	2.2
Տավուշ	2.5	3.1
Կրթությունը		
Տարրական/միջին	2.9	3.1
Միջնակարգ	3.3	3.0
Միջնակարգ-մասնագիտական	2.5	2.8
Բարձրագույն	1.7	2.2
Ընդամենը	2.6	2.8

1 Ցուցանիշը վերաբերվում է 15-49 տարեկան կանանց

Գծապատկեր 6.2 Արհեստական վիժումների ամբողջական գործակիցներն ըստ հիմնական բնութագրիչների



Հայաստանի ՀԱՐ 2000թ.

6.4 Արհեստական վիժումների միտումները

Օգտագործելով ԺԱԱՀ-ի տվյալները՝ արհեստական վիժումների միտումները կարող են գնահատվել մի շարք եղանակներով: Մոտեցումներից մեկն է հետազոտության ժամանակ արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշի համեմատումը 40-49 տարեկան կանանց արհեստական վիժումների միջին թվի հետ: Միջին հաշվով, կանայք, ովքեր հասել են իրենց վերարտադրողական տարիքի ավարտին, ունեցել են 2,8 արհեստական վիժում (աղյուսակ 6.4): 40-49 տարեկան կանանց վիժումների միջին թվի և ԱՎԸՑ-ի միջև չկա նշանակալի տարբերություն (2,8 և 2,6 համապատասխանաբար): Այս տվյալները ցույց են տալիս, որ ընդհանուր առմամբ վերջին մի քանի տասնամյակներում արհեստական վիժումների մակարդակում չի եղել նշանակալի աճ կամ նվազում: Այնուամենայնիվ, ըստ որոշ հիմնական բնութագրիչների՝ միտումներ առկա են:

Տվյալները ցույց են տալիս քաղաքային վայրերում բնակվող կանանց մոտ արհեստական վիժումների մակարդակի նվազեցում, իսկ գյուղական վայրերում բնակվող կանանց մոտ՝ փոքր-ինչ աճ: Բացի այդ, Երևանում, Գեղարքունիքում և Տավուշում 40-49 կանանց արհեստական վիժումների միջին քանակի միջև եղած տարբերությունը ցույց է տալիս, որ դրանք նվազել են: Մյուս կողմից, **Արմավիրում**, Արագածոտնում և Շիրակում արհեստական վիժումների մակարդակը աճել է: Արհեստական վիժումների միտումները հասկանալու մեկ այլ մեթոդ է արհեստական վիժումների տարիքային ցուցանիշների ժամանակ առ ժամանակ ուսումնասիրումը: Քանի որ 50-ից բարձր կանայք չեն ընդգրկվել հետազոտության մեջ, ցուցանիշները հաջորդաբար բաժանվում էին հատվածների՝ որպես հետազոտությունից առաջ ընկած տարիների քանակ (աղյուսակ 6.5): Այս տվյալները ցույց են տալիս արհեստական վիժումների նվազեցում վերջին տարիներին. 15-44 տարեկան կանանց համար արհեստական վիժումների ընդհանուր ցուցանիշը հետազոտությունից 5-9 տարի առաջ 3,1 էր, իսկ հետազոտությանը նախորդող 0-4 տարիներին՝ 2,7: 6.5 աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ հետազոտությանը նախորդող 5-14 տարիների ընթացքում արհեստական վիժումների մակարդակը ավելի բարձր էր, քան այդ ժամանակաշրջանից առաջ կամ հետո: Սա ներկայացված է 20-24 և 25-29 տարիքային խմբերի ԱՎՏՑ-ի միջոցով: Ամենավաղ (հետազոտությունից 15-19 տարի առաջ) և ամենաուշ ժամանակաշրջաններում յուրաքանչյուր խմբի համար ներկայացված ցուցանիշները միանգամայն նույնն են, մինչդեռ դրանք զգալիորեն ավելի բարձր են միջին ժամանակաշրջանի համար: Արհեստական վիժումների առավել բարձր մակարդակի այս ժամանակահատվածը եղել է 1987-1996թթ-ին:

Աղյուսակ 6.5 Արհեստական վիժումների ցուցանիշների միտումները

Արհեստական վիժումների տարիքային ցուցանիշները (1000 կնոջ հաշվով) հարցմանը նախորդող հնգամյակների համար, ըստ արհեստական վիժում կատարելու ժամանակ կնոջ տարիքի, Հայաստան 2000

(%,%)

Կնոջ տարիքը արհեստական վիժում կատարելու ժամանակ	Հետազոտությանը նախորդող տարիների թիվը			
	0-4	5-9	10-14	15-19
15-19	6	12	6	7
20-24	104	147	133	103
25-29	180	194	192	180
30-34	128	139	166	[187]
35-39	84	83	[132]	-
40-44	31	[46]	-	-
45-49	[7]	-	-	-
ԱՎՏՑ 15-49	2.7	-	-	-
ԱՎՏՑ 15-44	2.7	3.1	-	-

Նշում. քառակուսի փակագծերում նշված թվերը կլորացված են: ԱՎՏՑ-ը արտահայտված է մեկ կնոջ հաշվով:

6.5 Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը նախքան վիժումները

Կարևոր է իմանալ արհեստական վիժումների հանգեցնող հակաբեղմնավորման վերաբերյալ կանանց վարքագիծը: Այս տեղեկատվությունը պետք է հետաքրքրի և՛ ընտանիքի պլանավորման խորհրդատուներին, և՛ վիժումներ իրականացնողներին, քանի որ կինը, որը ունեցել է վիժում, հղիանալու ժամանակ կամ չի կիրառում հակաբեղմնավորման որևէ մեթոդ, կամ կիրառում է մի մեթոդ (հավանաբար սխալ), որը ձախողվել է: Հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում ավարտված յուրաքանչյուր հղիության համար հարցվողներին խնդրվում էր նշել, թե արդյոք նրանք հղիանալու ժամանակ օգտագործել են հակաբեղմնավորման մեթոդներ, և եթե այո, ապա ինչ մեթոդ են օգտագործել: Աղյուսակ 6.6-ը ցույց է տալիս հղիանալու ժամանակ հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման վերաբերյալ տվյալներ: Արհեստական վիժում ունեցած կանանց մեծամասնությունն օգտագործում էր հակաբեղմնավորման որևէ մեթոդ իրենց հղիանալու ժամանակ (64%): Այսպիսով, այս վիժումները հակաբեղմնավորման մեթոդների ձախողման արդյունք են: Արհեստական վիժումների կեսից ավելին (52%) տեղի են ունեցել հակաբեղմնավորման ավանդական մեթոդների ձախողման պատճառով՝ 46%-ը՝ սեռական հարաբերությունների ընդհատումների և 6%՝ սեռական հարաբերություններից պարբերաբար հրաժարվելու:

Ի լրումն հակաբեղմնավորման ձախողման բարձր մակարդակի՝ կարևոր է նշել, որ արհեստական վիժումով ավարտված հղիությունների 1/3-ի դեպքում հղիությունից խուսափելու համար հակաբեղմնավորման մեթոդներ չեն օգտագործվել: Պարզ է դառնում, որ հակաբեղմնավորման վստահելի մեթոդների մատչելիությունը և դրանց կիրառումը կկրճատի արհեստական վիժումների դեպքերը, ինչը կբարելավի հայ կանանց վերարտադրողական առողջությունը:

Աղյուսակ 6.6 Հակաբեղմնավորման որևէ մեթոդի օգտագործումը նախքան հղիությունները

Հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում հղիությունների ելքերի տեսակարար կշիռն ըստ հղիանալու ժամանակ հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման, Հայաստան 2000:

Մեթոդը	Հղիության ելքը			
	Կենդանա- նածին	Արհեստա- կան վիժում	Ինքնաբեր վիժում	Ընդամենը
Ոչ մի մեթոդ	82.6	36.2	74.4	56.5
Որևէ մեթոդ	17.4	63.8	25.6	43.5
Որևէ ժամանակակից մեթոդ	5.1	8.7	4.5	7.0
Հաբեր	0.0	0.5	0.0	0.3
ՆԱՊ	0.1	0.9	0.0	0.5
Ներարկում	0.0	0.2	0.0	0.1
Պահպանակ	0.9	4.8	1.5	3.1
Կնոջ պահպանակ	0.1	0.1	0.0	0.1
Լակտացիոն ամենորեա	3.9	2.2	3.0	2.9
Որևէ ավանդական մեթոդ	11.9	52.4	21.1	34.8
Ժամանակավոր ինքնազսպում	1.3	6.2	3.6	4.2
Ընդհատված սեռ. հարաբեր.	10.6	46.2	17.5	30.7
Որևէ ժողովրդական մեթոդ	0.5	2.7	0.0	1.6
Ցնցուղ (դուշ)	0.3	2.1	0.0	1.3
Այլ	0.1	0.5	0.0	0.3
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Հղիությունների թվաքանակը	905	1334	167	2416

Նշում. “ընդամենը” ներառում է 11 մեռելածին, որոնք առանձին ցույց չեն տրված:

Ս. Խաչիկյան և Ս. Ղարիբյան

Մարդկանց սոցիալական միջավայրը մեծապես որոշում է, թե, վերարտադրելու կենսաբանական ունակությամբ օժտված լինելով հանդերձ, զույգերն արդյոք երեխա կունենան՞, թե՛ ոչ, և եթե այո, ապա՝ քանի երեխա և ինչ ընդմիջումներով: Վերը քննարկված բեղմնականիսման միջոցներից և արհեստական վիժումից բացի, գոյություն ունեն նաև պտղաբերությունը պայմանավորող մի շարք վճռորոշ այլ գործոններ: Այդ գործոններից են ամուսնությունը (ներառյալ՝ քաղաքացիականը), սեռապես ակտիվ լինելը, հետծննդյան անդաշտանության տևողությունը, սեռական հարաբերություններից ձեռնպահ մնալը (ժուժկալությունը) և դաշտանադադարը:

Կնոջ հղիանալու հավանականության առաջնային ցուցիչն ամուսնությունն է, իսկ առավել անմիջական չափանիշներն են՝ տարիքն առաջին սեռական հարաբերության պահին և սեռական հարաբերությունների հաճախականությունը: Ծնունդների միջև ընդմիջման տևողության վրա ազդում են հետծննդյան անդաշտանությունը և ինքնազսպումը: Դաշտանադադարը կարևոր ցուցիչ է, քանի որ այն մատնանշում է կնոջ հղիանալու հավանականության ավարտը: Որոշիչ այս գործոններից ոչ մեկն ինքնին անկախ չէ՝ դրանք փոխադարձ կապված են միմյանց հետ և ներազդում են պտղաբերության միտումների և ցուցանիշների վրա: Դրանք տարբեր կերպով են ներազդում՝ կախված անհատից, բնակավայրից և ժամանակաշրջանից:


7.1 Ամուսնական կարգավիճակ

Աղյուսակ 7.1-ը և գծապատկեր 7.1-ը ցույց են տալիս 15-49 տարեկան բոլոր կանանց բաշխումն՝ ըստ հարցման պահին ունեցած ամուսնական կարգավիճակի: “Ամուսնացած” տերմինը վերաբերում է օրինական կամ ֆորմալ ամուսնություններին (քաղաքացիական կամ կրոնական), մինչդեռ, “ապրում են միասին”-ը վերաբերում է ոչ ֆորմալ ամուսնություններին:

Հետագա աղյուսակներում այս երկու կատեգորիաները միացվել են և հավաքական կերպով անվանվել “հարցման պահին ամուսնացած”: Այրիները, ամուսնալուծվածները կամ բաժանվածները համարվել են “նախկինում ամուսնացած”: Ըստ ՀԺԱՀ-ի, հարցվողների երկու երրորդը (64 տոկոս) կամ ֆորմալ ամուսնացած է, կամ էլ քաղաքացիական ամուսնության մեջ է գտնվում, 3 տոկոսն այրի է, 2 տոկոսն՝ ամուսնալուծված և մնացած 2 տոկոսն անջատ է ապրում: Ակնհայտ է, որ ոչ ֆորմալ միություններում գտնվող կանանց համամասնությունը 1 տոկոսից պակաս է: Կանանց 29 տոկոսն էրբևէ ամուսնացած չի եղել:

Աղյուսակ 7.1 Ամուսնական կարգավիճակը հարցման պահին								
Կանանց տոկոսային բաշխումն ըստ հարցման պահին ամուսնական կարգավիճակի և տարիքի, Հայաստան 2000թ.								
(%, %)								
Ամուսնական կարգավիճակը								
Տարիքը	Երբևէ չամուսնացած	Ամուսնացած	Ապրում են համատեղ	Այրի	Ամուսնալուծված	Բաժանված	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)
15-19	91.4	8.5	0.0	0.0	0.0	0.1	100.0	1160
20-24	47.5	50.5	0.2	0.3	0.8	0.7	100.0	1007
25-29	13.5	80.9	0.4	1.3	1.6	2.1	100.0	769
30-34	5.3	85.9	0.7	2.6	2.2	3.3	100.0	763
35-39	5.8	84.2	0.6	4.4	3.1	2.0	100.0	962
40-44	6.9	81.2	0.5	5.7	3.3	2.4	100.0	947
45-49	5.7	77.2	0.6	9.8	3.5	3.1	100.0	822
Ընդամենը	28.8	63.7	0.4	3.3	2.0	1.8	100.0	6430

Գծապատկեր 7.1 Զարգվողների ամուսնական կարգավիճակը



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Այս տվյալները հաստատում են, որ ամուսնությունը Հայաստանում գրեթե համընդհանուր երևույթ է: Զարգման պահին ամուսնացած կանանց համամասնությունն աճում է տարիքին զուգընթաց՝ հասնելով առավելագույնի 30-34 տարեկան կանանց շրջանում: Այնուհետև այն սկսում է նվազել, քանի որ գնալով աճում է այրի, ամուսնալուծված և անջատ ապրող կանանց համամասնությունը: 45-49 տարեկան կանանց ընդամենը 6 տոկոսն երբևէ ամուսնացած չի եղել, 78 տոկոսն ամուսնացած է կամ գտնվում է քաղաքացիական ամուսնության մեջ, իսկ 16 տոկոսն՝ եղել է ամուսնացած նախկինում: Այդ տարիքային խմբում ամուսնության ընդհատման հիմնական պատճառն այրիանալն է (10 տոկոս):

7.2. Տարիքն առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության պահին

Ամուսնությունը կարևոր ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշ է. այն սովորաբար մատնանշում է անհատի կյանքի այն ելակետը, երբ ծնող լինելը ցանկալի է դառնում: Զարգման միջոցով տեղեկատվություն է ստացվել երբևէ ամուսնացած կանանց տարիքի վերաբերյալ առաջին ամուսնության պահին՝ ճշտելով ամուսնության ամիսն ու տարեթիվը: ՀԺԱՀ-ում ընդգրկված կանանց խնդրել են նշել նաև առաջին սեռական հարաբերության պահին նրանց տարիքը:

ՀԺԱՀ-ի արդյունքներն, ընդհանուր առմամբ, վկայում են, որ Հայաստանում կանանց տարիքներն առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության պահին գրեթե համընկնում են: Աղյուսակներ 7.2-ը և 7.3-ը մատնանշում են, որ 20 տարեկանին մոտ արդեն ամուսնացածների և սեռական հարաբերություն ունեցածների համամասնությունը գրեթե նույնն է (44 և 45 տոկոս՝ համապատասխանաբար): Կանանց 82 տոկոսը 25 տարեկանին մոտ արդեն ամուսնացած է, իսկ 81 տոկոսը՝ ունեցել է սեռական հարաբերություն: Առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության տարիքների միջև կապը նկատելի է նաև նրանում, որ երկուսն էլ նվազել են վերջին մի քանի տասնամյակների ընթացքում: Միջանկյալ տարիքն առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության պահին աննշան չափով նվազել է: 45-49 տարեկան կանանց համար այն 21-ից փոքր ինչ մեծ է, մինչդեռ 25-29 տարեկան կանանց շրջանում այն 20-ի չի հասնում:

Աղյուսակ 7.2 Տարիքն առաջին ամուսնության ժամանակ

Առաջին անգամ ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ կոնկրետ տարիքների, և մեղիան տարիքը, համաձայն հարցման պահին տարիքի, Հայաստան 2000թ.

Տարիքը հարցման պահին	Առաջին անգամ ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ կոնկրետ տարիքի					Երբևէ չամուսնացած		Մեղիան տարիքը առաջին
	15	18	20	22	25	կանանց տոկոս. բաշխ.	Կանանց թվա- քանակը (մարդ)	ամուսնու- թյան ժա- մանակ
								(%,%)
15-19	0.6	4.2	4.2	4.2	4.2	91.4	1160	-
20-24	0.8	19.1	37.2	4.2	4.2	47.5	1007	-
25-29	0.3	22.1	53.1	70.0	82.4	13.5	769	19.8
30-34	0.3	16.8	48.8	69.9	87.7	5.3	763	20.1
35-39	0.0	12.9	43.6	66.0	83.2	5.8	962	20.5
40-44	0.2	11.9	38.9	59.2	78.2	6.9	947	21.0
45-49	0.4	15.2	39.4	58.6	77.7	5.7	822	21.1
25-49	0.2	15.5	44.4	64.5	81.7	7.3	4263	20.5

ԿԳ: Կիրառելի չէ
Նշում. 15-19 և 20-24 տարիքային խմբերի համար մեղիանները չեն որոշվել, քանի որ տարիքային միջակայքի նվազագույն սահմանում առաջին անգամ ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը 50 տոկոսից ցածր է եղել:

25-49 տարեկան բոլոր կանանց և՛ առաջին ամուսնության, և՛ առաջին անգամ սեռական հարաբերություն ունենալու միջանկյալ տարիքը 20.5 տարի է կազմում (աղյուսակ 7.4 և 7.5): Քաղաքաբնակ կանանց շրջանում առաջին ամուսնության և առաջին անգամ սեռական հարաբերություն ունենալու միջանկյալ տարիքն ավելի բարձր է՝ ի տարբերություն գյուղաբնակ կանանց: Ինչպես և ակնկալվում էր, նկատելի է դրական կապ կնոջ կրթական մակարդակի և առաջին ամուսնության պահին նրա ունեցած տարիքի միջև: Այդ նույն օրինաչափությունը նկատելի է նաև կնոջ կրթական մակարդակի և առաջին սեռական հարաբերության պահին նրա տարիքի միջև: Տարրական կամ միջնակարգ կրթություն ունեցող կանանց միջանկյալ տարիքըն առաջին ամուսնության պահին կազմում է մոտ 19 տարի: Կանանց միջանկյալ տարիքը կայուն կերպով աճում է կրթական մակարդակին համապատասխան՝ բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում հասնելով 23 և ավելի բարձր տարիքի:

Աղյուսակ 7.3 Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ

Առաջին անգամ սեռական հարաբերություն ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ որոշակի տարիքների, և մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ, համաձայն հարցման պահին տարիքի, Հայաստան 2000թ.

Տարիքը հարցման պահին	Առաջին անգամ սեռական հարաբերություն ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ կոնկրետ տարիքի					Երբևէ սեռ. հարաբեր- ություն չու- նեցած կա- նանց տոկո- սային բաշխ.		Մեղիան տա- րիքն առա- ջին սեռ. հարաբեր. ժամանակ
	15	18	20	22	25	Կանանց թվաքա- նակը (մարդ)	ամուսնու- թյան ժա- մանակ	
								(%,%)
15-19	0.6	4.2	4.2	4.2	4.2	91.4	1160	-
20-24	0.8	19.2	37.1	4.2	4.2	47.4	1007	-
25-29	0.4	22.7	53.5	69.4	82.0	13.4	769	19.7
30-34	0.3	17.4	50.0	70.4	87.5	4.9	763	20.0
35-39	0.0	13.1	44.0	65.5	82.5	5.6	962	20.5
40-44	0.2	12.3	39.9	59.8	78.7	6.3	947	20.9
45-49	0.1	15.4	39.4	58.3	77.0	5.6	822	21.1
25-49	0.2	15.9	45.0	64.4	81.4	7.0	4263	20.5

ԿԳ: Կիրառելի չէ
Նշում. 15-19 և 20-24 տարիքային խմբերի համար մեղիանները չեն որոշվել, քանի որ տարիքային միջակայքի նվազագույն սահմանում առաջին անգամ ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը 50 տոկոսից ցածր է եղել:

Աղյուսակ 7.4 Մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ

25-49 տարեկան կանանց մեղիան տարիքը առաջին ամուսնության ժամանակ, ըստ հարցման պահին տարիքի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%,%)

Հիմնական բնութագրիչներ	Տարիքը հարցման պահին					Կանանց տարիքը 25-49
	25-29	30-34	35-39	40-44	45-49	
Բնակավայր						
Քաղաքային	20.6	20.7	21.1	21.4	21.6	21.1
Գյուղական	18.9	19.4	19.7	20.5	19.9	19.7
Մարզը						
Երևան	21.3	21.4	21.2	21.7	22.1	21.5
Արագածոտն	18.6	19.2	20.6	21.6	21.6	20.1
Արարատ	18.9	19.2	19.3	20.6	20.1	19.5
Արմավիր	18.9	20.1	20.7	20.8	20.2	20.1
Գեղարքունիք	18.4	19.0	19.5	19.9	19.7	19.3
Լոռի	20.1	20.0	20.9	19.9	20.6	20.3
Կոտայք	19.8	19.5	19.6	20.7	20.7	20.0
Շիրակ	19.8	20.3	20.7	21.5	20.9	20.8
Սյունիք	19.5	19.5	20.2	21.1	20.1	20.2
Վայոց ձոր	19.9	20.1	20.3	20.7	20.9	20.4
Տավուշ	19.8	19.4	21.4	20.6	20.9	20.5
Կրթությունը						
Տարրական/միջին	17.9	17.9	18.8	20.0	18.3	18.8
Միջնակարգ	18.3	18.8	19.5	19.8	19.3	19.1
Միջնակարգ-մասնագիտական	20.1	20.3	20.6	21.1	21.1	20.6
Բարձրագույն	22.9	22.3	23.6	23.3	24.3	23.3
Ընդամենը	19.8	20.1	20.5	21.0	21.1	20.5

Նշում. 15-19 և 20-24 տարիքային խմբերի համար մեղիանները չեն որոշվել, քանի որ տարիքային միջակայքի նվազագույն սահմանում առաջին անգամ ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը 50 տոկոսից ցածր է եղել:

Հանրապետության տարբեր մարզերում բնակվող կանանց միջանկյալ տարիքն առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության պահին փոքր ինչ տարբերվում է: Ամենաբարձր միջանկյալ տարիքը գրանցվել է Երևանում (21.5 տարեկան՝ առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության պահին), իսկ ամենացածրը՝ Գեղարքունիքում (համապատասխանաբար՝ 19.3 և 19.2 տարեկան):

Աղյուսակ 7.5 Սեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ

25-49 տարեկան կանանց մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ, ըստ հարցման պահին տարիքի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Տարիքը հարցման պահին					Կանանց տարիքը 25-49 (%)
	25-29	30-34	35-39	40-44	45-49	
Բնակավայր						
Քաղաքային	20.6	20.7	21.1	21.3	21.6	21.1
Գյուղական	18.9	19.3	19.7	20.5	20.0	19.6
Մարզը						
Երևան	21.2	21.3	21.2	21.6	22.0	21.5
Արագածոտն	18.7	19.0	20.6	21.6	22.0	20.1
Արարատ	18.8	19.2	19.3	20.6	20.3	19.5
Արմավիր	18.9	19.9	20.7	20.2	20.1	19.9
Գեղարքունիք	18.4	19.0	19.5	19.7	19.7	19.2
Լոռի	20.1	19.9	20.7	19.9	20.4	20.2
Կոտայք	19.8	19.5	19.7	20.5	20.7	20.0
Շիրակ	19.9	20.4	20.6	21.5	21.3	20.8
Սյունիք	19.8	19.4	20.3	21.0	20.3	20.2
Վայոց ձոր	19.9	20.4	20.3	20.9	21.1	20.5
Տավուշ	19.7	19.3	21.4	20.6	20.8	20.5
Կրթությունը						
Տարրական/միջին	17.9	17.7	18.8	19.9	18.0	18.7
Միջնակարգ	18.3	18.8	19.5	19.7	19.4	19.1
Միջնակարգ-մասնագիտական	20.1	20.3	20.6	21.1	21.2	20.6
Բարձրագույն	22.8	22.0	23.6	23.2	24.3	23.3
Ընդամենը	19.7	20.0	20.5	20.9	21.1	20.5

Նշում. 15-19 և 20-24 տարիքային խմբերի համար մեղիանները չեն որոշվել, քանի որ տարիքային միջակայքի նվազագույն սահմանում առաջին անգամ ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը 50 տոկոսից ցածր է եղել:

7.3 Սեռական ակտիվությունը վերջին շրջանում

Սեռական հարաբերությունների հաճախությունը բեղմնականխման միջոցներ չօգտագործելու պայմաններում հղիությունը պայմանավորող ուղղակի գործոն է: Հետևաբար, այդ հարաբերությունների հաճախության պարզաբանումը կարևոր է հղիանալու հավանականության գնահատման համար: ՀԺԱՀ-ն ընթացքում պարզաբանվում էր, թե ե՞րբ է վերջին անգամ կանանց մոտ տեղի ունեցել սեռական հարաբերություն: Աղյուսակ 7.6-ը ներկայացնում է կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին սեռական հարաբերությունից հետո անցած ժամանակահատվածի: Հարցմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում առնվազն մեկ սեռական հարաբերություն ունեցող կանայք դասվել են որպես «Սեռապես ակտիվ» համարվող խմբին:

Ըստ ՀԺԱՀ-ի տվյալների, հարցմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում կանանց կեսից ավելին (52 տոկոսը) սեռապես ակտիվ է եղել: Հարցմանը նախորդող մեկ տարվա ընթացքում 10 տոկոսն է ունեցել սեռական հարաբերություն, իսկ կանանց 9 տոկոսը ունեցել է սեռական հարաբերություն ավելի քան մեկ տարի առաջ: Հարցվողների 29 տոկոսը սեռական հարաբերություն երբևէ չի ունեցել: Սոտակա ժամանակահատվածում սեռական ակտիվության որոշակի նվազում է արձանագրվել նույնիսկ նորապսակ կանանց շրջանում: Դա կարելի է վերագրել այն փաստին, որ ամուսնացած կանանց մոտ 10 տոկոսի վկայությամբ, նրանց ամուսինները բնակվում են այլ վայրերում (տվյալները բերված են գլուխ 2-ում):

Աղյուսակ 7.6 Սեռական ակտիվությունը հարցման ժամանակահատվածում


Կանանց տոկոսային բաշխումն ըստ սեռական ակտիվության ժամկետների՝ հարցմանը նախորդող չորս շաբաթների ընթացքում, համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Վերջին սեռ. հարաբերությունը տեղի է ունեցել			Երբևէ չի ունեցել սեռ. հարաբ.	Պատասխան չկա	Ընդամենը	Կանանց թվաքանակը (մարդ)
	Վերջին 4 շաբաթվա ընթացքում	1 տարվա ընթացքում	Ավելի քան 1 տարի առաջ				
Տարիքը							
15-19	7.5	1.0	0.0	91.4	0.1	100.0	1160
20-24	43.4	6.7	2.3	47.4	0.2	100.0	1007
25-29	68.3	10.6	6.5	13.4	1.3	100.0	769
30-34	73.7	10.4	9.7	4.9	1.3	100.0	763
35-39	71.8	9.2	12.3	5.6	1.0	100.0	962
40-44	64.2	13.4	14.5	6.3	1.6	100.0	947
45-49	52.5	18.8	21.4	5.6	1.6	100.0	822
Ամուսնության տևողությունը (տարիներով)							
Երբևէ չամուսնացած	0.1	0.2	0.4	99.3	0.0	100.0	1851
Հարցման պահին ամուսնացած	80.8	14.0	4.4	0.0	0.8	100.0	4125
0-4	84.3	13.7	1.1	0.1	0.8	100.0	598
5-9	84.3	11.3	3.8	0.0	0.6	100.0	738
10-14	85.2	10.8	2.9	0.0	1.1	100.0	760
15-19	81.4	12.5	5.1	0.0	1.0	100.0	797
20-24	79.0	14.6	5.7	0.0	0.7	100.0	743
25+	66.5	25.1	8.1	0.0	0.3	100.0	489
Նախկինում ամուսնացած	1.1	6.1	86.2	0.0	6.6	100.0	455
Բնակավայրը							
Քաղաքային	48.4	9.3	10.1	31.1	1.1	100.0	3942
Գյուղական	57.6	9.8	7.2	24.7	0.7	100.0	2488
Մարզը							
Երևան	46.8	8.9	9.9	33.1	1.4	100.0	2206
Արագածոտն	56.8	11.0	5.4	26.2	0.6	100.0	279
Արարատ	58.0	10.1	5.7	25.5	0.7	100.0	642
Արմավիր	57.2	9.7	8.3	24.2	0.6	100.0	553
Գեղարքունիք	58.3	9.8	6.7	24.3	0.8	100.0	484
Լոռի	54.5	9.8	10.5	24.2	1.0	100.0	489
Կոտայք	46.7	11.5	9.7	31.7	0.4	100.0	505
Շիրակ	48.2	8.9	13.6	28.3	1.0	100.0	611
Սյունիք	56.9	5.9	8.5	27.3	1.4	100.0	271
Վայոց ձոր	56.6	12.2	6.1	24.9	0.2	100.0	113
Տավուշ	59.5	9.9	6.5	23.8	0.4	100.0	278
Կրթությունը							
Տարրական/միջին	36.3	8.4	9.3	45.3	0.7	100.0	593
Միջնակարգ	53.0	10.3	7.0	28.7	1.0	100.0	2341
Միջնակարգ-նասնագիտական	56.1	10.0	11.7	21.3	1.0	100.0	2295
Բարձրագույն	49.8	7.5	7.6	34.0	1.1	100.0	1201
Հարցման պահին օգտագործվող հակաբեղմնավորման մեթոդը							
Ոչ մի մեթոդ	26.6	11.1	14.1	46.8	1.3	100.0	3922
Հաբեր	(92.1)	(7.9)	(0.0)	(0.0)	(0.0)	(100.0)	47
ՆԱՊ	88.7	8.8	1.6	0.0	0.8	100.0	391
Պահպանակ	94.5	4.6	0.4	0.0	0.5	100.0	285
Կնոջ ստերիլացում	66.8	19.2	11.8	1.0	1.2	100.0	117
Պարբերական ինքնազսպում	95.4	3.3	0.6	0.0	0.7	100.0	199
Ընդհատված սեռական հարաբերություն	93.5	6.1	0.2	0.0	0.2	100.0	1317
Այլ	91.8	7.3	0.0	0.0	0.9	100.0	153
Ընդամենը	52.0	9.5	9.0	28.6	1.0	100.0	6430

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 “չկշռված” դեպքերի վրա:

Գծապատկեր 7.2-ը ներկայացնում է հարցմանը նախորդող վերջին շաբաթների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ տարիքի: Ակնհայտ է, որ կանանց սեռական ակտիվությունն աճում է տարիքի հետ զուգընթաց, 30-34 տարեկանում հասնելով առավելագույն մակարդակի՝ 74 տոկոսի, այնուհետև այն նվազում է մինչև 53 տոկոս՝ 45-49 տարեկանում: 15-19 տարեկան կանանց միայն 8 տոկոսն է նշել, որ վերջին շաբաթների ընթացքում ունեցել է սեռական հարաբերություն, իսկ նրանց մեծամասնությունը (91 տոկոս) նշել է, որ երբևէ չի ապրել սեռական կյանքով: Ինչպես արդեն նշվել է, շատ քիչ քվով կանայք են պատմել իրենց արտամուսնական սեռական հարաբերությունների մասին: Երբևէ չամուսնացած կանանց 99 տոկոսը նշել է, որ երբեք չի ունեցել սեռական հարաբերություն:

Գծապատկեր 7.2 Վերջերս ունեցած սեռական հարաբերությունները (հարցմանը նախորդող 4 շաբաթների ընթացքում) 15-49 տարեկան կանանց մոտ



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Հավանաբար, տարրական և միջնակարգ կրթությամբ կանանց միայն 36 տոկոսը, իսկ միջին մասնագիտական կրթությամբ կանանց 56 տոկոսն է սեռապես ակտիվ եղել հարցմանը նախորդող վերջին շաբաթների ընթացքում: Հարկ է նշել, որ նույն ժամանակաշրջանում գյուղաբնակ կանայք սեռապես ավելի ակտիվ են եղել (58 տոկոս), քան՝ քաղաքաբնակ կանայք (48 տոկոս): Նկատելի է նաև սեռական ակտիվության վերաբերյալ տվյալների տարբերությունները՝ ըստ մարզերի: Այն համեմատաբար ավելի ցածր է Երևան քաղաքում (47 տոկոս), Կոտայքի (47 տոկոս) և Շիրակի (48 տոկոս) մարզերում: Սեռական ակտիվության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Տավուշում (60 տոկոս):

ՀԺԱՀ-ի շրջանակում սեռական ակտիվության վերլուծություն է կատարվել նաև ըստ հարցման պահին բեղմնականիչների օգտագործման փաստերի: Տվյալները ցույց են տալիս, որ հարցմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում սեռական հարաբերություն ունեցած կանանց մեծամասնությունը կամ չեն օգտագործել բեղմնականիչման որևէ մեթոդ, կամ էլ դիմել են ընդհատված սեռական հարաբերության, որն անհուսալի մեթոդ է համարվում :

7.4 Հետծննդյան անդաշտանություն, ինքնազսպում և անբեղմնունակություն

Հետծննդյան անդաշտանությունը ծննդաբերության և վերսկսված դաշտանի միջև ընկած ժամանակահատվածն է, որի ընթացքում հղիանալու հավանականությունը նվազում է: Բեղմնավորման ցածր հավանականության տևողությունը առավելապես կախված է երկու գործոններից՝ 1) կրծքով կերակրման տևողությունից և ինտենսիվությունից, որոնք միտում ունեն խաթարելու ձվազատման վերականգումը, 2) սեռական հարաբերությունների վերսկսելու

տևողությունից: Անդաշտանություն ունեցող կամ սեռական հարաբերություններից ձեռնպահ մնացող կանայք (կամ երկուսը միասին) ենթակա չեն հղիանալու և համարվում են անբեղմնունակ:

Աղյուսակ 7.7-ում ներկայացված է հարցմանը նախորդող 3 տարիների ընթացքում ծննդաբերած, հետծննդյան անդաշտանություն ունեցող, սեռական հարաբերություններից ձեռնպահ մնացող և անբեղմնունակ մայրերի տոկոսային բաշխումը: Ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ բոլոր ծննդաբերած կանանց 15 տոկոսն ունեցել է անդաշտանություն, 7 տոկոսը ձեռնպահ է մնացել սեռական հարաբերություններից և 17 տոկոսը եղել է անբեղմնունակ:

Աղյուսակ 7.7 Ետծննդյան դաշտանի բացակայություն, ինքնազսպում և հղիության անընդունակություն

Հարցմանը նախորդող երեք տարիների ընթացքում ծնունդների տոկոսային բաշխումը, որոնց դեպքում մայրն ունեցել է ետծննդյան դաշտանի բացակայություն, օգտագործել է ինքնազսպման մեթոդը և անընդունակ է եղել հղիանալու, ըստ ծննդաբերությանը հաջորդող ամիսների, մեղիան ու միջին տևողությունների, Հայաստան 2000թ. (%)

Ծնունդից հետո ամիսների թիվը ¹	Ծնունդների տոկոս. բաշխ., որոնց դեպքում մայրն ունեցել է.			Ծնունդների քանակը
	Անենորեա	Ինքնազսպում	Ենթակա չէ հղիանալու	
< 2	100.0	78.2	100.0	35
2-3	57.4	18.2	60.6	59
4-5	40.5	5.3	43.7	55
6-7	27.8	5.6	27.8	40
8-9	13.5	0.0	13.5	59
10-11	8.2	4.1	10.0	57
12-15	6.2	1.2	7.4	111
16-19	2.1	8.1	8.7	91
20-23	6.0	5.7	9.4	102
24-29	3.0	1.6	4.6	150
30-35	1.4	0.8	2.2	145
Ընդամենը	15.1	7.0	17.2	905
Մեղիան	3.8	1.7	4.0	-
Միջին	6.0	3.3	6.8	-

Աղյուսակ 7.8 Մենոպաուզա

30-49 տարեկան ոչ հղի և ետծննդյան շրջանում դաշտանի բացակայություն չունեցող կանանց տոկոսային բաշխումը, ովքեր ունեն մենոպաուզա, Հայաստան 2000թ. (%)

Տարիքը	Մենոպաուզա ունեցողների տոկ.բաշխ. ¹	Կանանց թվաքանակը (մարդ)
30-34	0.8	718
35-39	0.7	941
40-41	3.9	414
42-43	5.7	357
44-45	13.4	353
46-47	16.6	363
48-49	31.8	276
Ընդամենը	7.1	3422

¹ Կանայք, որոնց վերջին մենստրուալ ցիկլը տեղի է ունեցել հարցմանը նախորդող 6 կամ ավելի ամիսներ առաջ:

Ծննդաբերությունից հետո առաջին երկու ամիսների ընթացքում հետծննդյան անդաշտանությունը կազմում է 100 տոկոս, ինչը մեկ տարվա ընթացքում կտրուկ նվազում է, ծննդաբերությունից 10-11 ամիս անց՝ հասնելով մինչև 8 տոկոսի: Ծննդաբերությունից հետո, առաջին երկու ամիսների ընթացքում սեռական հարաբերություններից ձեռնպահ մնացած կանանց թվաքանակը կազմում է 78 տոկոս, ինչը հետագա 2-3 ամիսների ընթացքում կտրուկ նվազելով հասնում է 18 տոկոսի, այնուհետև 4-5 ամիս անց՝ մինչև 5 տոկոսի: Ընդհանուր առմամբ, ծննդաբերությունից հետո անբեղմնունակության միջանկյալ տևողությունը կազմում է 4 ամիս:

7.5 Դաշտանադադար

Հղիանալու հավանականությունը նվազում է 30 տարեկանից հետո՝ դաշտանադադարի մեջ գտնվող կանանց համամասնության աճին զուգընթաց: Դաշտանադադարի սկիզբը դժվար է սահմանել յուրաքանչյուր անհատ կնոջ համար, սակայն գոյություն ունեն մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր է պատկերացում կազմել դաշտանադադարում գտնվող կանանց համամասնության մասին՝ ամբողջ բնակչության համեմատ: Աղյուսակ 7.8-ում ներկայացված են տեղեկություններ հարցմանը նախորդող 6 կամ ավելի ամիսների ընթացքում դաշտանադադարի մեջ գտնվող 30 և բարձր տարիքի կանանց վերաբերյալ, բացառությամբ նրանց, ովքեր հղի են կամ ունեն հետծննդյան անդաշտանություն:

Համաձայն ՀԺԱԳ-ի տվյալների, 30-49 տարեկան կանանց 7 տոկոսը գտնվում է դաշտանադադարի մեջ: Դաշտանադադարում գտնվող կանանց համամասնությունը աճում է տարիքին զուգընթաց՝ 30-34 տարեկան կանանց մոտ այն 1 տոկոսից էլ պակաս է, իսկ 48-49 տարեկան կանանց շրջանում հասնում է 32 տոկոսի:

3. Պետրոսյան, 2. Մազլուչանց, և 4. Առուստամյան

Բնակչության պտղաբերության ցանկությունները կարևոր են, ինչպես պտղաբերության կանխատեսման պոտենցիալ չբավարարված պահանջների գնահատման համար, այնպես էլ ընտանիքի պլանավորման տեսանկյունից: Սույն գլուխը ներկայացնում է Հայաստանի կանանց պտղաբերության մտադրությունների, ընտանիքի պլանավորման ծառայությունների անրրաժեշտության և ընտանիքի նախընտրելի չափի վերաբերյալ ՀԺԱՀ-ի տվյալները: Այն նույնպես դիտարկում է պտղաբերության վրա հնարավոր ազդեցությունը, եթե անցանկալի հղիությունն եղել է կանխարգելված:

8.1 Վերարտադրողական վարքագիծ

ՀԺԱՀ-ով կանայք հարցվել են իրենց վերարտադրողական նախընտրությունների վերաբերյալ: Աղյուսակ 8.1-ը ներկայացնում է հարցման պահին ամուսնացած կանանց հետագա վերարտադրողական ցանկություններն ըստ կենդանի երեխաների թվաքանակի (ներառյալ հարցման պահին հղիությունը):

Աղյուսակ 8.1 Վերարտադրողական վարքագիծն ըստ կենդանի երեխաների թվաքանակի

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ երեխաներ ունենալու ցանկության՝ համապատասխան կենդանի երեխաների թվաքանակի, Հայաստան 2000թ.


(%,%)

Երեխաներ ունենալու ցանկությունը Ընդամենը	Կենդանի երեխաների թվաքանակը ¹					
	0	1	2	3	4+	
Ունենալ ևս մեկը շուտով ²	68.4	22.4	4.3	1.4	0.6	7.8
Ունենալ ևս մեկն ավելի ուշ ³	2.8	39.4	7.3	1.0	0.6	8.5
Ունենալ ևս մեկը, չգիտի, թե երբ	5.9	6.7	3.1	0.6	0.9	2.7
Որոշված չէ	2.6	6.0	5.2	1.8	0.3	3.7
Այն չի ցանկանում	3.3	19.7	75.8	89.8	90.4	71.7
Ամլացված է	0.9	2.1	2.1	3.2	4.7	2.7
Անպտուղ է	16.2	3.7	2.2	2.3	2.5	3.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակը (մարդ)	160	510	1806	1253	396	4125

¹ ներառում է հարցման պահին հղիությունը
² ցանկանում է հաջորդ ծնունդը 2 տարվա ընթացքում
³ ցանկանում է հետաձգել հաջորդ ծնունդը 2 կամ ավել տարով

Հայաստանում ամուսնացած կանանց մեծամասնությունը ցանկանում է վերահսկել իր հետագա պտղաբերությունը: Հարցվողների գրեթե երեք չորրորդը (72 տոկոս) հայտնել է, որ չի ցանկանում այլևս երեխա ունենալ (զծապատկեր 8.1): Ինչպես և ակնկալվում էր, երեխա չունենալ ցանկացողների կամ ամլացված կանանց տեսակարար կշիռը հավասարապես աճում է:

Գծապատկեր 8.1 Երեխա ունենալու ցանկությունը հարցման պահին ամուսնացած կանանց մոտ



Նշում. Կլորացման պատճառով ընդամենը կարող է հավասար չլինել 100-ի

Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Այնուամենայնիվ, էական է այն հանգամանքը, որ կենդանի երեխա չունեցող կանանց 3 տոկոսը և մեկ կենդանի երեխա ունեցող կանանց 20 տոկոսը չեն ցանկանում այլևս երեխա ունենալ: Այս տվյալները հաստատում են այլ գեկուլցներում գետեղված տվյալները, ուստ որոնց Հայաստանի դժվար սոցիալ-տնտեսական կոնդիցիոնալ պայմաններում որոշ կանայք ցանկանում ետետածգել կամ սահմանափակել իրենց պտղաբերությունը (Salvador et al., 1999): Այնուամենայնիվ, կենդանի երեխա չունեցող կամ միայն մեկ կենդանի երեխա ունեցող կանանց մեծամասնությունը ցանկանում է ունենալ ևս մեկ երեխա (համապատասխանաբար՝ 77 և 69 տոկոս):

Աղյուսակ 8.2-ը ներկայացնում է հարցման պահին ամուսնացած և այլևս երեխա ունենալ չցանկացող կանանց տոկոսային բաշխումն ըստ կենդանի երեխաների թվաքանակի և ընտրված հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, գյուղաբնակ կանայք փոքր ինչ ավելի շատ են ցանկանում երեխա չունենալ, քան քաղաքաբնակ կանայք: Պտղաբերության ցածր մակարդակ ունեցող քաղաքաբնակ կանայք, գյուղաբնակ կանանց համեմատությամբ, այնուամենայնիվ, ավելի հակված են պնդել, որ նրանք այլևս չեն ցանկանում երեխա ունենալ:

Հետաքրքիր է նշել, որ բարձրագույն կրթություն ունեցող կանայք ավելի քիչ են ցանկանում սահմանափակել իրենց ծնելիությունը՝ ի համեմատություն ցածր կրթական մակարդակ ունեցող կանանց: Այն կարող է բազատովել, մասնավորապես, այն փաստով, որ բարձրագույն կրթություն ունեցող կանայք ունեն պտղաբերության ավելի ցածր մակարդակ, քան ցածր կրթական մակարդակ ունեցող կանայք (տվյալները գույց տրված չեն): Հնարավոր է, որ հարցման պահին տարրական/միջին կրթություն ունեցող որոշ կանայք արդեն իսկ ունեին երեխաների ցանկայի թվաքանակ, մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցող կանայք՝ դեռ ոչ: Բացի այդ, տնային տնտեսությունների կենսամակարդակի նախորդ հետազոտության արդյունքները գույց են տալիս, որ Հայաստանում ինչքան բարձր է կրթական մակարդակը, այդքան բարձր է կենսամակարդակը (ՀՀ ԱԿԾ, 2001թ.): Հնարավոր է, դրա համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ բարձրագույն կրթություն ունեցող կանայք հավատում են, որ նրանք ունեն բավարար ֆինանսական միջոցներ՝ մեկ այլ երեխայի ապահովման համար:

Աղյուսակ 8.2 Մանկածնությունը սահմանափակելու ցանկությունը

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր չեն ցանկանում երեխա ունենալ, ըստ կենդանի երեխաների թվաքանակի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%,%)

Հիմնական բնութագրիչներ Ընդամենը	Կենդանի երեխաների թվաքանակը ¹					
	0	1	2	3	4+	
Բնակավայրը						
Քաղաքային	5.1	26.5	80.0	90.9	95.5	72.6
Գյուղական	2.1	12.5	73.7	95.0	95.0	76.7
Կրթությունը						
Տարրական/միջին	*	(37.0)	71.0	89.8	98.1	74.6
Միջնակարգ	3.9	18.5	78.1	93.7	94.6	76.7
Միջնակարգ-մասնագիտական	6.0	19.4	78.5	94.2	95.5	75.6
Բարձրագույն	(0.0)	25.3	78.1	88.0	*	66.3
Ընդամենը	4.1	21.8	77.9	93.0	95.1	74.4

Նշում. Ենթադրվում է, որ ամլացված կանայք այլևս չեն ցանկանում երեխա ունենալ: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ թվերը հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սղված են:

¹ Ներառյալ հարցման պահին հղիությունը

8.2 Ընտանիքի պլանավորման անհրաժեշտությունը

Մայրական առողջության ծառայությունները մտահոգված են, թե ինչպես բացահայտել բնակչության մեջ այն կանանց թվաքանակը, ովքեր պոտենցյալ կարիք ունեն ընտանիքի պլանավորման ծառայությունների մեջ, ինչպես նաև որոշել այն կանանց, որոնց կարիքը հակաբեղմնավորման մեթոդների գծով չի բավարարվել: Հարցման պահին վերարտադրողական տարիքի ամուսնացած կանայք, ովքեր չեն ցանկանում այլևս երեխա ունենալ, կամ ցանկանում են սպասել առնվազն երկու տարի մինչև հաջորդ երեխա ունենալը, սակայն չեն օգտագործում հակաբեղմնավորման մեթոդներ, համարվում են ընտանիքի պլանավորման հարցում *չբավարարված կարիք ունեցողներ*:¹ Հարցման պահին ընտանիքի պլանավորման մեթոդներն օգտագործողները կոչվում են ընտանիքի պլանավորման հարցում *բավարարված կարիք ունեցողներ*: Ընտանիքի պլանավորման *ընդհանուր պահանջարկը*, դա ընտանիքի պլանավորման հարցում բավարարված և չբավարարված կարիքների գումարն է:

Աղյուսակ 8.3-ը ներկայացնում է ընտանիքի պլանավորման գծով ծառայությունների պահանջարկն ըստ ընտրված հիմնական բնութագրիչների: Ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջարկը բոլոր կանանց մոտ կազմել է 74 տոկոս, և պահանջարկի 84 տոկոսն եղել է բավարարված: Պտղաբերությունը սահմանափակելու պահանջարկը (59 տոկոս) եղել է ավելի բարձր՝ հետաձգելու պահանջարկի համեմատությամբ (15 տոկոս):

¹Հաշվարկի ճշգրիտ նկարագրության համար, տես աղյուսակ 8.3-ի 1-ին մշումը:

Աղյուսակ 8.3 Ընտանիքի պլանավորման հարցում կարիքը. հարցման պահին ամուսնացած կանայք

Հարցման պահին ընտանիքի պլանավորման հարցմանը չիրականացված և իրականացված կարիքներով ամուսնացած կանանց տոկոսը, և ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջարկն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Ընտանիքի պլանավորման հարցում											
	Ընտանիքի պլանավորման հարցում չիրականացված կարիքը ¹		իրականացված կարիքը (հարցման պահին օգտագործումը) ²			Ընտանիքի պլանավորման հարցում ընդհանուր պահանջարկը ³						
	Հետաձգման համար	Սահմանափակման մեղմում	Հետաձգման համար	Սահմանափակման մեղմում	Բավարարված համար	Կանանց համար	Ընդհանուր մեղմում	Կանանց համար	Ընդհանուր տոկոսը	Կանանց տոկոսը	Թվաքանակը (մարդ)	
Տարիքը												
15-19	14.2	3.5	17.7	21.9	3.6	25.5	41.0	8.1	49.1	64.0	99	
20-24	8.7	6.3	15.0	32.4	22.9	55.3	43.3	30.0	73.3	79.5	511	
25-29	3.5	8.9	12.5	22.2	47.4	69.6	27.5	56.9	84.3	85.2	625	
30-34	1.2	11.3	12.5	13.8	57.6	71.4	15.6	70.0	85.5	85.4	660	
35-39	1.5	9.5	11.0	6.0	64.9	70.9	7.7	74.7	82.4	86.7	816	
40-44	0.6	11.3	11.9	1.8	56.9	58.7	2.5	68.3	70.8	83.1	773	
45-49	0.0	7.9	7.9	0.8	38.1	38.9	0.8	46.0	46.8	83.1	640	
Բնակավայրը												
Քաղաքային	2.8	8.8	11.6	12.5	46.6	59.1	15.9	55.5	71.4	83.7	2391	
Գյուղական	2.2	9.9	12.0	10.8	51.7	62.5	14.1	62.5	76.6	84.3	1733	
Մարզը												
Երևան	3.0	9.4	12.4	13.7	43.3	57.1	17.1	52.7	69.9	82.3	1291	
Արագածոտն	2.1	9.3	11.3	10.4	52.5	63.0	14.6	62.7	77.3	85.3	193	
Արարատ	2.3	7.6	9.9	11.9	54.4	66.3	15.7	62.8	78.5	87.4	449	
Արմավիր	1.2	7.5	8.7	14.1	51.2	65.3	16.5	59.9	76.3	88.6	373	
Գեղարքունիք	2.6	14.8	17.4	12.2	44.1	56.2	15.9	59.7	75.7	77.0	341	
Լոռի	4.4	6.3	10.7	15.9	52.2	68.1	20.7	58.9	79.6	86.5	323	
Կոտայք	2.5	12.2	14.7	7.6	45.0	52.5	10.8	57.6	68.3	78.4	316	
Շիրակ	1.0	10.3	11.2	8.7	56.7	65.4	9.9	67.3	77.2	85.5	388	
Սյունիք	3.5	6.0	9.5	5.4	44.3	49.7	9.5	50.9	60.4	84.3	173	
Վայոց ձոր	4.7	7.5	12.2	12.5	53.4	65.9	17.2	60.9	78.1	84.4	79	
Տավուշ	1.7	7.6	9.3	6.5	57.3	63.8	9.0	66.1	75.1	87.6	198	
Կրթությունը												
Տարրական/միջին	4.3	10.6	14.9	9.5	40.6	50.2	15.4	51.6	67.0	77.8	276	
Միջնակարգ	2.6	9.6	12.2	10.0	49.2	59.2	13.3	59.7	73.0	83.3	1537	
Միջնակարգ-մասնագիտական	2.1	10.0	12.1	11.7	50.4	62.1	14.6	60.6	75.1	83.9	1603	
Բարձրագույն	2.8	6.4	9.1	16.7	47.2	63.8	20.1	53.7	73.8	87.7	708	
Ընդամենը	2.6	9.3	11.8	11.8	48.7	60.5	15.1	58.5	73.6	84.0	4125	

¹ Չիրականացված կարիքը հետաձգման հարցում ներառում է՝ հղի կանանց, որոնց հղիությունը ժամանակին չէր, հետծննդյան դաշտանադադար (լակտացիոն ամենորեա) ունեցող կանանց, ովքեր չեն օգտագործում ընտանիքի պլանավորման որևէ մեթոդ, որոնց վերջին ծնունդը ժամանակին չէր և այն բերրի կանանց, ովքեր հղի չեն, չունեն հետծննդյան դաշտանադադար (լակտացիոն ամենորեա) և նրանք, ովքեր չեն օգտագործում ընտանիքի պլանավորման որևէ մեթոդ և նշել են, որ նրանք ցանկանում են սպասել երկու կամ երեք տարի մինչև հաջորդ ծնունդը: Չիրականացված կարիքը հետաձգման հարցում ներառում է նաև այն կանանց, ովքեր չեն օգտագործում ընտանիքի պլանավորման որևէ մեթոդ և նշել են, որ նրանք համոզված չեն, թե արդյո՞ք ցանկանում են ունենալ ևս մեկ երեխա, կամ, նրանք, ովքեր ցանկանում են ևս մեկ երեխա, սակայն համոզված չեն, թե երբ, մինչև երբ նրանք նշել են, որ մեծ խնդիր չի լինի, եթե նրանք մոտակա մի քանի շաբաթների ընթացքում հայտնաբերեն, որ հղի են:

² Չիրականացված կարիքը սահմանափակման հարցում վերաբերվում է հղի կանանց, որոնց հղիությունն անսպասելի էր, հետծննդյան դաշտանադադար (լակտացիոն ամենորեա) ունեցող կանանց, որոնց վերջին երեխան անսպասելի էր և այն բերրի կանանց, ովքեր հղի չեն, չունեն հետծննդյան դաշտանադադար (լակտացիոն ամենորեա) և ովքեր չեն օգտագործում ընտանիքի պլանավորման որևէ մեթոդ և այլևս չեն ցանկանում երեխա ունենալ: “Չիրականացված կարիք” կատեգորիան բացառում է հղի և հետծննդյան դաշտանադադար (լակտացիոն ամենորեա) ունեցող կանանց, ովքեր հղիացել են՝ օգտագործելով որևէ մեթոդ (այս կանանց անըրաժեշտ է հակաբեղմնավորման ավելի լավ մեթոդ):

³ Օգտագործումը հետաձգելու հարցում սահմանվում է՝ կանայք, ովքեր օգտագործում են ընտանիքի պլանավորման որևէ մեթոդ և նշել են, որ նրանք ցանկանում են սպասել հաջորդ երեխային կամ չեն որոշել:

Օգտագործումը սահմանափակման հարցում սահմանվում է՝ կանայք, ովքեր օգտագործում են ընտանիքի պլանավորման որևէ մեթոդ, և ովքեր այլևս չեն ցանկանում երեխա ունենալ: Ի նկատի ունեցեք, որ հատուկ մեթոդների օգտագործումը հաշվի չի առնվել:

³ Օգտագործողները, ովքեր հղի են կամ ունեն հետծննդյան դաշտանադադար (լակտացիոն ամենորեա), որոնց հղիությունը արդյունք էր հակաբեղմնավորման մեթոդի ձախողման, ընդգրկված չեն չիրականացված կարիք կատեգորիայում, սակայն ընդգրկված են հակաբեղմնավորիչների ընդհանուր պահանջարկի մեջ (մինչև երբ նրանք օգտագործած մեթոդը ձախողված չէր):

Ընդհանուր առմամբ, կանանց 12 տոկոսն ունեցել է ընտանիքի պլանավորման չբավարարված կարիք, որից 3 տոկոսը՝ պտղաբերությունը հետաձգելու և 9 տոկոսը՝ սահմանափակելու համար: Չբավարարված կարիքը հասել է իր առավելագույն մակարդակին՝ ամենաբարձրն են ամենաերիտասարդ և ցածր կրթական մակարդակ ունեցող կանանց մոտ: Ընտանիքի պլանավորման չբավարարված կարիքը տատանվել է Արմավիրում և Տավուշում սկսած ամենացածրը՝ 9 տոկոս, մինչև ամենաբարձրը Գեղարքունիքում՝ 17 տոկոս:

8.3 Ծնելիության պլանավորումը

ՀԺԱՀ-ում կանանց տրվել են մի շարք հարցեր հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում ծնված յուրաքանչյուր երեխայի վերաբերյալ, իսկ եթե հղի է հարցման պահին՝ նրանց հղիության վերաբերյալ, որպեսզի որոշել, արդյոք հղիությունը ցանկալի է եղել *այն ժամանակ* (պլանավորված), ցանկալի է եղել *ավելի ուշ* (ոչ ճիշտ ժամանակին), կամ *անցանկալի է եղել* (չպլանավորված):

Աղյուսակ 8.4-ը ներկայացնում է ցանկալի, ավելի ուշ ցանկալի և ոչ ցանկալի ծնունդների տոկոսային բաշխումը հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում: Տվյալները ցույց են տալիս, որ հարցմանը նախորդող վերջին 5 տարիների ընթացքում ծնունդների 83 տոկոսը ցանկալի է եղել այդ ժամանակ: Ծնունդների 9 տոկոսը ցանկալի է եղել ավելի ուշ ժամանակահատվածի համար և 8 տոկոսն ընդհանրապես ցանկալի չի եղել այդ ժամանակահատվածի համար: Վերարտադրողականության պլանավորման կարգավիճակի և ծնունդների հերթականության միջև գոյություն ունի ամուր փոխկախվածություն: Օրինակ, մինչդեռ առաջինը ծնվածների 98 տոկոսը ցանկալի է եղել այդ ժամանակ, չորրորդ և ավել ծնունդների 41 տոկոսն ընդհանրապես ցանկալի չեն եղել:

<u>Աղյուսակ 8.4 Պտղաբերության պլանավորման կարգավիճակը</u>						
Ծնունդների տոկոսային բաշխումը (ներառյալ հղիությունը հարցման պահին) հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում, ըստ պտղաբերության պլանավորման կարգավիճակի, ծնունդի կարգի և ծննդաբերելիս մոր տարիքի, Հայաստան 2000թ. (%,%)						
Ծնունդների կարգը և մոր տարիքը	Ծնունդի պլանավորման կարգավիճակը				Ընդամենը	Ծնունդների թվաքանակը (մարդ)
	Ցանկալի այն ժամանակ	Ցանկալի ուշ	Այլևս չի ցանկանում	Պատասխան չկա		
Ծնունդների կարգը						
1	98.2	1.4	0.2	0.2	100.0	713
2	81.0	17.5	1.4	0.0	100.0	619
3	71.3	12.3	16.2	0.2	100.0	333
4+	53.4	5.4	41.2	0.0	100.0	178
Տարիքը ծննդաբերելիս						
<19	91.2	7.4	1.3	0.0	100.0	335
20-24	86.1	10.2	3.5	0.1	100.0	826
25-29	80.5	9.8	9.5	0.1	100.0	400
30-34	67.4	9.7	22.8	0.0	100.0	183
35-39	76.1	2.7	20.5	0.7	100.0	85
40-44	*	*	*	*	*	13
45-49	*	*	*	*	*	1
Ընդամենը	83.2	9.2	7.5	0.1	100.0	1843

Նշում. Աստղանիշը ցույց է տալիս, որ թվերը հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սղվել են:

8.4 Երեխաների իդեալական թիվը

ՉԺԱԶ-ում կանայք հարցվել են ընտանիքի իդեալական չափի վերաբերյալ իրենց պատկերացումների մասին: Սույնի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է հարցվողներին երկու հարց տալով: Երեխա չունեցող հարցվողներին տրվել է հետևյալ հարցը. “Եթե կարողանայիք ընտրել այն երեխաների ճշգրիտ թիվը, որը կցանկանայիք ունենալ ձեր ամբողջ կյանքի ընթացքում, ապա որքա՞ն կլինեի այն”: Երեխա ունեցող հարցվողների համար տրվել է հետևյալ հարցը. “ Եթե կարողանայիք վերադառնալ այն ժամանակ, երբ դուք երեխա չունեիք և ընտրել ցանկալի երեխաների ճշգրիտ թիվը, ապա որքա՞ն կլինեի այն”: Անկախ հարցվողների ունեցած երեխաների թվից այդ հարցերի պատասխաններն առկա են: Այնուամենայնիվ, հարցվողների ունեցած երեխաների թվի և նրանց կողմից տրված իդեալական թվի միջև գոյություն ունի տիպիկ կորելացիոն կապ: Այս կապը կարող է գոյություն ունենալ, քանի որ ավելի մեծ ընտանիք ցանկացող հարցվողներն ունեցել են շատ երեխաներ կամ հարցվողները համապատասխանեցրել են իդեալական և փաստացի ընտանիքների չափերը, կամ էլ համակցել են այդ երկու գործոնները:

Աղյուսակ 8.5-ը ցույց է տալիս, որ փաստացի Հայաստանի բոլոր կանայք ցանկանում են ունենալ մի քանի երեխա: Կանանց գրեթե կեսը (48 տոկոս) նշել է, որ երկու երեխան է իդեալական, իսկ մեկ քառորդը (26 տոկոս) նշել է՝ երեք երեխայի դեպքում: Կանանց մեկ հինգերորդը նախընտրում է ունենալ չորս կամ ավել երեխա: Ընդհանուր առմամբ, բոլոր կանանց համար երեխաների միջին իդեալական թիվը 2.7-ն է, և 2.8-ը՝ ամուսնացած կանանց համար: Երեխաների փաստացի և իդեալական թվերի միջև գոյություն ունի դրական կորելացիոն կապ: Օրինակ, բոլոր կանանց համար, երեխաների միջին իդեալական թիվը 2.3-ից աճում է մինչև 3.3՝ չորս կամ ավել երեխա ունեցող կանանց համար:

<u>Աղյուսակ 8.5 Երեխաների իդեալական թիվը</u>						
Բոլոր կանանց տոկոսային բաշխումն ըստ երեխաների իդեալական թվաքանակի, երեխաների միջին իդեալական թվաքանակը, և հարցման պահին ամուսնացած կանանց համար՝ ըստ կենդանի երեխաների թվաքանակի, Հայաստան 2000թ. (%)						
Երեխաների իդեալական թվաքանակ	Կենդանի երեխաների թվաքանակը ¹					Ընդամենը
	0	1	2	3	4+	
0	1.0	0.4	0.2	0.2	0.0	0.4
1	7.0	5.5	2.5	2.2	2.6	4.2
2	62.4	60.9	49.6	22.9	33.1	48.3
3	17.3	23.2	25.9	44.2	15.3	26.0
4	8.2	7.4	19.0	24.9	38.5	16.8
5	0.8	1.1	1.5	3.1	3.1	1.7
6+	0.8	0.7	0.7	1.5	4.5	1.1
Ոչ թվային պատասխաններ	2.5	0.8	0.8	1.0	3.0	1.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակը (մարդ)	2056	658	1964	1330	422	6430
Միջին իդեալական թվաքանակը²						
Բոլոր կանանց համար թվաքանակը (մարդ)	2.3	2.4	2.7	3.1	3.3	2.7
Բոլոր կանանց համար թվաքանակը (մարդ)	2004	653	1949	1317	409	6333
Հարցման պահին ամուսնացած կանայք						
Կանանց թվաքանակը (մարդ)	2.6	2.3	2.7	3.1	3.3	2.8
Կանանց թվաքանակը (մարդ)	159	505	1795	1243	384	4085

¹ Ներառում է հարցման պահին հղիությունը
² Միջինը հաշվարկվել է՝ բացառելով այն կանանց, ովքեր տվել են ոչ թվային պատասխաններ:

Աղյուսակ 8.6-ը ցույց է տալիս երեխաների միջին իդեալական թիվն ըստ կնոջ տարիքի և հիմնական բնութագրիչների: Երեխաների միջին իդեալական թիվն աճում է կնոջ տարիքի աճելու հետ մեկտեղ, սկսած 2.3 երեխա՝ 15-19 տարեկան կանանց մոտ, մինչև 3.1 երեխա՝ 45-49 տարեկան կանանց մոտ: Ընդհանուր առմամբ, երեխաների միջին իդեալական թիվն փոփոխվում է աննշան ըստ հիմնական բնութագրիչների:

Աղյուսակ 8.6 Երեխաների միջին իդեալական թիվն ըստ հիմնական բնութագրիչների

Երեխաների միջին իդեալական թիվը բոլոր կանանց համար՝ ըստ տարիքի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ Ընդամենը	Կնոջ տարիքը հարցման պահին							
	15-19	20-24	25-29	30-34	35-39	40-44	45-49	
Բնակավայրը								
Քաղաքային	2.3	2.3	2.4	2.6	2.8	2.9	3.0	2.6
Գյուղական	2.4	2.4	2.5	2.8	3.0	3.2	3.4	2.8
Մարզը								
Երևան	2.3	2.3	2.4	2.6	2.7	2.8	2.9	2.5
Արագածոտն	2.4	2.4	2.6	2.8	3.1	3.2	3.6	2.8
Արարատ	2.3	2.4	2.5	2.7	2.9	3.1	3.0	2.6
Արմավիր	2.4	2.4	2.6	2.8	3.0	3.2	3.5	2.8
Գեղարքունիք	2.2	2.3	2.6	2.7	2.8	3.4	3.5	2.7
Լոռի	2.2	2.3	2.3	(2.7)	2.6	2.9	(2.9)	2.5
Կոտայք	2.4	2.5	2.7	(3.0)	3.2	3.3	3.4	2.9
Շիրակ	2.7	2.6	2.5	2.8	3.0	3.2	3.1	2.8
Սյունիք	2.3	2.2	2.2	(2.6)	3.0	3.1	3.3	2.7
Վայոց ձոր	2.2	2.3	2.7	(2.9)	3.0	3.2	3.3	2.8
Տավուշ	2.2	2.4	2.5	3.0	2.8	3.0	3.4	2.7
Կրթությունը								
Տարրական/միջին	2.3	2.3	(2.2)	(2.6)	(2.7)	3.4	3.4	2.6
Միջնակարգ	2.3	2.4	2.6	2.8	3.0	3.1	3.3	2.7
Միջնակարգ-մասնագիտական	2.3	2.3	2.4	2.8	2.8	3.0	3.1	2.7
Բարձրագույն	2.3	2.4	2.4	2.5	2.6	2.9	2.9	2.6
Ընդամենը	2.3	2.3	2.5	2.7	2.8	3.0	3.1	2.7

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Այնուամենայնիվ, կանանց կրթական մակարդակի և երեխաների միջին իդեալական թվի միջև գոյություն ունի հետաքրքիր կապ: **Ինչպես և ակնկալվում էր, 40 և բարձր տարեկան կանանց միջև հնչքան բարձր է կրթական մակարդակը, այնքան փոքր է երեխաների միջին իդեալական թիվը: Սակայն, երիտասարդ կանանց միջև այս կապը գոյություն չունի, օրինակ, 15-19 տարեկան կանանց մոտ երեխաների իդեալական թիվը 2.3-ն է, անկախ նրանց կրթական մակարդակից:**

8.5 Ցանկալի և անցանկալի պտղաբերություն

Աղյուսակ 8.7-ը ներկայացնում է *ցանկալի պտղաբերության գործակիցները*: Ցանկալի պտղաբերության գործակիցները ներկայացնում են պտղաբերության տեսական մակարդակը, որը կլիներ, եթե բոլոր անցանկալի հղիությունները կանխված լինեին: Անցանկալի են համարվում այն ծունդները, որոնք գերազանցում են հարցվողի համար երեխաների իդեալական թիվը: Պտղաբերության ընդհանուր և ցանկալի պտղաբերության ցուցանիշների միջև համեմատությունը ցույց է տալիս այն տևողությունը, երբ տվյալ ժամանակահատվածում զույգերը բարեհաջող վերահսկում են իրենց պտղաբերությունը: Հայաստանում, գոյություն ունի չնչին տարբերություն դիտարկված պտղաբերության ընդհանուր ցուցանիշների (1.7 երեխա մեկ կնոջ հաշվով) և ցանկալի պտղաբերության ցուցանիշների միջև (1.5 երեխա մեկ կնոջ հաշվով): Համանման կերպով, բնակչության համար գոյություն ունի չնչին տարբերություն փաստացի և ցանկալի պտղաբերության միջև:

Աղյուսակ 8.7 Ցանկալի պտղաբերության գործակիցներ

Ցանկալի պտղաբերության ընդհանուր գործակիցները և պտղաբերության ընդհանուր գործակիցները հարցմանը նախորդող երեք տարիների համար, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%,%)

Հիմնական բնութագրիչներ	Ցանկալի պտղաբերության ընդհանուր գործակից	Պտղաբերության ընդհանուր գործակից
Բնակավայրը		
Քաղաքային	1.3	1.5
Գյուղական	1.7	2.1
Մարզը		
Երևան	1.3	1.4
Արագածոտն	1.6	2.0
Արարատ	1.6	1.9
Արմավիր	1.4	1.7
Գեղարքունիք	2.0	2.5
Լոռի	1.9	2.1
Կոտայք	1.1	1.3
Շիրակ	1.3	1.4
Սյունիք	1.3	1.6
Վայոց ձոր	2.0	2.4
Տավուշ	1.7	2.2
Կրթությունը		
Տարրական/միջին	1.5	2.2
Միջնակարգ	1.5	1.9
Միջնակարգ-մասնագիտական	1.4	1.6
Բարձրագույն	1.3	1.4
Ընդամենը	1.5	1.7

Նշում. Գործակիցները հաշվարկված են հիմնվելով 15-49 տարեկան կանանց ծնունդների վրա հարցմանը նախորդող 1-36 ամիսների ընթացքում: Պտղաբերության ընդհանուր գործակիցները համընկնում են աղյուսակ 4.2.-ում ներկայացվածների հետ:

4. Տեր-Ոսկանյան, 4. Սարիբեկյան, Ռ. Ասատյան և Զ. Սալլիվան

9.1. Ներածություն

Այս գլուխը ներկայացնում է տեղեկատվություն մինչև 5 տարեկան երեխաների մահացության վերաբերյալ: Տվյալ տեղեկատվության մեջ ներկայացված ցուցանիշները վերաբերվում են մահացության մակարդակներին և միտումներին, ինչպես նաև մահացության տարբերակմանը բնակչության ենթախմբերի միջև: Մահացության տարբերակումը օգտակար է, որովհետև այն բացահայտում է բնակչության ենթախմբերը՝ ըստ մահացության բարձր ռիսկի:

Այս գլխում ներկայացված մահացության ցուցանիշները հաշվարկված են ըստ 1000 կենդանի ծնված երեխայի, բացի 1-ից մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշի, որը հաշվարկված է մինչև 1 տարեկանը կենդանի մնացած 1000 երեխայի հաշվով: Ցուցանիշները ներկայացված են ըստ հետևյալ տարիքային խմբերի.

- **Նեոնատալ մահացություն (ՆՄ).** մահանալու հավանականությունը կյանքի առաջին ամսվա ընթացքում,
- **հետնեոնատալ մահացություն (ՀՆՄ).** մանկական և նեոնատալ մահացությունների միջև տարբերությունը,
- **մանկական մահացություն (1Գ₀).** մահանալու հավանականությունը ծնվելուց մինչև 1 տարեկանն ընկած ժամանակահատվածում,
- **1-ից մինչև 5 տարեկան երեխաների մահացություն (4Գ₁).** մահանալու հավանականությունը 1-ից մինչև 5 տարեկանն ընկած ժամանակահատվածում,
- **մինչև 5 տարեկան երեխաների մահացություն (5Գ₀).** մահանալու հավանականությունը ծնվելուց մինչև 5 տարեկանն ընկած ժամանակահատվածում:

Հայաստանի ժողովրդագրական և առողջապահական հետազոտության (ՀԺԱՀ) հարցաթերթիկը ներառում էր տեղեկատվություն վերարտադրողական կյանքի վերաբերյալ, որում կանանց տրվում էին հարցեր յուրաքանչյուր հղիության մասին: Հարցվողներին խնդրվում էր ներկայացնել յուրաքանչյուր հղիության ելքը՝ ըստ միջազգայնորեն ընդունված ստանդարտ բնորոշումների: Կենդանի ծնունդը բնորոշվում էր որպես ցանկացած ծնունդ՝ անկախ հղիության տևողությունից, երբ մորից «անջատելուց» հետո երեխան ցուցաբերում է կյանքի որևէ նշան (օրինակ՝ շնչառություն, սրտի աշխատանք կամ կանայական մկանների կծկումներ): Մանկական մահը բնորոշվում էր որպես մինչև 1 տարեկան երեխայի մահ (ԱՀԿ, 1993):

Հղիության պատմության մեջ նշված յուրաքանչյուր կենդանի ծնունդի համար հավաքագրվում էր տեղեկատվություն ծննդյան ամսաթվի (ամիսը և տարին), սեռի, կենդանի մնալու և ներկայիս տարիքի (կենդանի մնացած երեխայի համար) կամ մահվան տարիքի (մահացած երեխայի համար) վերաբերյալ: Այսպիսով, հարցվողներին խնդրվում էր ներկայացնել այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել նրանց հետ վերարտադրողական կյանքի ընթացքում: Տարիքով հարցվողների համար (40-ն անց կանայք) սա նշանակում էր այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել 25-30 տարի առաջ: Մահացության ցուցանիշը հետազոտությանը նախորդող որոշակի ժամանակահատվածի համար հաշվարկվում էր հստակ գնահատման միջոցներով:

Հետազոտության ընթացքում հավաքագրված տվյալները և դրանց վրա հիմնված մահացության գնահատականները կիրառելի են հետազոտության ժամանակ Հայաստանում մշտապես բնակվողների համար: Վերջին տարիներին առկա էր զգալի միգրացիոն տեղաշարժ դեպի Հայաստան և Հայաստանից դուրս, որը հիմնականում պայմանավորված էր Հայաստանի և Ադրբեջանի միջև 1990-ականների սկզբներին ծավալված հակամարտության հետ:

Հետազոտության մեջ արտացոլված չեն արտագաղթածների մահացության տվյալները, այնինչ ներգաղթածներինը ընդգրկված են: Չնայած միգրացիայի նետոտ (զուտ) ազդեցությունը մահացության ազգային ցուցանիշների վրա հավանաբար չնչին է, այս գործոնը պետք է դիտարկվի, որպեսզի մահացության ցուցանիշները լուսաբանվեն ինչպես հարկն է:

9.2. Տվյալների որակի գնահատում

ՀԺԱՀ-ից ստացված մահացության ցուցանիշների ճշգրտությունը կախված է 2 գործոնից. ոչ-ընտրանքային սխալներից (այսինքն, լիարժեքությունը և ճշգրտությունը, որով ծնունդները և մահերը նշվել են) և ցուցանիշների ընտրանքային փոփոխականությունից: Ոչ-ընտրանքային սխալները քննարկվում են այս բաժնում, իսկ ցուցանիշների ընտրանքային փոփոխականությունը՝ այս գլխի հաջորդ բաժնում:

Հետազոտության ընթացքում հանդիպող ոչ-ընտրանքային սխալների ամենահավանական աղբյուրը մահացած երեխայի մասին տվյալների, տեղեկությունների թերգրանցումն է: Հաստատված է, որ երեխայի մահվան դեպքերի մասին տվյալների թերգրանցումը հավանական է. երբ դեպքը պատահել է հետազոտությունից շատ առաջ, երբ երեխան մահացել է վաղ կրծքի հասակում (այսինքն, նեոնատալ շրջանում): Հարցվողը տարիներ առաջ պատահած դեպքը չի նշում 2 պատճառով՝ մոռացել է կամ խուսափում է նորից հիշել երեխայի կորստի հետ կապված ողբերգությունը: Այս զեկույցում ուշադրությունը կենտրոնացված է հետազոտությանը նախորդող 15 տարիների մահացության ցուցանիշների վրա: Ավելի վաղ շրջանի ցուցանիշները չեն ներկայացվում: Այդ ժամանակահատվածը բնութագրող մահացության ցուցանիշների բաց թողումը կապված է հարցվողների՝ տվյալ դեպքը մոռանալու բարձր հավանականության հետ: Իհարկե, չի ապահովվում նաև հետազոտությանը նախորդող 15 տարիների ընթացքում տեղի ունեցած դեպքերի ամբողջությամբ նշելը:

Վաղ կրծքի հասակում մահերի թերգրանցման դեպքում հետազոտությանը նախորդող 15 տարիներին վերաբերող տվյալները կարող են ստուգվել, որպեսզի որոշվի վերջնական արդյունքների վրա դրանց ազդեցության կարևորության աստիճանը: Դեպքերի թերգրանցումը կրեթի նեոնատալ և մանկական մահացությունների հարաբերության ցուցանիշի համար անընդունելի ցածր արժեքի (ՄԱԿ, 1982): Թեսթը ներառում է հետազոտությունից ստացված նեոնատալ/մանկական մահացությունների ցուցանիշների համեմատությունը բնակչության այն ցուցանիշի հետ, որը ստացվել է մանկական մահացության վերաբերյալ եղած համեմատաբար լիարժեք տվյալներից: Այն երկրներում, որտեղ մահացության ցուցանիշները հաշվարկվել են մնանատիպ եղանակով, այդ ցուցանիշների արժեքները բարձր են եղել 0,5-ից¹:

ՀԺԱՀ-ից ստացված նեոնատալ և մանկական մահացությունների ցուցանիշները ներկայացված են 9.1 աղյուսակում: Նեոնատալ և մանկական մահացությունների հարաբերությունը 1986-90, 1991-95 և 1996-2000 թվականներն ընկած ժամանակաշրջաններում կազմել է համապատասխանաբար 0,54, 0,63 և 0,54: Այս բոլոր արժեքները գերազանցում են 0,5-ը: Այսպիսով, տվյալների այս թեսթը չի հայտնաբերել նեոնատալ մահերի էական կարևորություն ունեցող չնշված դեպքեր, որոնք տեղի են ունեցել 1986-90, 1991-95 կամ 1996-2000 ժամանակաշրջաններում:

9.3 Վաղ տարիքի երեխաների մահացության մակարդակները և միտումները

Աղյուսակ 9.1-ը ներկայացնում է ՀԺԱՀ-ի տվյալների վրա հիմնված վաղ տարիքի երեխաների մահացության ցուցանիշները: Հետազոտությանը անմիջապես նախորդող 5 տարիների համար (1996-2000թթ.) մանկական մահացության ցուցանիշը կազմել է 36՝ 1000 կենդանածին երեխայի հաշվով²: Նեոնատալ և հետնեոնատալ մահացությունների ցուցանիշները (հաշվված ըստ 1000 ծնունդի) կազմել են համապատասխանաբար 20 և 17: 1-ից մինչև 5 տարեկան երեխաների

¹ Օրինակ, 1961թ-ի ՄԱԿ-ի ժողովրդագրական տարեգրքում (13-րդ աղյուսակ) տես Ավստրիայի (1952), Կանադայի (1952), Բելգիայի (1956) և 1974թ-ի տարեգրքում (22-րդ աղյուսակ)՝ Կուբայի (1968), Պուերտո-Ռիկոյի (1965) նեոնատալ և մանկական մահացությունների ցուցանիշները:

² Հետազոտության արդյունքում ստացված մանկական մահացության ցուցանիշի ստանդարտ սխալը կազմում է 0,54: Ստանդարտ սխալները և մահացության ցուցանիշների համար 95% վստահության ինտերվալները ներկայացված են "B" հավելվածում:

մահացության ցուցանիշը շատ ավելի ցածր էր՝ 3 (տվյալ տարիքի 1000 երեխայի հաշվով):

Ընդհանուր առմամբ, մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը տվյալ ժամանակահատվածում կազմել է 39՝ 1000 երեխայի հաշվով:

Հետազոտությանը նախորդող 15 տարիների ընթացքում մահացության միտումները նույնպես կարող են դուրս բերվել 9.1 աղյուսակից: Առաջին երկու ժամանակահատվածների համար (1986-90 և 1991-95) մահացության ցուցանիշները մատնանշում են նեոնատալ մահացության աճ 25-ից մինչև 32 պրոմիլ (‰): Ելնելով այս տվյալներից, չենք կարող հստակորեն ասել, արդյոք նեոնատալ մահացությունը 1986-90 և 1991-95 ժամանակահատվածների ընթացքում իսկապես աճել է, թե նկատվող միտումը հարցվողների կողմից 1986-90 թվականներին տեղի ունեցած մահերը թերգրանցման արդյունք է: Այնուամենայնիվ, 1990-ականներին տեղի է ունեցել սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացում, ինչը կարող էր ազդեցություն ունենալ մահացության մակարդակի վրա: 1990-ականների սկզբին տեղի ունեցավ Խորհրդային Միության փլուզումը և սկսվեց Ադրբեջանի հետ հակամարտությունը: Առաջինի հետևանքով վերացան Հայաստանի արդյունաբերական արտադրանքի ավանդական շուկաները, սկսվեց գործազրկությունը և տնտեսությունը ծանր ճգնաժամ ապրեց: Ադրբեջանի հետ հակամարտության պատճառով վերացավ երկրի՝ նավթի ստացման առաջնային աղբյուրը և սկսվեցին էլեկտրականության հովհարային անջատումները:

Աղյուսակ 9.1 Վաղ տարիքի երեխաների մահացություն

Նեոնատալ, հետնեոնատալ, մանկական, 1-ից մինչև 5 տարեկան երեխաների և մինչև հինգ տարեկան երեխաների մահացության ցուցանիշները հետազոտությանը նախորդող հինգամյա ժամանակաշրջանների համար, Հայաստան 2000: (%,%)

Հետազոտությանը նախորդող տարիները	Օրացույցային մոտավոր շրջանը 1	Նեոնատալ մահացություն (ՆՍ)	Հետնեոնատալ մահացություն (ՀՆՍ)	Մանկական մահացություն (1q0)	1- 5 տարեկան երեխաների մահացություն (4q1)	Մինչև 5 տար. երեխաների մահացություն (5q0)
0-4	1996-2000	19.5	16.7	36.1	3.0	39.0
5-9	1991-1995	31.6	18.9	50.5	4.8	55.0
10-14	1986-1990	24.6	20.9	45.6	5.8	51.1

Նշում. հետնեոնատալ մահացությունը հաշվարկված է որպես մանկական և նեոնատալ մահացության ցուցանիշների տարբերություն:

1 Քանի որ հետազոտությունը անց է կացվել 2000թ-ի սեպտեմբերից մինչև նոյեմբեր, նախորդ 5 տարիների համար (1996-2000) ցուցանիշները, փաստորեն, վերաբերում են 1995թ-ի նոյեմբերից մինչև 2000թ-ի նոյեմբերն ընկած ժամանակաշրջանին: Նույնը վերաբերվում է նաև այլ ցուցանիշներին:

1986-90 և 1996-2000 ժամանակահատվածների ցուցանիշները համեմատելիս նկատելի է, որ տեղի է ունեցել մահացության իջեցում: Մանկական մահացությունը նվազել է 46-ից մինչև 36% (21,7%-ով), նեոնատալ և հետնեոնատալ մահացության ցուցանիշների նվազեցման հետ մեկտեղ (այս ցուցանիշները նվազել են համարյա նույն չափով՝ 20%-ով): 1-ից մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշը 6-ից նվազել է մինչև մոտավորապես 3% (47%-ով): Եվ, ընդհանուր առմամբ, մինչև 5 տարեկանների մահացությունը 51%-ից նվազել է մինչև 39% (24%-ով): Նշված ցուցանիշները հանդիսանում են վերջին 15 տարիների ընթացքում մահացության զգալի իջեցման անժխտելի փաստեր:

Անշուշտ, վերջին 15 տարիներին շատ գործոններ նպաստել են մահացության իջեցմանը: Որոշ չափով մահացության իջեցումը հավանաբար արագացվել է առողջապահության նախարարության կողմից նախաձեռնված ծրագրերի շնորհիվ. 1994թ-ից ներդրվեցին սուր շնչառական և փորլուծային հիվանդությունների դեմ պայքարի, ինչպես նաև կրծքով կերակրումը խրախուսող ծրագրերը: Ձանքերը առավել հակված են ազդեցություն ունենալու ուշ հետնեոնատալ (այսինքն՝ 6-11 ամսեկան) և 1-ից մինչև 5 տարեկան երեխաների մահացության, քան նեոնատալ և վաղ հետնեոնատալ (այսինքն՝ 1-5 ամսեկան) մահացության ցուցանիշների վրա: Մահվան տարիքի վերաբերյալ հետազոտության տվյալները մինչև 2 տարեկան երեխաների համար նշվել են ամիսներով: Այսպիսով, չնայած 9.1 աղյուսակում տվյալները ներկայացված չեն, հետնեոնատալ մահացության վաղ և ուշ բաղադրիչների մահացության ցուցանիշները կարող են հաշվարկվել, ինչը թույլ կտա ավելի մանրամասն ուսումնասիրել մահացության իջեցման կառուցվածքը:

Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ 1986-90 և 1996-2000 ժամանակահատվածների ընթացքում վաղ հետմեծնատալ մահացության ցուցանիշի նվազեցում, փաստորեն, չի եղել՝ կայուն 15%, բայց մոտ 50%-ով նվազել է ուշ հետմեծնատալ մահացության ցուցանիշը՝ 6-ից մինչև 3%: Որպես լրացում, 9.1 աղյուսակը ցույց է տալիս, որ ամբողջ ժամանակահատվածի համար 1-ից մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը բավականին իջել է՝ 47%-ով: Այս ցուցանիշները հանդիսանում են մեծ ընտրանքի սխալների արգասիք, այնուամենայնիվ, դրանք ցույց են տալիս, որ մահացության նվազեցման տարիքային կառուցվածքը համապատասխանում է առողջապահության նախարարության կողմից ներդրված ծրագրերի ակնկալվող ազդեցության հետ:

9.4. ՀՀ ԱՎԾ-ից և ՀԺԱՀ-ից ստացված մանկական մահացության ցուցանիշները

Հայաստանն ունի վիճակագրական և առողջապահական տվյալների հավաքագրման հարուստ պատմություն՝ հիմնականում գրանցման ազգային համակարգի օգտագործման միջոցով: Ծնունդների և մանկական մահերի դեպքում ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) տվյալները հավաքագրում է նշված համակարգի միջոցով, որում առողջապահության տեղային աշխատողների կողմից տրված հաշվետվությունները (որոնք առողջապահական հաստատություններում հանդիպող հիմնական փաստաթղթերն են) կազմում են հիերարխիա՝ մարզի, ԱՎԾ-ի և վերջապես առողջապահության նախարարության մակարդակով: Մանկական մահացության պաշտոնական վիճակագրությունը հրապարակվում է ԱՎԾ-ի կողմից տարեկան վիճակագրական զեկույցներում:

Մինչև 1995թ. կենդանածնությունը և մանկական մահերը Հայաստանում որոշվում էին ըստ նախկինում՝ Խորհրդային Միության տարիներին հաստատված արձանագրությունների: Հղիության ելքի դասակարգման չափանիշը հանդիսանում է նշված արձանագրությունների արդյունքը, որը տարբերվում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող տարբերակից: Ամենակարևոր տարբերությունը վերաբերվում է այն հղիություններին, որոնք ավարտվել են մինչև 28 շաբաթ գեստացիոն հասակում: Խորհրդային արձանագրություններով այսպիսի հղիությունները դասակարգվում էին որպես վիժում (անգամ այն դեպքում, երբ ծննդաբերության պահին պտղի մոտ կային կենդանության նշաններ), եթե երեխան չէր ապրում 7 օր³: Մյուս կողմից, ԱՀԿ-ի կողմից կյանքի որևէ նշան (այսինքն՝ շնչառություն, սրտի աշխատանք կամ կամայական մկանների կծկումներ) ցույց տվող պտուղը բնորոշվում է որպես կենդանածին՝ անկախ ծննդաբերելու ժամանակ հղիության գեստացիոն հասակից (ԱՀԿ, 1993): Կա տարբերություն նաև 28 կամ ավելի շաբաթ գեստացիոն հասակում ավարտված հղիությունների միջև: Խորհրդային համակարգը այսպիսի դեպքերում պտուղը դասակարգում էր որպես կենդանածին, եթե նա ծննդաբերության ժամանակ կատարում էր առնվազն մեկ շնչական ակտ և որպես մեռելածին, եթե պտուղը չի կատարում շնչական գոնե մեկ ակտ: ԱՀԿ-ն մանատիպ դեպքերում պտուղը բնորոշում է որպես կենդանածին, եթե պտղի մոտ առկա է լինում կյանքի որևէ նշան, և մեռելածին, եթե այդպիսի նշաններ չկան:

1995թ. Հայաստանը պաշտոնապես ընդունեց կենդանածնության և մանկական մահի ԱՀԿ-ի բնորոշումները: Այնուամենայնիվ, ենթադրվում է, որ շատ ծննդատներ չեն անցել նոր բնորոշիչների և շարունակում են օգտագործել Խորհրդային ժամանակաշրջանի բնորոշիչները (ՀՀ կառավարություն, Յունիսեֆ և «Փրկեք երեխաներին», 1999):

Աղյուսակ 9.2-ը ցույց է տալիս մանկական մահացության ցուցանիշները՝ ներկայացված ԱՎԾ-ի կողմից, ինչպես նաև այն ցուցանիշները, որոնք հաշվարկվել են վերջին 15 տարիների համար հետազոտության ընթացքում հավաքագրված տվյալներից: Ներկայացված բոլոր 3 ժամանակաշրջանների համար մանկական մահացության՝ հետազոտությունից ստացված ցուցանիշները 2-ից ավելի անգամ գերազանցում են ԱՎԾ-ի կողմից ներկայացված ցուցանիշները (օրինակ՝ 1996-2000 ժամանակահատվածի համար 36% ցուցանիշը հակադրվում է 15%-ին):

³ Այն դեպքում, երբ գեստացիոն տարիքը անհայտ է, պտուղը, որն ունի 1000 գրամից ցածր քաշ կամ 35 սմ-ից պակաս հասակ, համարվում է վաղաժամ ծնված և դասակարգվում որպես վիժում:

Ցուցանիշների ստացման այս երկու աղբյուրների միջև տարբերության ամբողջական վերլուծությունը չի մտնում այս զեկույցի շրջանակների մեջ: Այնուամենայնիվ, հասկանալի է, որ նեոնատալ և հետնեոնատալ ժամանակաշրջաններից սկսած տարբերությունները առաջացել են համարյա հավասար չափով: Այն դեպքում, երբ հղիության ելքի բնորոշումների տարբերությունները կարող են նպաստել նեոնատալ ցուցանիշներում տարբերությունների առաջացմանը, դրանք չեն ազդում հետնեոնատալ շրջանի ցուցանիշների վրա: Ավելի հավանական է, որ հետազոտության ընթացքում հարցվողները հետնեոնատալ մահերի վերաբերյալ չեն ներկայացրել կեղծ տվյալներ, այլ գրանցման համակարգում տեղի է ունեցել դեպքերի ոչ ամբողջական նշում (հավաքագրում):

Գծապատկեր 9.1-ը ցույց է տալիս մանկական մահացության ժամանակի ընթացքում նկատվող միտումները՝ հիմնվելով ԱՎԾ-ի և հետազոտության տվյալների վրա: Հարկ է նշել երկու կետ. առաջին, որ ցուցանիշները վերջին 15 տարիներին ունեն նվազման միտում: Սա հստակ ապացույց է այն բանի, որ նշված ժամանակաշրջանում երեխաների՝ մինչև որոշակի ժամանակը կենդանի մնալու հավանականությունը աճել է: Եվ երկրորդ, ԱՎԾ-ի ցուցանիշները ամեն մի ժամանակաշրջանի համար զգալի ցածր են, քան հետազոտությունից ստացված ցուցանիշները:


Աղյուսակ 9.2 Մանկական մահացության ցուցանիշների համեմատություն

Նեոնատալ, հետնեոնատալ և մանկական մահացության ցուցանիշները հետազոտությանը նախորդող հինգամյա ժամանակաշրջանների համար, Հայաստան 2000:

Օրացույցային մոտավոր շրջանը ¹	Նեոնատալ մահացություն		Հետնեոնատալ մահացություն		Մանկական մահացություն	
	ԱՎԾ	ՀԺԱՀ	ԱՎԾ	ՀԺԱՀ	ԱՎԾ	ՀԺԱՀ
1996-2000	9.1	19.5	6.2	16.7	15.3	36.1
1991-1995	8.0	31.6	8.5	18.9	16.3	50.5
1986-1990	9.1	24.6	13.0	20.9	22.1	45.6

Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն:
 Նշում. հետնեոնատալ մահացությունը հաշվարկված է որպես մանկական և նեոնատալ մահացության ցուցանիշների տարբերություն: Նեոնատալ մահացության ԱՎԾ-ի ցուցանիշը հիմնված է մինչև 27 օրական երեխաների մահվան դեպքերի, իսկ ՀԺԱՀ-ի ցուցանիշը՝ մինչև 1 ամսական:
¹ Քանի որ հետազոտությունն անց է կացվել 2000թ-ի սեպտեմբերից մինչև նոյեմբեր, նախորդ 5 տարիների համար (1996-2000) ցուցանիշները, փաստորեն, վերաբերվում են 1995թ-ի նոյեմբերից մինչև 2000թ-ի նոյեմբերն ընկած ժամանակաշրջանին: Նույնը վերաբերվում է նաև այլ ցուցանիշներին:

Գծապատկեր 9.1 Մանկամահացության մշտուններն ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության և ՀԺԱՀ-ն գործակիցների



9.5 Վաղ տարիքի երեխաների մահացության սոցիալ-տնտեսական տարբերակումները

Աղյուսակ 9.3-ը ցույց է տալիս հետազոտությունից ստացված վաղ տարիքի երեխաների մահացության ցուցանիշները՝ ըստ սոցիալ-տնտեսական տարբերակման (քաղաքային/գյուղական և կրթությունը): Մահացության գնահատված ցուցանիշները վերաբերվում են հետազոտությանը նախորդող 10 տարիներին: 10-ամյա ժամանակաշրջանը օգտագործվում է բնակչության ենթախմբերի համար ցուցանիշները հաշվարկելիս ընտրանքային փոփոխականությունը կրճատելու համար:

Շատ երկրներում մանկական և 1-ից մինչև 5 տարեկան երեխաների մահացության ցուցանիշները գյուղական վայրերում ավելի բարձր են, քան քաղաքայինում: Գյուղական վայրերի համար մանկական մահացության ցուցանիշները (53%) գերազանցում են քաղաքային ցուցանիշներին (36%) մոտ 1,5 անգամ: Այս տարբերության մեծ մասը առաջանում է հետմեծնատալ մահացության ցուցանիշների հաշվին: 1-ից մինչև 5 տարեկան երեխաների մահացության դեպքում գյուղական ցուցանիշները (6,8%) գերազանցում են քաղաքային ցուցանիշներին (1,4%) մոտ 5 անգամ: Ըստ մինչև 5 տարեկան երեխաների մահացության գյուղական վայրերում ապրող երեխաների համար ցուցանիշը (59%) մոտ 1,6 անգամ շատ է, քան քաղաքային վայրերում ապրող երեխաների համար (37%): Կա մահացության ռիսկի փոքր ինչ տարբերություն Երևանում և այլ քաղաքային վայրերում ապրող երեխաների միջև:

Ինչպես ակնկալվում էր, մայրերի կրթական մակարդակի բարձրացմանը զուգընթաց մահացության ցուցանիշները նվազում են: Ըստ կրթական կատեգորիաների՝ տարբերակումները ավելի շատ են հետմեծնատալ և 1-ից մինչև 5 տարեկան երեխաների մահացությունների համար, քան մեծնատալ մահացության համար: Ընդհանուր առմամբ, մինչև 5 տարեկանների մահացությունը այն կանանց երեխաների համար, ովքեր ունեն միջնակարգ կրթություն (55%), մոտ 2,5 անգամ գերազանցում է բարձրագույն կրթություն ունեցող կանանց երեխաների ցուցանիշին (22%):

Աղյուսակ 9.3 Վաղ տարիքի երեխաների մահացությունն ըստ հիմնական բնութագրիչների

Նեոնատալ, հետնեոնատալ, մանկական, 1-ից մինչև 5 տարեկան և մինչև հինգ տարեկան երեխաների մահացության ցուցանիշները հետազոտությանը նախորդող 10 տարիների համար՝ ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	(%,%)				
	Նեոնատալ մահացություն (ՆՄ)	Հետնեոնատալ մահացություն (ՀՆՄ)	Մանկական մահացություն (1q0)	1-5 տարեկան երեխաների մահացություն (4q1)	Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն (5q0)
Բնակավայր					
Քաղաքային	23.1	12.8	35.9	1.4	37.3
Երևան	20.9	13.3	34.2	2.4	36.5
Այլ քաղաքներ	25.7	12.2	37.9	0.3	38.1
Գյուղական	29.5	23.3	52.7	6.8	59.2
Կրթությունը					
Տարրական/միջին (47.5)		(35.2)	(82.6)	(7.1)	(89.1)
Միջնակարգ	28.4	21.9	50.2	4.7	54.7
Միջնակարգ-մասնագիտական	23.9	16.5	40.4	4.2	44.4
Բարձրագույն	17.1	4.2	21.3	0.4	21.7
Ընդամենը	26.2	17.9	44.1	4.0	48.0

Նշում. 250-499 անհատների պատասխանների վրա հիմնված ցուցանիշները նշված են փակագծերում:
Հետնեոնատալ մահացությունը հաշվարկված է որպես մանկական և նեոնատալ մահացության ցուցանիշների տարբերություն:

9.6 Վաղ տարիքի երեխաների մահացության ժողովրդագրական տարբերակումները

Աղյուսակ 9.4-ը ցույց է տալիս կապը վաղ տարիքի երեխաների մահացության և ժողովրդագրական տարբերակումների միջև: Ինչպես սոցիալ-տնտեսական տարբերակման, այնպես էլ այս դեպքում ցուցանիշները վերաբերվում են հետազոտությանը նախորդող 10 տարիներին:

Ինչպես ակնկալվում էր, տղաների մահացության ցուցանիշները ավելի բարձր են, քան աղջիկներինը: Կան մահացության ռիսկի զգալի տարբերություններ՝ կապված մոր տարիքի և ծննդաբերության թվի հետ: Ամենամեծ տարբերությունը առաջ է գալիս նեոնատալ շրջանում, որտեղ 30-39 տարեկան կանանցից ծնված և 4-րդ և ավել հաջորդական թվով ծնվածների մահացությունը (համապատասխանաբար 44% և 54%) էապես գերազանցում է ծնված բոլոր երեխաների համար հաշվարկված մահացության ցուցանիշը (26%):

Ըստ տվյալ և նախորդ ծնունդի միջև ընկած ժամանակահատվածի՝ մահացության ցուցանիշը անկասկած ավելի փոքր է 3 տարի ընդմիջման դեպքում, քան 3-ից ավելի կամ պակաս տարի ընդմիջումների համար: Ըստ մինչև 5 տարեկան երեխաների մահացության՝ 3 տարի ընդմիջումով ծնունդները ենթարկված են 2 անգամ ավելի քիչ մահացության ռիսկի (մահացության ցուցանիշը 32%), քան 3 տարուց պակաս ընդմիջումով ծնունդները (60 կամ 73%):

Աղյուսակ 9.4 Վաղ տարիքի երեխաների մահացությունն ըստ ժողովրդագրական բնութագրիչների

Նեոնատալ, հետնեոնատալ, մանկական, 1-ից մինչև 5 տարեկան երեխաների և մինչև հինգ տարեկան երեխաների մահացության ցուցանիշները հետազոտությանը նախորդող 10 տարիների համար՝ ըստ ընտրված ժողովրդագրական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

	(%,%)				
ժողովրդագրական բնութագրիչներ	Նեոնատալ մահացություն (ՆՆ)	Հետնեոնատալ մահացություն (ՀՆՆ)	Մանկական մահացություն (1q0)	1-5 տարեկան երեխաների մահացություն (4q1)	Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն (5q0)
Երեխայի սեռը					
Արական 29.4	16.7	46.1	4.9	50.7	
Իգական 22.7	19.3	41.9	3.1	44.9	
Մոր տարիքը ծննդաբերելիս					
<20	30.0	19.4	49.5	2.1	51.5
20-29	21.0	15.9	37.0	4.4	41.2
30-39	44.2	24.7	69.0	4.5	73.2
Ծննդի հաջորդականությունը					
1	22.1	10.3	32.3	1.7	34.0
2-3	24.0	22.4	46.4	5.4	51.5
4+	(53.7)	(23.6)	(77.3)	(5.0)	(81.9)
Նախորդ ծնունդի միջև ընկած ժամանակահատվածը					
<2	28.6	27.1	55.6	5.0	60.4
2 տարի	36.6	30.8	67.4	5.8	72.9
3 տարի	(16.1)	(7.4)	(23.5)	(8.7)	(31.9)
4 տարի կամ ավել	26.8	17.6	44.5	3.8	48.1
Պտղի չափսը					
Փոքր կամ շատ փոքր	72.7	20.8	93.4	4.2	4.2
Միջին կամ խոշոր	7.5	18.1	25.6	4.2	4.2
Ընդամենը	26.2	17.9	44.1	4.0	48.0

Նշում. 250-499 անհատների պատասխանների վրա հիմնված ցուցանիշները նշված են փակագծերում:
 Հետնեոնատալ մահացությունը հաշվարկված է որպես մանկական և նեոնատալ մահացության ցուցանիշների տարբերություն:
 4.2. կիրառելի չէ:

9.7 Մահացության տարբերակումներն ըստ կանանց կարգավիճակի

ՀԺԱՀ-ում ընդգրկված էին մի շարք հարցեր՝ կանանց կարգավիճակի ցուցիչները բացահայտելու համար: Այս տվյալները թույլ են տալիս բացահայտել կանանց՝ իրենց սեփական շահերի պաշտպանության համար արդյունավետ գործելու հնարավորությունները, ինչպես նաև նրանց շահերի, ովքեր անմիջականորեն կախված են իրենցից: Ուստի, եթե կանայք՝ երեխայի մասին առաջնային հոգացողները, ունեն բարձր կարգավիճակ, ապա նրանց կրծքի հասակի երեխաների առողջությունը պետք է որ բարելավվի և կենդանի մնալու հավանականությունը՝ աճի:

Կանանց տրվում էին հարցեր տնային տնտեսության որոշումները կայացնելու մեջ նրանց մասնակցության վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքների մասին, երբ կինը պետք է ի վիճակի լինի մերժելու ամուսնուն սեռական հարաբերություն ունենալու հարցում, և կա արդյոք որևէ հանգամանք, երբ կնոջը ծեծելը արդարացվում է:

Ցուցիչները, որոնք բացահայտվել են, հետևյալն են՝

1. կնոջ մասնակցությունը տնային տնտեսության որոշումները կայացնելիս,
2. նրա իրավունքը՝ մերժելու սեռական հարաբերությունները,
3. կնոջը ծեծելն իր կողմից ընդունելը:

Ինչքան բարձր են առաջին երկու ցուցիչները, այնքան բարձր է կնոջ կարգավիճակը, և ավելի շատ է նրան հնարավորություն տրվում խնամելու իր երեխաներին: Ինչքան բարձր է երրորդ ցուցիչը, այնքան ցածր է կնոջ կարգավիճակը, և ավելի քիչ է հնարավորություն տրվում նրան խնամելու իր երեխաներին:

Աղյուսակ 9.5-ը ցույց է տալիս մահացության ցուցանիշները՝ ըստ կանանց կարգավիճակը բնորոշող ցուցիչների արժեքների: Բոլոր 3 ցուցիչների համար կա կապ կնոջ կարգավիճակի աճի և մահացության մակարդակի նվազման միջև:

Աղյուսակ 9.5 Վաղ տարիքի երեխաների մահացությունն ըստ կանանց կարգավիճակի ցուցիչների

Նեոնատալ, հետնեոնատալ, մանկական, 1-ից մինչև 5 տարեկան երեխաների և մինչև հինգ տարեկան երեխաների մահացության ցուցանիշները հետազոտությանը նախորդող 10 տարիների համար՝ ըստ կանանց կարգավիճակի ընտրված ցուցիչների, Հայաստան 2000թ.

Կանանց կարգավիճակի ցուցիչներ	Նեոնատալ մահացություն (ՆՄ)	Հետնեոնատալ մահացություն (ՀՆՄ)	Մանկական մահացություն (1q0)	1-5 տարեկան երեխաների մահացություն (4q1)	Մինչև 5 տար. երեխաների մահացություն (5q0)
(%,%)					
Որոշումների քանակը, որոնցում վերջնական խոսքը ասել է մայրը					
0	*	*	*	*	*
1-2	27.1	19.7	46.8	2.7	49.4
3-4	25.2	22.0	47.2	3.6	50.6
5+	23.3	13.2	36.5	5.3	41.6
Սեռական հարաբերությունները մերժելու պատճառների քանակը					
0	*	*	*	*	*
1-2	(51.4)	(30.1)	(81.5)	(5.4)	(86.5)
3-4	22.6	17.0	39.6	3.7	43.1
Կնոջը ծեծելն արդարացնող պատճառների քանակը					
0	22.2	14.4	36.6	3.2	39.7
1-2	32.8	20.0	52.8	2.8	55.5
3-4	34.9	23.9	58.8	9.3	67.5
5+	*	*	*	*	*
Ընդամենը	26.2	17.9	44.1	4.0	48.0

Նշում. 250-499 անհատների պատասխանների վրա հիմնված ցուցանիշները նշված են փակագծերում: 250-ից քիչ անհատների պատասխանների վրա հիմնված ցուցանիշները նշված չեն (*):
 Հետնեոնատալ մահացությունը հաշվարկված է որպես մանկական և նեոնատալ մահացության ցուցանիշների տարբերություն:

9.8 Պերինատալ մահացություն

Պերինատալ մահացության ցուցանիշը բնութագրում է մահացության մակարդակը՝ սկսած պրենատալ շրջանից (այսինքն՝ ուշ ֆետալ շրջանից, որն սկսվում է հղիության 28-րդ շաբաթից) մինչև ծննդաբերությունը և կյանքի վաղ նեոնատալ շրջանը (այսինքն՝ ծնվելուց հետո կյանքի 0-6 օրը): Եթե 28 շաբաթականից ավել գեստացիոն հասակ ունեցող հղիությունները ավարտվում են առանց պտղի կողմից կենդանության որևէ նշանի ցուցաբերման, դրանք որակվում են որպես մեռելածնություն: Մեռելածնության և վաղ նեոնատալ մահերի հիմնական պատճառները միանման են (օրինակ՝ բնածին արատները), և դրա համար այս դեպքերը համախմբվում են պերինատալ մահացության ցուցանիշի ներքո:

Պերինատալ մահացության ցուցանիշները ներկայացվում են հետազոտությանը նախորդող 5 տարիների համար: Հարկ է նշել, որ երբ հարցը վերաբերվում է պերինատալ մահացության ցուցանիշին, տվյալների որակը միշտ տարածայնությունների առիթ է հանդիսանում, քանի որ մեռելածնների և վաղ նեոնատալ շրջանում մահերի վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ թերգրանցվում է:

Այդուսակ 9.6-ը ցույց է տալիս պերինատալ մահացության ցուցանիշը ամբողջ Հայաստանի համար (որը հաշվարկված է յուրաքանչյուր 1000 հղիության հաշվով), ինչպես նաև ըստ հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, պերինատալ մահացության ցուցանիշը կազմում է 29%: Մեռելածնները և մինչև 7 օրեկան հասակում մահացածները ընդհանուր պերինատալ մահացության ցուցանիշի մեջ բաշխվում են հավասարապես: Այն ժամանակ, երբ դեռ հետազոտության արդյունքները չէին հաստատել պերինատալ մահացության ցուցանիշը կազմող այդ երկու բաղադրիչների միջև եղած հստակ կապը, մի շարք երկրներ, որտեղ պերինատալ մահացության ցուցանիշը կազմում էր 20-30%, զեկուցեցին, որ մեռելածնության և վաղ նեոնատալ մահացության ցուցանիշները ունեն համարյա նույն մեծությունը (Hoffman H. J. և այլ., 1984թ.):

Ինչպես մանկական, այնպես էլ պերինատալ մահացության դեպքում հետազոտությունից ստացված ցուցանիշները մոտ 2 անգամ գերազանցում են առողջապահության նախարարության պերինատալ մահացության պաշտոնական ցուցանիշին, որը 1993-97թթ. ընկած ժամանակահատվածում տատանվել է 15% շրջանում (ՀՀ կառավարություն, Յունիսեֆ և «Փրկեք երեխաներին», 1999թ.):

Այդուսակ 9.6 Պերինատալ մահացություն

Մեռելածնների ու վաղ նեոնատալ մահերի քանակը, պերինատալ մահացության ցուցանիշը հետազոտությանը նախորդող 5 տարիների համար՝ ըստ ընտրված հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Մեռելածնների քանակը1	Վաղ նեոնատալ մահերի քանակը2	Պերինատալ մահացության ցուցանիշը3	7 և ավել ամսական հղիությունների քանակը
Մոր տարիքը ծննդաբերելիս				
<20	3.5	5.7	(29.2)	315
20-29	12.8	13.8	23.9	1113
30-39	6.9	4.6	47.0	243
40-49	1.4	0.0	*	11
Նախորդ հղիության միջև ընկած ժամանակահատվածը				
1-ին հղիություն	6.6	5.9	21.3	588
<15 ամսից	8.1	6.4	(55.2)	262
15-38 ամիս	6.3	9.8	27.5	586
39+ ամիս	3.6	1.9	22.6	245
Բնակավայրը				
Քաղաքային	10.8	5.7	19.5	849
Գյուղական	13.7	18.3	38.5	833
Կրթությունը				
Տարրական/միջին	4.6	4.3	*	159
Միջնակարգ	12.5	13.3	37.9	681
Միջնակարգ/մասնագիտական	6.3	5.9	22.0	557
Բարձրագույն	1.1	0.6	(5.9)	284
Ընդամենը	24.6	24.0	28.9	1681

Նշում. 250-499 անհատների պատասխանների վրա հիմնված ցուցանիշները նշված են փակագծերում: 250-ից քիչ անհատների պատասխանների վրա հիմնված ցուցանիշները նշված չեն (*):
 1 Մեռելածին է համարվում պտղի մահը 7 կամ ավելի ամսական հղիության դեպքում:
 2 Վաղ նեոնատալ մահերը 0-6 օրեկան երեխաների մահերն են:
 3 Պերինատալ մահացության ցուցանիշը դա մեռելածնների և վաղ նեոնատալ մահերի գումարի հարաբերությունն է 7 և ավելի ամսական հղիությունների քանակի վրա:

9.9 Պտղաբերության բարձր ռիսկեր

Նախորդ ուսումնասիրությունը ներկայացրեց կանանց պտղաբերական նկարագրի և նրանց երեխաների մահացության ռիսկի միջև եղած հստակ կապը: Մահացության ռիսկը բարձր է հատկապես այն երեխաների համար, որոնց մայրերը շատ երիտասարդ կամ տարիքով են, որոնք ծնվել են նախորդ ծննդաբերությունից կարճ ընդմիջումից հետո, կամ հանդիսանում են թվով 4-րդ կամ ավելի ծնունդը: Այս վերլուծության մեջ մայրը դասակարգվում է շատ երիտասարդ, եթե նա 18 տարեկանից փոքր է, և տարիքով, եթե մեծ է 34 տարեկանից: Ծնունդների միջև ընկած ժամանակահատվածը համարվում է կարճ, երբ երեխան ծնվում է նախորդից ոչ ուշ, քան 24 ամիս հետո: Եվ երեխայի ծնվելու հաջորդականությունը (թվով որ երեխան է) համարվում է բարձր, եթե նրա մայրը մինչ այդ ունեցել է առնվազն 3 երեխա:

Աղյուսակ 9.7-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող 5 տարիներին ծնված երեխաների տեսակարար կշիռը՝ ըստ ռիսկի խմբերի: Քանի որ 18-34 տարեկան կանանց առաջին ծնունդը համարվում է անխուսափելի ռիսկ, դրանք վեր են լուծված և ներկայացված որպես ռիսկի առանձին խումբ:

Աղյուսակ 9.7-ի առաջին սյունը ցույց է տալիս, որ հետազոտությանը նախորդող 5 տարիներին ծնունդների 29%-ը պատկանում է միագործոն բարձր ռիսկի խմբին և 5%-ը՝ բազմագործոն բարձր ռիսկի խմբին:

Երկրորդ սյունը ցույց է տալիս ռիսկի գործակիցը տարբեր բարձր ռիսկի խմբերին պատկանող ծնունդների համար: Ընդհանուր առմամբ, որևէ բարձր ռիսկի պատկանող երեխաների համար ռիսկի գործակիցը (1,4) մոտ 40%-ով բարձր էր, քան այն երեխաներինը, որոնք չէին պատկանում ռիսկի որևէ խմբի:

Երրորդ սյան տվյալները նախատեսված են ապագայի համար և ուղղված են պարզելու, թե հարցման պահին ամուսնացած կանանցից որքանը կունենան բարձր ռիսկի հետ կապված ծնունդ: Արդյունքները ստացվել են՝ ռիսկի խմբերին նմանեցնելով այն ծնունդները, որոնք պետք է լինեն հարցման պահին ամուսնացած կանանցից, եթե նրանք հղիանային հետազոտության ժամանակ: Օրինակ, եթե կինը հետազոտության ժամանակ 37 տարեկան էր, նախկինում ունեցել էր 3 ծնունդ, որոնցից վերջինը 3 տարի առաջ, ապա նա կդասակարգվեր որպես բազմագործոնային բարձր ռիսկի խմբին պատկանող կին, քանի որ նա տարիքով էր (34 տարեկան և ավել) և պետք է ունենար բարձր հաջորդականությամբ (3 և ավել) ծնունդ:

Ընդհանուր առմամբ, ամուսնացած կանաց 72%-ի մոտ նկատվում է մահացության բարձր ռիսկով երեխա ունենալու հավանականություն (պոտենցիալ):

Աղյուսակ 9.7 Պտղաբերության բարձր ռիսկեր

Հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում ծնված երեխաների տոկոսային բաշխումն ըստ մահանակու բարձր ռիսկի խմբերի, ռիսկի գործակիցը ու հետազոտության պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ ռիսկի խմբերի, եթե նրանք պետք է հղիանային հետազոտության ժամանակ, Հայաստան 2000թ.

	Հետազոտությանը նախորդող 5 տարիների ծնունդները		(%,%) Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսը ¹
	Ծնունդների տոկոսը	Ռիսկի գործակից	
Ռիսկի խմբերը			
Չի պատկանում բարձր ռիսկի որևէ խմբի	31.4	1.00	24.5 a
Անխուսափելի ռիսկի խումբ 18-34 տարեկան կանանց առաջին ծնունդը	34.9	0.56	4.0
Միագործոն բարձր ռիսկի խումբ			
Մոր տարիքը <18	3.3	42	0.2
Մոր տարիքը >34	2.6	1.00	22.2
Ծնունդների միջև ընկած ժամանակահատվածը <24 ամսից	17.5	1.35	6.6
Ծնունդի հաջորդականությունը >3	5.2	3.22	8.5
Ենթագումար	28.5	1.50	37.5
Բազմագործոն բարձր ռիսկի խումբ			
Տարիքը <18 և ծնն. միջև ընկ. ժամ. <24 ամսից	0.4	42	0.1
Տարիքը >34 և ծնն. միջև ընկ. ժամ. <24 ամսից	0.4	42	0.3
Տարիքը >34 ծնունդի հաջորդականությունը >3	2.0	0.40	31.4
Տարիքը >34 և ծնունդների միջև ընկած ժամ <24 ամսից և ծնունդի հաջորդականությունը >3	0.1	42	0.3
Ծնունդների միջև ընկած ժամ <24 ամսից և ծնունդի հաջորդականությունը >3	2.3	2.10	2.0
Ենթագումար	5.2	1.09	34.0
Որևէ խմբում, որտեղ կարելի է խուսափել բարձր ռիսկից	33.7	1.44	71.5
Ընդամենը	100.0	-	100.0
Ծնունդների թվաքանակը (մարդ)	1657	-	4125

Նշում. ռիսկի գործակիցը դա յուրահատուկ բարձր ռիսկի խմբի պատկանող ծնունդների մահերի հարաբերությունն է բարձր ռիսկի որևէ խմբի չպատկանող ծնունդների մահերին:

42. կիրառելի չէ:

1 Կանայք ընդգրկվում են ռիսկի խմբում՝ ըստ այն կարգավիճակի, որ նրանք կունենան երեխայի ծնվելու ժամանակ, եթե նրանք հղիանային հետազոտության ժամանակ. ներկայիս տարիքը 17 տարեկան 3 ամսականից փոքր է կամ 34 տարեկան 2 ամսականից մեծ, վերջին ծնունդը եղել է ավելի քիչ, քան 15 ամիս առաջ կամ վերջին ծնունդը երրորդն է կամ ավելին:

a Ներառյալ ստերիլացված կանայք:

Կ. Սարիբեկյան, Ռ. Աբրահամյան, Մ. Բալասանյան, և Ա. Հովհաննիսյան

Այս գլխում ներկայացված են հետազոտության այն տվյալները, որոնք վերաբերվում են մոր և մանկան առողջությանը:

Այդ տեղեկատվությունը կազմված է հետևյալ բաժիններից՝ նախածննդյան հսկողություն, ծննդաբերություն, հետծննդյան խնամք, պատվաստումներով ընդգրկվածություն, տարածված մանկական հիվանդություններ և դրանց բուժումը: Այս տեղեկատվությունը, մանկական մահացության վերաբերյալ տեղեկատվության հետ մեկտեղ օգտակար է մոր և մանկան ծառայությունների բարելավմանն ուղղված ծրագրերի և քաղաքականության մշակման համար: Հայաստանում երեխաների և կանանց բուժօգնությունն իրականացվում է ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային առողջապահական լայն համակարգի միջոցով: Ամբուլատոր բուժօգնությունը իրականացվում է տեղամասային սկզբունքով (գյուղական բժշկական ամբուլատորիա, պոլիկլինիկա, կանանց կոնսուլտացիա և այլն), իսկ մանկաբարձական բուժօգնությունն իրականացվում է հիվանդանոցների մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքներում, ծննդատներում (շրջանային, քաղաքային) և III մակարդակի մասնագիտացված կենտրոններում:

10.1. Նախածննդյան (անտենատալ) բուժօգնություն

Հղիության և ծննդաբերության ընթացքում կնոջ ստացած բուժօգնությունը կարևոր է ինչպես մոր, այնպես էլ մանկան գոյատևման և առողջության համար: Անտենատալ բուժօգնությունը նկարագրված է ըստ հետևյալ տվյալների՝ նախածննդյան հսկողությունն իրականացնող անձը, հաճախումների թիվը, հղիության ընթացքը առաջին և վերջին հաճախումների ժամանակ, հաճախումների ընդհանուր թիվը, ինչպես նաև նախածննդյան հսկողության ընթացքում տրամադրվող ծառայությունները և հղին տրվող տեղեկատվությունը:

Նախածննդյան բուժօգնություն տրամադրողը

10.1 աղյուսակը ներկայացնում է տվյալներ նախածննդյան բուժօգնություն տրամադրողների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ հետազոտությունը բացայտել է, որ կանանց 92%-ը առնվազն մեկ անգամ ստացել է նախածննդյան բուժօգնություն համապատասխան որակավորում ունեցող բուժաշխատողից (բժիշկ, բուժքույր կամ որակավորված մանկաբարձուհի) (Նկար 10.1): Քաղաքային բնակավայրերում նախածննդյան բուժօգնության 92%-ը տրամադրվել է բժշկի և 3%-ը՝ բուժքրոջ կամ որակավորված մանկաբարձուհու կողմից: Գյուղական բնակավայրերում համապատասխանաբար 74%՝ բժշկի և 15%՝ բուժքրոջ կամ մանկաբարձուհու կողմից: Գրեթե բոլոր մարզերում որակյալ բուժանձնակազմի կողմից նախածննդյան բուժօգնություն է ստացել մայրերի ավելի քան 90%-ը: Այդ ցուցանիշը, սակայն, Վայոց Ձորում կազմել է 86%, Արագածոտնում՝ 80% և Գեղարքունիքում՝ 70%:

Նախածննդյան բուժօգնության այցելությունների թիվը և ժամկետները

Հղիության և ծննդաբերության բարդությունների կանխարգելման և բարեհաջող ծննդաբերության գրավականներն են որակյալ նախածննդյան հսկողությունը, բավարար այցելությունների թիվը, առաջին այցելության ժամկետը: Ժամկետի առումով, ռողջապահության նախարարության կողմից առաջարկվում է առաջին անգամ դիմել նախածննդյան բուժօգնության մինչև հղիության 12-րդ շաբաթը: ՀՀ առողջապահության նախարարությունը ընդունել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից նորմալ հղիության համար առաջարկվող նախածննդյան բուժօգնության 4 այցելությունների ուղեցույցը:

Աղյուսակ 10.2-ը ցույց է տալիս, որ հարցվողների (ռեսպոնդենտների) շուրջ 2/3-ը կատարել է չորս և ավելի նախաձեռնողական բուժօգնության այցելություն: Սակայն զգալի տարբերություն կա գյուղ-քաղաք կտրվածքով: Գյուղական բնակչության նախաձեռնողական բուժօգնության այցելությունների մեղիան թիվը երկու անգամ ցածր է քաղաքային բնակչության նախաձեռնողական բուժօգնության այցելությունների մեղիան թվից (համապատասխանաբար 3 և 6): Չնայած կանանց միայն 18%-ն է հղիության երրորդ ամսում ունեցել նախաձեռնողական այցելություն, սակայն առաջին այցելության ժամանակ կանանց հղիության ժամկետը միջինում կազմել է 3.8 ամիս՝ առանց էական տարբերությունների գյուղ-քաղաք կտրվածքով:

Աղյուսակ 10.1 Նախաձեռնողական բուժօգնություն

Հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ հղիության ժամանակ նախաձեռնողական բուժօգնություն (ՆԲ) տրամադրողի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)


Հիմնական բնութագրիչներ	Նախաձեռնողական բուժօգնություն տրամադրող ¹					
	Բժիշկ	Բուժ քույր/ման- ձուկի	Տատմեր (ավանդ. ծնունդ ընդունող)/ այլ ²	Ոչ ոք	Ընդա- մենը	Ծնունդների թվաքա- նակը (մարդ)
Սոր տարիքը ծննդաբերելիս						
<20	79.4	10.6	0.0	10.0	100.0	172
20-34	85.0	8.6	0.2	6.2	100.0	999
35-49	78.2	4.5	0.0	17.3	100.0	77
Ծնունդների կարգը						
1	89.2	7.8	0.0	3.0	100.0	384
2-3	83.4	8.5	0.2	8.0	100.0	723
4+	71.3	12.0	0.8	15.9	100.0	141
Բնակավայրը						
Քաղաքային	92.3	3.3	0.3	4.1	100.0	664
Գյուղական	74.1	14.8	0.0	11.1	100.0	583
Մարզը						
Երևան	96.3	1.1	0.0	2.6	100.0	374
Արագածոտն	77.8	1.7	0.0	20.5	100.0	68
Արարատ	93.2	3.8	0.0	3.0	100.0	150
Արմավիր	81.7	12.2	0.0	6.1	100.0	129
Գեղարքունիք	49.6	20.7	0.0	29.8	100.0	120
Լոռի	88.4	3.5	0.0	8.1	100.0	103
Կոտայք	69.1	22.1	2.9	5.9	100.0	77
Շիրակ	75.7	21.4	0.0	2.9	100.0	87
Սյունիք	96.7	2.2	0.0	1.1	100.0	49
Վայոց ձոր	82.2	4.0	0.0	13.9	100.0	25
Տավուշ	75.6	22.7	0.0	1.7	100.0	67
Կրթությունը						
Տարրական/միջին	65.1	15.5	0.0	19.3	100.0	106
Միջնակարգ	81.2	10.8	0.0	7.9	100.0	490
Միջնակարգ-մասնագիտական	86.4	7.1	0.3	6.2	100.0	430
Բարձրագույն	93.4	3.4	0.5	2.7	100.0	222
Ընդամենը	83.8	8.6	0.2	7.4	100.0	1248

Նշում. Հինգ տարվա ընթացքում երկու կամ ավել կենդանածին ունեցած կանանց դեպքում տվյալները վերաբերվում են ամենավերջին ծնունդին:

¹ Մեկից ավելի տրամադրողներ նշելու դեպքում, դիտարկվում է միայն ամենաորակյալը:

² Ներառյալ կանայք, ովքեր չգիտեն տրամադրողի որակավորումը:

Գծապատկեր 10.1 Նախածննդյան բուժօգնություն տրամադրում



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Ն ա խ ա ծ ն ն դ յ ա ն բ ու ժ օ գ ն ու թ յ ա ն բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն ը :

Այցելությունների ժամանակ տրամադրված նախածննդյան բուժօգնության ծավալի որոշումը կարևոր է նախածննդյան բուժօգնության ծառայությունների գնահատման համար: Հայաստանում նախածննդյան բուժօգնությունը ներառում է անհրաժեշտ հետազոտությունների որոշակի ծավալ՝ արյան, մեզի ընդհանուր քննություն, հեշտոցային զննում, հեշտոցի պարունակության բակտերիոսկոպիկ քննություն, հասակ-քաշի և արյան ճնշման չափում: Հղի կանայք, ովքեր հիվանդ են կամ գտնվում են հղիության ռիսկի խմբում, ենթարկվում են հավելյալ զննումների: Վերջապես, նախածննդյան խնամքը ներառում է նաև հղի կանանց առողջության հարցերի իրազեկումը, ինչն իր հերթին ներառում է տեղեկություններ հղիության բարդությունների վերաբերյալ: Աղյուսակ 10.3 ցույց է տալիս այն կանանց տոկոսը, ովքեր տեղեկացված են եղել հղիության բարդությունների նախանշանների մասին և ստացել են ընթացիկ նախածննդյան բուժօգնության միջամտություններ իրենց վերջին հղիության ժամանակ՝ ըստ հիմնական բնութագրիչների, հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում:

Աղյուսակ 10.2 Նախածննդյան բուժօգնության այցելությունների թիվը և առաջին այցելության ժամկետը

Հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ նախածննդյան բուժօգնության (ՆԲԽ) այցելությունների թվի և առաջին այցելության ժամկետի, Հայաստան 2000թ.

ՆԲ այցերի թիվը և ժամկետը	Բնակավայր		
	Քաղաք.	Գյուղ.	Ընդամենը
ՆԲ այցերի թիվը			
ոչ մի	4.1	11.1	7.4
1 այց	2.1	12.0	6.8
2-3 այց	8.3	28.2	17.6
4+ այց	81.7	45.4	64.7
Չգիտի/պատասխան չկա	3.8	3.3	3.6
Ընդամենը	100.0	100.0	100.0
Այցերի մեդիան թիվը (ՆԲ ստացածներից)	6.3	3.2	4.9
ՆԲ առաջին այցի ժամանակ հղիության ամիսների թիվը			
ոչ մի ՆԲ այց	4.1	11.1	7.4
>3	21.6	13.4	17.8
3-4	58.6	54.8	56.8
5-6	11.6	12.9	12.2
7+	3.5	4.6	4.0
Չգիտի/պատասխան չկա	0.6	3.1	1.8
Ընդամենը	100.0	100.0	100.0
Առաջին այցի ժամանակ հղիության ամիսների թիվը (ՆԲ ստացածներից)	3.7	3.9	3.8
Ընդամենը	664	583	1248

Նշում. Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում երկու և ավել կենդանի ծնունդ ունեցած կանանց դեպքում տվյալները վերաբերվում են ամենավերջին ծնունդին:

Աղյուսակ 10.3 Նախաձեռնողական բուժօգնության բովանդակությունը

Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած և նախաձեռնողական բուժօգնություն, ստացած կանանց տոկոսային բաշխումն ըստ նախաձեռնողական բուժօգնության բովանդակության և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Տեղեկացված է հղիության բարդությունների նախա նշանների մասին	Արյան ճնշման չափում	Մեզի քննություն	Արյան քննություն	Հեշտոցային զննում	Չափվել է քաշը	Չափվել է հասակը	Կանանց քվա-քանակը (մարդ)
Տարիքը ծննդաբերելիս								
<20	46.1	92.8	91.6	92.9	79.7	87.4	80.6	155
20-34	58.5	96.7	94.4	96.1	88.6	92.3	88.7	937
35-49	54.5	98.0	97.2	98.0	92.2	88.8	84.6	63
Ծնունդների կարգը								
1	61.5	95.3	95.7	96.7	88.4	93.9	87.3	372
2-3	55.9	96.6	94.2	95.6	88.7	91.6	88.9	665
4+	45.9	97.4	89.3	93.6	79.1	82.4	79.2	118
Բնակավայրը								
Քաղաքային	61.9	98.2	98.3	98.5	96.1	97.4	93.7	637
Գյուղական	50.3	93.9	89.1	92.3	77.2	84.1	79.6	518
Մարզը								
Երևան	66.4	98.9	99.6	99.6	98.5	99.6	97.0	364
Արագածոտն	54.8	92.5	96.8	97.8	89.2	75.3	71.0	54
Արարատ	51.6	93.0	92.2	96.1	82.0	89.8	79.7	146
Արմավիր	48.1	96.3	94.4	96.3	82.4	79.6	76.9	121
Գեղարքունիք	48.2	88.2	68.2	69.4	49.4	75.3	70.6	84
Լոռի	48.1	98.7	94.9	98.7	97.5	91.1	87.3	94
Կոտայք	57.8	96.9	96.9	98.4	92.2	98.4	92.2	73
Շիրակ	61.8	97.1	91.2	92.6	89.7	92.6	91.2	85
Սյունիք	51.7	97.8	95.5	100.0	91.0	91.0	89.9	49
Վայոց ձոր	57.5	95.4	94.3	95.4	78.2	90.8	92.0	21
Տավուշ	49.6	96.6	98.3	98.3	75.2	96.6	92.3	65
Կրթությունը								
Տարրական/միջին	37.2	91.8	90.5	94.1	71.1	74.3	70.8	86
Միջնակարգ	51.3	95.5	91.2	92.7	86.6	89.5	85.0	451
Միջնակարգ-մասնագիտական	59.4	97.4	96.4	98.4	89.2	94.4	90.5	403
Բարձրագույն	70.4	97.6	97.7	98.0	93.4	96.8	93.3	216
Ընդամենը	56.7	96.3	94.2	95.8	87.6	91.4	87.4	1156

Նշում. Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում երկու և ավել կենդանի ծնունդ ունեցած կանանց դեպքում տվյալները վերաբերվում են ամենավերջին ծնունդին:

Այդ հետազոտություններն անհրաժեշտ են հղիության բարդությունների վաղ ախտորոշման համար, ինչը հանդիսանում է մեծ ռեզերվ մայրական ու մանկական հիվանդացության և մահացության նվազեցման համար:

Ընդհանուր առմամբ, կանանց շուրջ 90 տոկոսը ստացել է նախաձեռնողական բուժօգնություն լրիվ ծավալով, բացառությամբ հղիության բարդությունների վերաբերյալ իրազեկվածության (57%): Մասնավորապես, Արմավիրում, Գեղարքունիքում, Լոռիում և Տավուշում մայրերի կեսից քիչն է տեղեկացվել հղիության բարդությունների վերաբերյալ: Քաղաքում բնակվող կանանց վիճակն ավելի բարենպաստ է եղել, քան գյուղում բնակվողներինը՝ նախաձեռնողական բուժօգնության նշված բոլոր 7 բաղադրիչների ստացման առումով: Նմանապես, ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող ավելի շատ կանայք են ստացել նախաձեռնողական բուժօգնություն լրիվ ծավալով (նշված բոլոր 7 բաղադրիչները), քան ավելի քիչ կրթվածները: Ընդհանուր առմամբ, հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ Գեղարքունիքում բնակվող կանայք

զգալիորեն ավելի քիչ են ստացել որակյալ (լրիվ ծավալով) նախաձեռնության բուժօգնություն, քան այլ մարզերում բնակվող կանայք:

10.2 Բուժօգնություն ծննդաբերության ընթացքում

Ծննդաբերության ժամանակ հիգիենիկ պայմանները և ծննդի ընդունումը որակյալ բուժանձնակազմի կողմից նվազեցնում են ինֆեկցիաների վտանգը և ապահովում ծննդաբերության ընթացքում հնարավոր բարդությունների արդյունավետ կանխարգելումը: ՀԺԱՀ-ը տեղեկատվություն է հավաքագրել հետազոտությանը նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում ծնված երեխաների ծննդի ընդունման վայրի, ինչպես նաև ծնունդն ընդունած բուժ անձնակազմի վերաբերյալ:

Աղյուսակ 10.4-ը ցույց է տալիս, որ ծնունդների մեծամասնությունը (91%) տեղի է ունեցել բուժհիմնարկներում: Ծնունդների միայն 9%-ն է տեղի է ունեցել ռեսպոնդենտների տանը, սակայն այդ ցուցանիշի հաճախականությունը զգալի տարբերվում է ըստ հիմնական բնութագրիչների: Քաղաքային բնակավայրերում ծննդաբերությունները գրեթե մասսայաբար (99%) տեղի են ունենում բուժհիմնարկներում, մինչդեռ գյուղական բնակավայրերում ծնունդների 16%-ը կազմում են տնային ծնունդները: Չզալի տարբերություն կա ըստ մարզերի: Առավել ապշեցուցիչ են Գեղարքունիքի մարզի տվյալները, որտեղ ծնունդների 41%-ը տեղի է ունեցել բուժհիմնարկներից դուրս: Դա կարող է պայմանավորված լինել այնպիսի գործոններով, ինչպիսիք են բուժհաստատությունների հեռավորությունը և դրանի պակասը բնակչության շրջանում, ուր բնակչության զգալի տոկոս են կազմում փախստականներ Ադրբեջանից: Այս ցուցանիշը բարձր է նաև Արագածոտնում (14%): Տնային ծնունդների թիվն աճում է նաև ծննդաբերությունների թվի մեծացմանը (4 և ավելի ծնունդ՝ 22%) և կրթական ցենզի անկմանը (տարրական կրթություն՝ 24%) զուգահեռ: Հարկ է նշել, որ մինչև 20 տարեկան կանանց 14 տոկոսը ծննդաբերել են տանը, որը, հավանաբար, նրանց առաջին ծննդաբերությունն է եղել: Ինչպես և կարելի էր սպասել, նախաձեռնության խնամք չստացած կանանց մեկ երրորդը ծննդաբերել է տանը:

Աղյուսակ 10.4 Ծննդաբերության վայրը

Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդների տոկոսային բաշխումն ըստ ծննդաբերության վայրի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Ծննդաբերության վայրը				Ծնունդների թվաքանակը (մարդ)
	Բուժ հաստատություն	Տանը	Զգիտի/պատասխան չկա	Ընդամենը	
Մոր տարիքը ծննդաբերելիս					
<20	86.4	13.6	0.0	100.0	311
20-34	92.7	7.1	0.2	100.0	1261
35-49	88.8	11.2	0.0	100.0	84
Ծնունդների կարգը					
1	95.0	5.0	0.0	100.0	650
2-3	91.1	8.6	0.3	100.0	849
4+	77.8	22.2	0.0	100.0	158
Բնակավայրը					
Քաղաքային	98.6	1.3	0.1	100.0	838
Գյուղական	83.9	15.9	0.1	100.0	819
Մարզը					
Երևան	98.5	1.5	0.0	100.0	459
Արագածոտն	86.1	13.9	0.0	100.0	96
Արարատ	91.8	7.7	0.5	100.0	207
Արմավիր	93.2	6.8	0.0	100.0	164
Գեղարքունիք	59.2	40.8	0.0	100.0	182
Լոռի	97.5	2.5	0.0	100.0	142
Կոտայք	95.7	3.2	1.1	100.0	106
Շիրակ	91.5	8.5	0.0	100.0	117
Սյունիք	99.1	0.9	0.0	100.0	63
Վայոց ձոր	97.8	1.5	0.0	100.0	33
Տավուշ	98.1	1.9	0.0	100.0	88
Մոր կրթությունը					
Տարրական/միջին	76.4	23.6	0.0	100.0	155
Միջնակարգ	88.8	11.0	0.2	100.0	669
Միջնակարգ-մասնագիտական	95.3	4.5	0.2	100.0	550
Բարձրագույն	97.9	2.1	0.0	100.0	283
ՆԲ այցերը					
Ոչ մի	66.4	33.4	0.0	100.0	151
1-3	86.7	13.3	0.0	100.0	434
4+	97.0	2.8	0.2	100.0	1019
Ընդամենը	91.3	8.5	0.1	100.0	1657

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Ընդամենը ներառում է 54 դեպք, երբ ՆԲ այցելությունների վերաբերյալ տվյալներ չկան:

Տնային ծնունդների թիվը աճում է նաև ծնունդների թվի մեծացմանը զուգահեռ (5%` առաջին ծննդաբերություն, 22%` 4 և ավելի ծննդաբերություն): Ծննդաբերության վայրը կապ ունի նաև կրթական մակարդակի հետ: Բարձրագույն կրթությամբ կանանց միայն 2 տոկոսն է ծննդաբերել տանը, մինչդեռ տարրական կրթություն ունեցող կանանց գրեթե քառորդը (24%) ծննդաբերել է տանը:

Ծնունդների ընդունումը բուժանձնակազմի կողմից գրեթե համընդհանուր գործելակերպ է Հայաստանում (Աղյուսակ 10.5): Հետազոտությանը նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում կենդանածնության դեպքերի 97%-ը ընդունվել է բժշկի, բուժքրոջ կամ որակավորված մանկաբարձուհու կողմից: Ակնհայտ տարբերություններ կան ըստ մարզերի: Օրինակ` Գեղարքունիքում ծնունդների միայն կեսն է ընդունվել մասնագետ բուժաշխատողների կողմից: Թեև Շիրակի և Տավուշի մարզերում 10 ծնունդից 9-ը տեղի է ունեցել բուժօգնակցի, սակայն ցածր է բժշկի կողմից ընդունված ծնունդների թիվը (համապատասխանաբար 65% և 75%):

10.3 Ծննդաբերությունների բնութագրիչները

Աղյուսակ 10.6-ը ներկայացնում է տեղեկատվություն ծննդաբերության բնութագրիչների վերաբերյալ: Աղյուսակ 10.6 ցույց է տալիս, որ երեխաների 7%-ը ծնվել է կեսարյան հատումով: Կեսարյան հատումով ծնունդների թիվն աճում է համեմատաբար մեծահասակ և բարձր կրթական մակարդակ ունեցող կանանց մոտ և նվազում ծննդաբերությունների թվի մեծացմանը զուգահեռ: Կեսարյան հատումով ծնունդները տարբեր են ըստ մարզերի` այն ամենացածրն է Գեղարքունիքի մարզում` 1%-ից էլ պակաս, և ամենաբարձրն է Շիրակի մարզում (11%):

Ծննդյան քաշի մասին տեղեկատվությունը ստացվել է բոլոր ծնունդների 96% դեպքերում: Կշռված երեխաների 94%-ի մոտ քաշը եղել է 2.5կգ և ավելի: Հաշվի առնելով Գեղարքունիքի մարզում բուժ օգնակցի կողմից դուրս ծնված երեխաների բարձր տոկոսը զարմանալի չէ, որ տվյալ մարզում նորածինների գրեթե մեկ քառորդը (23%) չի կշռվել: Գեղարքունիքում ծնված (և կշռված) նորածինների 15%-ը ծնվել է ցածր ծննդյան քաշով (2.5կգ-ից պակաս): Գյուղական բնակավայրերում նորածինների ցածր քաշով ծնվելու հավանականությունն ավելի բարձր է ծնունդների մեծ թվի և մոր ցածր կրթական մակարդակի դեպքերում:

Աղյուսակ 10.5 Ծննդաբերության ժամանակ ցուցաբերված օգնությունը

Հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում կենդանի ծնունդների տեսակարար կշիռն ըստ ծննդաբերության ժամանակ բուժօգնություն տրամադրողի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Բժիշկ	Ուսուցված բուժքույր/մանկաբարձուհի	Տատմեր (ավանդ. ծնունդ ընդունող)	Բարեկամ/այլ	Ոչ ոք	Ընդամենը	Ծնունդների թվաքանակը (մարդ)
Մոր տարիքը ծննդաբերելիս							
<20	81.1	16.2	0.5	2.1	0.0	100.0	311
20-34	83.4	13.5	0.9	1.7	0.3	100.0	1261
35-49	83.9	9.0	3.8	1.9	1.4	100.0	84
Ծնունդների կարգը							
1	87.4	11.4	0.3	0.8	0.0	100.0	650
2-3	82.7	14.1	1.1	1.6	0.3	100.0	849
4+	66.6	21.6	2.7	7.4	1.7	100.0	158
Բնակավայրը							
Քաղաքային	92.1	7.0	0.1	0.7	0.0	100.0	838
Գյուղական	73.7	20.8	1.8	3.0	0.6	100.0	819
Մարզը							
Երևան	95.2	3.6	0.0	1.2	0.0	100.0	459
Արագածոտն	86.1	6.6	2.4	4.8	0.0	100.0	96
Արարատ	80.8	18.7	0.0	0.0	0.0	100.0	207
Արմավիր	93.2	4.1	1.4	0.7	0.7	100.0	164
Գեղարքունիք	50.0	34.8	4.3	9.8	1.1	100.0	182
Լոռի	84.0	15.1	0.0	0.0	0.8	100.0	142
Կոտայք	88.2	9.7	1.1	0.0	0.0	100.0	106
Շիրակ	64.9	33.0	1.1	1.1	0.0	100.0	117
Սյունիք	95.6	3.5	0.0	0.0	0.9	100.0	63
Վայոց ձոր	89.7	9.6	0.7	0.0	0.0	100.0	33
Տավուշ	75.2	24.2	0.6	0.0	0.0	100.0	88
Մոր կրթությունը							
Տարրական/միջին	69.8	20.1	2.3	7.5	0.4	100.0	155
Միջնակարգ	82.9	13.8	1.0	1.8	0.3	100.0	669
Միջնակարգ-մասնագիտական	83.4	14.4	0.8	0.8	0.4	100.0	550
Բարձրագույն	89.6	9.2	0.2	0.9	0.0	100.0	283
ՆԲ այցերը							
Ոչ մի	59.2	23.1	4.6	11.6	1.5	100.0	151
1-3	76.1	19.9	1.9	1.6	0.6	100.0	434
4+	90.4	8.7	0.1	0.6	0.0	100.0	1019
Ընդամենը	83.0	13.8	0.9	1.8	0.3	100.0	1657

Նշում. Մեկից ավելի անձ նշելու դեպքում աղյուսակում դիտարկվում է միայն ամենաորակյալը: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Բացակայող պատասխանները ցույց չեն տրված (0.1տոկոս): Ընդամենը ներառում է 54 դեպք, երբ ՆԲ այցելությունների վերաբերյալ տվյալներ չկան:

Աղյուսակ 10.6 Ծննդաբերության բնութագրիչները

Հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում կեսարյան հատումով կենդանի ծնունդների տեսակարար կշիռը և տոկոսային բաշխումն ըստ ծննդյան քաշի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Ծննդյան քաշը						Ծնունդների քանակը (մարդ)
	Կեսարյան հատումով ծննդաբերություններ	Չի կշռվել	2.5կգ-ից քիչ	2.5 կգ կամ ավել	Չգիտի/պատասխան չկա	Ընդամենը	
Սոր տարիքը ծննդաբերելիս							
<20	3.6	6.3	7.8	85.1	0.8	100.0	311
20-34	6.7	3.1	5.3	91.1	0.4	100.0	1261
35-49	16.9	3.0	8.4	87.0	1.6	100.0	84
Ծնունդների կարգը							
1	7.9	1.5	5.6	92.6	0.3	100.0	650
2-3	6.2	3.5	5.7	90.1	0.7	100.0	849
4+	3.6	13.9	9.0	76.4	0.7	100.0	158
Բնակավայրը							
Քաղաքային	7.8	0.1	4.0	95.4	0.5	100.0	838
Գյուղական	5.4	7.3	8.0	84.0	0.7	100.0	819
Մարզը							
Երևան	8.4	0.0	3.3	96.1	0.6	100.0	459
Արագածոտն	6.6	6.6	7.2	84.3	1.8	100.0	96
Արարատ	6.0	2.7	8.2	87.9	1.1	100.0	207
Արմավիր	8.8	2.0	6.8	91.2	0.0	100.0	164
Գեղարքունիք	0.5	23.4	11.4	64.7	0.5	100.0	182
Լոռի	5.0	0.0	4.2	95.8	0.0	100.0	142
Կոտայք	3.2	0.0	2.2	96.8	1.1	100.0	106
Շիրակ	10.6	2.1	7.4	90.4	0.0	100.0	117
Սյունիք	5.3	0.9	6.1	93.0	0.0	100.0	63
Վայոց ձոր	8.8	0.0	5.9	94.1	0.0	100.0	33
Տավուշ	8.3	0.0	5.7	93.6	0.6	100.0	88
Սոր կրթությունը							
Տարրական/միջին	4.2	9.7	10.9	77.0	2.4	100.0	155
Միջնակարգ	5.2	5.4	6.3	88.0	0.3	100.0	669
Միջնակարգ-մասնագիտական	7.4	1.7	5.8	91.8	0.6	100.0	550
Բարձրագույն	9.7	0.2	2.7	97.1	0.0	100.0	283
Ընդամենը	6.6	3.7	6.0	89.8	0.6	100.0	1657

10.4 Հետծննդյան խնամք

Հետծննդյան շրջանը ծննդաբերության և դրան հաջորդող 42 օրվա ժամանակահատվածն է: Պոստնատալ խնամքը կարևոր է և մոր, և մանկան առողջության համար, քանզի պաշտպանում է նրանց ոչ միայն ծննդաբերության ժամանակ առաջացող բարդություններից, այլ նաև մորը տալիս է անհրաժեշտ և կարևոր տեղեկատվություն իր և իր զավակի ճիշտ խնամքի վերաբերյալ: Հետծննդյան որակյալ խնամքի ապահովումը շատ կարևոր է, քանզի մեծ մասամբ մայրական և նեոնատալ մահերը տեղի են ունենում ծննդաբերությանը հաջորդող առաջին օրերի ընթացքում:

Աղյուսակ 10.7 Հետծննդյան խնամքն ըստ հիմնական բնութագրիչների

Հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսը, ովքեր ծննդաբերել են բուժհաստատությունում, ինչպես նաև բուժհաստատությունից դուրս ծննդաբերած, բայց հետծննդյան խնամք ստացած կանանց ընդհանուր տոկոսն ըստ հետծննդյան խնամքի ժամկետի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Հետծննդյան առաջին քննության ժամկետը բուժհաստատ. դուրս ծննդաբերած կանանց համար						Ծնունդների թվաքանակը (մարդ)
	Ծննդաբերել է բուժօգնություն	Ծննդաբերում 2 օր անց	7 օրվա ընթացքում	42 օրվա ընթացքում	Չգիտի/պատահական	Չի ստացել հետծննդյան խնամք ¹	
Տարիքը ծննդաբերելիս							
<20	86.6	6.9	7.5	8.1	0.7	4.6	172
20-34	93.7	3.3	3.6	4.2	0.4	1.7	999
35 +	88.9	4.4	5.1	5.1	0.0	5.9	77
Ծնունդների կարգը							
1	96.5	2.3	2.6	2.6	0.3	0.6	384
2-3	92.9	3.2	3.3	4.0	0.5	2.6	723
4+	79.1	12.0	13.5	14.9	0.0	6.0	141
Բնակավայրը							
Քաղաքային	98.8	0.7	0.7	0.7	0.1	0.4	664
Գյուղական	85.3	7.5	8.2	9.4	0.7	4.7	583
Մարզը							
Երևան	98.5	0.7	0.7	0.7	0.0	0.7	374
Արագածոտն	84.6	5.1	6.8	7.7	1.7	6.0	68
Արարատ	93.2	3.0	3.0	3.0	0.8	3.0	150
Արմավիր	93.9	1.7	1.7	3.5	0.9	1.7	129
Գեղարքունիք	63.6	23.1	25.6	28.9	0.0	7.4	120
Լոռի	97.7	1.2	1.2	1.2	0.0	1.2	103
Կոտայք	95.6	1.5	1.5	1.5	0.0	2.9	77
Շիրակ	90.0	4.3	4.3	4.3	1.4	4.3	87
Սյունիք	98.9	1.1	1.1	1.1	0.0	0.0	49
Վայոց ձոր	98.0	1.0	1.0	1.0	0.0	1.0	25
Տավուշ	98.3	1.7	1.7	1.7	0.0	0.0	67
Կրթությունը							
Տարրական/միջին	76.6	13.6	13.6	16.6	0.0	6.8	106
Միջնակարգ	90.3	4.6	5.3	5.8	0.8	3.1	490
Միջնակարգ-մասնագիտական	96.3	1.5	1.7	1.9	0.1	1.7	430
Բարձրագույն	97.3	2.4	2.4	2.4	0.0	0.3	222
Ընդամենը	92.5	3.9	4.2	4.8	0.4	2.4	1248

Նշում. Հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում երկու և ավել կենդանի ծնունդ ունեցած կանանց համար տվյալները վերաբերվում են ամենավերջին ծնունդին: Ենթադրվում է, որ կանայք, ովքեր ծննդաբերել են բուժհաստատությունում ստացել են հետծննդյան խնամք:

¹Ներառում է կանանց, ովքեր ստացել են հետծննդյան խնամք ծննդաբերությունից հետո՝ ավելի քան 6 շաբաթ անց:

Տվյալները ցույց են տալիս, որ բժշկական հիմնարկներից դուրս տեղի ունեցած մոտավորապես 8% ծնունդների շուրջ կեսի դեպքում հետծննդյան խնամքը ստացվել է 60ծննդաբերությանը հաջորդող երկու օրվա ընթացքում: Բժշկական հիմնարկներից դուրս տեղի ունեցած ծնունդների մոտավորապես 1/3-ի դեպքում հետծննդյան խնամք ընդհանրապես չի ստացվել: Ինչպես և սպասվում էր, ծնունդների թվի հաճախականությանը զուգահեռ, ինչպես նաև գյուղական վայրերում տեղի ունեցած և ցածր կրթական մակարդակով կանանց շրջանում ավելի քիչ է հետծննդյան խնամք ստացողների թիվը: Ամենից քիչ հետծննդյան խնամք ստացել են Գեղարքունիքում բնակվող կանայք:

10.5 Կանանց կարգավիճակը և վերարտադրողական բուժօգնությունը

Կնոջ կարգավիճակը և արժանապատվության զգացումը կարող են լինել որոշիչ գործոններ պատշաճ բուժօգնություն ստանալու հարցում: Աղյուսակ 10.8-ի տվյալները ցույց են տալիս, որ գոյություն ունի որոշակի կապ կանանց կարգավիճակը ներկայացնող ցուցանիշների և նրանց կողմից ստացված նախաձեռնության ու ծննդաբերական օգնության միջև:

Աղյուսակ 10.8 Կանանց կարգավիճակը և վերարտադրողական բուժօգնությունը

Հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ ստացված նախաձեռնության բուժօգնության և հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում ծնունդների տոկոսային բաշխումը, երբ մայրերը ստացել են ծննդաբերական խնամք ըստ կանանց կարգավիճակի ցուցանիշների, Հայաստան 2000թ. (%)

Կանանց կարգավիճակի ցուցանիշները	Բուժաշխատողի կողմից ՆԲստացած կանանց տոկոսը ¹	Կանանց քանակը (մարդ)	Ծնունդների տոկոսը, երբ ծննդ. օգն. է ցուց. բուժաշխատողը ¹	Ծնունդների քանակը (մարդ)
Կնոջ կողմից կայացվող որոշումների թիվը²				
0	81.3	92	94.4	134
1-2	91.4	349	96.6	473
3-4	93.8	397	96.8	517
5+	94.6	410	97.5	532
Սեռական հարաբերություններից հրաժարվելու պատճառների թիվը				
0	85.7	54	90.3	79
1-2	91.2	117	95.5	151
3-4	92.9	1077	97.3	1427
Կնոջ ծեծն արդարացնող պատճառների թիվը				
0	96.2	791	99.0	1019
1-2	89.6	266	96.3	359
3-4	80.8	158	89.8	226
5+	(82.2)	33	87.5	52
Ընդամենը	92.4	1248	96.8	1657

Նշում. Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

¹ Բժիշկ, բուժքույր, մանկաբարձուհի
² Ինքնուրույն կամ ուրիշների հետ միասին:

Հայաստանում կնոջ կարգավիճակի բարձրացմանը զուգահեռ բարձրանում է բարձր որակավորմամբ բուժաշխատողի կողմից բուժօգնություն ստանալու մատչելիությունը: Օրինակ, տնային տնտեսությունների համար հետազոտությանը տարբերակված հինգ որոշումների ընդունմանը մասնակցած կամ վերջնական որոշումներ ընդունած կանանց 95 տոկոսը ստացել է նախաձեռնության բուժօգնություն բարձր որակավորմամբ բուժաշխատողի կողմից, ի հակադրություն վերջնական ոչ մի որոշում չկայացրած կանանց 81 տոկոսի: Նմանապես բարձր որակավորմամբ բուժաշխատողի կողմից բուժօգնություն ստացող կանանց տոկոսն աճում է նրանց մոտ, ովքեր ավելի շատ պատճառներ են նշել, որոնց դեպքում արդարացնում են սեռական հարաբերություններից հրաժարվելը: Եվ հակառակը, որքան կնոջ ծեծն արդարացնող քիչ պատճառներ է նշում կինը, այնքան ավելի բարձր է նրա կարգավիճակը: Ըստ էության, բարձր որակավորմամբ բուժաշխատողի կողմից բուժօգնություն ստացող կանանց տոկոսն իջնում է կնոջ ծեծն արդարացնող պատճառների թվի մեծացմանը զուգահեռ:

Ընդհանուր առմամբ բոլոր հայ կանայք (97%) պրոֆեսիոնալ բուժաշխատողի կողմից ծննդաբերության ժամանակ ստանում են բուժօգնություն, և, ըստ կանանց կարգավիճակի,

տատանումները փոքր են: Հետաքրքիր է այն փաստը որ գոյություն ունի ուղղակի կապ պրոֆեսիոնալ բուժաշխատողի կողմից ծննդաբերության ժամանակ ստացված բուժօգնության և կնոջ ծեծն արդարացնող պատճառների միջև: Այսպես, առավել էմանսիպացված կանանց (նրանք, ովքեր չեն ընդունել ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացնող և ոչ մի դեպք) 99 տոկոսը ծննդաբերության ընթացքում բուժօգնությունը ստացել է պրոֆեսիոնալ բուժաշխատողի կողմից: Այս տոկոսը նվազում և հասնում է 88 տոկոսի այն կանանց մոտ, ովքեր համաձայն էին հետազոտող լաբորատորիայի նշանակած՝ ամուսնու կողմից կնոջը ծեծելու բոլոր պատճառների հետ: Տվյալներից երևում է, որ որակյալ բուժօգնության մատչելիությունը կախված է կնոջ կարգավիճակից և իրավասության մակարդակից:

10.6 Պատվաստումներով ընդգրկվածությունը

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված պատվաստումներ րի օրացույցի՝ երեխան պետք է ստանա հետևյալ պատվաստումները. տուբերկուլյոզի դեմ (ԲՑԺ), ԱԿԴՓ-ի (կապույտ հազի, դիֆտերիայի և փայտացման դեմ), պոլիոմիելիտի դեմ (պատվաստում ու երկու կրկնապատվաստում՝ 3 ամսականից սկսած մինչև երեխայի մեկ տարեկանը) և կարմրուկի դեմ՝ սկսած 12 ամսական հասակից (մինչև 2 տարեկան լրանալը):

ԺԱԱՀ-ի ընթացքում պատվաստումներով ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է մինչև 5 տարեկան բոլոր երեխաների համար: Հայաստանում «երեխայի զարգացման քարտերը պահվում են տարածքային սպասարկման առողջապահական հաստատություններում: «Իմունիզացման անձնագիրը (քարտեր, որոնք պահվում են խնամակալի մոտ) մշակվել և ներդրվել են 1995 թվականից (ԱՆ և Յունիսեֆ/Հայաստան, 1999): Այս հետազոտության ընթացքում տվյալները հավաքագրվել են նշված երկու աղբյուրներից՝ ըստ առկայության: Այն դեպքում, երբ մայրը չէր ունենում իմունիզացման անձնագիրը, նա չէր հարցվում իր երեխայի պատվաստումների վերաբերյալ: Տվյալ ընտրանքում բոլոր հարցազրույցները ավարտելուց հետո խմբի ղեկավարը պարտավոր էր գնալ տեղական առողջապահական հաստատություն՝ երեխայի զարգացման պատմությունից պատվաստումների մասին տվյալները հարցաթերթիկի մեջ գրանցելու համար:

10.9 աղյուսակը ցույց է տալիս, որ իմունիզացիայի անձնագրեր հայտնաբերվել են մինչև 5 տարեկան երեխաների 1/4-ի ծնողների մոտ, իսկ երեխայի զարգացման պատմություններ՝ 92%-ի համար: Տվյալները ցույց են տալիս, որ վերջին 5 տարիների ընթացքում իմունիզացման անձնագրերը գնալով ավելի լայն տարածում են ստանում. 12-23 ամսական երեխաների 33%-ն ունի իմունիզացման անձնագիր, մինչդեռ 48-59 ամսական երեխաների՝ միայն 17%-ը: Իմունիզացման անձնագրերը հարցազրույցավարներին ավելի շատ էին ներկայացնում գյուղական վայրերում ապրող մայրերը, քան քաղաքային վայրերում ապրողները՝ համապատասխանաբար 27% և 22%: Բացի այդ, առողջապահական հաստատություններում գյուղական վայրերում ապրող երեխաների համար երեխայի զարգացման պատմությունները փոքր-ինչ ավելի շատ են հայտնաբերվել, քան քաղաքում ապրող երեխաների համար՝ համապատասխանաբար 93% և 91%: Սա, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ քաղաքային վայրերում, որտեղ կան շատ բուժհաստատություններ, ավելի դժվար էր գտնել երեխայի զարգացման պատմությունները: Ընդհանուր առմամբ, երեխայի զարգացման պատմությունները հայտնաբերվել են (բուժհաստատություններում կամ տանը) մինչև 5 տարեկան երեխաների 93%-ի համար: Հետևյալ աղյուսակների տվյալները հիմնված են բուժհաստատությունների քարտերի վրա, բացի այն դեպքերից, երբ բուժհաստատությունում երեխայի զարգացման պատմությունը չի գտնվել, սակայն մայրը հարցազրույցավարին ներկայացրել է իմունիզացման անձնագիրը:

Աղյուսակ 10.9 Երեխայի զարգացման քարտի առկայությունը

12-59 ամսական երեխաների տոկոսային բաշխումը ուլքեր ունեն և ուլքեր չունեն երեխայի զարգացման քարտ բուժիաստատությունում, տանը, կամ տանը, կամ բուժիաստատությունում ըստ տարիքի և բնակավայրի (քաղաքային/գյուղական), Չայաստան 2000թ.

(%,%)

Բնակավայրը և երեխայի տարիքը	Բուժ հաս- տատու թյու- նում	ԵՎ տանը և բուժ հաս- տատ.	Միայն տանը	Կամ տանը կամ բուժ հաստ.	Ոչ բուժ հաստա. տուրք	Ծնունդ ների թվաքա նակը (մարդ)
Քաղաքային	90.6	20.7	1.6	92.2	7.8	676
12-23 ամսական	91.6	30.6	1.4	93.0	7.0	169
24-35 ամսական	92.3	22.7	0.0	92.3	7.7	142
36-47 ամսական	91.8	16.3	2.5	94.3	5.7	172
48-59 ամսական	87.3	14.6	2.1	89.5	10.5	193
Գյուղական	93.4	25.5	1.1	94.4	5.6	620
12-23 ամսական	94.5	33.0	1.5	96.0	4.0	131
24-35 ամսական	94.3	32.6	1.7	95.9	4.1	139
36-47 ամսական	94.4	23.1	0.7	95.1	4.9	168
48-59 ամսական	90.9	17.0	0.6	91.5	8.5	182
Ընդամենը	91.9	23.0	1.3	93.3	6.7	1296
12-23 ամսական	92.9	31.7	1.5	94.3	5.7	300
24-35 ամսական	93.3	27.6	0.8	94.1	5.9	281
36-47 ամսական	93.1	19.6	1.6	94.7	5.3	340
48-59 ամսական	89.1	15.8	1.4	90.5	9.5	375

Աղյուսակ 10.10-ը ցույց է տալիս 12-23 ամսական երեխաների համար (երեխաներ, որոնք պետք է ամբողջությամբ պատվաստվեն) պատվաստումներով ընդգրկման աստիճանը: Այս աղյուսակը հիմնված է այն պատվաստումների վրա, որոնք ստացվել են հետազոտությանը նախորդող ցանկացած ժամանակաշրջանում: Ըստ երեխաների զարգացման պատմությունների՝ ընտրանքի մեջ ընկած գրեթե բոլոր երեխաները ստացել են ԲՑԺ, ԱԿԴՓ1 և Պոլիոմիելիտ1 պատվաստումները՝ համապատասխանաբար 96%, 99% և 100%: Ընդգրկումը նույնպես բարձր էր ԱԿԴՓ-ի 2-րդ և 3-րդ (97% և 95%) և պոլիոմիելիտի 2-րդ և 3-րդ (99% և 98%) կրկնապատվաստումների համար: Կարմրուկի դեմ պատվաստում է ստացել երեխաների 79%-ը: Ըստ ՉԺԱԳ-ի ընթացքում հավաքագրված տվյալների՝ կարմրուկի դեմ պատվաստումներով ընդգրկումը որոշակիորեն փոփոխվում է ըստ հիմնական բնութագրիչների. ավելի շատ աղջիկներ, քան տղաներ (85% և 75%), և ավելի շատ քաղաքի, քան գյուղի բնակիչներն են ստացել կարմրուկի դեմ պատվաստում: Ընդհանուր առմամբ, երեխայի զարգացման պատմություններից ստացված տվյալները ցույց են տալիս, որ 12-23 ամսական երեխաների 76%-ը մինչև հարցազրույցի անցկացման օրը ստացել է ԱԳԿ-ի կողմից ցուցված բոլոր պատվաստումները:

Աղյուսակ 10.11-ը ցույց է տալիս 12-59 ամսական երեխաների տեսակարար կշիռը, ուլքեր ստացել են համապատասխան պատվաստումներ մինչև 1 տարեկանը, ինչպես ցուցված է ՀՀ առողջապահության նախարարության կողմից: 10 երեխաներից առնվազն 9-ը մինչև 1 տարեկանը ստացել են ԲՑԺ, ԱԿԴՓ1, Պոլիոմիելիտ 1 և 2 պատվաստումները (90%):

Աղյուսակ 10.10 Պատվաստումներն ըստ հիմնական բնութագրիչների

12-23 ամսական երեխաների տոկոսային բաշխումը, ովքեր ստացել են համապատասխան պատվաստումներ հետազոտությանը նախորդող ցանկացած ժամանակաշրջանում (երեխայի զարգացման քարտ կամ իմունիզացիայի անձնագիր) ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Երեխաների տոկոսը, ովքեր ստացել են.									
	ԲՑԺ	ԱԿԴՓ			Պոլիո			Կարմ-րուկ	Բո-լո-րը ¹	Երեխաների թվաքանակը (մարդ)
		1	2	3+	1	2	3+			
Երեխայի սեռը										
Արական	95.2	98.9	96.2	94.8	99.3	98.0	96.6	74.8	71.5	169
Իգական	97.3	98.8	98.8	95.6	100.0	100.0	99.0	84.6	81.9	114
Բնակավայրը										
Քաղաքային	97.4	98.4	96.1	93.6	99.6	98.8	98.0	81.7	78.7	157
Գյուղական	94.4	99.4	98.7	96.9	99.6	98.9	97.1	75.1	71.9	126
Կրթությունը										
Տարրական/միջին	(97.0)	(100.0)	(98.7)	(98.7)	(100.0)	(100.0)	(100.0)	(90.8)	(87.8)	20
Միջնակարգ	96.6	99.0	96.8	93.4	99.5	98.2	97.1	81.6	78.9	107
Միջնակարգ-մասնագիտական	95.7	98.5	96.8	94.5	99.5	98.7	96.5	71.2	69.1	109
Բարձրագույն	(95.1)	(98.8)	(98.8)	(98.8)	(100.0)	(100.0)	(100.0)	(84.8)	(78.7)	47
Ընդամենը	96.0	98.8	97.3	95.1	99.6	98.8	97.6	78.8	75.7	283

Նշում. Այս աղյուսակի տվյալները հիմնված են իմունիզացիայի անձնագիր ունեցող 93% երեխաների տվյալների վրա, որոնց 98% ստացվել է բուժաստատություններից: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

¹ Երեխաներ, որոնք ստացել են բոլոր պատվաստումները, այսինքն նրանք, ովքեր ստացել են ԲՑԺ, կարմրուկ, ԱԿԴՓ-ի 3 բաժին և պոլիո (բացառում է ծննդյան ժամանակ ստացած պոլիոյի պատվաստումը):

Ընդգրկումը ավելի ցածր էր ԱԿԴՓ2-ի և 3-ի (համապատասխանաբար 88% և 76%), ինչպես նաև Պոլիոմիելիտ3-ի (83%) համար: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր պատվաստման առումով ամենափոքր տարիքային խմբի երեխաների (12-23 ամսական) համար այս ցուցանիշը նշանակալիորեն ավելի բարձր է ամենամեծ տարիքային խմբի (48-59 ամսական) նույն ցուցանիշից: Բացի այդ, բոլոր նշված պատվաստումներով ընդգրկումը ամենափոքր երեխաների համար 79% է, իսկ ամենամեծերի համար՝ 68%: Տվյալները ցույց են տալիս, որ վերջին հինգ տարիներին զգալի առաջընթաց է եղել պատվաստումներով ժամանակին ընդգրկման մեջ:

Աղյուսակ 10.11 Պատվաստումները կյանքի առաջին տարում

Իմունիզացիայի անձնագիր ունեցող 12-29 ամսական երեխաների տոկոսային բաշխումը, ովքեր ստացել են համապատասխան պատվաստումներ կյանքի առաջին տարում ըստ հարցման պահին երեխաների տարիքի, Հայաստան 2000թ. (%)


Հարցման պահին երեխայի տարիքը ամիսներով	Երեխաների տարիքը, ովքեր ստացել են									
	ԲՑԺ	ԱԿԴՓ			Պոլիո			Բոլոր ¹	Ոչ մի պատվաստում	Երեխաների թվաքանակը (մարդ)
		1	2	3+	1	2	3+			
12-23 ամսական	94.9	97.8	93.4	83.6	99.2	96.2	90.9	78.9	0.0	283
24-35 ամսական	92.4	94.4	91.3	77.6	96.5	95.2	85.4	72.4	1.3	264
36-47 ամսական	90.3	90.8	84.4	68.2	94.3	91.9	76.9	62.0	2.7	322
48-59 ամսական	91.2	91.7	85.5	73.9	95.2	92.2	79.8	67.6	1.4	340
Ընդամենը	92.1	93.5	88.3	75.5	96.2	93.7	82.8	69.8	1.4	1,209

Նշում. Այս աղյուսակի տվյալները հիմնված են իմունիզացիայի անձնագիր ունեցող 93% երեխաների տվյալների վրա, որոնց 98% ստացվել է բուժաստատություններից:

¹ Երեխաներ, որոնք ստացել են բոլոր պատվաստումները, այսինքն նրանք, ովքեր ստացել են ԲՑԺ, կարմրուկ, ԱԿԴՓ-ի 3 բաժին և պոլիո (բացառում է ծննդյան ժամանակ ստացած պոլիոյի պատվաստումը): Կարմրուկի վերաբերյալ տվյալներ չկան, քանի որ կարմրուկի պատվաստումները սովորաբար արվում են 12 ամսականից հետո:

Գծապատկեր 10.2-ը ներկայացնում է 24-35 ամսական երեխաների համար կարմրուկի դեմ պատվաստումներով ընդգրկումը՝ ըստ պատվաստման ժամանակի: Տվյալները ցույց են տալիս, որ 14 ամսական երեխաների շուրջ 2/3-ը ստացել է կարմրուկի պատվաստում: 17 ամսական երեխաների 82%-ը և 21 ամսական 10 երեխաներից առնվազն 9-ը (90%) պատվաստվել են կարմրուկի դեմ:

Գծապատկեր 10.2 Կարմրուկի պատվաստման ընդգրկվածությունը 24-39 ամսական երեխաների մոտ



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

10.7. Սուր շնչառական ինֆեկցիաներ և տենդ

Հայաստանում մանկական մահերի 1/4-ը կազմում են սուր շնչառական ինֆեկցիաներից (ՍՇԻ) (ՀՀ ԱՆ-2000թ.) մահերը:

Ժամանակին ախտորոշումը և հակաբիոտիկներով ճիշտ բուժումը կարող է կանխարգելել սուր շնչառական ինֆեկցիաներից մահացության զգալի մասը: ՀԺԱ հետազոտությանը ՍՇԻ տարածվածությունը գնահատվել է մայրերին հարցնելով, թե արդյոք հետազոտությանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում նրանց մինչև 5 տարեկան երեխաները հիվանդ են եղել հազով՝ զուգորդված կարճ և արագ շնչառությամբ: Նշված ախտանիշները համապատասխանում են ՍՇԻ-ի ախտանիշներին: Անհրաժեշտ է նշել, որ հիվանդացության վերաբերյալ հավաքագրված տվյալները սուբյեկտիվ են, քանզի դրանք հիմնված են հիվանդության մոր անձնական գնահատումների վրա և չեն գնահատվել պրոֆեսիոնալ բուժաշխատողի կողմից: Ավելին, ՍՇԻ տարածվածությունը սուբյեկտիվ է նաև սեզոնայնության առումով՝ հետազոտության դաշտային աշխատանքները անց են կացվել հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, երբ հիվանդացությունը բարձր է:

Աղյուսակ 10.12 ցույց է տալիս, որ հետազոտությանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում երեխաների 11 տոկոսը ունեցել են ՍՇԻ ախտանիշներ, իսկ 17 տոկոսը՝ տենդ: Ըստ հիմնական բնութագրիչների այստեղ տարբերությունները էական չեն, բացառությամբ այն, որ ամենափոքր երեխաների մոտ ավելի քիչ էին այս ախտանիշները (Գծապատկեր 10.3): Երեխաների, ովքեր ունեցել են ՍՇԻ ախտանիշներ կամ տենդ, միայն մեկ քառորդն է ստացել բուժօգնություն բուժօգնություն կամ բուժաշխատողի կողմից: Աղջիկ երեխաները, գյուղական բնակավայրերում ապրող, ինչպես նաև բարձր կրթական մակարդակ ունեցող մայրերի երեխաները ավելի շատ են հաճախել բուժօգնություններ քան մնացածները:

Աղյուսակ 10.12 ՍՇԻ-ի և/կամ տենդի ախտանիշների տարածվածությունն ու բուժումը

Մինչև 5 տարեկան երեխաների տոկոսային բաշխումը, ովքեր ունեցել են հազ` արագացած շնչառությունով (ՍՇԻ-ի ախտանիշներ), ովքեր հարցմանը նախորդող 2 շաբաթվա ընթացքում ունեցել են տենդ և ՍՇԻ-ի և/կամ տենդի ախտանիշներ, որոնց բուժումն իրականացվել է բուժաստատությունում կամ բուժաշխատողի կողմից, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)


Հիմնական բնութագրիչներ	ՍՇԻ և/կամ տենդի ախտանիշ-տարածվածությունը		ՍՇԻ-ի և/կամ տենդի բուժումը		
	ՍՇԻ ախտանիշների տոկոսը	Տենդ ունեցող երեխաների տոկոսը	Թվաքանակը	Բժշկի դիմածների տոկոսը ¹	Թվաքանակը
Երեխայի տարիքն ամիսներով					
<6	6.4	2.8	149	*	12
6-11	10.7	17.8	151	(41.1)	34
12-23	10.0	18.3	300	22.9	75
24-35	14.4	21.7	281	23.4	81
36-47	13.6	17.9	340	18.2	81
48-59	10.7	14.6	375	26.2	76
Երեխայի սեռը					
Արական	11.2	16.0	910	20.6	200
Իգական	11.8	17.0	685	29.7	158
Բնակավայրը					
Քաղաքային	11.5	18.6	819	29.0	195
Գյուղական	11.4	14.2	777	19.4	164
Մոր կրթությունը					
Տարրական/միջին	13.1	15.1	146	(7.0)	32
Միջնակարգ	11.2	16.4	639	27.1	141
Միջնակարգ-մասնագիտական	12.9	16.4	530	23.6	128
Բարձրագույն	8.3	17.4	280	31.0	57
Ընդամենը	11.4	16.5	1596	24.6	358

ՍՇԻ. Սուր շնչառական ինֆեկցիա

¹ Բացառությամբ դեղատու, խանութ և ավանդական բուժող

Նշում. Փակագծերում բերված քվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը ցույց է տալիս, որ քվերը հիմնված է ավելի քիչ քան 25 չկշռված դեպքերի վրա և սղվել է:

Գծապատկեր 10.3 Հարցմանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում ՍՇԻ-ի, տենդի և փորլուծության տարածվածությունը



10.8 Ձեռքերի լվացման միջոցների առկայությունը տնային տնտեսությունում

Փորլուծության և ձեռքերի լվացման միջև կապը վաղուց հաստատված փաստ է: Ձեռքերը լվանալու հաճախականության աճը, ինչպես նաև դրա համար անհրաժեշտ այնպիսի միջոցների, ինչպիսիք են օճառը կամ մաշկի մաքրման այլ միջոցները և լվացարանը, որակի բարելավումը զգալիորեն նվազեցնում են փորլուծության դեպքերը փոքր երեխաների մոտ: Աղյուսակ 10.13 ցույց է տալիս տնային տնտեսությունների տոկոսային բաշխվածությունն ըստ հարցազրուցավարի կողմից դիտարկված ձեռքերը լվանալու հարմարությունների տեսակի: Ընդհանուր առմամբ, կացարանների 62 տոկոսն ունեցել է ձեռքերը լվանալու բոլոր երեք միջոցները: Խողովակաշարային ջրամատակարարմամբ և կացարանների ներսում ջրով ապահովված տնային տնտեսություններում ավելի մեծ է ձեռքերը լվանալու բոլոր երեք միջոցների առկայության հավանականությունը: Այս միջոցների մատչելիությունը ամենաբարձրն է Երևանում՝ (87%) և ամենացածրը՝ Գեղարքունիքում (25%): Մեծ տարբերություն է նկատվում նաև քաղաք/գյուղ կտրվածքով (81 տոկոս 32 տոկոսի դիմաց): Ընդհանուր առմամբ, տնային տնտեսությունների մեծամասնությունը ունի ջուր (88 տոկոս) և լվացման նյութեր, ինչպիսին է օճառը (90 տոկոս), սակայն միայն տնային տնտեսությունների և կացարանների ավելի քիչ, քան երկու երրորդն ունի լվացարան:

Աղյուսակ 10.13 Ձեռքեր լվանալու միջոցները տնային տնտեսություններում

Տնային տնտեսությունների տոկոսային բաշխումը, որտեղ առկա են ձեռքեր լվանալու միջոցներ կացարանում/բակում/հողատարածքում, ըստ բնակավայրի, մարզի, ջրամատակարարման աղբյուրի, ջրի աղբյուրին հասնելու համար անհրաժեշտ ժամանակի, և տնային տնտեսությունում հարցմանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում փորլուծություն ունեցած երեխայի առկայության, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	(%,%)				
	Ձուր	Օճառ կամ այլ մաքրող նյութեր	Լվացարան	Բոլոր երեք միջոցները ¹	Տնային տնտեսությունների թիվը
Բնակավայրը					
Քաղաքային	95.9	95.2	82.8	80.9	3633
Գյուղական	74.5	81.7	33.2	31.6	2347
Սարգը					
Երևան	98.4	96.9	88.1	87.0	1946
Արագածոտն	61.9	95.7	29.1	27.2	248
Արարատ	84.7	96.9	56.9	56.1	580
Արմավիր	81.3	90.4	49.8	47.9	496
Գեղարքունիք	69.2	66.7	26.2	24.5	507
Լոռի	81.4	74.3	39.4	38.7	519
Կոտայք	96.4	82.3	86.7	77.1	413
Շիրակ	79.7	89.8	57.4	56.5	602
Սյունիք	98.2	99.1	79.3	78.9	258
Վայոց ձոր	82.7	83.4	49.5	46.8	111
Տավուշ	90.8	96.5	41.1	39.3	300
Ջրի աղբյուրը					
Ջրմուղ	90.6	91.6	67.3	65.5	5488
Բնական աղբյուր	49.4	71.3	18.3	16.4	347
Բերովի ջուր	63.5	87.2	24.5	22.8	68
Այլ	58.8	53.6	16.0	14.7	77
Ջրին հասնելու ժամանակը					
Կացարանում	91.4	92.5	69.2	67.3	5262
<10 րոպե	67.2	85.0	25.8	24.1	70
10+ րոպե	57.6	69.0	19.8	18.9	643
Փորլուծություն ունեցող երեխա					
Այո	85.9	92.8	64.9	62.7	116
Ոչ	87.5	89.8	63.3	61.5	5864
Ընդամենը	87.5	89.9	63.3	61.5	5980

Նշում. Ընդամենը ներառում է 5 դեպք, երբ ջրին հասնելու ժամանակի վերաբերյալ տվյալներ չկան:
¹ Ձուր, օճառ կամ այլ լվացող նյութ, լվացարան:

10.9. Փորլուծություն

Սուր փորլուծությամբ պայմանավորված ջրազրկումը երեխաների հիվանդացության, ինչպես նաև մահացության հիմնական պատճառներից մեկն է: Հայաստանում մանկական մահերի մեկ հինգորորդը փորլուծությունից է (ՀՀ ԱՆ 2000թ.): Աղյուսակ 10.14-ը ցույց է տալիս, որ մինչև հինգ տարեկան երեխաների 8 տոկոսը փորլուծություն է ունեցել հետազոտությանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում: Փորլուծության տարիքային բաշխվածությունը ցույց է տալիս բարձր փորլուծության մակարդակ 6-ից 11 ամսական տարիքում (այն տարիքը, երբ երեխան սկսում է չորեքթաթ սողալ և շրջապատի նկատմամբ ցուցաբերել հետաքրքրություն, կեղտոտել ձեռքերը ու իրերը բերանը տանել): Ցածր կրթական մակարդակ ունեցող մայրերի երեխաները ավելի հաճախ են տառապում փորլուծությամբ: Հիվանդացությունը ըստ մարզերի բաշխվում է հետևյալ կերպ. ամենաբարձր մակարդակը Արարատում (13 տոկոս) և ամենացածրը՝ Երևանում ու Տավուշում (4 տոկոս):

Աղյուսակ 10.14 Փորլուծության տարածվածությունը

Մինչև հինգ տարեկան երեխաների տոկոսային բաշխումը, ովքեր ունեցել են փորլուծություն հարցմանը նախորդող 2 շաբաթվա ընթացքում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Փորլուծ. հարցմանը նախորդող 2 շաբաթվա ընթացքում	Երեխաների թվաքանակը (մարդ)
Երեխայի տարիքն ամիսներով		
<6	9.9	149
6-11	14.1	151
12-23	10.6	300
24-35	7.1	281
36-47	5.9	340
48-59	4.5	375
Երեխայի սեռը		
Արական	8.6	910
Իգական	6.8	685
Բնակավայրը		
Քաղաքային	7.8	819
Գյուղական	7.8	777
Մարզը		
Երևան	4.3	451
Արագածոտն	10.3	90
Արարատ	12.5	200
Արմավիր	9.9	159
Գեղարքունիք	9.4	168
Լոռի	10.7	134
Կոտայք	7.9	101
Շիրակ	7.6	114
Սյունիք	5.4	61
Վայոց ձոր	6.9	32
Տավուշ	3.9	85
Մոր կրթությունը		
Տարրական/միջին	11.7	146
Միջնակարգ	7.3	639
Միջնակարգ-մասնագիտական	8.4	530
Բարձրագույն	5.8	280
Ընդամենը	7.8	1596

Երեխային տրվող հեղուկների քանակի ավելացումը պարզ և արդյունավետ միջոց է հիվանդության ծանր (կյանքին վտանգ սպառնող) ընթացքի կանխարգելման համար: Ռեհիդրատացիոն թերապիան ներառում է օրալ ղեհիդրատացիոն աղերի լուծույթների օգտագործում (ՕՌԱ): Խորհուրդ է տրվում նաև չնվազեցնել փորլուծությամբ տառապող երեխայի սննդի օրվա ռացիոնը:

Օրալ ղեհիդրատացիոն աղերի վերաբերյալ բնակչության տեղեկացվածության մակարդակը պարզելու նպատակով ռեսպոնդենտները հարցվել են, թե արդյո՞ք երբևիցե լսել են ՕՌԱ-ի մասին: Աղյուսակ 10.15-ը ցույց է տալիս, որ մայրերի մեծամասնությունը (75%) գիտի ՕՌԱ-ի մասին: Երիտասարդ և գյուղական բնակավայրերում ապրող մայրերը ավելի քիչ գիտեն դրանց մասին քան քաղաքային բնակավայրերում ապրող մայրերը: ՕՌԱ վերաբերյալ իմացությունը բաշխվում է հետևյալ կերպ. ամենաբարձրը Երևանում (82 տոկոս), ամենացածրը Սյունիքում (52 տոկոս) և Վայոց Ձորում (55 տոկոս): Ընդհանուր առմամբ, որքան բարձր է մայրերի կրթական մակարդակը, այնքան տեղեկացված են նրանք օրալ ղեհիդրատացիոն աղերի մասին:

Աղյուսակ 10.15 ՕՌԱ փաթեթների մասին իմացությունը

Հարցմանը նախորդող 5 տարվա ընթացքում ծննդաբերած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր գիտեն երեխաների փորլուծության բուժման համար նախատեսված ՕՌԱ փաթեթների մասին, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Մայրերի տոկոսը, ովքեր գիտեն ՕՌԱ-ի մասին	Մայրերի թվաքանակը (մարդ)
Տարիքը		
15-19	56.5	51
20-24	70.2	433
25-29	78.2	413
30-34	75.0	204
35-49	73.4	147
Բնակավայրը		
Քաղաքային	78.8	664
Գյուղական	67.2	583
Մարզը		
Երևան	81.6	374
Արագածոտն	65.8	68
Արարատ	75.8	150
Արմավիր	73.9	129
Գեղարքունիք	71.1	120
Լոռի	69.8	103
Կոտայք	63.2	77
Շիրակ	71.4	87
Սյունիք	52.2	49
Վայոց ձոր	55.4	25
Տավուշ	75.6	67
Կրթությունը		
Տարրական/միջին	55.9	106
Միջնակարգ	69.9	490
Միջնակարգ-մասնագիտական	75.9	430
Բարձրագույն	84.9	222
Ընդամենը	73.4	1248

ՕՌԱ՝ Օռալ ռեհիդրատացիոն աղեր

Աղյուսակ 10.16-ը թույլ է տալիս հասկանալ ՕՌԱ օգտագործումը փորլուծության բուժման այլ մեթոդների հետ մեկտեղ: Ընդհանուր առմամբ, մայրերի 33 տոկոսը ՕՌԱ են տվել իրենց փորլուծությամբ տառապող երեխաներին: Հետաքրքիր է այն փաստը, որ գյուղական բնակավայրերում ապրող մայրերը շուրջ 1/3-ով ավելի հաճախ են տվել իրենց երեխաներին ՕՌԱ քան քաղաքային բնակավայրերում ապրող մայրերը, չնայած այն հանգամանքին, որ ՕՌԱ վերաբերյալ տեղեկացվածության առումով արձանագրվել է հակառակ տեղեկաց: Մյուս կողմից, քաղաքային բնակավայրերում ապրող մայրերը 2/3 -ով ավելի հաճախ են իրենց երեխաներին տալիս այլ տարբեր հեղուկներ: Ընդհանուր առմամբ մայրերի 60 տոկոսը իրենց հիվանդ երեխաներին տվել են կամ այլ հեղուկներ, կամ ՕՌԱ: Երեխաների 27 տոկոսը փորլուծության դեպքում տեղափոխվել են բուժօգնություններ: Բուժման այլ միջոցներից ամենատարածվածներն են եղել հաբերը և օշարակը (30 տոկոս): Մտահոգիչ է այն փաստը, որ փորլուծությամբ տառապող բոլոր երեխաների 25 տոկոսը չի տեղափոխվել որևէ բուժօգնության, չի ստացել ադեկվատ օռալ ռեհիդրատացիոն բուժում, ոչ էլ բուժման մեկ այլ մեթոդ:

Աղյուսակ 10.16 Փորլուծության բուժումը

Մինչև 5 տարեկան երեխաների տոկոսային բաշխումը, ովքեր ունեցել են փորլուծություն հարցմանը նախորդող 2 շաբաթվա ընթացքում և դիմել են բժշկի, ովքեր ստացել են օռալ ռեհիդրատացիոն թերապիա (ՕՌԹ), և ովքեր ստացել են այլ բուժում, ըստ բնակավայրի, Հայաստան 2000թ.

(%,%)

Բնակավայրը	Բժշկի կամ բուժ հաստ. դիմածների տոկոսը ¹	Օռալ ռեհիդրատացիոն թերապիա			Այլ բուժում				Փորլուծ. ունեցող երեխաների թվաքանակը (մարդ)	
		ՕՌԱ փաթեթներ	Հեղուկների ավելացում	ՕՌԱ կամ շատ հեղուկներ	Հաբ կամ օշարակ	Ներարկուն	Ներերակային լուծույթ	Տնային բուժում/այլ		Ոչ մի բուժում
Քաղաքային	25.2	28.2	63.7	65.3	29.5	1.9	1.9	19.0	20.1	64
Գյուղական	27.0	38.0	38.5	53.9	29.8	2.3	1.9	10.1	29.1	61
Ընդամենը	26.1	33.0	51.5	59.7	29.6	2.1	1.9	14.7	24.5	125

Նշում. Օռալ ռեհիդրատացիոն թերապիան ներառում է օռալ ռեհիդրատացիոն աղերից (ՕՌԱ) պատրաստված լուծույթներ կամ հեղուկների ավելացում:

Բացի այն հարցից, թե ինչ օգնություն է ցույց տրվել փորլուծությամբ տառապող երեխային, մայրերին հատուկ հարցվել է նաև, թե ինչպես են կերակրել երեխային լուծի ժամանակ՝ տվել են արդյոք երեխային սովորականից քիչ կամ ավելի շատ սնունդ ու հեղուկներ: Աղյուսակ 10.17-ը ցույց է տալիս մինչև հինգ տարեկան այն երեխաների սնուցման գործելակերպը, որոնք տառապել են փորլուծությամբ հետազոտությանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում: Տվյալները ցույց են տալիս, որ հիվանդ երեխաների կեսը (52 տոկոս) ստացել է ավելի շատ հեղուկ քան սովորաբար: Զգալի տարբերություն կա ըստ բնակության վայրի. քաղաքային բնակավայրերում ապրող մայրերը (64 տոկոս) ավելի շատ հեղուկ են տվել երեխաներին, քան գյուղական բնակավայրերում ապրող մայրերը (39 տոկոս): Ավելի կարևոր հանգամանք է նաև այն, որ գյուղական բնակավայրերում ապրող մայրերի մեկ քառորդը երեխայի փորլուծության ժամանակ նվազեցրել է տրվող հեղուկների քանակը: Երեխաների 46 տոկոսը ստացել է ավելի քիչ սնունդ քան սովորաբար, ինչը կարող է երեխայի մոտ բերել հիվանդության սրացում: Այս գործելակերպը ավելի տարածված է եղել քաղաքային (54 տոկոս), քան գյուղական (37 տոկոս) բնակավայրերում:

Աղյուսակ 10.17 Կերակրումը փորլուծության ժամանակ

Մինչև 5 տարեկան երեխաների տոկոսային բաշխումը, ովքեր ունեցել են փորլուծություն հարցմանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում, ըստ նրանց տրված հեղուկների և սննդի քանակի սովորաբար տրվող քանակի համեմատությամբ, ըստ բնակավայրի, Հայաստան 2000թ.

Հեղուկ/սնունդ	Բնակավայրը		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
Տրված հեղուկի քանակը			
Սովորականի նման	19.5	18.9	19.2
Ավելի շատ	63.7	38.5	51.5
Փոքր ինչ քիչ	2.1	14.9	8.3
Շատ քիչ	7.6	5.5	6.6
Չի տրվել	0.9	3.9	2.3
Զգիտի/պատասխան չկա	6.2	18.2	12.0
Տրված սննդի քանակը			
Սովորականի նման	34.2	39.5	36.7
Ավելի շատ	1.2	7.8	4.4
Փոքր ինչ քիչ	34.1	30.8	32.5
Շատ քիչ	19.7	6.6	13.4
Զգիտի/պատասխան չկա	10.8	15.3	13.0
Ընդամենը	100.0	100.0	100.0
Քանակը	64	61	125

Կ. Սարիբեկյան, Օ. Ինժիկյան, Ռ. Աբրահամյան, Գ. Ավագյան

Այս գլուխն ընդգրկում է երկու թեմաներ՝ նորածինների կերակրման փորձը և կանանց ու հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում ծնված երեխաների սնուցման կարգավիճակը: Նորածինների կերակրման փորձը դիտարկվում է կրծքով կերակրման, հավելյալ սննդի տրման և հավելյալ սնուցման համար շնչ օգտագործման տեսանկյունից: Սնուցման կարգավիճակը գնահատվում է կանանց և երեխաների հասակի ու քաշի տվյալների և սակավարյունության առկայության հիման վրա:

11.1 Կրծքով կերակրումը և հավելյալ սնունդը

Նորածինների կրծքով կերակրումը կարևոր ազդեցություն ունի երեխայի առողջության վրա: Կերակրելու փորձը որոշիչ գործոն է հանդիսանում փոքր երեխայի սնուցման կարգավիճակի համար, որի ցածր մակարդակը երեխաների մոտ բերում է հիվանդացության բարձր ռիսկի և մահացության աճի: Կրծքով կերակրելու փորձը ազդում է նաև կնոջ ծնելիության վրա՝ երկարատև և հաճախակի կրծքով կերակրումը նպաստում է հետծննդյան լակտացիոն ամենորեայի ժամանակահատվածի երկարացմանը և, հետևաբար, ծնունդների ավելի երկար միջակայքին ու հղիության կանխարգելմանը:

Նորածինների օպտիմալ /ամենաբարենպաստ/ սնուցումը ԱՀԿ-ի և UNICEF-ի կողմից սահմանված է հետևյալ բնորոշումներով (WHO/UNICEF, 1990; WHO, 1994):

- Կրծքով կերակրման նախաձեռնումն ծնվելուց հետո՝ 30-60 րոպեի ընթացքում; հաճախակի, ըստ պահանջի կերակրում (մերառյալ գիշերային);
- Բացառապես կրծքով կերակրում (սահմանվում է որպես միայն կրծքի կաթի և ոչ մի այլ սննդի կամ հեղուկների օգտագործում մինչև նորածնի վեց ամսական դառնալը);
- Հավելյալ սննդով (հիգիենիկ պատրաստված, համապատասխան տեղական սնունդ) կերակրումը կրծքով կերակրման ընթացքում մոտ վեց ամսական հասակում;
- Կրծքով ավելի հաճախակի կերակրում հիվանդության և ապաքինման ընթացքում; շարունակական կրծքով կերակրում կյանքի երկրորդ տարվա ընթացքում և ավելի:

Կրծքով կերակրման կարևորությունն ու անհրաժեշտությունը հայտնի է Հայաստանում: 1993թ-ին ՀՀ առողջապահության նախարարությունն ընդունել է կրծքով կերակրման խրախուսման պետական ծրագիր, ըստ որի խրախուսվում է երեխաների բացառապես կրծքով կերակրումը մինչև 6 ամսականը և կրծքով շարունակական կերակրումը մինչև 2 տարեկանը՝ հավելյալ սննդի հետ մեկտեղ: Ծրագիրը ենթադրում էր նաև կազմակերպական և բժշկական գործելակերպի փոփոխություններ ծննդատներում, որի արդյունքում ծննդատունը ստանում է “Մանկանը բարեկամ ծննդատուն” (BFH) կոչում: Փոփոխությունները ծննդատներում ներառում են մոր և մանկան շփում ծնվելուց անմիջապես հետո, կրծքով կերակրման վաղ նախաձեռնում (հետծննդյան առաջին 30-60 րոպեների ընթացքում), մոր և մանկան համատեղ տեղակայում, ըստ պահանջի կերակրում և այլն:

Հետազոտության ժամանակ մինչև 5 տարեկան (հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում ծնված) յուրաքանչյուր երեխայի համար մորը տրվել է հարց երեխային կրծքով կերակրելու վերաբերյալ, և եթե այո, ապա ծննդաբերելուց որքան ժամանակ անց է նա սկսել կերակրելը: Կանանց նաև հարցրել են, թե արդյոք նրանք դեռևս շարունակում են կրծքով կերակրել իրենց երեխաներին և ինչ տարիքից են սկսել տալ հավելյալ սնունդ: Հարցման պահին չկերակրվող երեխաների համար հարցվել է այն տարիքը, երբ նրանք դադարել են կրծքով կերակրվել:

Կրճքով կերակրման վաղ նախաձեռնումը

Կրճքով կերակրման վաղ նախաձեռնումը կարևոր է մի շարք պատճառներով: Նախ դա նպաստում է կրճքով կերակրման ճիշտ տեխնիկայի հաստատմանը և կաթնարտադրության կայացմանը: Վաղ կերակրումը նպաստավոր է նաև մայրերի համար, քանզի այն խթանում է կրճքի կաթի արտադրությունը, օգնում արգանդի կրճատմանը՝ նվազեցնելով հետծննդյան արյան կորուստը: Կրճքի առաջնային կաթը պարունակում է կաթնախեժ, որն ունի բարձր սննդարարություն և հակամարմիններ: Այն երեխայի առաջին իմունիզացիան է, որը պաշտպանում է նորածինն հիվանդություններից: Կրճքով կերակրման վաղ նախաձեռնումը նաև բարենպաստ հոգեբանական կապ է ստեղծում մոր և մանկան միջև:

Աղյուսակ 11.1-ը ցույց է տալիս, որ հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում ծնված երեխաների 88 տոկոսը կերակրվել է կրճքի կաթով: Ըստ հիմնական բնութագրիչների էական տարբերություններ չկան, բացառությամբ ըստ մարզերի, որտեղ երբևէ կրճքով կերակրված երեխաների տեսակարար կշիռը տատանվում է 96 տոկոսից (Լոռի) մինչև 80 տոկոս (Շիրակ): Ընդհանուր առմամբ, երեխաների 24 տոկոսը կրճքով կերակրվել է ծնվելուց հետո մեկ ժամվա ընթացքում իսկ 78 տոկոսը՝ 24 ժամվա ընթացքում: Քաղաքային բնակավայրերում այս ցուցանիշն ավելի բարվոք է քան գյուղական բնակավայրերում (27%՝ 21%-ի դիմաց): Զգալի տարբերություն կա նաև ըստ մարզերի: Գեղարքունիքի մարզում երեխաների ավելի քան մեկ երրորդը (35%) սկսել կրճքով կերակրվել ծնվելուց հետո մեկ ժամվա ընթացքում՝ ի տարբերություն Վայոց ձորի մարզի, որտեղ այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 7 տոկոս:

Նախալակտալ կերակրումը երեխային այլ հեղուկներ կամ կաթնախառնուրդներ տալու գործելակերպն է՝ երեխայի ծնվելուց հետո մինչև մոր մոտ կաթնարտադրության կայանալը: Ընդհանուր առմամբ, նորածինների 14%-ին տրվել է նախալակտալ սնունդ: Այս գործելակերպը տարբեր է ըստ մարզերի՝ ամենաբարձրը՝ 27% (Վայոց ձոր), և ամենացածրը՝ 3% (Արագածոտն): Զնայած քաղաքային բնակավայրերում ավելի շատ երեխաներ են կրճքով կերակրվել ծնվելուց հետո մեկ ժամվա ընթացքում, նրանց ավելի շատ է տրվել նախալակտալ սնունդ, քան գյուղական բնակավայրերում (17%՝ 10%-ի դիմաց):

Կրճքով կերակրումն ըստ տարիքի

Բացառապես կրճքով կերակրումը սահմանվում է՝ որպես նորածինն անհրաժեշտ սննդի կամ հեղուկի միակ աղբյուր: Այն համապատասխանում է երեխայի սնուցման պահանջներին (Cohen et al., 1994) և պաշտպանում է նրան հիվանդություններից (Huffman and Combest, 1990) կյանքի առաջին վեց ամիսների ընթացքում: Այն երեխաները, որոնք հարցմանը նախորդող 24 ժամերի ընթացքում կերակրվել են միայն կրճքով, սահմանվել են, որպես *բացառապես կրճքով կերակրվողներ*, իսկ այն երեխաները, որոնք կրճքի կաթի հետ մեկտեղ ստացել են միայն սովորական ջուր, սահմանվել են որպես *հիմնականում զերակշռող* կրճքով կերակրվողներ: Բացառապես կրճքով կերակրումը խորհուրդ է տրվում երեխայի կյանքի առաջին վեց ամիսների ընթացքում, քանի որ կրճքի կաթն անարատ է և պարունակում է երեխայի կյանքի առաջին ամիսներին անհրաժեշտ սննդային բոլոր բաղադրամասերը: Բացի այդ, կրճքի կաթում պարունակվող մոր հակամարմինները ապահովում են երեխայի անընկալունակությունը (իմունիտետ) հիվանդությունների նկատմամբ:

Վաղ հավելյալ կերակրումը չի խրախուսվում մի քանի պատճառներով: Առաջին հերթին այն նորածինն չի պաշտպանում ախտածին միկրոբներից և բարձացնում վարակի ռիսկը՝ հատկապես փորլուծության: Երկրորդ հերթին, այն նվազեցնում է նորածնի կողմից կրճքի կաթի սպառումը (հետևաբար և պահանջարկը), որի արդյունքում նվազում է նաև առաջարկը՝ կրճքի կաթի արտադրությունը: Երրորդը, ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում հավելյալ սնունդը սնուցման տեսակետից հաճախ լինում է վատ որակի:

Կրճքով կերակրման վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար մայրերին հարցրել են հարցմանը նախորդող 24 ժամերի ընթացքում իրենց մինչև հինգ տարեկան երեխաների կերակրման կարգավիճակի մասին, ինչպես նաև տրվել են հարցեր այդ ժամանակահատվածում այլ հեղուկների և կոշտ սննդի գործածման վերաբերյալ (եթե այդպիսիք եղել են):

Թեև կրճքով կերակրման վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է մինչև հինգ տարեկան բոլոր երեխաների համար, սակայն կրճքով կերակրման վերաբերյալ աղյուսակները ներառում են միայն մինչև երեք տարեկան երեխաների տվյալները, քանի որ երեխաների մեծ մասը կրճքից կտրվում են մինչև երեք տարեկանը:

Աղյուսակ 11.1 Կրճրով կերակրման սկիզբ

Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում ծնված երեխաների տոկոսային բաշխումը, ովքեր երբևէ կերակրվել են կրճրով, և երբևէ կրճրով կերակրվածների տոկոսային բաշխումը, ովքեր սկսել են կերակրվել կրճրով ծնվելուց հետո մեկ ժամվա ու մեկ օրվա ընթացքում, իֆչպես նաև նախալակտալ սնունդ ստացածների տոկոսային բաշխումը, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Բոլոր երեխաներից		Երբևէ կրճրով կերակրվ. երեխաներից, այն երեխ. տոկ. բաշխումը, ովքեր սկսել են կերակրվել կրճրով.		Նախալակտալ սնունդ ստացած երեխաների տոկոս. բաշխումը ²	Երեխաների թվաքանակը (մարդ)
	Երբևէ կրճրով կերակրվածների տոկոս.բաշխումը	Երեխաների թվաքանակը (մարդ)	Ծնվելուց հետո մեկ ժամվա ընթացքում	Ծնվելուց հետո մեկ օրվա ընթացքում ¹		
Երեխայի սեռը						
Արական	88.9	937	24.5	79.0	13.8	834
Իգական	87.1	719	23.7	75.4	13.8	626
Բնակավայրը						
Քաղաքային	87.3	838	27.0	77.0	17.1	732
Գյուղական	89.0	819	21.3	78.0	10.4	729
Մարզը						
Երևան	83.5	459	27.2	77.1	20.4	384
Արագածոտն	92.2	96	28.1	81.0	3.3	88
Արարատ	84.6	207	18.8	75.3	14.9	175
Արմավիր	91.8	164	22.2	67.4	13.3	151
Գեղարքունիք	90.8	182	34.7	84.4	6.0	165
Լոռի	95.8	142	29.8	83.3	10.5	136
Կոտայք	93.5	106	17.2	83.9	5.7	99
Շիրակ	79.8	117	20.0	81.3	20.0	93
Սյունիք	88.6	63	11.9	58.4	8.9	55
Վայոց ձոր	93.4	33	7.1	86.6	26.8	31
Տավուշ	93.6	88	17.0	72.1	14.3	82
Մոր կրթությունը						
Տարրական/միջին	84.6	155	27.1	76.6	9.7	131
Միջնակարգ	88.0	669	23.3	78.3	12.6	588
Միջնակարգ-մասնագիտական	89.6	550	21.8	77.2	16.1	493
Բարձրագույն	87.7	283	29.1	76.3	14.2	248
Օգնություն ծննդաբերելիս						
Բուժաշխատող ³	88.0	1604	24.3	77.4	14.1	1412
Այլ	92.3	46	19.4	80.4	3.2	42
Ոչ ոք	*	5	*	*	*	4
Ծննդաբերության վայրը						
Բուժփիմնարկում	88.6	1513	24.5	76.9	14.8	1340
Տանը	83.2	141	20.5	85.0	2.0	117
Ընդամենը	88.1	1657	24.1	77.5	13.8	1460

Նշում. Աղյուսակը հիմնված է հարցման պահին կենդանի և մահացած բոլոր երեխաների թվաքանակի վրա: Ընդամենը ներառում է 2 երեխա, որոնց ծննդաբերության վայրի վերաբերյալ տվյալներ չկան և 2 երեխա, որոնց ծննդաբերության ժամանակ ցուցաբերված օգնության վերաբերյալ տվյալներ չկան: Աստղանիշը ցույց է տալիս, որ թիվը հիմնված է ավելի քիչ քան 25 չկշռված դեպքերի վրա և սղվել է: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

¹ Ներառում է այն երեխաներին, ովքեր սկսել են կերակրվել կրճրով ծնվելուց հետո 1 ժամվա ընթացքում
² Կյանքի առաջին երեք օրերին երեխաներին տրվել է այլ սնունդ, մինչև որ մայրը սկսել է կանոնավոր կրճրով կերակրելը:
³ Բժիշկ, բուժքույր կամ մանկաբարձուհի:

Աղյուսակ 11.2-ը նկարագրում է հայ մայրերի կողմից նորածինների կերակրման փորձը: Մինչև 4 ամսական երեխաների 95%-ը կերակրվում է կրծքով: Բացառապես կրծքով կերակրվում է երեխաների 45%-ը: 14%-ին կրծքի կաթի հետ մեկտեղ տրվում է նաև այլ կաթ, 29%-ին տրվում է նաև ջուր կամ այլ հեղուկներ, իսկ 8%-ին տրվում է նաև կոշտ կամ փափուկ սնունդ: Թեև Հայաստանում երեխաների մեծ մասը մինչև 9 ամսականը կրծքով է կերակրվում, սակայն գրեթե բոլորը կրծքի կաթի հետ մեկտեղ ստանում են նաև հավելյալ սնունդ: 8-ից 9 ամսական երեխաների կեսից ավելին (54%) կերակրվում է կրծքով, 10-11 ամսական երեխաների մոտ այդ ցուցանիշը նվազում է (35%) և 20-23 ամսական երեխաների միայն 12%-ն է շարունակում կերակրվել կրծքով (Գծապատկեր 11.1):

Աղյուսակ 11.2 Կրծքով կերակրման կարգավիճակն ըստ երեխայի տարիքի


Բոլոր երեխաների տոկոսային բաշխումն ըստ կրծքով կերակրման կարգավիճակի, և շշով կերակրվող երեխաների տոկոսային բաշխումն ըստ երեխայի տարիքի (ամիսներով), Հայաստան 2000թ. (%)

Տարիքն ամիսներով	Չի կերակրվում կրծքով ¹ (1)	Բացառապես կրծքով է կերակրվում (2)	Կրծքով կերակրում և				Ընդամենը	Օգտագործում է շիշ	Կենդանի երեխաների թվաքանակը (մարդ)
			Միայն ջուր (3)	Ջրային հիմքով հեղուկներ/ հյութեր (4)	Այլ կաթ (5)	Հավելյալ սնունդ (6)			
<2	(0.0)	(62.5)	(13.5)	(11.9)	(12.1)	(0.0)	(100.0)	(22.5)	36
2-3	7.8	33.8	18.4	12.8	14.5	12.7	100.0	40.5	59
4-5	29.8	4.1	3.7	14.3	16.8	31.3	100.0	58.6	54
6-7	(22.0)	(2.9)	(10.6)	(4.8)	(3.4)	(56.3)	(100.0)	(44.3)	40
8-9	46.1	2.5	0.0	1.0	3.4	47.0	100.0	46.6	57
10-11	65.3	2.1	0.0	0.0	1.0	31.6	100.0	43.1	53
12-15	71.2	0.0	0.0	0.0	0.0	28.8	100.0	46.1	110
16-19	78.3	0.0	0.0	0.0	0.0	21.7	100.0	50.0	90
20-23	87.5	0.0	0.0	0.0	0.0	12.5	100.0	24.7	99
24-35	94.0	0.4	0.0	0.0	0.0	5.6	100.0	17.7	281
<4	4.9	44.6	16.6	12.5	13.6	7.9	100.0	33.7	95
4-ից 5	29.8	4.1	3.7	14.3	16.8	31.3	100.0	58.6	54
6-ից 9	36.2	2.6	4.3	2.6	3.4	50.8	100.0	45.6	97

Նշում. Կրծքով կերակրման կարգավիճակը վերաբերվում է 24 ժամերին (հարցմանը նախորդող օր և գիշեր): Երեխաները, որոնք դասակարգվում են որպես *բացառապես կրծքով* և *միայն ջրով կերակրվողներ*, չեն ստացել ոչ մի հավելյալ սնունդ: (1), (2), (3), (4), (5) և (6) կատեգորիաները հիերարխիկ են և փոխադարձ բացառող ու նրանց տեսակարար կշիռների գումարը կազմում է 100 տոկոս: Հետևաբար, այն երեխան, որը ստանում է կրծքի կաթ ու ջրային հիմքով հեղուկներ և որը չի ստանում հավելյալ սնունդ դասակարգվում է ջրային հիմքով հեղուկ ստացողների կատեգորիայում, նույնիսկ եթե նա ստացել է նաև սովորական ջուր: Եթե երեխան ստացել է հավելյալ սնունդ դասակարգվում է այդ կատեգորիայում, մինչդեռ նա կերակրվել է նաև կրծքով: Շիշ օգտագործողների տոկոսային բաշխումները հիմնված են բոլոր երեխաների վրա: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Ծծակով շշերի օգտագործման ցուցանիշը բավականին բարձր է. մինչև 4 ամսական երեխաների գրեթե մեկ երրորդը (34%) և 1-5 ամսական երեխաների 59%-ը շիշ է օգտագործում: Այս տվյալները ցույց են տալիս, որ այդ ուղղությամբ անհրաժեշտ են բարելավման աշխատանքներ մինչև միջազգային չափորոշիչներին անցնելը (WHO, UNICEF):

Գծապատկեր 11.1 Երեխաների բաշխումն ըստ կրծքով կերակրման կարգավիճակի և տարիքի (ամիսներով)



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Աղյուսակ 11.3-ը ցույց է տալիս, որ կրծքով կերակրման մեղիան տևողությունը 9 ամիս է: Բացառապես կրծքով կերակրման և գերակշռող կրծքով կերակրման (կրծքով կերակրում և սովորական ջուր) տևողությունը այնուամենայնիվ կարճ է (փոքր ինչ ավելի, քան համապատասխանաբար մեկ ամիս և երեք ամիս): Այս թվերը ցույց են տալիս, որ լրիվ կրծքով կերակրման մակարդակը Հայաստանում ցածր է օպտիմալից: Զգալի տարբերություն կա ըստ հիմնական բնութագրիչների: Քաղաքում բնակվող երեխաների կրծքով կերակրման մեղիան տևողությունը 10 ամիս է, իսկ գյուղաբնակ երեխաներինը՝ 8 ամիս: Կրծքով կերակրման տևողությունը տարբերվում է նաև ըստ մարզերի՝ ամենացածրը՝ շուրջ 7 ամիս (Կոտայք և Սյունիք) և ամենաբարձրը՝ շուրջ 11 ամիս (Երևան և Լոռի): Կրծքով կերակրման տևողությունը կախված է նաև մոր կրթական մակարդակից. որքան բարձր է կնոջ կրթական մակարդակը, այնքան ավելի երկար է նա նախընտրում կերակրել իր երեխային: Այսպես՝ տարրական և միջնակարգ կրթություն ունեցող կանանց մոտ կրծքով կերակրման միջին տևողությունը կազմում է 6 ամիս, մինչդեռ բարձրագույն կրթությամբ կանանց մոտ՝ 10 ամիս:

Աղյուսակ 11.4-ը ցույց է տալիս, որ կրծքով կերակրվող բոլոր երեխաների 85 տոկոսը հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում կրծքով կերակրվել են առնվազն վեց անգամ: Ըստ հետազոտության՝ ցերեկային կերակրումների միջին թիվը 5-ն է, իսկ գիշերային կերակրումներինը՝ 3-ը: Արդյունքում ստացված հաճախականությունը՝ 24 ժամվա ընթացքում 8 կերակրում, համարվում է բավարար:

Աղյուսակ 11.3 Կրճքով կերակրման մեղիան տևողությունը

Կրճքով ցանկացած կերակրման, բացառապես կրճքով կերակրման և գերակշռող կրճքով կերակրման մեղիան տևողությունը հարցմանը նախորդող երեք տարիների ընթացքում ծնված երեխաների մոտ ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Կրճքով կերակրման մեղիան տևողությունը (ամիսներով)			
	Կրճքով ցանկացած կերակրում	Բացառապես կրճքով կերակրում	Գերակշռող կրճքով կերակրում ¹	Երեխաների թվաքանակը (մարդ)
Երեխայի սեռը				
Արական	9.1	1.3	3.2	501
Իգական	9.1	1.7	2.9	378
Բնակավայրը				
Քաղաքային	10.1	1.4	3.4	453
Գյուղական	8.2	1.5	2.9	427
Մարզը				
Երևան	10.5	0.7	4.7	252
Արագածոտն	8.5	1.6	2.5	46
Արարատ	8.3	2.2	2.2	114
Արմավիր	9.8	0.8	2.7	79
Գեղարքունիք	9.1	2.5	5.2	103
Լոռի	10.8	1.3	2.2	84
Կոտայք	(6.5)	(1.9)	(2.5)	45
Շիրակ	(8.5)	(1.9)	(2.1)	60
Սյունիք	7.1	1.9	3.4	32
Վայոց ձոր	7.8	0.6	2.2	19
Տավուշ	8.0	1.4	2.4	46
Մոր կրթությունը				
Տարրական/միջին	5.8	0.7	2.2	85
Միջնակարգ	9.5	1.7	3.3	339
Միջնակարգ-մասնագիտական	9.0	1.1	3.9	301
Բարձրագույն	10.3	1.4	2.0	154
Ընդամենը	9.1	1.4	3.1	880
Միջինը բոլոր երեխաների համար	12.0	2.8	4.4	90.8

Նշում. Մեղիանը և միջինը հիմնված են հարցման պահին երեխայի կարգավիճակի վրա: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:
¹Կամ բացառապես կրճքով կերակրվող, կամ կրճքի կաթ ու ջուր, ջրային հիմքով հեղուկ և/կամ միայն հյութ ստացած երեխաներ (բացառում է այլ տեսակի կաթը):

Աղյուսակ 11.4 Կրճքով կերակրման հաճախականությունը

Հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում 6 կամ ավել անգամ կրճքով կերակրվող մինչև 6 ամսական երեխաների տոկոսային բաշխումը և կերակրումների մջջին թջվը (ցերեկային/գիշերային), ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

	Մինչև 6 ամսական երեխաներ ¹			
	Վերջին 24 ժամում 6+ անգամ կրճքով կերակրվածների տոկոսը	Ցերեկային կերակրումների միջին թիվը	Գիշերային կերակրումների միջին թիվը	Երեխաների թվաքանակը (մարդ)
Հիմնական բնութագրիչներ				
Երեխայի սեռը				
Արական	87.1	5.3	3.0	75
Իգական	82.2	4.9	2.9	53
Բնակավայրը				
Քաղաքային	89.0	5.3	2.9	68
Գյուղական	80.6	5.0	3.1	60
Ընդամենը	85.0	5.1	3.0	128

Նշում. Միջինները հիմնված են հարցման պահին երեխայի կարգավիճակի վրա:
¹ Բացառում է երեխաներին, ովքեր կերակրման քանակի վերաբերյալ վավեր պատասխան չունեն:

Հավելյալ սնունդ

Երեխայի նորմալ աճի և զարգացման համար կարևոր է ժամանակին (6 ամսական) հավելյալ սնուցման կազմակերպումը, ինչը պետք է պարունակի երեխայի տարիքին համապատասխանող բազմապիսի սննդատեսակներ: Հետազոտության ժամանակ հարցազրուցավարները թվարկել են հատուկ սննդատեսակների ցանկ և խնդրել մայրերին հայտնել այն օրերի թիվը (հարցմանը նախորդող 7 օրերի ընթացքում), երբ երեխան ստացել է սննդատեսակներից յուրաքանչյուրը, ինչպես նաև հարցմանը նախորդող վերջին 7 օրվա ընթացքում երեխային տրված ցանկացած սննդի համար, մայրերին հարցրել են, թե քանի անգամ է երեխան ընդունել տվյալ սնունդը վերջին 24 ժամվա ընթացքում: Աղյուսակներ 11.5-ը և 11.6-ը ներկայացնում են տեղեկատվություն հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում երեխաներին տրված սննդատեսակների վերաբերյալ: Աղյուսակ 11.7-ը ցույց է տալիս թե հարցմանը նախորդող 7 օրվա ընթացքում երեխաները միջինը քանի օր են ընդունել նշված սննդատեսակները: Երեխային տրված սննդատեսակները միմյանց չեն բացառում, այդ իսկ պատճառով, հնարավոր է, որ երեխան միաժամանակ ստացած լինի մի քանի սննդատեսակ:

Աղյուսակ 11.5-ը ցույց է տալիս, որ հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում մինչև 4 ամսական կրճքով կերակրվող երեխաների 9 տոկոսը ստացել է մանկական կաթնախարնուրդ, 11 տոկոսը ստացել է կաթնամթերք և 27 տոկոսը՝ այլ հեղուկներ: Չորս տոկոսը ստացել է որևէ կոշտ կամ կիսակոշտ սնունդ: Կրճքով կերակրվող 4 ամսական և ավելի մեծ տարիքի երեխաների տեսակարար կշիռը, ովքեր ստացել են հավելյալ սնունդ, խիստ աճում է: Ընդհանուր առմամբ, կրճքով կերակրվող երեխաների մեծ մասը ստանում է հեղուկներ, ձավարեղեն (շիլա), մրգեր և բանջարեղեն: Այս տվյալները վկայում են, որ կրճքով կերակրման փորձը Հայաստանում պետք է բարելավվի, քանզի վաղ (մինչև 6 ամսական) հավելյալ սնուցումը կարող է վնաս հասցնել երեխայի առողջությանը:

Աղյուսակ 11.5 Հարցմանը նախորդող 24 ժամերի ընթացքում երեխաների ընդունած սնունդը

Մոր հետ ապրող մինչև 3 տարեկան երեխաների տոկոսային բաշխումը ըստ հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում ստացած սննդատեսակի, ըստ կրծքով կերակրման կարգավիճակի և երեխայի տարիքի, Հայաստան 2000թ.

(%,%)

Երեխայի տարիքն ամիսներով	Կոշտ/կիսակոշտ սնունդ										
	Մանկ. կաթնա-խառնուրդ	Այլ կաթ/մածուց	Հացահատիկից/հացից/ցորենից շիլա			Մրգեր/բանջարեղեն	Լոբի ընդդեմ/նոսպ	Միս/ծուկ/թռչնի միս ձու	Այլ բանջարեղեն և օսլա ²	Որևեկ կոշտ կամ կիսակոշտ սնունդ	Երեխաների թվաքանակը (մարդ)
			Այլ հեղուկներ ¹	հացից/ցորենից շիլա	Մրգեր/բանջարեղեն						
Կրծքով կերակրվող երեխաներ											
<4	8.9	10.9	26.5	1.3	5.8	0.0	0.0	1.4	3.8	90	
4-5	(19.8)	(37.6)	(75.8)	(31.8)	(27.3)	(0.0)	(3.2)	(20.0)	(24.9)	38	
6-9	5.8	65.7	75.1	68.6	72.1	1.9	19.0	57.2	62.1	62	
Ընդամենը	7.7	47.5	62.0	50.5	51.7	3.6	20.2	39.9	47.2	289	
Կրծքով չկերակրվող երեխաներ											
6-9	(17.1)	(92.9)	(91.2)	(84.9)	(89.7)	(3.5)	(28.4)	(64.2)	(88.0)	35	
10-11	(22.6)	(96.0)	(96.0)	(75.4)	(89.1)	(3.3)	(40.7)	(62.4)	(76.3)	35	
12-15	6.9	81.4	92.2	96.7	94.2	13.3	47.7	76.5	83.1	79	
16-19	2.0	90.3	98.4	95.1	87.6	14.3	60.0	73.0	75.8	70	
20-23	10.6	85.6	89.1	94.3	92.2	17.6	58.2	73.9	85.5	87	
24-35	3.7	81.0	91.9	95.3	95.9	18.4	61.8	83.5	86.6	264	
Ընդամենը	7.4	84.5	92.5	91.7	91.5	14.9	54.0	75.6	82.2	590	

Նշում. Կրծքով կերակրման կարգավիճակը վերաբերվում է 24 ժամերին (հարցմանը նախորդող օր և գիշեր): Տեսակարար կշիռների գումարը կարող է 100-ից ավել լինել, քանի որ երեխան կարող էր ստանալ մի քանի տեսակի հավելյալ սնունդ:

¹ Չի ներառում հասարակ ջուրը:

² Ներառում է վիտամին A-ով հարուստ սնունդ, օրինակ դդում, այլուրե և օսլա պարունակող պարեն՝ օր. կարտոֆիլ:

Կրծքով չկերակրվող յուրաքանչյուր տաս երեխաներից իննը հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում ստացել են հեղուկներ, ձավարեղեն, մրգեր և բանջարեղեն: 85 տոկոսը ստացել է կաթնամթերք և 76%-ը՝ այլ բանջարեղեն (ներառյալ A վիտամինով հարուստ տեսականի): Կրծքով չկերակրվող երեխաների մեծ մասը (54%) նույնպես վերջին 24 ժամվա ընթացքում ստացել է սպիտակուց պարունակող սննդամթերք:

Աղյուսակ 11.6-ը ցույց է տալիս հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում մինչև 3 տարեկան երեխաների հավելյալ կերակրման հաճախականությունը ըստ սննդատեսակների:

Վեց ամսականում երեխան կրծքի կաթի հետ մեկտեղ պետք է ստանա նաև կոշտ սնունդ: Հեղուկները, կոշտ և կիսակոշտ սննդի քանակը պետք է աստիճանաբար շատացնել մինչև երեխայի մեկ տարին լրանալը:

Այլևս կրծքով չկերակրվող երեխաների մոտ տարբեր սննդատեսակների ընդունումը առավել ակնհայտ է, քան կրծքով կերակրվելու ընթացքում: Հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ կրծքից լրիվ կտրված երեխաներին ամենահաճախ տրված սնունդը եղել է հացը՝ օրական ավելի քան երկու անգամ: Վիտամին A պարունակող մրգեր ու բանջարեղեն, միջին հաշվով, տրվում է օրը մեկ անգամ, իսկ այլ մրգեր ու բանջարեղեն՝ գրեթե օրը երկու անգամ: Պանիրը կամ մածուցը, ինչպես նաև այլ կաթը (“ոչ կրծքի կաթ”) տրվում է մեկ անգամ:

Աղյուսակ 11.6 Հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում երեխաների ընդունած սննդի հաճախականությունը

Հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում մոր հետ ապրող մինչև 3 տարեկան երեխաների՝ կոնկրետ սննդատեսակների ստացման միջին թիվն ըստ կրծքով կերակրման կարգավիճակի և երեխայի տարիքի, Հայաստան 2000թ. (%)

Երեխայի տարիքն ամիսներով	Փոշի, Մանկատացված/բաժնակաճարմ հյուսիսային կաթ	Թեյ	Հաց-հատիկից պատրաստված ապուր, պանակ, պանակաբլիթ, պանակաբլիթիկ, պանակաբլիթիկ, պանակաբլիթիկ, պանակաբլիթիկ, պանակաբլիթիկ, պանակաբլիթիկ							Այլ մրգեր, լոբեղեն, սոսիս, խմոր, խմորիկ, խմորիկ, խմորիկ, խմորիկ, խմորիկ	Միս, թռչնի միս, ձուկ, կրաք, ծովաթյուր, ծովաթյուր, ծովաթյուր, ծովաթյուր, ծովաթյուր	Պանիր կամ մածուց	Երեխաների թվաքանակը (մարդ)		
			Հաց	Հաց/հատիկ	Պանակ	Պանակաբլիթ	Պանակաբլիթիկ	Պանակաբլիթիկ	Պանակաբլիթիկ						
Կրծքով կերակրվող երեխաներ															
<4	0.2	0.2	0.2	0.2	0.1	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0	0.0	0.0	0.0	90
4-5	(0.4)	(0.5)	(0.6)	(0.9)	(0.1)	(0.3)	(0.1)	(0.2)	(0.0)	(0.3)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.2)	38
6-9	0.1	0.8	0.8	0.7	0.8	0.5	1.1	0.6	0.1	0.9	0.0	0.2	0.0	0.6	62
Ընդամենը	0.2	0.5	0.5	0.6	0.5	0.4	1.0	0.5	0.1	0.8	0.0	0.2	0.0	0.5	289
Կրծքով չկերակրվող երեխաներ															
6-9	(0.5)	(2.6)	(0.6)	(1.2)	(0.9)	(0.7)	(1.4)	(0.8)	(0.1)	(0.9)	(0.1)	(0.3)	(0.0)	(0.5)	35
10-11	(0.5)	(2.0)	(1.0)	(1.0)	(0.9)	(0.7)	(1.6)	(0.7)	(0.2)	(1.6)	(0.0)	(0.5)	(0.2)	(1.0)	35
12-15	0.2	1.6	0.7	1.3	1.1	0.9	2.6	0.9	0.1	1.7	0.1	0.5	0.1	0.9	79
16-19	0.0	1.1	0.5	1.3	1.2	0.7	2.4	1.0	0.2	1.8	0.2	0.7	0.1	1.0	70
20-23	0.2	0.9	0.6	1.3	1.2	0.6	2.6	1.2	0.2	1.9	0.2	0.7	0.1	1.2	87
24-35	0.1	0.6	0.6	1.2	1.0	0.7	2.6	1.1	0.3	2.0	0.2	0.6	0.2	1.2	264
Ընդամենը	0.2	1.1	0.6	1.2	1.0	0.7	2.4	1.0	0.2	1.8	0.2	0.6	0.1	1.1	590

Նշում. Կրծքով կերակրման կարգավիճակը վերաբերվում է 24 ժամերին (հարցմանը նախորդող օր և գիշեր):
 *Չի ներառում սովորական ջուրը

Աղյուսակ 11.7-ը ցույց է տալիս հարցմանը նախորդող 7 օրվա ընթացքում երեխաների ընդունած սննդի հաճախականությունը: Ընդհանուր առմամբ մինչև չորս ամսական կրծքով կերակրվող երեխաները հազվադեպ են ստացել հավելյալ հեղուկներ կամ սնունդ: Ինչպես և սպասվում էր, հեղուկների և սննդի ընդունման հաճախականությունը աճում է 4-5 ամսական և 6-9 ամսական երեխաների շրջանում:

Կրծքով չկերակրվող երեխաներին թեյ, ոչ կրծքի կաթ, և այլ հեղուկներ տրվել է գրեթե ամեն օր: Հաց և պանիր կամ մածուց տրվել է համապատասխանաբար 6 և 5 օր: Ա վիտամինով հարուստ սնունդ, ինչպիսիք են գազարը, մրգահյութը և այլ մրգերն ու բանջարեղենը տրվել է համապատասխանաբար 5 օր և 6 օր:

Աղյուսակ 11.7 Հարցմանը նախորդող 7 օրվա ընթացքում երեխաների ընդունած սննդի հաճախականությունը

Հարցմանը նախորդող 7 օրվա ընթացքում մոր հետ ապրող մինչև 3 տարեկան երեխաներին տրված կոնկրետ սննդի օրերի միջին թիվն ըստ կրծքով կերակրման կարգավիճակի և երեխայի տարիքի, Հայաստան 2000թ.

(%,%)

Երեխայի տարիքը	Փոշի, Մանկիտացված/բրգարիքն ամիս-կաթնակալի քարմ հյութ խառնուրդ կաթ	Թեյ	Այլ հեղուկ ¹	Հաց-հատիկից ապուր, պատար, պատ-րից պատգազար, տերևով պանջուր, սնունդ սնունդ կաղամբ ռեղեն							Այլ մրգեր, ընդդեմ, բանջարեղեն	Լոբի, սոյա	Միս, միս ձու	Ձուկ, ծովա-մթերք	Պանիր կամ մածուկ	Երեխաների թվաքանակը (մարդ)
				0.0	0.1	0.0	0.0	0.3	0.0	0.0						
Կրծքով կերակրվող երեխաներ																
<4	0.6	0.8	0.7	1.0	0.5	0.0	0.1	0.0	0.0	0.3	0.0	0.0	0.0	0.1	90	
4-5	(1.4)	(1.2)	(3.9)	(3.7)	(0.6)	(1.6)	(0.4)	(1.3)	(0.0)	(1.6)	(0.0)	(0.3)	(0.0)	(1.2)	38	
6-9	0.4	2.4	3.1	3.1	2.9	2.6	3.6	3.3	0.5	3.7	0.1	1.3	0.2	2.9	62	
Ընդամենը	0.5	1.6	2.3	2.8	2.2	2.1	3.0	2.5	0.4	3.1	0.3	1.2	0.1	2.4	289	
Կրծքով չկերակրվող երեխաներ																
6-9	(1.2)	(5.6)	(3.0)	(5.0)	(3.9)	(3.5)	(4.5)	(3.9)	(0.4)	(4.0)	(0.2)	(1.4)	(0.1)	(3.7)	35	
10-11	(1.7)	(5.5)	(3.8)	(4.2)	(3.4)	(3.4)	(4.7)	(3.9)	(1.1)	(5.5)	(0.1)	(2.7)	(0.4)	(4.5)	35	
12-15	0.6	4.6	3.0	5.2	4.5	4.1	6.2	5.2	1.1	5.6	0.8	2.9	0.5	4.4	79	
16-19	0.3	4.0	2.2	5.3	4.7	4.2	6.4	5.2	1.5	5.5	1.0	3.1	0.4	4.3	70	
20-23	0.6	3.8	2.1	5.3	4.7	3.4	6.4	5.4	1.0	5.9	1.2	3.2	0.5	5.1	87	
24-35	0.2	2.4	1.9	5.2	4.4	3.4	6.0	5.1	1.5	6.0	1.1	3.5	0.8	5.2	264	
Ընդամենը	0.5	3.6	2.4	5.1	4.3	3.5	5.8	4.9	1.2	5.6	0.9	3.0	0.6	4.7	590	

Նշում. Կրծքով կերակրման կարգավիճակը վերաբերվում է 24 ժամերին (հարցմանը նախորդող օր և գիշեր): Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

11.2 Յողի սպառումը

Սննդի մեջ յողի անբավարարությունը կարող է բերել առողջական լուրջ խնդիրների: Հետազոտության ընթացքում տնային տնտեսություններում ստուգվել է կերակրի աղում յողի պարունակությունը՝ օգտագործելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանի գրասենյակի կողմից տրամադրված հատուկ տեստերը: Աղը համարվում է բավարար յողացված, եթե նրանում յողի պարունակությունը կազմում է ամենաքիչը մեկ միլիոնի 15-րդ մասը (15 ppm): Աղը ստուգվել է զրեթե բոլոր տնային տնտեսություններում (99%):

Աղյուսակ 11.8-ը ցույց է տալիս, որ Հայաստանի տնային տնտեսությունների մեծ մասում աղը բավարար յողացված է եղել (84%)։ Ինչևէ, զգալի տարբերություն կա ըստ մարզերի՝ ամենաբարձրը՝ 95 տոկոս (Արարատ և Արմավիր) և ամենացածրը՝ 59% (Տավուշ): Յողի պարունակության նման տարբերությունը ավելին է, քան սպասվում էր: Հայաստանում գոյություն ունի աղի միայն մեկ կոմբինատ, ուր աղը յողացվում է և ստուգվում է նրա բավարար յողացվածությունը: Հարցազրույցավարները նշել են, որ շատ ռեսպոնդենտներ, որոնց տնային տնտեսություններում աղը բավարար յողացված չէր, ցույց են տվել այլ երկրներից, ինչպիսիք են Ուկրաինան և Իրանը, ներկրված աղի տուփեր: Հնարավոր է, որ Հայաստանի սահմաններից դուրս արտադրված աղը (որն ավելի էժան է) ավելի մատչելի է որոշ մարզերում:

Աղյուսակ 11.8 Տնային տնտեսության աղի յոդացվածությունը

Տնային տնտեսությունների տոկոսային բաշխումն ըստ աղի յոդացվածության աստիճանի (բաժինը մեկ միլիոնի հաշվով) ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Աղի յոդացվածության աստիճանը				Ընդամենը	Ստուգված ¹ տնային տնտեսությունների թիվը
	0	<15	15+	Պատասխան չկա		
Բնակավայրը						
Քաղաքային	6.9	6.9	85.5	0.7	100.0	3630
Գյուղական	13.7	5.3	80.5	0.5	100.0	2346
Մարզը						
Երևան	1.1	8.5	89.7	0.8	100.0	1944
Արագածոտն	6.4	1.9	90.0	1.7	100.0	248
Արարատ	2.1	2.5	95.2	0.2	100.0	580
Արմավիր	3.3	1.6	94.9	0.2	100.0	496
Գեղարքունիք	16.2	7.5	76.0	0.2	100.0	505
Լոռի	24.3	5.2	69.1	1.4	100.0	519
Կոտայք	7.2	5.0	87.0	0.8	100.0	413
Շիրակ	27.3	4.5	68.2	0.0	100.0	602
Սյունիք	7.7	2.2	89.5	0.7	100.0	258
Վայոց ձոր	10.9	12.5	76.1	0.5	100.0	111
Տավուշ	24.2	16.1	59.1	0.6	100.0	300
Ընդամենը	9.6	6.3	83.6	0.6	100.0	5976

¹Աղը ստուգվել է 99 տոկոս տնային տնտեսություններում

Աղյուսակ 11.9-ը ցույց է տալիս, որ մինչև երեք տարեկան երեխաների 83 տոկոսը բնակվում է այն տնային տնտեսություններում, որտեղ առկա է բավարար յոդացված աղ: Ըստ մարզերի տարբերությունները երևում են աղյուսակ 11.8-ում:

11.3 Միկրոսնդարար նյութերի սպառումը

Հղիության ընթացքում մոր սնուցման վիճակը կարևոր է ինչպես երեխայի ներարգանդային զարգացման, այնպես էլ մայրական հիվանդացությունից ու մահացությունից պաշտպանվելու համար: Հավկուրությունը, որին առավել հակված են հղի կանայք, վկայում է A վիտամինի սուր պակասության մասին: Աղյուսակ 11.10-ը ցույց է տալիս, որ վերջերս (հարցմանը նախորդող 3 տարիների ընթացքում) ծննդաբերած կանանց գրեթե երկու տոկոսն ունեցել է հավկուրություն: Վերլուծելով նաև այն կանանց տվյալները, որոնք նշել են, որ օրվա ընթացքում ունեցել են տեսողության հետ կապված խնդիրներ, պարզվել է, որ նրանց մեկ տոկոսն է ունեցել հավկուրություն: Փոքր տոկոսները թույլ չեն տալիս վերլուծել Հայաստանի բնակչության ենթախմբերի տարբերությունները այս խնդրի շուրջ:

Երկաթ-դեֆիցիտով պայմանավորված սակավարյունությունը հանդիսանում է մայրական առողջության հիմնական վտանգը: Այն բերում է ծննդյան ցածր քաշով երեխաների ծնունդների, վարակների նկատմամբ ցածր դիմադրողականության, նորածնի թերի մտավոր զարգացման և մոր աշխատունակության անկման: Հետագայում, սակավարյունությունը նաև բարձրացնում է հիմանդացությունը վարակներից, քանի որ այն իր վատ ազդեցությունն է թողնում իմունային համակարգի վրա: Հետազոտության ժամանակ վերջերս (հարցմանը նախորդող 3 տարիների ընթացքում) ծննդաբերած կանանց հարցվել է նաև, թե արդյոք նրանք հղիության ընթացքում ստացել կամ գնել են երկաթ պարունակող հաբեր: Եթե այո, կանանց խնդրել են նշել տվյալ հղիության ընթացքում հաբեր ընդունած օրերի թիվը: Աղյուսակ 11.10-ը ցույց է տալիս, որ կանանց երկու տոկոսից պակասն է հղիության ընթացքում երկաթ պարունակող հաբեր ընդունել առնվազն 90 օր, որը և հանդիսանում է ընդունված չափորոշիչ:

**Աղյուսակ 11.9 Յողագված աղի մատչելիությունը
Երեխաների համար**

Յողագված աղի առկայությամբ տնային տնտեսությունում մոր հետ ապրող մինչև 3 տարեկան երեխաների տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

	Յողը աղում 15+	Երեխաների թվաքանակը (մարդ)
(%,%)		
Հիմնական բնութագրիչներ		
Երեխայի տարիքը (ամիսներով)		
<7	80.8	60
7-11	85.5	50
12-17	85.5	71
18-23	82.4	65
24-35	81.3	147
36-47	84.0	201
48+	81.9	285
Երեխայի սեռը		
Արական	82.8	501
Իգական	82.8	378
Ծնունդների կարգը		
1	83.9	363
2-3	82.7	433
4+	78.3	84
Մոր տարիքը		
15-19	80.1	60
20-24	81.5	395
25-29	88.0	258
30-34	78.5	94
35-39	77.0	49
40-44	(83.4)	22
45-49	*	1
Բնակավայրը		
Քաղաքային	86.4	453
Գյուղական	79.0	427
Մարզը		
Երևան	89.6	252
Արագածոտն	81.0	46
Արարատ	96.0	114
Արմավիր	97.2	79
Գեղարքունիք	63.5	103
Լոռի	74.3	84
Կոտայք	87.5	45
Շիրակ	72.9	60
Սյունիք	89.8	32
Վայոց ձոր	71.4	19
Տավուշ	56.6	46
Ընդամենը	82.8	880

Նշում Աստղանիշը ցույց է տալիս, որ թշվը հիմնված է ավելի քիչ քան 25 չկշռված դեպքերի վրա և սղվել է: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Աղյուսակ 11.10 Միկրոէլեմենտների ընդունումը կանանց մոտ

Կանանց տոկոսային բաշխումը, ովքեր ծննդաբերել են հարցմանը նախորդող երեք տարվա ընթացքում և հղիության ժամանակ ունեցել են հավկուրություն ու ընդունել երկաթ պարունակող պրեպարատներ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

	Կինը ունեն հավկու- րություն հղիության ընթացքում	Կինը ունեն հավկու- րություն հղիության ընթացքում (ճշտված) ¹	Կինը ընդունել է երկաթ 90+ օր հղիության ընթացքում	Կանանց թվաքա- նակը (մարդ)
Չնունդների կարգը				
1	1.3	1.3	1.9	306
2-3	1.4	0.5	1.1	421
4+	1.7	1.7	1.4	82
Մոր տարիքը				
15-19	0.0	0.0	0.0	51
20-24	1.1	0.8	1.1	350
25-29	1.6	1.0	1.7	247
30-34	4.2	2.6	2.0	90
35-39	0.0	0.0	0.0	48
40-44	0.0	0.0	7.7	22
45-49	0.0	0.0	0.0	1
Բնակավայրը				
Քաղաքային	1.9	1.3	1.4	427
Գյուղական	0.8	0.6	1.5	382
Մարզը				
Երևան	2.9	1.7	0.6	241
Արագածոտն	0.0	0.0	1.4	42
Արարատ	0.0	0.0	1.1	100
Արմավիր	3.0	3.0	0.0	74
Գեղարքունիք	2.2	1.1	0.0	89
Լոռի	0.0	0.0	3.1	76
Կոտայք	0.0	0.0	2.6	44
Շիրակ	0.0	0.0	7.0	53
Սյունիք	0.0	0.0	1.9	29
Վայոց ձոր	1.4	1.4	1.4	18
Տավուշ	0.0	0.0	1.3	43
Ընդամենը	1.4	0.9	1.4	809

Նշում. Աստղանիշը ցույց է տալիս, որ թիվը հիմնված է ավելի քիչ քան 25 չկշռված դեպքերի վրա և սղվել է: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

¹ Բացառում է այն կանանց, ովքեր նշել են տեսողության հետ կապված խնդիրներ մաս. օրվա ընթացքում:

11.4. Սակավարյունություն

Սակավարյունությունը պայմանավորված է արյան մեջ հեմոգլոբինի նվազող խտությամբ: Հեմոգլոբինն անհրաժեշտ է թթվածնի դեպի մարմնի հյուսվածքներ և այլ օրգաններ փոխանցման համար: Օրգաններում և հյուսվածքներում թթվածնի նվազումը հեմոգլոբինի ցածր մակարդակի դեպքում բերում է սակավարյունության ախտանիշների դրսևորման: Սակավարյունության հետևանքները ներառում են մարմնի ընդհանուր թուլություն, հաճախակի հոգնածություն և հիվանդությունների նկատմամբ ցածր դիմադրողականություն: Սակավարյունությունը կարող է հատկապես լուրջ խնդիր հանդիսանալ հղի կանանց համար, ինչը կարող է բերել վաղաժամ ծննդաբերության և նորածնի ծննդյան ցածր քաշի: Այն անհանգստացնող է նաև երեխաների համար, քանի որ սակավարյունությունը ուղեկցվում է մտավոր և ֆիզիկական թերի զարգացմամբ: Ընդհանուր առմամբ, հիվանդացության և մահացության ռիսկն աճում է սակավարյունություն ունեցող անձանց մոտ:

Կանանց և մինչև հինգ տարեկան երեխաների մոտ սակավարյունության մակարդակի որոշումը ՀժԱՀ-ի բաղադրիչներից մեկն էր: Սակավարյունության մակարդակը որոշվել է՝ չափելով արյան հեմոգլոբինի մակարդակը, որի ցածր խտությունը վկայում է սակավարյունության մասին: Հեմոգլոբինի չափման համար մատից վերցվել է մազանոթային արյուն՝ օգտագործելով «ՀեմոՔյու» սարքի ապահով նշտարները (ստերիլ, միանվագ օգտագործման պարագաներ, որոնք թույլ են տալիս համեմատաբար անցավ ծակել մաշկը): Արյան մեջ հեմոգլոբինի մակարդակը չափվել է օգտագործելով «ՀեմոՔյու» համակարգը: Ինչպես արդեն նկարագրվել է առաջին գլխում, այդ գործընթացն իրականացվել է հատուկ ուսուցում անցած բուժաշխատողների կողմից, որոնք կցված էին ՀժԱՀ-ի յուրաքանչյուր թիմին:

Մինչև հետազոտվելը յուրաքանչյուր հարցվող տեղեկացվել է սակավարյունության ստուգմանը չմասնակցելու իր իրավունքի մասին և ստորագրել համաձայնության ձև, որով թույլատրել է արյուն վերցնել իրենից և իր երեխայից: Հարցման ենթակա կանանց 95 տոկոսը մասնակցել է հեմոգլոբինի մակարդակի չափմանը: Հեմոգլոբինի մակարդակը որոշվել է ընտրանքի մեջ ընկած (6-59 ամսական) 1447 երեխաներից 1334-ի (93%) մոտ:

Սակավարյունության մակարդակները դասակարգվել են որպես սուր, միջին և թույլ սակավարյունություն՝ համաձայն արյան մեջ հեմոգլոբինի պարունակության՝ ըստ Առողջության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված չափանիշների (DeMaeyer et al., 1989): Քանի որ հեմոգլոբինի մակարդակը փոփոխվում է ըստ ծովի մակերևույթի նկատմամբ բարձրության, ստացված տվյալները ճշտվել են յուրաքանչյուր ընտրանքային միավորի համար՝ ըստ բարձրության:

Աղյուսակ 11.11-ը ներկայացնում է սակավարյունության մակարդակը մինչև հինգ տարեկան երեխաների մոտ: Երեխաների 24%-ի մոտ առկա է սակավարյունություն, ընդ որում 10%-ի մոտ միջին սակավարյունություն, իսկ շուրջ 1%-ի մոտ՝ սուր սակավարյունություն: Երեխաների մոտ սակավարյունության ցուցանիշը զգալի տարբերվում է ըստ մարզերի: Գյուղական վայրերում բնակվող երեխաների մոտ սակավարյունությունը երկու անգամ ավելի շատ է տարածված, քան քաղաքային վայրերում բնակվողների մոտ (33 տոկոս՝ 16 տոկոսի դիմաց): Ըստ մարզերի, երեխաների մոտ սակավարյունությունը բաշխվում է հետևյալ կերպ. ամենացածրը՝ Վայոց ձորում և Կոտայքում՝ 11%, և ամենաբարձրը՝ Տավուշում՝ 39% (Նկար 11.2): Աղյուսակ 11.11-ը ցույց է տալիս նաև, որ մայրերի կրթական մակարդակի բարձրացմանը զուգընթաց նվազում է սակավարյունության ցուցանիշը նրանց երեխաների մոտ:

Աղյուսակ 11.11 Սակավարյունության տարածվածությունը երեխաների մոտ


Սակավարյունություն ունեցող 6-59 ամսական երեխաների տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%,%)

Հիմնական բնութագրիչներ	Սակավարյունություն ունեցող երեխաների տոկոսային բաշխումը				Երեխաների թվաքանակը (մարդ)
	Որևտ սակավարյունություն	Սուր (g/dl) 7.0	Միջին (7.0-9.9 g/dl)	Թույլ (10.0-10.9 g/dl)	
Երեխայի տարիքը (ամիսներով)					
6-11	48.2	0.0	19.0	29.2	136
12-23	39.5	1.4	18.8	19.3	281
24-35	21.4	0.2	7.5	13.7	262
36-47	15.5	0.2	5.8	9.5	314
48-59	11.2	0.0	3.3	7.9	341
Երեխայի սեռը					
Արական	25.3	0.5	9.6	15.2	756
Իգական	22.2	0.2	9.6	12.4	579
Ծնունդների կարգը					
1	23.2	0.5	9.2	13.5	528
2-3	24.5	0.2	9.8	14.5	684
4+	24.0	0.5	10.3	13.3	123
Ծնունդների միջև միջակայքը					
Առաջին ծնունդ	23.3	0.5	9.4	13.4	530
<24 ամիս	25.6	0.2	10.8	14.6	274
24-47 ամիս	24.5	0.0	8.7	15.9	286
48+ ամիս	22.7	0.7	9.8	12.3	243
Բնակավայրը					
Քաղաքային	15.6	0.2	4.8	10.6	684
Գյուղական	32.8	0.6	14.6	17.5	650
Մարզը					
Երևան	12.9	0.0	4.6	8.2	385
Արագածոտն	25.5	1.4	8.5	15.6	81
Արարատ	30.7	0.0	15.7	15.0	159
Արմավիր	32.8	0.8	16.0	16.0	140
Գեղարքունիք	31.5	0.0	13.7	17.7	123
Լոռի	31.5	0.0	4.3	27.2	110
Կոտայք	10.7	1.2	3.6	6.0	95
Շիրակ	27.6	0.0	13.2	14.5	94
Սյունիք	29.5	2.3	9.1	18.2	48
Վայոց ձոր	10.6	0.0	1.9	8.7	26
Տավուշ	38.5	0.8	18.5	19.2	73
Մոր կրթությունը					
Տարրական/միջին	38.3	0.5	20.8	17.0	114
Միջնակարգ	24.3	0.3	9.9	14.1	530
Միջնակարգ-մասնագիտական	23.7	0.4	8.4	14.9	459
Բարձրագույն	16.7	0.5	5.8	10.4	231
Ընդամենը	23.9	0.4	9.6	14.0	1334

Նշում. Սակավարյունության առկայությունը ճշտված է ծովի մակերևույթի բարձրության համեմատ՝ օգտագործելով Dirren et al., բանաձևը 1994թ.

Գծապատկեր 11.2 Սակավարյունության տարածվածությունը (6 - 59 անսական երեխաների մոտ ըստ մարզերի



Յայաստանի ԺԱՀ 2000թ.

Աղյուսակ 11.12-ը ներկայացնում է սակավարյունության ցուցանիշները կանանց մոտ: Յայաստանի կանանց 12%-ն ունի սակավարյունության որևէ աստիճան, 2%-ն ունի միջին սակավարյունություն և ավելի քիչ քան 1%-ը՝ ծանր (սուր) սակավարյունություն: Միջին սակավարյունության տարածվածությունն ավելի մեծ է բարձր տարիքի կանանց մոտ: Սակավարյունության ցուցանիշներն ավելի բարձր են գյուղական վայրերում բնակվող կանանց մոտ (17 տոկոս), քան քաղաքային վայրերում բնակվողների մոտ (10 տոկոս): Երևանում բնակվող կանանց 6%-ն ունի սակավարյունության որևէ աստիճան: Տարածաշրջաններում սակավարյունության տարածվածությունը տատանվում է սկսած ամենացածրից՝ Վայոց Ձորում (10%), մինչև ամենաբարձրը՝ Սյունիքում՝ (20%): Սակավարյունության ցուցանիշները փոփոխվում են նաև ըստ կրթական մակարդակների՝ բարձրագույն կրթություն ունեցող կանանց մոտ առկա է սակավարյունության ավելի ցածր ցուցանիշ (9 տոկոս 13-14տոկոսի դիմաց):

Աղյուսակ 11.13-ը ցույց է տալիս, որ սակավարյունությամբ մայրերի և նրանց երեխաների շրջանում սակավարյունության տարածվածության ցուցանիշների միջև էական կախվածություն չկա:

Քանի որ սակավարյունության ցուցանիշները փոփոխվում են ըստ տարվա եղանակների, այս արդյունքները վերաբերվում են հոկտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածին, երբ տեղի են ունեցել դաշտային աշխատանքները: Եվ քանի որ դաշտային աշխատանքները տեղի են ունեցել աշնանը՝ մթերքով առատ ժամանակ, հնարավոր է, որ ներկայացված սակավարյունության ցուցանիշները ավելի ցածր լինեն, քան կլինեին տարվա մյուս եղանակներին: Այսուամենայնիվ, ՀՀ-ի արդյունքներն ապշեցուցիչ են, եթե համեմատենք 1998թ. մայիսին իրականացված հետազոտության արդյունքների հետ: Համաձայն նախորդ հետազոտության՝ Յայաստանում 6-59 անսական երեխաների միայն 12 տոկոսն ուներ թույլ կամ միջին սակավարյունություն (Branca et al. 1998): Այս երկու հետազոտությունների համեմատությունը ցույց է տալիս, որ երեխաների մոտ սակավարյունությունը վերջին մի քանի տարիների ընթացքում աճել է շուրջ երկու անգամ:

Աղյուսակ 11.12 Սակավարյունության տարածվածությունը կանանց մոտ

Սակավարյունություն ունեցող 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Սակավարյունություն ունեցող կանանց տոկոսային բաշխումը				Կանանց թվաքանակը (մարդ)
	Որևէ սակավարյունություն	Սուր (ցածր 7.0 g/dl)	Միջին (7.0-9.9 g/dl)	Թույլ (10.0-11.9 g/dl)	
Տարիքը					
15-19	8.9	0.0	0.9	8.0	1103
20-24	11.3	0.2	1.7	9.4	952
25-29	14.4	0.2	1.7	12.5	730
30-34	10.9	0.0	1.2	9.7	739
35-39	14.7	0.1	2.3	12.2	922
40-44	13.1	0.6	3.1	9.4	902
45-49	15.0	0.6	3.4	11.0	789
Ծնունդների թիվը					
Ոչ մի ծնունդ	9.2	0.1	1.3	7.8	1984
1	11.3	0.5	2.0	8.8	613
2-3	13.9	0.2	2.2	11.5	2907
4+	17.1	0.8	3.1	13.1	634
Հղիություն և կրծքով կերակրում					
Հղի	12.0	0.0	4.6	7.4	169
Միայն կրծքով կերակրում	12.9	0.4	1.8	10.7	274
Ոչ մեկը	12.4	0.2	1.9	10.3	5694
ՆԱՄ-ի օգտագործումը					
Այո	15.5	0.0	1.3	14.2	375
Ոչ	12.2	0.3	2.0	9.9	5762
Բնակավայրը					
Քաղաքային	9.9	0.2	1.6	8.1	3762
Գյուղական	16.5	0.3	2.6	13.6	2376
Մարզը					
Երևան	5.6	0.1	0.9	4.6	2093
Արագածոտն	11.7	0.2	1.5	10.0	277
Արարատ	16.3	0.4	2.7	13.3	601
Արմավիր	18.0	0.2	2.3	15.6	546
Գեղարքունիք	17.3	0.2	3.1	14.0	411
Լոռի	17.9	0.0	3.0	14.9	481
Կոտայք	10.6	0.7	2.8	7.2	490
Շիրակ	17.2	0.2	1.4	15.5	608
Սյունիք	20.2	0.6	3.9	15.7	256
Վայոց ձոր	10.2	0.2	3.9	6.0	106
Տավուշ	15.6	0.4	3.3	11.9	269
Կրթությունը					
Տարրական/միջին	14.4	0.4	2.4	11.6	562
Միջնակարգ	13.0	0.4	2.0	10.6	2232
Միջնակարգ-մասնագիտական	13.3	0.1	1.9	11.3	2196
Բարձրագույն	8.8	0.2	1.9	6.7	1146
Ընդամենը	12.4	0.3	2.0	10.2	6137

Նշում. Սակավարյունության առկայությունը ճշտված է ծովի մակերևույթի բարձրության համեմատ՝ օգտագործելով Dirren et al., բանաձևը 1994թ.

Աղյուսակ 11.13 Երեխաների մոտ սակավարյունության տարածվածությունն ըստ մոր մոտ սակավարյունության սրության աստիճանի

Ըստ սակավարյունության կարգավիճակի 6-59 ամսական երեխաների տոկոսային բաշխումը, ըստ մոր մոտ սակավարյունության սրության աստիճանի, Հայաստան 2000թ. (%,%)

Մոր մոտ սակավարյունության սրության աստիճանը	Սակավարյունություն ունեցող երեխաների տոկոսային բաշխումը			Սակավարյ. չունեցող երեխաների տոկոս. բաշխումը	Ընդամենը	Երեխաների թվաքանակը ¹ (մարդ)
	Սուր	Միջին	Թույլ			
Մոր մոտ սակավարյունությունը						
Սուր	*	*	*	*	*	5
Միջին	(0.0)	(11.1)	(25.7)	(63.2)	(100.0)	26
Թույլ	0.4	10.7	16.2	72.7	100.0	155
Սակավարյունություն չունեցող մայրեր	0.4	9.3	13.6	76.8	100.0	1143
Ընդամենը	0.4	9.5	14.0	76.1	100.0	1328

Նշում. Սակավարյունության առկայությունը ճշտված է ծովի մակերևույթի բարձրության համեմատ՝ օգտագործելով Dirren et al., բանաձևը 1994թ. Աստղանիշը ցույց է տալիս, որ թիվը հիմնված է ավելի քիչ քան 25 չկշռված դեպքերի վրա և տվել է: Փակագծերում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:
¹ Հարցման պահին 6-59 ամսական երեխաների և նրանց մայրերի հեմոգլոբինի տվյալները:

11.5 Երեխաների սնուցման կարգավիճակը

Անտրոպոմետրիան երեխայի սնուցման կարգավիճակի գնահատման ամենակարևոր ցուցանիշներից մեկն է: Հասակի և քաշի չափումներ ստացվել են հարցվողների մինչև 5 տարեկան երեխաներից:¹ Հասակի և քաշի վերաբերյալ տվյալները օգտագործվել են սնուցման կարգավիճակի երեք գունարային ցուցանիշների հաշվարկման համար՝ հասակն ըստ տարիքի, քաշն ըստ հասակի և քաշն ըստ տարիքի: Այս երեք ցուցանիշների հիման վրա որոշվում է երեխաների հակվածությունը հիվանդությունների նկատմամբ և նրանց գոյատևման հնարավորությունները:

Սնուցման ցուցանիշները ներկայացվում են որպես ստանդարտացված միավորներ (z-միավոր) կամ ստանդարտ շեղումային միավորներ՝ միջազգային բնակչության մեդիանից, որն առաջարկվել է Առողջության համաշխարհային կազմակերպության կողմից: Երեխաները, որոնք գտնվում են երկուսից ավելի ստանդարտ շեղումով ցածր մակարդակում, համարվում են թերսնված, իսկ երեքից ավելի ստանդարտ շեղումով ցածր գտնվողները համարվում են սուր թերսնված:

Հետազոտության ժամանակ 1995թ. հունվարից հետո ծնված երեխաների մոտ կատարվել են հասակի և քաշի չափումներ: Չափման ենթակա 1596 երեխաներից (հարցման պահին 0-59 ամսական) չափումներ են կատարվել 1461 (92%) երեխաների մոտ, և ստացվել համապատասխան տվյալներ: Աղյուսակ 11.14-ը ցույց է տալիս այդ երեխաների սնուցման կարգավիճակն ըստ հիմնական ժողովրդագրական բնութագրիչների:

¹ Հասակը չափվել է հետևյալ կերպ. 2 տարեկան և ավելի երեխաներինը՝ կանգնած, իսկ 2 տարեկանից փոքր երեխաներինը՝ պառկած: Օգտագործվել են փայտե հատուկ շարժական հասակաչափեր (Shorr Boards): Քաշը չափվել է Seca էլեկտրոնային կշեռքների միջոցով:

Աղյուսակ 11.14 Երեխաների սնուցման կարգավիճակը

Մինչև 5 տարեկան երեխաների տոկոսային բաշխումը, որոնք համարվում են թերսնված ըստ սնուցման կարգավիճակի 3 անտրոպոմետրիկ ցուցանիշների՝ հասակն ըստ տարիքի, քաշն ըստ հասակի և քաշն ըստ տարիքի, ըստ ժողովրդագրական և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

	Հասակն ըստ տարիքի (թերաճ)			Քաշն ըստ հասակի (թերսնված)			Քաշն ըստ տարիքի (թերքաշ)			Երեխաների թվաքանակը (մարդ)
	Ցածր - 3 SD	Ցածր - 2 SD ¹	Միջին Z-միավոր (SD)	Ցածր - 3 SD	Ցածր - 2 SD ¹	Մջին Z-միավոր (SD)	Ցածր - 3 SD	Ցածր - 2 SD ¹	Միջին Z-միավոր (SD)	
Բնութագրիչներ										
Երեխայի տարիքը (ամիսներով)										
<6	0.0	4.0	-0.1	0.0	3.7	0.5	0.4	1.6	0.4	132
6-11	1.8	5.9	-0.1	0.4	2.5	0.6	0.2	2.0	0.4	135
12-23	1.2	15.2	-0.7	0.8	3.7	0.6	0.4	2.8	0.0	276
24-35	1.9	11.6	-0.4	0.5	1.1	0.5	0.0	3.0	0.1	262
36-47	4.9	16.1	-0.9	0.0	0.4	0.6	0.4	2.3	-0.1	318
48-59	3.2	15.7	-0.9	0.0	1.9	0.5	0.0	3.0	-0.2	340
Երեխայի սեռը										
Արական	3.0	12.3	-0.7	0.4	2.2	0.6	0.2	2.4	0.0	837
Իգական	2.0	14.0	-0.6	0.1	1.7	0.5	0.2	2.8	0.0	626
Ծնունդների կարգը										
1	1.7	9.6	-0.6	0.3	1.3	0.6	0.0	1.6	0.1	577
2-3	2.8	13.9	-0.7	0.3	2.5	0.6	0.4	2.7	0.0	750
4+	4.7	22.6	-1.0	0.0	1.7	0.4	0.0	6.1	-0.3	136
Ծնունդների միջակայքը										
Առաջին ծնունդ	1.7	9.6	-0.6	0.3	1.3	0.6	0.0	1.6	0.1	580
<24 ամիս	3.0	15.9	-0.9	0.0	1.3	0.6	0.6	3.4	-0.1	299
24-47 ամիս	3.4	16.1	-0.6	0.4	3.6	0.5	0.1	2.8	0.0	318
48+ ամիս	2.9	13.5	-0.6	0.5	2.3	0.5	0.4	3.5	0.0	266
Բնակավայրը										
Քաղաքային	1.6	10.1	-0.5	0.5	2.2	0.6	0.2	2.4	0.1	750
Գյուղական	3.6	16.0	-0.8	0.1	1.7	0.5	0.3	2.8	-0.1	713
Մարզը										
Երևան	0.7	7.5	-0.3	0.3	2.3	0.6	0.0	0.7	0.2	422
Արագածոտն	0.7	8.8	-0.3	0.7	2.7	0.3	0.7	2.0	0.0	85
Արարատ	2.7	15.3	-0.8	0.0	0.0	0.4	0.0	3.3	-0.2	171
Արմավիր	1.4	8.7	-0.6	0.0	0.0	0.6	0.7	1.4	0.1	154
Գեղարքունիք	8.6	32.1	-1.3	0.0	1.4	0.6	0.0	3.6	-0.3	139
Լոռի	5.7	12.3	-0.7	0.0	0.9	0.8	0.0	0.0	0.3	127
Կոտայք	1.2	8.1	-0.5	2.3	10.5	0.0	1.2	9.3	-0.4	98
Շիրակ	3.5	22.4	-1.1	0.0	2.4	0.8	0.0	5.9	-0.1	106
Սյունիք	4.1	15.5	-0.8	0.0	0.0	0.7	0.0	5.2	0.0	53
Վայոց ձոր	1.7	11.1	-0.7	0.0	1.7	0.5	0.9	4.3	-0.1	29
Տավուշ	0.7	10.4	-0.7	0.0	0.7	0.6	0.0	1.4	0.0	81
Մոր կրթությունը										
Տարրական/միջին	4.8	21.0	-1.0	0.0	1.9	0.4	0.0	6.5	-0.3	126
Միջնակարգ	2.7	13.7	-0.7	0.0	2.3	0.5	0.3	2.4	0.0	588
Միջնակարգ-մասնագիտական	2.7	12.8	-0.6	0.7	1.7	0.6	0.2	2.5	0.0	493
Բարձրագույն	0.7	7.9	-0.3	0.2	1.7	0.6	0.0	1.2	0.2	255
Ընդամենը	2.5	13.0	-0.7	0.3	2.0	0.6	0.2	2.6	0.0	1463

Նշում. Թերսնված թվերը վերաբերվում են հետազոտությանը նախորդող 0-59 ամիսների ընթացքում ծնված երեխաներին: Յուրաքանչյուր գործակից արտահայտված է NCHS/CDC/WHO միջազգային ստանդարտ բնակչության մեդիանից ստանդարտ շեղման (SD) միավորով: Երեխաները համարվում են թերսնված, եթե նրանց Z - միավորը ցածր է - 2 կամ - 3 ստանդարտ շեղումով (-2SD և -3 SD) միջազգային ստանդարտ բնակչության մեդիանից: Աղյուսակը հիմնված է վավեր ծննդյան տվյալներ (ամիս և տարի) և հասակի ու քաշի վավեր չափումներ ունեցող երեխաների վրա:
¹ Ներառում է երեխաներին, որոնք -3 ստանդարտ շեղումով (SD) ցածր են միջազգային ստանդարտ բնակչության մեդիանից:


Եթե երեխաների հասակն ըստ տարիքի երկու ստանդարտ շեղումով ցածր է ստանդարտ բնակչության մեդիանից, ապա նրանք համարվում են թերաճ կամ կարճահասակ իրենց տարիքի համար: Նման վիճակը վկայում է խրոնիկ ական թերսնվածության մասին: Ընդհանուր առմամբ, մինչև 5 տարեկան երեխաների 13 տոկոսը կարճահասակ է (Z –միավորը –2 SD), իսկ 3 տոկոսը՝ շատ կարճահասակ (Z–միավորը –3 SD): Ընդ որում, ընտանիքի կրտսեր երեխաները, ինչպես նաև գյուղական վայրում բնակվող և կրթական ցածր մակարդակ ունեցող կանանց երեխաներն ավելի հակված են կարճահասակությանը: Օրինակ՝ տարրական և միջնակարգ կրթություն ունեցող կանանց երեխաները գրեթե երեք անգամ ավելի են հակված կարճահասակության, քան բարձրագույն կրթություն ունեցողների երեխաները (21 տոկոս՝ 8 տոկոսի դիմաց): Զգալի

տաբերություններ կան նաև ըստ տարածաշրջանների: Ըստ մարզերի կարճահասակությունը բաշխվում է հետևյալ կերպ. ամենացածրը՝ 8% Կոտայքում, ամենաբարձրը՝ 32% Գեղարքունիքում (Գծապատկեր 11.3):

Այն երեխաները, որոնց քաշն ըստ հասակի ստանդարտ բնակչության մեդիանից ցածր է երկու ստանդարտ շեղումով, համարվում են թերսնված (կամ նիհար), ինչը վկայում է, սուր թերսնուցման մասին: Իսկ նրանք, որոնց քաշն ըստ տարիքի ստանդարտ բնակչության մեդիանից ցածր է երկու ստանդարտ շեղումով, համարվում են թերքաշ: Քաշ-տարիքային ցուցանիշը չի առանձնացնում խրոնիկական (տևական) թերսնվածությունը (թերաճ) և սուր թերսնվածությունը (թերսնված): Երեխայի թերքաշը կարող է պայմանավորված լինել և կարճահասակությամբ, և թերսնուցմամբ, ինչպես նաև այդ երկու պատճառներով միաժամանակ: Քաշ-տարիքային ցուցանիշը ինտեգրալ ցուցանիշ է և արտացոլում է բնակչության ընդհանուր առողջական վիճակը:

Ընդհանուր առմամբ երեխաների 2 տոկոսը թերսնված է և 3 տոկոսը՝ թերքաշ: Վերոնշյալ թվերը վկայում են, որ Հայաստանի երեխաները հակված չեն թերսնվածության և թերքաշության՝ միջազգային «ստանդարտ բնակչության» համեմատությամբ: Երեխաների մոտ թերքաշության և թերսնվածության տարածվածությունը տարբեր է ըստ մարզերի: Դրանց մակարդակը նշանակալիորեն բարձր է Կոտայքում, ուր երեխաների 11 տոկոսը թերսնված է և 9 տոկոսը՝ թերքաշ: Բարձր ծնունդի կարգով երեխաները (չորս և բարձր) ավելի հակված են թերքաշության, քան առաջին ծնված երեխաները (6 տոկոս՝ 2 տոկոսի դիմաց): Թերքաշությունն առավել արտահայտված է միջին և ցածր կրթական մակարդակ ունեցող մայրերի երեխաների մոտ՝ բարձրագույն կրթություն ունեցողների համեմատությամբ (1 տոկոս):

Գծապատկեր 11.3 Թերաճության տարածվածությունն ըստ երեխայի տարիքի և մարզերի



Հայաստանի ԺԱՐ 2000թ.

Գոյություն ունեն երեխաների սնուցման կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության այլ աղբյուրներ և՛ ստացված վերջերս իրականացված այլ հետազոտությունից: Ըստ 1998թ. իրականացված հետազոտության արդյունքների մինչև 5 տարեկան երեխաների 12%-ը թերած են (ըստ ՅՄԱԶ-ի՝ 13 տոկոս) և 4 տոկոսը (ըստ ՅՄԱԶ-ի՝ 2 տոկոսը)՝ թերսնված (Branca et al. 1998): Հաշվի առնելով տվյալների վստահելիության միջակայքը, այս արդյունքներն էապես չեն տարբերվում ՅՄԱԶ-ի արդյունքներից:

11.6 Կանանց սնուցման կարգավիճակը

ՅՄԱԶ-ի ընթացքում անտրոպոմետրիկ տվյալներ են հավաքագրվել նաև 15-49 տարեկան բոլոր կանանցից: Կանանց սնուցման կարգավիճակը կարևոր է և՛ որպես ընդհանուր առողջության ցուցանիշ, և՛ որպես մոր և մանկան համար հղիության ելքի կանխատեսում: Կնոջ սնուցման կարգավիճակի երկու ցուցանիշները՝ հասակը և մարմնի զանգվածի ցուցանիշը (ՄՁՑ), ներկայացված են աղյուսակ 11.15-ում:

Մոր հասակը հանդիսանում է անցյալում սնուցման կարգավիճակի չափանիշ և մասնակիորեն արտացոլում է սոցիալ-տնտեսական վիճակի գումարային ազդեցությունն ու մանկության ընթացքում սննդի մատչելիությունը: Այն կարող է օգտագործվել՝ կանխատեսելու համար ծննդաբերությունների հետ կապված բարձր ռիսկը, քանի որ կարճ հասակը հաճախ ենթադրում է կոնքի փոքր չափեր, որի դեպքում էլ մեծանում է բարդացված ծննդաբերության հավանականությունը: Կարճ հասակը կապված է նաև նորածնի ծննդյան ցածր քաշի հետ՝ ծնվելիս, մեռելածնության բարձր ռիսկի և վիժման բարձր ցուցանիշների հետ: Հասակը, որից ցածր գտնվելը համարվում է սնուցման ռիսկ, տատանվում է 140-ից 150սմ: Հետազոտության ժամանակ հարցմանը ենթակա կանանց 96%-ի մոտ կատարվել են չափումներ: Հայաստանի կանանց միջին հասակը 158սմ է. կանանց միայն 1%-ն է եղել ցածր 145սմ-ից: Միջին հասակը փոքր-ինչ տատանվում է ըստ հիմնական բնութագրիչների: Կարճահասակությունը գերակշռում է Վայոց Ձորում, որտեղ կանանց 5%-ը ցածր են 145սմ-ից:

ՄՁՑ-ն, որտեղ արտացոլված են և՛ հասակը, և՛ քաշը, ավելի լավ գնահատումներ է ապահովում նիհարության և ճարպակալման վերաբերյալ, քան միայն քաշը: Այդ ցուցանիշը սահմանվում է որպես քաշը (կիլոգրամներով) բաժանած հասակի (մետրերով) քառակուսուն ($կգ/մ^2$): ՄՁՑ-ի համար 18.5-ից ցածրը սահմանվում է որպես կալորիականության խրոնիկական պակաս՝ ոչ հղի կանանց շրջանում: Կանանց սնուցման կարգավիճակի գնահատման ժամանակ սխալներից խուսափելու համար հղի և հարցմանը նախորդող երկու ամիսների ընթացքում ծննդաբերած կանայք չեն ընդգրկվել քաշի և մարմնի զանգվածի ցուցանիշների հաշվարկման մեջ: Հետազոտման ենթակա 6210 կանանցից 96%-ի մոտ իրականացվել են չափումներ: Աղյուսակ 11.15-ը ցույց է տալիս, որ Հայաստանի կանանց ավելի քիչ, քան 4 տոկոսն է թերսնված կամ ունի ցածր ՄՁՑ:

ՄՁՑ-ն կարող է օգտագործվել նաև գնահատելու համար այն կանանց տեսակար կշիռը, որոնք գերքաշ են կամ գեր: 25.0-ն առաջարկվել է որպես սահմանային ցուցանիշ՝ բնորոշելու համար “գերքաշությունը”, մինչդեռ 30.-ից բարձրը սահմանվել է որպես “գերություն”: Ըստ հետազոտության տվյալների Հայաստանում 10 կանանցից մոտավորապես 4-ի քաշն ավելի է, ընդ որում՝ 27 տոկոսը գերքաշ է, 14 տոկոսը՝ գեր: ՄՁՑ-ի բարձր միավորները խիստ կախված են տարիքից: Օրինակ, 15-19 տարեկան կանանց միայն 2 տոկոսն է գեր՝ 45-49 տարեկան կանանց մեկ երրորդի (33%) դիմաց: Դեռ ավելին, 35 և ավելի բարձր տարիքի կանանց կեսից ավելին գերքաշ են կամ գեր: Այս ցուցանիշը վկայում է, որ մեծահասակ կանանց մեծ մասը չունի առողջ ապրելակերպ, և դա կարևոր առողջապահական խնդիր է Հայաստանի համար:

Աղյուսակ 11.15 Կանանց սնուցման կարգավիճակն ըստ հիմնական բնութագրիչների

15-49 տարեկան կանանց, միջին հասակն ու 145 սմ-ից ցածր հասակ ունեցողների տոկոսային բաշխումը, մարմնի զանգվածի միջին ցուցանիշը (ՄՁՑ), ՄՁՑ-ի տոկոսային բաշխումը, ՀԺԱՀ միջին Z-միավորը և թերսնվածների տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Քաշն ըստ հասակի ¹ (%)											
	Հասակը				Տոկոս. բաշխումը ՄՁՑ-ի հետ.							
	Միջին հասակը սմ-ով	ցածր հասակ ունեցողների տոկոսը	145սմ-ից Կանանց թվաքանակը (մարդ)	Մարմնի զանգվածի միջին ցուցանիշ (կգ/մ2)	<18.5 (ցածր)	18.5-24.9 (նորմալ)	25.0-29.9 (գերքաշ)	30.0+ (գեր) Ընդամենը	ՀԺԱՀ միջին Z-միավոր	Ցածր -2 SD	Կանանց թվաքանակը (մարդ)	
Տարիքը												
15-19	158.1	1.3	1106	22.3	6.4	77.9	13.4	2.2	100.0	-0.2	1.3	1080
20-24	158.2	1.0	963	22.8	6.7	71.9	18.1	3.3	100.0	0.0	0.7	871
25-29	157.9	1.8	735	23.7	4.3	64.9	24.2	6.6	100.0	-0.1	1.9	686
30-34	157.6	0.4	739	24.8	3.3	54.8	29.2	12.6	100.0	0.0	2.4	711
35-39	157.5	1.3	922	26.0	1.3	46.4	35.5	16.9	100.0	0.0	2.4	914
40-44	157.2	1.2	910	27.3	0.6	35.1	37.8	26.5	100.0	0.5	0.7	907
45-49	157.4	1.0	791	28.0	1.4	29.4	36.6	32.6	100.0	0.6	1.3	791
Բնակավայրը												
Քաղաքային	158.5	0.8	3,783	24.8	4.1	55.0	27.5	13.3	100.0	0.1	1.5	3698
Գյուղական	156.5	1.7	2,383	25.1	2.6	54.9	27.1	15.3	100.0	0.1	1.4	2264
Մարզը												
Երևան	159.1	0.9	2103	24.6	4.3	57.3	25.8	12.6	100.0	0.0	1.6	2061
Արագածոտն	156.9	1.5	278	24.8	2.9	56.3	27.5	13.4	100.0	0.1	1.5	263
Արարատ	156.3	1.7	603	25.4	3.2	52.1	24.4	20.4	100.0	0.2	1.6	570
Արմավիր	157.3	0.4	550	25.7	3.0	49.7	28.5	18.8	100.0	0.3	1.7	522
Գեղարքունիք	156.9	2.6	415	24.5	3.0	61.1	23.7	12.2	100.0	0.0	1.5	397
Լոռի	157.0	1.2	479	24.8	4.6	51.2	30.7	13.6	100.0	0.1	2.3	467
Կոտայք	156.6	0.9	493	25.4	3.3	50.2	30.0	16.5	100.0	0.2	0.9	481
Շիրակ	158.8	0.0	609	24.7	1.9	57.1	34.2	6.7	100.0	0.1	0.6	592
Սյունիք	155.7	2.3	258	25.1	4.0	52.6	26.4	17.0	100.0	0.1	1.1	249
Վայոց ձոր	155.4	4.8	106	24.8	2.4	59.4	22.9	15.2	100.0	0.0	1.4	102
Տավուշ	156.0	1.4	273	25.3	2.6	54.3	26.8	16.2	100.0	0.2	1.9	259
Կրթությունը												
Տարրական/միջին	156.9	1.2	566	24.1	5.8	60.9	20.9	12.3	100.0	0.0	1.7	550
Միջնակարգ	157.3	1.1	2244	25.0	4.0	54.7	26.4	14.9	100.0	0.1	1.5	2157
Միջնակարգ-նասնագիտական	157.5	1.4	2206	25.1	3.1	52.7	29.2	15.0	100.0	0.1	1.7	2143
Բարձրագույն	159.2	0.8	1150	24.8	2.3	57.0	29.1	11.6	100.0	0.1	1.0	1112
Ընդամենը	157.7	1.1	6166	24.9	3.5	55.0	27.4	14.1	100.0	0.1	1.5	5962

¹ Բացառում է հղի և հարցմանը նախորդող 2 ամիսների ընթացքում ծննդաբերած կանանց:

Ս. Գրիգորյան, Կ. Բաբայան և Ս. Մոնջյան

Մարդու իմունային անբավարարության վիրուսը (ՄԻԱՎ) հանդիսանում է ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՐ) պատճառ: Այն թուլացնում է իմունային համակարգը, ինչի դեպքում օրգանիզմը ընկալունակ է դառնում այլ հիվանդությունների նկատմամբ, և հիվանդանալուց հետո մարդը այլևս չի կարողանում ապաքինվել:

ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ը պանդեմիա է, որի մասին, ըստ էության, հաղորդում են բոլոր երկրները: Աշխարհում ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց թիվը հասնում է մոտավորապես 36,1 միլիոնի, ներառյալ՝ 1,4 մլն երեխաներ: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով համաճարակի բռնկման պահից սկսած ՄԻԱՎ-ով վարակված մոտ 17,5 մլն չափահաս և 4,3 մլն երեխա մահացել են ՁԻԱՐ-ից (UNAIDS/WHO, 2000թ.):

Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության տարածքում արձանագրված է 700000 ՄԻԱՎ վարակակիր: Այս տարածքում ՄԻԱՎ-ով վարակման ցուցանիշը ներկայումս ամենաարագ աճողն է աշխարհում: 1988թ-ից մինչև 2000թ-ի սեպտեմբերի 1-ը Հայաստանում գրանցված էր 161 ՄԻԱՎ վարակակիր: Ենթադրվում է, որ Հայաստանում ՄԻԱՎ վարակակիրների իրական թիվը զգալիորեն գերազանցում է պաշտոնապես գրանցված դեպքերի թվին: Ըստ պաշտոնական տվյալների, այնուամենայնիվ, հնարավոր է պարզել հետևյալ միտումները. ՄԻԱՎ-ով վարակվածների մեծամասնությունը արական սեռի չափահաս ներկայացուցիչներ են (75%), և փոխանցումը կատարվում է ներերակային թմրանյութերի օգտագործման և հետերոսեքսուալ ճանապարհներով: Հայաստանում ՄԻԱՎ վարակակիրների ընդհանուր թվի 2%-ը երեխաներ են: Դեպքերի մեծամասնությունը գրանցվել էրևանում (ՀՀ ԱՆ ՁԻԱՐ կանխարգելման հանրապետական կենտրոն, 2001թ.):

Մինչև 2001թ-ի սեպտեմբերի 1-ը ՄԻԱՎ-ով վարակված 28 հոգու մոտ ավտորոշվել է ՁԻԱՐ: Համաճարակի բռնկման պահից սկսած մահացել են ՁԻԱՐ-ով տառապող 18 հիվանդ ներառյալ 5-ը՝ 2000թ-ին, և 3-ը՝ 2001թ-ին: Վերջին 2,5 տարիներին գրանցված ՄԻԱՎ վարակակիրների դեպքերի թիվը գերազանցում է մինչ այդ գրանցված բոլոր դեպքերի թվին: ՁԻԱՐ-ի դեպքերի կեսը և հիվանդությունից մահացածների կեսը նույապես գրանցվել են վերջին 2,5 տարիների ընթացքում (ՀՀ ԱՆ ՁԻԱՐ կանխարգելման հանրապետական կենտրոն, 2001):

Հայաստանի ԺԱՀ-ի ընթացքում կանանցից և տղամարդկանցից հավաքագրվել է տեղեկատվություն ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի և այլ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների (սիֆիլիս, գոնորեա, խլամիդիոզ) վերաբերյալ, որոնք հայտնի են որպես ՄԻԱՎ-ի համաճարակի համար կարևոր նախատրամադրող գործոններ: Այս գլուխը ամփոփում է տեղեկատվությունը ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի գիտելիքների, հիվանդության ընթացման և վարքագծի վերաբերյալ տեղեկատվությունը ազգային մակարդակում, այդ թվում՝ ըստ բնակչության աշխարհագրական և սոցիալ-տնտեսական ենթախմբերի:

12.1 Գիտելիքներ ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի վերաբերյալ և ՄԻԱՎ-ի կանխարգելման մեթոդները

12.1 աղյուսակը ցույց է տալիս այն կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր իրազեկ են ՁԻԱՐ-ի գոյության մասին, ըստ հիմնական բնութագրիչների: Համարյա բոլոր հարցվողները (կանանց 94%-ը և տղամարդկանց 97%-ը) նշել են, որ տեղյակ են ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի գոյության մասին: Հիմնական բոլոր բնութագրիչների առումով 10 կանանցից և տղամարդկանցից առնվազն 9-ը իրազեկ են ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի գոյության մասին, բացառություն են կազմում նրանք, ովքեր ունեն տարրական/միջին դպրոցական կրթություն, ինչպես նաև այն կանայք ու տղամարդիկ, ովքեր ապրում են Գեղարքունիքում ու Վայոց ձորում, և կանայք, ովքեր ապրում են Արագածոտնում և Լոռիում:

Աղյուսակ 12.1 ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի մասին իմացությունը

Կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր լսել են ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի մասին, և նրանց տոկոսը, ովքեր կարծում են, որ գոյություն ունի ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու որևէ ուղի, ըստ հիմնական բնութագրիչների, Չայաստան 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	Կանայք			Տղամարդիկ		
	Լսել են ՄԻԱՎ / ՉԻԱՅ-ի մասին	Կարծում են, որ կա ՄԻԱՎ/ ՉԻԱՅ-ից խուսափելու որևէ ուղի	Կանանց թվաքանակը (մարդ)	Լսել են ՄԻԱՎ/ ՉԻԱՅ-ի մասին	Կարծում են, որ կա ՄԻԱՎ/ ՉԻԱՅ-ից խուսափելու որևէ ուղի	Տղամարդկանց թվաքանակը (մարդ)
Տարիքը						
15-19	89.9	46.2	1160	92.3	51.1	263
20-24	95.5	64.1	1007	97.6	73.2	215
25-29	96.0	66.4	769	97.8	74.9	194
30-34	96.0	66.1	763	96.8	75.0	205
35-39	95.3	64.7	962	96.4	78.1	237
40-44	94.1	65.2	947	97.2	79.0	275
45-49	95.9	64.5	822	98.0	81.6	203
50-54	42	42	42	98.8	79.0	126
Ամուսնական կարգավիճակը						
Երբևէ չամուսնացած	92.3	57.0	1851	95.7	62.7	530
Հարցման պահին ամուսնացած	95.6	63.5	4125	97.0	77.9	1161
Նախկինում ամուսնացած	92.6	63.9	455	(96.2)	(80.0)	28
Բնակավայրը						
Քաղաքային	96.9	70.1	3942	98.6	81.2	1024
Գյուղական	90.5	48.3	2488	93.7	61.5	695
Մարզը						
Երևան	97.8	75.5	2206	99.1	86.4	582
Արագածոտն	89.0	58.5	279	99.3	77.7	78
Արարատ	98.6	62.8	642	100.0	69.8	177
Արմավիր	94.1	48.9	553	97.9	63.4	172
Գեղարքունիք	87.3	38.2	484	88.0	43.6	124
Լոռի	83.6	47.9	489	89.7	42.5	119
Կոտայք	96.9	54.6	505	99.2	85.0	137
Շիրակ	95.7	66.5	611	94.2	77.7	161
Սյունիք	92.9	55.9	271	99.2	94.1	65
Վայոց ձոր	86.7	55.9	113	88.1	47.5	25
Տավուշ	93.1	53.4	278	89.9	55.7	79
Կրթությունը						
Տարրական/միջին	79.9	30.2	593	89.3	49.7	245
Միջնակարգ	91.9	50.6	2341	96.8	69.5	510
Միջնակարգ-մասնագիտական	98.1	69.3	2295	97.7	75.8	588
Բարձրագույն	99.5	84.2	1201	99.3	89.5	376
Ընդամենը	94.4	61.7	6430	96.6	73.2	1719

ԿԶ-կիրառելի չէ
 Նշում՝ Փակագծում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի մասին գիտելիքների մակարդակը պարզելու նպատակով հարցվողները, որոնք տեղյակ էին վարակի մասին, հարցվել են՝ կա՞րողյո՞ք ինչ-որ բան, որ անհատը կարող է անել՝ խուսափելու համար ՄԻԱՎ-ով վարակվելուց: Տվյալները ցույց են տալիս, որ չնայած համարյա բոլոր կանայք և տղամարդիկ իրազեկ են ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի գոյության մասին, կանանց միայն 62%-ը և տղամարդկանց 73%-ն է կարծում, որ կա ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու որևէ ուղի: Երիտասարդները, գյուղական շրջաններում ապրողները կամ երբևէ չամուսնացածները ավելի քիչ են հակված կարծելու, որ կա ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով վարակվելուց խուսափելու որևէ ուղի, քան ուրիշները: Գոյություն ունի կորելիացիոն ուժեղ դրական կապ կրթական մակարդակի և այն կարծիքի միջև, որ գոյություն ունեն ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով վարակվելուց խուսափելու ուղիներ: Արմավիրում, Գեղարքունիքում և Լոռիում ապրող կանանց ու Գեղարքունիքում, Լոռիում և Վայոց ձորում ապրող տղամարդկանց կեսից քիչն է կարծում, որ կա ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու որևէ ուղի:

Եթե հարցվողները նշում էին, որ կարելի է խուսափել ՄԻԱՎ վարակից, նրանց խնդրվում էր նշել հիվանդությունից պաշտպանվելու ուղիները: ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու վերաբերյալ երկու տիպի հարցեր էին տրվում. 1. վերջավորություն չունեցող հարց, և հարցվողին ընձեռնվում էր հնարավորություն, որպեսզի նա առանց հուշելու պատասխանի այդ հարցին՝ մեկ կամ բոլոր իմաստներով, 2. կանանց և տղամարդկանց տրվում էին հատուկ հարցեր, թե արդյո՞ք պահպանակի օգտագործումը և միայն մեկ զուգընկերոջ հետ սեռական ակտիվության սահմանափակումը կարող են կրճատել ՄԻԱՅ-ով վարակվելու հավանականությունը:

12.2.1 և 12.2.2 աղյուսակները ցույց են տալիս այն կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր ինքնուրույն նշել են հիվանդությունով վարակվելուց խուսափելու հատուկ ուղիներ: ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու ամենահաճախակի նշվող ուղին պահպանակի օգտագործումն է: Բոլոր տղամարդկանց կեսից ավելին (53%) և բոլոր կանանց մեկ քառորդը (27%) նշել են պահպանակը: Կանանց մոտ երկրորդ ամենատարածված պատասխանը սեռական հարաբերությունների զսպվածությունն էր (այսպես է պատասխանել տղամարդկանց 8%-ը): Տղամարդկանց մոտ երկրորդ ամենատարածված պատասխանը մարմնավաճառների հետ սեռական հարաբերություններ ունենալուց խուսափելն էր (31%): Որպես ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու ուղի, և՛ տղամարդկանց, և՛ կանանց մոտավորապես 1/4-ը նշել է սեռական հարաբերություններ ունենալը միայն մեկ զուգընկերոջ հետ (համապատասխանաբար 26% և 23%): Սահմանափակել սեռական զուգընկերների թվաքանակը՝ նշել են կանանց 7%-ը և տղամարդկանց 13%-ը:

Աղյուսակ 12.2.1 ՄԻԱՎ/ՉԻԱՎ-ից խուսափելու ուղիների մասին իմացությունը, կանալը

Կանանց տոկոսը, ովքեր ինքնուրույն նշել են ՄԻԱՎ/ՉԻԱՎ-ից խուսափելու ուղիներ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ.

(%, %)

Հիմնական բնութագրիչներ	ՄԻԱՎ/ՉԻԱՎ-ից խուսափելու ուղիները														Այլ	Կանանց թվաքանակը (մարդ)
	Չեն լսել ՉԻԱՎ-ի մասին կամ որ կարող են խուսափել ՉԻԱՎ-ից	Կարծում են, որ ՉԻԱՎ-ից խուսափելու ուղիներ չկան	Չգիտեն յուրաքանչյուր հատուկ ուղիներ	Սեռական հարաբերությունների զսպվածություն	Օգտագործել պահանջները ¹	Ունենալ մեկ սեռական զուգընկեր	Սահմանափակել սեռական զուգընկերների թվաքանակը	Խուսափել սեռական հարաբերություններից, ովքեր չառաջարկում են	Խուսափել սեռական հարաբերություններից, որոնց մարմնուսուպները հետ	Խուսափել սեռական հարաբերություններից, որոնց հոստերը հետ	Խուսափել սեռական հարաբերություններից, որոնց փոխանցումները հետ	Խուսափել սեռական հարաբերություններից	Խուսափել սեռական հարաբերություններից	Խուսափել սեռական հարաբերություններից		
Տարիքը																
15-19	49.5	4.3	3.6	18.4	19.9	11.3	4.4	3.0	2.2	0.3	0.9	1.1	0.8	1.6	1160	
20-24	32.2	3.7	2.3	23.1	32.3	22.5	5.9	4.4	5.5	0.4	4.5	4.0	1.5	1.9	1007	
25-29	28.2	5.4	1.5	25.0	32.4	26.1	8.2	3.9	6.2	0.9	4.0	3.8	1.1	1.9	769	
30-34	27.5	6.4	0.5	27.0	30.2	26.8	8.2	4.8	6.6	0.9	3.5	4.7	1.0	1.5	763	
35-39	30.6	4.6	1.2	25.7	26.4	25.2	7.9	4.3	5.3	0.0	3.0	4.6	1.4	1.8	962	
40-44	30.1	4.7	1.9	25.6	24.4	24.0	7.9	3.7	7.2	0.7	4.3	3.6	0.9	2.5	947	
45-49	31.6	4.0	0.8	27.1	26.1	27.0	7.8	3.6	5.8	1.4	5.1	2.9	0.5	2.5	822	
Ամուսնական կարգավիճակը																
Երբևէ չամուսնացած	39.7	3.4	2.6	22.6	27.9	16.1	5.9	4.3	3.8	0.4	3.6	3.0	1.3	2.4	1851	
Կապիտան ամուսնացած	31.3	5.2	1.5	24.8	26.0	25.4	7.6	3.8	6.2	0.7	3.4	3.8	1.0	1.8	4125	
Նախկինում ամուսնացած	30.8	5.3	1.4	25.9	32.1	23.7	6.7	3.0	4.5	0.2	3.7	2.4	1.0	1.8	455	
Բնակավայրը																
Քաղաքային	26.3	3.6	1.8	26.3	36.7	26.7	7.5	4.4	6.1	0.8	4.5	4.6	1.4	2.0	3942	
Գյուղական	45.4	6.3	1.9	20.9	11.6	16.2	6.2	3.1	4.2	0.2	1.8	1.6	0.5	1.8	2488	
Մարզը																
Երևան	21.1	3.4	1.6	27.1	48.1	30.2	9.2	4.6	7.2	0.9	5.7	4.8	1.9	2.2	2206	
Արագածոտն	38.6	2.9	0.4	26.2	17.1	26.2	1.9	1.7	6.4	0.2	9.3	5.4	3.1	0.0	279	
Արարատ	30.9	6.4	1.8	30.3	10.3	21.1	14.0	4.3	3.7	0.7	0.9	1.2	0.0	2.8	642	
Արմավիր	44.8	6.3	1.0	16.8	12.1	25.9	8.1	1.0	1.2	0.2	3.6	3.6	0.8	0.8	553	
Գեղարքունիք	55.8	5.9	2.0	23.9	4.7	4.7	2.7	2.7	6.7	0.0	0.8	0.6	0.4	0.8	484	
Լոռի	44.5	7.6	1.7	12.5	14.9	17.4	2.4	3.4	3.2	0.5	1.2	3.9	0.5	0.7	489	
Կոտայք	38.2	7.2	4.9	20.2	11.9	14.2	3.4	3.4	2.5	0.2	2.2	3.4	0.0	4.7	505	
Շիրակ	31.7	1.8	1.4	29.9	37.2	22.4	7.1	7.3	4.5	0.8	2.0	3.7	0.6	1.8	611	
Սյունիք	40.7	3.4	0.6	26.1	7.9	25.9	2.0	1.4	1.4	0.4	1.2	1.4	0.4	0.2	271	
Վայոց ձոր	40.0	4.1	3.1	15.9	21.8	18.8	8.7	10.3	11.1	1.1	1.5	1.5	2.2	3.9	113	
Տավուշ	41.7	4.8	2.0	17.3	23.0	10.5	2.6	2.4	12.5	0.8	2.8	2.0	0.6	2.2	278	
Կրթությունը																
Տարրական/միջին	64.2	5.5	2.5	12.9	7.9	9.7	3.8	1.3	2.5	0.2	1.2	1.2	0.5	2.1	593	
Միջնակարգ	43.6	5.8	2.6	21.0	17.8	16.2	4.8	2.7	3.4	0.2	1.2	1.2	0.6	1.0	2341	
Միջնակարգ-մասնագիտական	26.2	4.5	1.3	27.5	30.6	25.8	8.2	4.7	6.3	0.7	4.3	4.1	1.2	2.4	2295	
Բարձրագույն	13.3	2.5	0.9	29.9	47.5	35.5	10.6	6.0	8.8	1.4	7.6	7.7	2.1	2.8	1201	
Ընդամենը	33.7	4.7	1.8	24.2	27.0	22.6	7.0	3.9	5.4	0.6	3.5	3.4	1.1	1.9	6430	

Նշում. Սահմանափակ համատեղ օգտագործման և մոնակի խայթոցից խուսափելու վերաբերյալ պատասխանները ընդգրկված չեն, քանի որ դրանք 0,2 տոկոս են կամ ավելի քիչ:

¹Միայն ինքնուրույն պատասխաններ: Պահպանակի օգտագործման և սահմանափակ քանակությամբ զուգընկերների վերաբերյալ ինքնուրույն և «նախապատրաստած» պատասխանների համար տես 12.3.1. աղյուսակը:

Աղյուսակ 12.2.2 ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու ուղիների մասին իմացությունը, տղամարդիկ

Տղամարդկանց տոկոսը, ովքեր ինքնուրույն նշել են ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու ուղիներ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

	ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու ուղիները														Տղամարդկանց թվաքանակը (մարդ)	
	Չեն լսել ՉԻԱՅ-ի մասին կամ որ կարող են խուսափել ՉԻԱՅ-ից	Կարծում են, որ ՉԻԱՅ-ից խուսափելու ուղիներ	Չգիտեն յուրաքանչյուր հատուկ ուղիներ	Սեռական հարաբերությունների զսպվածություն	Օգտագործել պահպանողական	ՈՒՆՆԱՎ մեկ սեռական զուգընկեր	Սահմանափակ սեռական զուգընկերների ¹ թվաքանակը	Խուսափել սեռական հարաբերություններից, ովքեր ունեն ճանաչողական կերպեր	Խուսափել սեռական հարաբերություններից, ովքեր ունեն ճանաչողական կերպեր	Խուսափել սեռական հարաբերություններից, ովքեր ունեն ճանաչողական կերպեր	Խուսափել սեռական հարաբերություններից, ովքեր ունեն ճանաչողական կերպեր	Խուսափել սեռական հարաբերություններից, ովքեր ունեն ճանաչողական կերպեր	Խուսափել սեռական հարաբերություններից, ովքեր ունեն ճանաչողական կերպեր	Խուսափել սեռական հարաբերություններից, ովքեր ունեն ճանաչողական կերպեր		Մյլ
Տարիքը																
15-19	43.4	5.5	0.9	3.8	40.6	15.0	4.9	0.9	19.3	0.2	1.0	0.2	0.4	3.1	263	
20-24	21.3	5.5	1.9	3.5	57.1	20.4	16.9	1.9	30.1	2.8	1.3	0.8	0.5	5.4	215	
25-29	16.6	8.5	1.2	9.1	57.4	26.4	16.5	4.6	26.0	2.2	2.5	4.4	1.3	7.2	194	
30-34	17.5	7.6	0.0	8.2	51.0	30.7	17.4	2.2	26.1	1.5	3.7	4.2	0.0	8.6	205	
35-39	15.5	6.4	0.0	13.0	56.0	30.0	6.2	2.6	30.4	2.3	2.6	2.4	0.5	5.6	237	
40-44	15.3	5.6	0.4	11.8	58.2	23.8	14.4	3.6	36.7	1.5	3.5	2.2	0.0	4.3	275	
45-49	13.6	4.7	0.9	9.1	51.5	33.6	15.7	1.8	39.4	0.9	1.9	1.3	0.0	4.5	203	
50-54	16.3	4.7	0.0	4.2	46.2	32.6	13.8	4.0	44.1	2.3	1.6	2.5	0.0	7.0	126	
Ամուսնական կարգավիճակը																
Երբևէ չամուսնացած	30.8	6.4	0.9	4.7	49.9	18.4	12.9	1.7	24.3	1.9	1.4	1.9	0.9	5.2	530	
Հարցման պահին ամուսնացած	16.1	6.1	0.6	9.5	53.6	28.8	13.0	3.1	34.0	1.5	2.8	2.2	0.1	5.7	1161	
Նախկինում ամուսնացած	(20.0)	(0.0)	(0.0)	(13.8)	(55.5)	(38.8)	(4.0)	(0.0)	(16.6)	(0.0)	(0.0)	(4.6)	(0.0)	(2.0)	28	
Բնակավայրը																
Քաղաքային	14.7	4.1	0.3	5.9	59.9	28.6	16.4	3.1	35.4	2.4	2.9	2.5	0.6	7.1	1024	
Գյուղական	29.5	9.0	1.2	11.3	41.5	21.6	7.6	1.9	23.9	0.5	1.4	1.7	0.0	3.1	695	
Մարզը																
Երևան	10.9	2.7	0.0	4.9	65.8	34.4	19.0	1.6	33.9	2.9	3.8	2.7	0.2	7.8	582	
Արագածոտն	15.8	6.5	1.4	1.4	71.2	0.0	0.0	0.7	36.7	3.6	0.7	0.7	0.0	2.2	78	
Արարատ	26.6	3.6	0.0	41.0	41.0	43.2	3.6	0.0	4.3	0.0	0.0	2.2	0.0	0.0	177	
Արմավիր	26.9	9.7	4.1	13.1	55.9	42.1	15.2	4.1	17.2	1.4	0.0	3.4	0.7	2.1	172	
Գեղարքունիք	41.9	14.5	0.9	0.9	18.8	8.5	0.9	3.4	28.2	0.0	1.7	0.0	0.9	6.8	124	
Լոռի	32.2	25.3	0.0	0.0	23.0	1.1	0.0	0.0	24.1	0.0	0.0	0.0	0.0	3.4	119	
Կոտայք	14.2	0.8	0.0	1.6	80.3	15.7	23.6	3.1	34.6	0.0	0.8	1.6	0.0	2.4	137	
Շիրակ	19.4	2.9	0.0	5.8	54.0	10.1	10.1	9.4	66.2	2.2	4.3	0.7	1.4	6.5	161	
Սյունիք	5.0	0.8	3.4	0.0	24.4	36.1	34.5	2.5	14.3	0.0	1.7	4.2	0.0	19.3	65	
Վայոց ձոր	40.6	11.9	0.0	5.0	15.8	24.8	4.0	2.0	33.7	2.0	3.0	1.0	0.0	9.9	25	
Տավուշ	39.9	4.4	0.0	0.6	34.8	19.0	5.7	2.5	37.3	2.5	6.3	6.3	0.0	3.2	79	
Կրթությունը																
Տարրական/միջին	42.8	7.5	1.2	6.9	31.7	13.9	9.9	1.6	17.5	0.2	1.1	0.5	1.0	4.4	245	
Միջնակարգ	24.2	6.3	0.9	7.0	50.4	24.9	10.8	1.2	27.7	0.7	2.0	2.9	0.2	3.8	510	
Միջնակարգ-մասնագիտական	16.3	7.8	0.2	9.2	54.1	27.3	13.5	2.1	30.8	1.5	2.5	2.0	0.2	6.0	588	
Բարձրագույն	8.3	2.2	0.8	8.5	66.2	32.4	16.4	5.9	43.3	4.1	3.2	2.6	0.3	7.8	376	
Ընդամենը	20.7	6.1	0.7	8.1	52.5	25.8	12.8	2.6	30.7	1.6	2.3	2.2	0.3	5.5	1719	

Նշում. Սափրիչի համատեղ օգտագործման (1%) և մոծակի խայթոցից խուսափելու (0.1%) վերաբերյալ պատասխանները ընդգրկված չեն: Փակագծում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:
¹ Միայն ինքնուրույն պատասխաններ: Պահպանակի օգտագործման և սահմանափակ քանակությամբ զուգընկերների վերաբերյալ ինքնուրույն և "նախապատրաստած" պատասխանների համար տես 12.3.1. աղյուսակը:

ՉԻԱՅ-ի կանխարգելման ծրագրերը իրենց նպատակները և ջանքերը կենտրոնացնում են վարքագծի երեք կարևոր տեսանկյունների վրա. պահպանակի օգտագործում, սեռական զուգընկերների թվաքանակի սահմանափակում/հավատարիմ մնալ մեկ զուգընկերոջը և սեռական հարաբերությունների զսպվածություն: 12.3.1 և 12.3.2 աղյուսակները ցույց են տալիս այն կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր նշել են ՉԻԱՅ-ից խուսափելու 0, 1 կամ 2-3 ուղիներ: Ընդհանուր առմամբ, կանանց 61%-ը և տղամարդկանց 72%-ը կարողացել են ինքնուրույն նշել ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու առնվազն մեկ ծրագրայնորեն կարևոր ուղի (Գծապատկեր 12.1):

Աղյուսակ 12.3.1 ՄԻԱՎՉԻԱՅ-ից խուսափելու համար ծրագրայնորեն կարևոր ուղիների իմացությունը, կանայք

Կանանց տոկոսային բաշխումը ըստ ՄԻԱՎՉԻԱՅ-ից խուսափելու համար ծրագրայնորեն կարևոր ուղիների իմացության, և այն կանանց տոկոսը, ովքեր գիտեն 2 յուրահատուկ ուղիներ ՄԻԱՎՉԻԱՅ-ից խուսափելու համար, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2000թ.

Հիմնական բնութագրիչներ	ՄԻԱՎՉԻԱՅ-ից խուսափելու համար ծրագրայնորեն կարևոր ուղիների իմացություն				ՄԻԱՎՉԻԱՅ-ից խուսափելու յուրահատուկ ուղիները		Կանանց թվաքանակը (մարդ)
	Տեղյակ չեն ¹	Մեկ ուղի	Երկու կամ երեք ուղիներ	Ընդամենը	Օգտագործել պահպանակների թվաքանակը	Սահմանափակել սեռական զուգընկերների թվաքանակը ²	
Տարիքը							
15-19	56.4	9.0	34.6	100.0	32.4	38.7	1160
20-24	36.9	8.8	54.2	100.0	52.8	58.3	1007
25-29	34.3	9.6	56.1	100.0	54.5	62.2	769
30-34	34.5	8.1	57.5	100.0	51.6	63.9	763
35-39	35.5	10.3	54.3	100.0	49.8	60.4	962
40-44	36.0	11.0	53.0	100.0	48.7	59.6	947
45-49	36.0	8.6	55.3	100.0	51.1	61.7	822
Ամուսնական կարգավիճակը							
Երբևէ չամուսնացած	45.0	8.5	46.4	100.0	44.7	49.8	1851
Հարցման պահին ամուսնացած	37.1	9.9	53.0	100.0	49.0	59.7	4125
Նախկինում ամուսնացած	36.5	8.2	55.2	100.0	51.2	59.5	455
Բնակավայրը							
Քաղաքային	30.7	8.5	60.7	100.0	58.4	65.0	3942
Գյուղական	53.5	10.7	36.3	100.0	31.3	43.9	2488
Մարզը							
Երևան	25.6	6.4	68.0	100.0	66.1	70.0	2206
Արագածոտն	41.7	14.9	43.4	100.0	37.4	51.7	279
Արարատ	39.0	11.9	49.1	100.0	40.4	59.2	642
Արմավիր	51.5	11.5	37.0	100.0	31.7	47.1	553
Գեղարքունիք	63.6	9.0	27.4	100.0	22.7	29.9	484
Լոռի	52.3	9.3	38.4	100.0	35.0	44.7	489
Կոտայք	46.7	16.9	36.4	100.0	33.3	50.1	505
Շիրակ	34.3	5.1	60.6	100.0	58.3	62.2	611
Սյունիք	44.7	9.9	45.3	100.0	41.7	52.4	271
Վայոց ձոր	46.1	14.4	39.5	100.0	40.0	47.8	113
Տավուշ	47.2	11.9	40.9	100.0	42.9	47.6	278
Կրթությունը							
Տարրական/միջին	71.9	7.7	20.5	100.0	17.4	25.5	593
Միջնակարգ	50.8	10.1	39.1	100.0	35.3	45.3	2341
Միջնակարգ-մասնագիտական	31.6	10.2	58.2	100.0	54.9	64.4	2295
Բարձրագույն	15.9	7.2	76.9	100.0	74.2	80.2	1201
Ընդամենը	39.4	9.4	51.3	100.0	47.9	56.8	6430

Նշում. Ծրագրայնորեն կարևոր ուղիներն են. սեռական հարաբերությունների զսպվածությունը, պահպանակի օգտագործումը և սեռական զուգընկերների թվաքանակի սահմանափակումը: Սեռական հարաբերությունների զսպվածությունը գնահատվում է միայն ինքնուրույն պատասխանների միջոցով, իսկ պահպանակի օգտագործումը և սեռական զուգընկերների սահմանափակումը՝ ինքնուրույն և «Նախապատրաստած» պատասխանների միջոցով:

¹ Նրանք, ովքեր իրագել չեն ՄԻԱՎՉԻԱՅ-ի գոյության մասին կամ չգիտեն ծրագրայնորեն կարևոր որևէ ուղի ՄԻԱՎՉԻԱՅ-ից խուսափելու համար:

² Գերադասում են սահմանափակել սեռական զուգընկերների թվաքանակը և սեռական հարաբերություններ ունենալ մեկ զուգընկերոջ հետ/ հավատարիմ մնալ մեկ զուգընկերոջ:

Աղյուսակ 12.3.2 ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու համար ծրագրայնորեն կարևոր ուղիների իմացությունը, տղամարդիկ

Տղամարդանց տոկոսային բաշխումը ըստ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու համար ծրագրայնորեն կարևոր ուղիների իմացության, և այն տղամարդկանց տոկոսը, ովքեր գիտեն 2 յուրահատուկ ուղիներ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու համար, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան, 2000թ. (%)


Հիմնական բնութագրիչներ	ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու համար ծրագրայնորեն կարևոր ուղիների իմացություն				ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու յուրահատուկ ուղիները		
	Տեղյակ չեն ¹	Մեկ ուղի	Երկու կամ երեք ուղիներ	Ընդամենը	Օգտագործել պահպանակ	Սահմանափակել սեռական զուգընկերների թվաքանակը ²	Տղամարդկանց թվաքանակը (մարդ)
Տարիքը							
15-19	50.2	3.0	46.8	100.0	48.1	47.1	263
20-24	28.4	9.3	62.3	100.0	66.5	66.2	215
25-29	26.8	5.4	67.8	100.0	68.1	68.9	194
30-34	25.7	3.9	70.3	100.0	70.4	72.4	205
35-39	23.8	8.3	67.9	100.0	66.8	73.1	237
40-44	22.2	6.9	70.9	100.0	72.8	73.0	275
45-49	20.1	9.6	70.2	100.0	70.4	77.3	203
50-54	22.9	7.5	69.5	100.0	68.5	77.1	126
Ամուսնական կարգավիճակը							
Երբևէ չամուսնացած	38.7	4.8	56.5	100.0	58.4	58.4	530
Հարցման պահին ամուսնացած	23.6	7.4	68.9	100.0	69.4	72.9	1161
Նախկինում ամուսնացած	(20.0)	(9.2)	(70.8)	(100.0)	(66.2)	(75.4)	28
Բնակավայրը							
Քաղաքային	19.7	5.4	74.9	100.0	76.1	78.2	1024
Գյուղական	40.8	8.5	50.7	100.0	51.0	54.2	695
Մարզը							
Երևան	13.6	2.2	84.2	100.0	84.6	85.9	582
Արագածոտն	23.0	5.0	71.9	100.0	74.1	74.1	78
Արարատ	30.2	11.5	58.3	100.0	49.6	59.0	177
Արմավիր	37.2	3.4	59.3	100.0	61.4	57.9	172
Գեղարքունիք	67.5	15.4	17.1	100.0	24.8	23.9	124
Լոռի	63.2	11.5	25.3	100.0	33.3	28.7	119
Կոտայք	15.0	0.8	84.3	100.0	84.3	85.0	137
Շիրակ	23.0	13.7	63.3	100.0	65.5	74.8	161
Սյունիք	6.7	10.9	82.4	100.0	83.2	92.4	65
Վայոց ձոր	57.4	14.9	27.7	100.0	24.8	41.6	25
Տավուշ	44.3	5.7	50.0	100.0	50.0	55.7	79
Կրթությունը							
Տարրական/միջին	51.9	5.1	42.9	100.0	43.5	45.3	245
Միջնակարգ	32.3	5.6	62.0	100.0	62.2	65.1	510
Միջնակարգ-մասնագիտական	25.6	8.1	66.3	100.0	67.4	70.3	588
Բարձրագույն	11.4	6.8	81.8	100.0	83.6	85.1	376
Ընդամենը	28.2	6.7	65.1	100.0	66.0	68.5	1719

Նշում. Ծրագրայնորեն կարևոր ուղիներն են. սեռական հարաբերությունների զսպվածությունը, պահպանակի օգտագործումը և սեռական զուգընկերների թվաքանակի սահմանափակումը: Սեռական հարաբերությունների զսպվածությունը գնահատվում է միայն ինքնուրույն պատասխանների միջոցով, իսկ պահպանակի օգտագործումը և սեռական զուգընկերների սահմանափակումը՝ ինքնուրույն և «նախապատրաստած» պատասխանների միջոցով:

¹ Նրանք, ովքեր իրագել չեն ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի գոյության մասին կամ չգիտեն ծրագրայնորեն կարևոր որևէ ուղի ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ից խուսափելու համար:

² Գերադասում են սահմանափակել սեռական զուգընկերների թվաքանակը և սեռական հարաբերություններ ունենալ մեկ զուգընկերոջ հետ/ հավատարիմ մնալ մեկ զուգընկերոջ:

Գծապատկեր 12.1 ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ից խուսափելու կարևոր ճանապարհների իմացությունը



Հայաստանի ԺԱՀ 2000թ.

Աղյուսակը ցույց է տալիս ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի կանխման ուղիների վերաբերյալ իմացության մակարդակը՝ ըստ կրթության և բնակավայրի: Կա հստակ կապ կրթական մակարդակի և ՄԻԱՎ-ի կանխման ուղիների վերաբերյալ գիտելիքների միջև: Քաղաքի բնակիչները ավելի շատ են տեղյակ «պաշտպանված» սեռական վարքագծի մասին, քան գյուղի բնակիչները:

Հարցվողներին, ովքեր իրազեկ են ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի մասին, տրվել են մի շարք հարցեր՝ ՄԻԱՎ/ԶԻԱՅ-ի հետ կապված հետևանքների մասին նրանց գիտելիքները պարզելու նպատակով: Տեղեկատվությունը ներկայացված է 12.4.1 և 12.4.2 աղյուսակներում: Երբ հարցվում էր, թե «կարո՞ղ է արդյոք առողջ տեսք ունեցող մարդը վարակված լինել ՄԻԱՎ-ով», կանանց 56%-ը և տղամարդկանց 58% հստակ պատասխանում էին՝ այո: Ամենաքիչ ճիշտ պատասխաններ նշել են երիտասարդները, գյուղական շրջաններում ապրողները և ցածր կրթական մակարդակ ունեցողները: Գոյություն ունի կարևոր տարբերակում ըստ մարզերի, բայց այն չի վերաբերում կանանց և տղամարդկանց: Օրինակ, Տավուշում կանանց 67%-ը նշել է, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է վարակված լինել ՄԻԱՎ-ով, բայց տղամարդկանց միայն 29%-ն է տվել նույնպիսի պատասխան: Կարևոր է նշել, որ բոլոր հարցվողների մեկ քառորդից ավելին չգիտեին, թե արդյոք առողջ տեսք ունեցող մարդը կարող է վարակված լինել ՄԻԱՎ-ով:

ՀԺԱՀ-ի ընթացքում հարցվողներին խնդրվում էր նշել, թե ինչ են նրանք կարծում՝ կարող է արդյոք ՉԻԱՀ առաջացնող վիրուսը փոխանցվել մորից երեխային հղիության ընթացքում, ծննդաբերության և կրծքով կերակրման ժամանակ (առանձին հարցերով): Արդյունքները ցույց են տալիս, որ կանանց և տղամարդկանց մոտ 2/3-ը պատասխանել են՝ այո, և նրանք գիտակցում են, որ դրանք հանդիսանում են վիրուսի՝ մորից երեխային փոխանցման երեք տարբերակները: Եվ մորից, երիտասարդները, գյուղական շրջաններում ապրողները և ցածր կրթական մակարդակ ունեցողները ավելի քիչ էին տեղեկացված ՉԻԱՀ-ի նշված կարևոր հետևանքների մասին:

Աղյուսակ 12.4.1 ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի հետ կապված հետևանքների իմացությունը, կանայք

Կանանց տոկոսային բաշխումը՝ ըստ ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի հետ կապված տարբեր հետևանքների վերաբերյալ հարցերի պատասխանների և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000: (%)

Հիմնական բնութագրիչներ	Առողջ տեսք ունեցող մարդը կարող է վարակված լինել ՁԻԱՐ-ի վիրուսով				Ուղիներ, որոնց միջոցով ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ը կարող է փոխանցվել մորից երեխային						
	Այո	Ոչ	Չգիտի ¹	Ընդամենը	Ուղիներ չկան	Հղիության ընթացքում	Ծննդաբերության ժամանակ	Կրծքով կերակրման միջոցով	Այլ ուղի	Չգիտեն, թե արդյոք կա որևէ ուղի	Կանանց թվաքանակը (մարդ)
Տարիքը											
15-19	46.6	16.3	37.0	100.0	4.4	51.9	44.4	45.3	1.5	38.9	1160
20-24	60.3	14.8	24.9	100.0	2.9	73.5	65.7	60.8	1.0	20.9	1007
25-29	60.1	17.8	22.1	100.0	2.2	77.7	69.4	62.9	0.5	16.9	769
30-34	58.5	18.3	23.3	100.0	3.1	79.9	71.0	65.9	0.4	15.7	763
35-39	56.3	16.3	27.4	100.0	2.4	76.6	70.5	64.9	0.4	18.5	962
40-44	55.7	15.6	28.7	100.0	2.1	76.9	73.0	66.2	0.5	18.1	947
45-49	56.0	16.7	27.3	100.0	2.2	76.6	70.0	65.2	1.1	18.6	822
Ամուսնական կարգավիճակը											
Երբևէ չամուսնացած	53.2	16.2	30.6	100.0	3.8	61.9	54.1	51.1	1.3	30.8	1851
Հարցման պահին ամուսնացած	57.1	16.7	26.2	100.0	2.4	76.7	69.9	64.9	0.7	18.0	4125
Նախկինում ամուսնացած	54.5	15.1	30.4	100.0	2.7	73.2	68.2	63.3	0.3	22.5	455
Բնակավայրը											
Քաղաքային	59.2	16.7	24.1	100.0	2.6	76.0	69.4	62.1	0.8	18.6	3942
Գյուղական	50.4	15.9	33.7	100.0	3.1	66.2	58.7	58.8	0.8	27.4	2488
Մարզը											
Երևան	61.4	15.6	22.9	100.0	2.1	78.6	74.1	64.1	0.6	17.1	2206
Արագածոտն	57.9	14.5	27.7	100.0	4.1	70.7	62.4	63.0	1.0	21.7	279
Արարատ	61.7	14.2	24.1	100.0	0.7	84.0	77.3	76.8	0.9	13.7	642
Արմավիր	56.8	14.9	28.3	100.0	3.4	65.9	56.2	58.4	1.2	26.1	553
Գեղարքունիք	39.7	14.5	45.8	100.0	3.3	62.8	55.6	55.0	1.4	30.9	484
Լոռի	49.9	14.7	35.5	100.0	2.4	63.3	56.7	53.3	1.5	28.6	489
Կոտայք	52.4	24.0	23.6	100.0	4.5	69.9	63.4	58.9	0.4	22.5	505
Շիրակ	44.1	26.2	29.7	100.0	5.1	61.6	46.7	40.0	0.2	30.7	611
Սյունիք	55.5	9.1	35.4	100.0	2.2	67.8	66.0	64.2	1.2	26.5	271
Վայոց ձոր	48.5	17.7	33.8	100.0	2.8	71.8	69.7	69.4	0.9	22.1	113
Տավուշ	66.9	10.1	23.0	100.0	3.4	72.8	62.1	66.5	0.6	21.0	278
Կրթությունը											
Տարրական/միջին	34.5	12.8	52.6	100.0	2.6	43.5	38.4	41.3	1.4	50.5	593
Միջնակարգ	49.5	16.6	33.9	100.0	3.4	65.9	59.0	58.4	0.9	27.0	2341
Միջնակարգ-մասնագիտական	58.9	18.4	22.7	100.0	2.3	79.6	72.7	66.4	0.9	15.6	2295
Բարձրագույն	72.4	14.1	13.5	100.0	2.7	84.6	76.7	64.6	0.3	10.3	1201
Ընդամենը	55.8	16.4	27.8	100.0	2.8	72.2	65.3	60.8	0.8	22.0	6430

¹ Ներառյալ այն կանայք, ովքեր իրազեկ չեն ՄԻԱՎ/ՁԻԱՐ-ի գոյության մասին:

Աղյուսակ 12.4.2 ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի հետ կապված հետևանքների իմացությունը, տղամարդիկ

Տղամարդկանց տոկոսային բաշխումը՝ ըստ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի հետ կապված տարբեր հետևանքների վերաբերյալ հարցերի պատասխանների և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000: (%)

Հիմնական բնութագրիչներ	Առողջ տեսք ունեցող մարդը կարող է վարակված լինել ՉԻԱՅ-ի վիրուսով				Ուղիներ, որոնց միջոցով ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ը կարող է փոխանցվել մորից երեխային						
	Այո	Ոչ	Չգիտի ¹	Ընդամենը	Չղիներ ընթաց- թուն	Ծննդաբե- ժանանակ միջոցով	Կրծքով կերակր ման	Այլ ուղի	Չգիտեն, թե արդյոք կա որևէ ուղի	Տղամարդ կանց թվաքա- նակը (մարդ)	
Տարիքը											
15-19	38.2	20.0	41.8	100.0	1.7	50.3	48.0	40.4	5.2	39.5	263
20-24	59.4	18.4	22.3	100.0	2.8	71.5	67.1	62.3	1.1	22.0	215
25-29	57.5	22.1	20.3	100.0	2.9	75.5	72.7	69.2	1.2	20.0	194
30-34	59.8	16.9	23.3	100.0	1.7	81.2	75.8	67.6	0.8	15.2	205
35-39	62.3	18.9	18.8	100.0	1.7	79.6	74.3	69.7	1.3	15.5	237
40-44	62.5	17.3	20.2	100.0	1.0	86.1	85.4	78.1	0.1	10.4	275
45-49	64.3	19.1	16.5	100.0	2.3	85.4	83.3	78.5	0.9	9.7	203
50-54	62.9	14.6	22.6	100.0	1.0	85.3	81.4	79.0	0.0	12.2	126
Ամուսնական կարգավիճակը											
Երբևէ չամուսնացած	49.7	19.2	31.1	100.0	1.7	61.9	59.0	52.2	3.0	30.5	530
Հարցման պահին ամուսնացած	61.1	18.5	20.3	100.0	2.0	81.9	78.8	73.3	0.8	13.7	1161
Նախկինում ամուսնացած	(67.1)	(9.2)	(23.7)	(100.0)	(0.0)	(96.2)	(82.6)	(87.0)	(0.0)	(3.8)	28
Բնակավայրը											
Քաղաքային	66.0	17.3	16.7	100.0	1.2	80.5	77.0	69.5	1.2	15.3	1024
Գյուղական	45.5	20.5	34.0	100.0	2.9	69.3	66.4	63.4	1.8	23.7	695
Մարզը											
Երևան	76.3	15.2	8.5	100.0	1.3	85.7	85.9	78.6	0.9	11.2	582
Արագածոտն	62.6	16.5	20.9	100.0	5.0	69.8	59.7	68.3	2.2	14.4	78
Արարատ	56.8	18.7	24.5	100.0	1.4	79.9	76.3	74.8	1.4	15.8	177
Արմավիր	28.3	35.2	36.6	100.0	4.8	66.9	66.9	50.3	0.0	28.3	172
Գեղարքունիք	45.3	11.1	43.6	100.0	0.9	64.1	64.1	64.1	0.9	34.2	124
Լոռի	59.8	17.2	23.0	100.0	3.4	59.8	48.3	54.0	1.1	31.0	119
Կոտայք	73.2	6.3	20.5	100.0	0.0	85.0	79.5	77.2	6.3	7.9	137
Շիրակ	20.9	34.5	44.6	100.0	0.7	64.7	54.7	36.0	0.7	28.8	161
Սյունիք	83.2	9.2	7.6	100.0	0.0	86.6	79.8	75.6	4.2	5.9	65
Վայոց ձոր	48.5	20.8	30.7	100.0	5.0	41.6	40.6	35.6	1.0	45.5	25
Տավուշ	28.5	19.0	52.5	100.0	3.2	74.1	72.8	72.8	0.6	21.5	79
Կրթությունը											
Տարրական/միջին	41.2	18.6	40.1	100.0	3.9	53.7	52.5	45.5	1.9	38.6	245
Միջնակարգ	51.0	20.1	28.9	100.0	2.1	71.7	67.8	63.2	1.8	23.1	510
Միջնակարգ- մասնագիտական	61.8	17.9	20.3	100.0	1.4	80.8	77.0	72.8	1.8	13.8	588
Բարձրագույն	71.2	17.6	11.2	100.0	1.0	88.6	85.9	77.1	0.1	7.6	376
Ընդամենը	57.7	18.6	23.7	100.0	1.9	76.0	72.7	67.0	1.5	18.7	1719

¹Ներառյալ այն տղամարդիկ, ովքեր իրազեկ չեն ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի գոյության մասին: Նշում. Փակագծում բերված թվերը հիմնված են 25-49 չկռված դեպքերի վրա:

12.2 ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի հասարակական տեսանկյունները (ասպեկտները)

ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի հասարակական տեսանկյունները, մնացածի հետ միասին, ներառում են ՉԻԱՅ-ով հիվանդների նկատմամբ հասարակության բացասական վերաբերմունքը: Հասարակության կողմից ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ով հիվանդները արժանանում են քննադատության, քանի որ նրանց հաճախ վերագրում են այսպես կոչված տերմինալ (մարգինալ) խմբերին՝ թմրամոլներ, մարմնավաճառներ, հոմոսեքսուալներ: Քննադատությունը երբեմն արտահայտվում է անբարոյց խտրականությամբ, ինչը արժանի է հետաքրքրության, քանի որ այն բացասական ազդեցություն է ունենում ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի կանխման ուղղված ջանքերի վրա:

Աղյուսակ 12.5-ը ցույց է տալիս, որ կանանց միայն 10%-ը և տղամարդկանց 13%-ն են կարծում, որ ՄԻԱՎ-ով վարակված ուսուցիչը պետք է շարունակի դասավանդել: Կան որոշ տարբերակումներ՝ ըստ հիմնական բնութագրիչների: Օրինակ, բարձրագույն կրթությամբ կանանց և տղամարդկանց մոտ 1/5-ը կարծում է, որ ՄԻԱՎ-ով վարակվածին կարելի է թույլատրել շարունակել դասավանդումը (այսպես են կարծում Արմավիրի տղամարդկանց կեսից ավելին, ի հակադրություն այդ շրջանում ապրող կանանց 7%-ի): Հարկ է նշել նաև Շիրակի մարզը, որտեղ տղամարդկանց 21%-ը համոզված չէ՝ արդյոք ՄԻԱՎ-ով վարակված ուսուցիչն կարելի է թույլատրել շարունակել դասավանդումը, թե՛ ոչ:

Աղյուսակ 12.5.1 ՄԻԱՎ/ՉԻԱՎ-ի հասարակական տեսանկյունների, կանայք

Կանանց տոկոսային բաշխումը՝ ըստ ՄԻԱՎ/ՉԻԱՎ-ի տարբեր հասարակական տեսանկյունների վերաբերյալ հարցերի պատասխանների և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000թ. (%)

Հիմնական բնութագրիչներ	Արդյոք ՄԻԱՎ-ով վարակված ուսուցիչը պետք է շարունակի դասավանդումը				Արդյոք 12-14 տարեկան երեխաները պետք է ուսուցանվեն, թե ինչպես օգտագործել պահպանակ				Կանանց թվաքանակը, ովքեր իրազեկ են ՉԻԱՎ-ի գոյության մասին
	Այո (մարդ)	Ոչ	Չգիտի	Ընդամենը	Այո	Ոչ	Չգիտի	Ընդամենը	
Տարիքը									
15-19	11.3	79.4	9.3	100.0	38.8	33.3	27.8	100.0	1043
20-24	13.4	81.0	5.6	100.0	46.2	36.6	17.2	100.0	962
25-29	10.0	86.0	4.0	100.0	50.0	37.6	12.5	100.0	738
30-34	10.1	86.9	2.9	100.0	47.4	39.7	12.9	100.0	733
35-39	7.1	88.9	4.0	100.0	42.3	42.5	15.2	100.0	917
40-44	9.4	87.8	2.8	100.0	41.4	41.9	16.7	100.0	891
45-49	6.7	89.2	4.1	100.0	43.6	41.5	14.9	100.0	788
Ամուսնական կարգավիճակը									
Երբևէ չամուսնացած	7.7	8.3	100.0	46.2	31.3	22.6	100.0	1709	
Հարցման պահին ամուսնացած	8.3	88.2	3.5	100.0	42.8	42.1	15.1	100.0	3942
Նախկինում ամուսնացած	8.0	87.8	4.2	100.0	44.6	39.6	15.8	100.0	421
Բնակավայրը									
Քաղաքային	11.5	83.2	5.3	100.0	47.9	36.5	15.6	100.0	3820
Գյուղական	6.9	88.9	4.2	100.0	37.0	42.9	20.1	100.0	2252
Մարզը									
Երևան	12.9	80.5	6.6	100.0	52.3	30.1	17.6	100.0	2156
Արագածոտն	4.6	93.5	1.9	100.0	45.5	37.4	17.2	100.0	249
Արարատ	9.4	85.3	5.4	100.0	53.6	25.5	20.9	100.0	632
Արմավիր	6.9	88.6	4.5	100.0	34.1	51.1	14.8	100.0	521
Գեղարքունիք	4.0	91.6	4.4	100.0	28.6	47.3	24.1	100.0	423
Լոռի	10.5	86.3	3.2	100.0	41.2	49.4	9.4	100.0	409
Կոտայք	8.1	87.2	4.6	100.0	41.5	40.8	17.6	100.0	489
Շիրակ	13.2	84.5	2.3	100.0	35.5	52.0	12.5	100.0	585
Սյունիք	2.6	94.8	2.6	100.0	39.2	42.0	18.7	100.0	252
Վայոց ձոր	4.3	91.4	4.3	100.0	40.3	33.2	26.4	100.0	98
Տավուշ	9.3	85.3	5.4	100.0	26.8	56.1	17.1	100.0	259
Կրթությունը									
Տարրական/միջին	2.4	89.7	7.9	100.0	27.6	40.6	31.8	100.0	474
Միջնակարգ	6.6	88.4	5.0	100.0	37.6	42.5	19.9	100.0	2152
Միջնակարգ-մասնագիտական	8.4	87.6	4.0	100.0	45.9	39.3	14.8	100.0	2250
Բարձրագույն	21.1	73.7	5.2	100.0	57.9	30.7	11.4	100.0	1195
Ընդամենը	9.8	85.3	4.9	100.0	43.9	38.8	17.3	100.0	6072

ՄԻԱՎ/ՉԻԱՎ-ի կանխման ռազմավարությունը կարող է ներառել պատասխանների ուսուցանումը “չպաշտպանված” սեռական հարաբերության ռիսկի վերաբերյալ՝ մինչև նրանց սեռական հասունությունը: 12.5 աղյուսակը ցույց է տալիս, որ կանանց 44%-ը և տղամարդկանց 51%-ը կարծում են, որ 12-14 տարեկան երեխաները պետք է ուսուցանվեն, թե ինչպես օգտագործել պահպանակը: Քաղաքի բնակիչները և բարձրագույն կրթություն ունեցող հարցվողները ավելի շատ էին հարուն պահպանակի օգտագործումն ուսուցանելու գաղափարին, քան գյուղական շրջանների:

բնակիչները և կրթական ցածր մակարդակ ունեցողները: Կա նշանակալի տարբերակում, որն ըստ մարզերի բաշխվում է հետևյալ կերպ. Տավուշում կանանց 27%-ից մինչև Արարատում 54%, և Արմավիրում տղամարդկանց 28%-ից մինչև Կոտայքում 76%: Պետք է նշել նաև, որ բոլոր կանանց 17%-ը վստահ չեն այդ հարցի շուրջ:

Աղյուսակ 12.5.2 ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հասարակական տեսանկյունները, տղամարդիկ

Տղամարդկանց տոկոսային բաշխումը՝ ըստ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի հասարակական տեսանկյունների վերաբերյալ տարբեր հարցերի պատասխանների և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000: (%)

Հիմնական բնութագրիչներ	Արդյոք ՄԻԱՎ-ով վարակված ուսուցիչը պետք է շարունակի դասավանդումը				Արդյոք 12-14 տարեկան երեխաները պետք է ուսուցանվեն,				Տղամարդկանց թվաքանակը, ովքեր հրազել են ՁԻԱՅ-ի գոյության մասին (մարդ)
	Այո	Ոչ	Չգիտի	Ընդամենը	Այո	Ոչ	Չգիտի	Ընդամենը	
Տարիքը									
15-19	9.4	78.6	12.0	100.0	56.4	35.2	8.5	100.0	243
20-24	12.1	81.2	6.7	100.0	51.7	41.9	6.4	100.0	210
25-29	13.9	79.5	6.6	100.0	58.9	31.5	9.6	100.0	190
30-34	16.7	79.2	4.1	100.0	48.4	43.2	8.4	100.0	198
35-39	13.6	83.9	2.4	100.0	47.7	44.8	7.5	100.0	229
40-44	14.5	82.6	2.9	100.0	49.3	46.0	4.7	100.0	267
45-49	14.7	79.7	5.6	100.0	47.6	45.9	6.4	100.0	199
50-54	12.7	82.0	5.3	100.0	48.1	45.3	6.6	100.0	125
Ամուսնական կարգավիճակը									
Երբևէ չամուսնացած	13.6	76.5	9.8	100.0	57.3	35.2	7.5	100.0	507
Հարցման պահին ամուսնացած	13.2	82.8	4.0	100.0	48.0	45.0	7.0	100.0	1127
Նախկինում ամուսնացած	(18.9)	(81.1)	(0.0)	(100.0)	(68.2)	(22.0)	(9.8)	(100.0)	27
Բնակավայրը									
Քաղաքային	12.9	80.7	6.5	100.0	60.3	33.2	6.6	100.0	1009
Գյուղական	14.3	81.2	4.6	100.0	36.9	54.8	8.2	100.0	651
Մարզը									
Երևան	11.7	83.1	5.2	100.0	65.3	28.8	5.9	100.0	577
Արագածոտն	0.7	97.8	1.4	100.0	28.3	67.4	4.3	100.0	77
Արարատ	7.9	89.2	2.9	100.0	34.5	56.8	8.6	100.0	177
Արմավիր	58.9	7.0	100.0	26.8	70.4	2.8	100.0	169	
Գեղարքունիք	6.8	90.3	2.9	100.0	37.9	49.5	12.6	100.0	109
Լոռի	9.0	83.3	7.7	100.0	48.7	38.5	12.8	100.0	107
Կոտայք	0.8	98.4	0.8	100.0	76.2	19.8	4.0	100.0	136
Շիրակ	14.5	64.9	20.6	100.0	55.0	29.0	16.0	100.0	151
Սյունիք	11.0	89.0	0.0	100.0	29.7	69.5	0.8	100.0	65
Վայոց ձոր	3.4	88.8	7.9	100.0	47.2	41.6	11.2	100.0	22
Տավուշ	0.0	97.9	2.1	100.0	48.6	47.9	3.5	100.0	71
Կրթությունը									
Տարրական/միջին	5.7	83.6	10.7	100.0	44.5	47.8	7.7	100.0	219
Միջնակարգ	13.0	81.8	5.2	100.0	46.4	43.9	9.7	100.0	494
Միջնակարգ-մասնագիտական	12.4	84.4	3.2	100.0	50.4	44.4	5.2	100.0	574
Բարձրագույն	19.9	72.7	7.4	100.0	62.3	30.9	6.8	100.0	374
Ընդամենը	13.4	80.9	5.7	100.0	51.1	41.7	7.2	100.0	1661

Նշում. Փակագծում բերված թվերը հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

“Պաշտպանված” վարքագծի կարևոր տեսանկյուն է ՄԻԱՎ-ի կանխման վերաբերյալ զուգընկերոջ հետ քննարկումները: 12.6.1 և 12.6.2 աղյուսակների տվյալները ցույց են տալիս, որ ամուսնացած կանանց 28%-ը և ամուսնացած տղամարդկանց 31%-ը իրենց զուգընկերների հետ քննարկել են, թե ինչպես խուսափել ՄԻԱՎ-ի վարակումից: Բարձրագույն կրթություն ունեցողների և քաղաքի բնակիչների մոտ նշված քննարկումները ավելի են տարածված: Երիտասարդ և առավել տարիքով կանայք ամենաքիչ են հակված քննարկել ՄԻԱՎ-ի կանխարգելումը, քան այլ տարիքի կանայք: Հարցվողներին խնդրվում էր նշել նաև՝ “թե Ձեր ընտանիքի անդամներից մեկը վարակվել է ՁԻԱՅ առաջացնող վիրուսով, կցանկանայի՞ք այդ փաստը գաղտնի պահել, թե՛ ոչ”: Միայն կանանց 16%-ը և տղամարդկանց 26%-ն են կարծում, որ տվյալ փաստը պետք է մնա գաղտնի: Հասարակության կողմից քննադատվելու մտավախությունը հանդիսանում է կարևոր խոչընդոտ ՄԻԱՎ-ի ախտորոշմանը և ՁԻԱՅ-ով հիվանդներին ու նրանց ընտանիքներին աջակցելուն ուղղված ծրագրերի համար:

Աղյուսակ 12.6.1 ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին վերաբերող հաղորդակցության և գաղտնիության հարցերը, կանայք

Կանանց տոկոսային բաշխումը՝ ըստ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ին վերաբերող հաղորդակցության և գաղտնիության վերաբերյալ հարցերի պատասխանների և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2000: (%)

Հիմնական բնութագրիչներ (մարդ)	Քննարկել եք արդյոք Ձեր գույքը/կեցողքը հետ, թե ինչպես խուսափել ՁԻԱՅ-ի վիրուսի վարակումից					Եթե Ձեր ընտանիքի անդամներից մեկը վարակվեր ՄԻԱՎ-ով, կցանկանայք արդյոք, որ այդ փաստը մնար գաղտնի				
	Այո	Ոչ/հա-մոզված չի	Իրազեկ չէ ՁԻԱՅ-ի գոյության մասին	Ընդա-մենը	Ամուսնացած կանանց թվաքա-նակը	Այո	Ոչ	Չգիտի/պատաս-խան չկա	Ընդա-մենը	Այն կանանց թվաքանակը, ովքեր իրազեկ են ՁԻԱՅ-ի գոյության
Տարիքը										
15-19	13.7	72.1	14.3	100.0	99	17.3	69.2	13.5	100.0	1043
20-24	23.5	71.8	4.7	100.0	511	14.6	76.1	9.3	100.0	962
25-29	32.7	63.2	4.1	100.0	625	14.6	77.9	7.5	100.0	738
30-34	32.5	63.5	4.0	100.0	660	12.9	81.0	6.1	100.0	733
35-39	30.6	65.6	3.9	100.0	816	17.5	75.8	6.7	100.0	917
40-44	27.0	68.0	5.0	100.0	773	16.6	74.9	8.5	100.0	891
45-49	25.0	71.6	3.4	100.0	640	16.9	73.1	10.0	100.0	788
Ամուսնական կարգավիճակը										
Երբևէ չամուսնացած	42	42	42	42	42	16.9	71.3	11.8	100.0	1709
Հարցման պահին ամուսնացած	28.4	67.2	4.4	100.0	4125	15.6	76.4	8.0	100.0	3942
Նախկինում ամուսնացած	42	42	42	42	42	14.4	78.3	7.2	100.0	421
Բնակավայրը										
Քաղաքային	30.5	67.3	2.2	100.0	2391	16.0	74.0	10.0	100.0	3820
Գյուղական	25.5	67.0	7.6	100.0	1733	15.7	77.0	7.3	100.0	2252
Մարզը										
Երևան	33.0	65.4	1.6	100.0	1291	15.9	71.7	12.4	100.0	2156
Արագածոտն	31.9	59.4	8.7	100.0	193	7.7	88.9	3.5	100.0	249
Արարատ	36.7	62.8	0.5	100.0	449	9.0	82.0	9.0	100.0	632
Արմավիր	21.3	73.7	5.1	100.0	373	24.9	66.7	8.4	100.0	521
Գեղարքունիք	15.4	75.1	9.6	100.0	341	10.8	78.9	10.3	100.0	423
Լոռի	26.3	59.6	14.1	100.0	323	18.4	75.7	5.8	100.0	409
Կոտայք	31.3	67.3	1.4	100.0	316	9.3	87.0	3.7	100.0	489
Շիրակ	20.5	76.3	3.2	100.0	388	25.3	68.6	6.2	100.0	585
Սյունիք	20.9	75.0	4.1	100.0	173	4.8	86.1	9.2	100.0	252
Վայոց ձոր	39.4	49.4	11.3	100.0	79	14.9	71.3	13.9	100.0	98
Տավուշ	28.0	65.5	6.5	100.0	198	29.4	65.6	5.0	100.0	259
